Universitäts- und Landesbibliothek Bonn

# Movsesi Kalankatowac'woy Patmowt'iwn aġowanic' ašxarni

Movses <Kaġankatvac'i>

Moskwa, 1860

urn:nbn:de:hbz:5:1-9924

Visual Library

~~Bibl. Gaussen~~ ~~3261~~

Goussen 3261

ՄՈՎՍԷՍԻ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑՒՈՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

---

ՄՈՍԿՎԱ

1860

Moses Kalankatatsi, Edit. princeps

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

ՄՈՎՍԷՍԻ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑՒՈՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ԾԱԽԻՒՔ ՆԵՐՔԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ԽԱՉԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ

ՄՈՍԿՎԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

1860

В 261

EX BIBLIOTHECA Dr.is. GOUSSEN.
BONNAE (BIBL. UNIV.)

На основаніи разрѣшенія Статскаго Совѣтника Бероева, печатать позволяется. Санктпетербургъ, 25 Іюля 1858 года.

*Ценсоръ Палаузовъ.*

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

*ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ*

**ԼԱԶԱՐԵՎԻ**

# ԱԶԴ

Յերկուց անթուական օրինակաց արարաք զ՚յառաջիկայ տպագիրս՝ մեծաւ զգուշութեամբ բաղդատեալ և մաքրեալ զայն՚ի գըրչացն վրիպակաց։

Եւ որովհետև զառաջինն ելանէ ՚ի լոյս „Պատմութիւնս Աղուանից աշխարհի“ ՚ի Մովսէսէ Կաղանկատուացւոյ արարեալ, ամէնիրի քաջայոյս եմք, զի որ յուսումն պատմութեան դեգերին՝ հաշտ աչօք հայել ունին յայս մեր նուէր ՚ի սեղան հայ մատենագրութեան։

՚Ի բազմադարեան աւերակաց այսպէս ահա ամբարձեալ զիւր գլուխ՝ արձանանայ առաջի մեր ազգ մի ողջոյն, այնինքն է՝ Աղուանիցն, զորոյ զտարեգիր մինչ ցայսօր ժամանակի ՚ի հատուկտոր յիշատակութիւնս մերոց մատենագրաց սովոր էաք նշմարել և եթ։

Մ. Էմն։

Ի ՃԵՄԱՐԱՆՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ.

՚Ի 10 Մարտի 1860 ամի։

# ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂՈՒԱՆԻՑ

## ԳԻՐՔ Ա

Որ ի նախաստեղծէն մինչեւ ցՆոյ ծննդոց աշխարհագրութեանց։

Նախաստեղծ մարդն առաջին՝ հայրն մեր Ադամ, եկեաց յամս երկու հարիւր և երեսուն և ծնաւ զՍէթ։ Սէթ եկեաց յամս երկու-հարիւր և հինգ և ծնաւ զԵնովս։ Ենովք եկեաց յամս հարիւր և իննսուն և ծնաւ զԿայնան։ Կայնան եկեաց յամս հարիւր և եօթանասուն և ծնաւ զՄաղաղայէլ։ Մաղաղայէլ եկեաց յամս հարիւր վաթսուն և եօթն և ծնաւ զՅարեթ։ Յարեթ եկեաց յամս հարիւր վաթսուն և երկու և ծնաւ զԵնովք։ Ենովք եկեաց յամս հարիւր վաթսուն և հինգ և ծնաւ զՄաթուսաղայ։ Մաթուսաղայ եկեաց յամս հարիւր և եօթն և ծնաւ զՂամէք։ Ղամէք եկեաց յամս հարիւր և ութսուն և ծնաւ զՆոյ։ Եւ Նոյ եկեաց յամս հինգ հարիւր և ծնաւ զերիս որդիս՝ զՍէմ, զՔամ և զՅաբեթ։ Եւ յետ հարիւր ամի ծննդեանն Սեմայ եղեն ջրհեղեղն յամի վեցհարիւրերորդի կենացն Նոյի։ Եւ լինին յԱդամայ մինչև ցՋրհեղեղն ամք երկու հազար երկուհարիւր քառասուն և երկու՝ և աղգ.ք ամն։

## ԳԼՈՒԽ Բ

### Գիր ազգաբանութեան Յաբեթի և ծննդոց նորին.

Աստանօր յայտարարութիւն սահմանացն Յաբեթի և զազգաբանութիւն նորին գտցես յիւրում տեղւոջն:

Սահմանք Յաբեթի այս են, զոր ետ նմա Նոյ 'ի բաժին և զերդումն իսկ պահանջեաց 'ի մէջ եղբարցն՝ չզրկել եղբարցն զմիմեանս — 'ի Մարաց մինչև ցԳադիրոնն կողմն հիւսիսոյ և ցգետն Գկղամթ, որ մերձ է ընդ Մարս և ընդ Բաբելոն: Եւ որդիք Յաբեթի Գամիր և 'ի նմանէ Գամիրք, Մագոգ և 'ի նմանէն Կեղտք և Գաղատացիք, Մադայ և 'ի նմանէ Մարք, Յաւան և 'ի նմանէ Հելլենք և Յոյնք, Թոբէլ և 'ի նմանէ Թետաղք, Մոսք և 'ի նմանէ Լուրիկացիք, Թիրաս և 'ի նմանէ Թրակացիք, Քետիմ և 'ի նմանէ Մակեդոնացիք:

Որդիք Թիրասայ՝ Ասքանազ և 'ի նմանէ Սարմատք, Երիփաթ և 'ի նմանէ Սաւրոմատք, Թորգոմ և 'ի նմանէ Հայկ:

Որդիք Յաւանայ Օղիսա և 'ի նմանէ Սիկիլացիք և Աթենացիք, Թարշիշ և 'ի նմանէ Վիրք և Տիւրենացիք, Կիտրիս՝ ուստի Հռոմք և Լատինացիք և Հռովմացիք: Ընդ ամենայն՝ ազգք տասն և հինգ:

Եւ 'ի սոցանէ եղեն և մեկնեցան կղզիք հեթանոսաց, որք են Կիպրացիք 'ի Կիտարացւոց՝ յորդւոց Յաբեթի: Իսկ որ 'ի կողմանս հիւսիսոյ են՝ ազգակից են Քետուրացւոց, ուստի Աղուանք:

Եւ ազգք, որ 'ի Հելլաս աշխարհի՝ են յայնցանէ որք յետոյ փոխեցան անդր՝ որպէս Աթենացիքն, որք բնակեալ են յԱթէնս:

Ի պատուականն Յունաց և 'ի Թեսալեցւոց Միգոնա-

ցիք եղեն և պանդխտեցան, որք են 'ի կողմանս յորդւոյ Ե-գէնովյ:

Եւ Կարքեդոնացիք են եկք 'ի Տիւրոսէ:

Իսկ 'ի խառնակիլ լեզուացն եղեն Յաբեթէ ազգք հըն-գետասան 'ի Մարաց մինչև ցՍպարիոնն, որ ձգի յՈվկիանոս և հայի ընդ հիւսիս: Այս է երկիր նոցա՝ Ատրպատական, Աղուանք, Ամազոնիա, Հայք՝ Մեծ և Փոքր, Կապադով-կիա, Գաղատիա, Կողքիս, Հնդիկք, Բոսպորիա, Մէո-տիս, Դեռիս, Սարմատիա, Տաւրինիա, Սարմատէս, Սկիւ-թիա, Թրակէ, Մակեդոնիա, Դաղմատիա, Մողս, Թե-սաղիա, Լոկրիս, Բիովտիա, Հետալիա, Ատտիկէ, Աքիա, Տեղենիմ, Ակարնէս, Հուպիրիսոմ, Լուրիա, Լիքնի-տիս, Ադրիակէ, յորմէ ծովն Ադրիական, Գաղիա Սպանիոյ, Գաղիա Իրիոյ, Սպանիա Մեծ: Աստ կատարին սահմանք Յաբեթի մինչև ցԿղզիսն Բրիտանիկեցւոց, և հային ամենե-քեան ընդ հիւսիս:

## ԳԼՈՒԽ Գ.

### ԹԷ ՈՐ ԱԶԳՔ ԵՆ, ՈՐ ԳԻՏԵՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

Եւ 'ի սոցանէ որք գիտեն գրագիտութիւն՝ Իբերացիք, Լա-տինացիք, որով և Հռոմք վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղուանք.՝ի Մարաց կողմանէ հիւսիսոյ ցԳի-գերոնեայ սահմանն, որ ձգի 'ի Պարգամիտոս գետոյ մինչև ցՄաստոսիս որ է Լիբիոն: Իսկ կղզիք՝ Սիկիլոյ, Եւբիա, Ռո-դոս, Քիոս, Լեսբոս, Կիթերայ Զակինթէոս, Կեփաղա-նիա, Իթակէ, Կորկիւրիա և Կիկղադէս, և մասն մի Ա-սիայ, որ կոչի Յոնանիա, և գետն Դկղաթ, որ մեկնէ 'ի մէջ Մարաց և Բաբելոնի: Այս են սահմանք Յաբեթի:

Սեմ կալաւ զկողմն արևելից երկրին, Քամ զկողմն հա-

բուռ. և Յարեթ զկողմն արևմտից և հիւսիսոյ, ուր Եգուանք են և Գոմն Կասբից և ծագք երկրի ընդ արևելս: Իսկ 'ի կողմն արևմտից երթան հասանեն ազգքս այսոքիկ մինչ 'ի Տրապոն:

Իսկ որք 'ի Յարեթէ մինչև ցՏիգրան՝ թագաւորք քան և չորք. և կողմանց Պարսից թագաւորք յԱրշակայ մինչև ցԱրտաւան տասն և երեք՝ և ամք չորս հարիւր և յիսուն: ԶԱրտաւան սպան Արտաշիր Սասանեան Ստահրացի և եբարձ զթագաւորութիւնն Պարթևաց, որք Պարսից և Ասորւոց տիրեցին երկու հարիւր յիսուն և երկու ամօք յառաջ քան զգալ Կենարարին մերոյ Քրիստոսի, և յետ դարձի դերութեանն Հրէից 'ի Բաբելոնէ երկու հարիւր եօթանասուն ամօք: Իսկ 'ի նոյն Պարթևաց որք 'ի Վաղարշակայ մինչև ցԱրտաշիր՝ Վաղարշակայ որդի, թագաւորք Հայոց քան և վեց, իսկ ամք վեցհարիւր և քսան: Ընդ բարձու թագաւորութիւնն յԱրշակունեաց և հայրապետութիւն 'ի ցեղէ Սրբոյն Գրիգորի: Իսկ եթէ յաղագս Բագրատունեացն կամիցիս գիտել՝ Պարոյրայ որդին կոչէր Հրաչեայ թագաւոր Հայոց, որ խնդրեաց յարքայէն Բաբելացւոց զմի ոմն 'ի գերելոցն Հրէից Շամբաթ անուն, զոր ածեալ բնակեցոյց յերկրին Հայոց մեծաւ պատուով: 'Ի սմանէ սերեցաւ ազգն Բագրատունեաց 'ի նուաղելն մեծագոյն ազգին յարեթական:

## ԳԼՈՒԽ Գ

### ԿԱՐՃԵՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍԻԱՅԻ.

Ըստ սկզբն առնու նախադասութիւնն. զի 'ի սկզբան աշխարհագործութեան մարդկութեանս, որ զմեծ լերամբն Կովկասու բնակեցոյն՝ չունիմք ինչ առել այոք 'ի պէտս լուղաց մինչև ցՎաղարշակ արքայ Հայոց, որ 'ի կարգել խորամ զհիւսիսայինն՝ կոչեաց զվայրենի եկամուտ ազգս որ 'ի դաշ-

ռէն Հիւսիսոյ կամ որ զատորոշէ զԿովկասու, կամ որ 'ի Հովիտս և 'ի խորաձորս զՀարաւով մինչև ցմուտս դաշտին: Պատուէր առնէր՝ զաւագակութիւն և զմարդադաւութիւն թողուլ և Հարկաց արքունի Հնազանդ կալ: Նորա կարգեաց նոցա առաջնորդս և վերակացուս, յորոց գլխաւոր ոմն 'ի Սիսակեան տոՀմէ յարեւթական ծննդոց կարգի Հրամանաւ Վաղարշակայ՝ Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից 'ի գետէն Երասխայ մինչև ցամրոցն Հնարակերտ: Եւ աշխարՀն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, վասն զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն: 'Ի սորա ծննդոց Առան՝ ասեն, անուանի և քաջ, կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր 'ի Պարթևէն Վաղարշակայ. և 'ի սորա զաւակէն ասեն սերեալ զազգս Ուտէացւոց և Գարդմանացւոց իշխանութեանց: — Այս մինչև ցայսվայր ցուցումն ազգաբանութեանց:

## ԳԼՈՒԽ Ե

### Ցուցումն բերմանց և պտղաբերութեանց աշխարՀին Աղուանից, ընդ առնէ 'ի դէպս Հարկին:

Բարեփայլուչ և ցանկալի է աշխարՀն Աղուանից ամենագլուխ շաՀիւք և բարձրաբերձ կոՀակօք Կովկասայ: Եւ գետն մեծ Կուր՝ Հեղասահ գնացիւք բերելով յինքեան զձկունս մեծամեծս և մանունս, ձկնելով զայս անցանէ և անկանի 'ի ծովն Կասպից: Եւ որ շուրջ զնովաւն են դաշտք՝ գտանի 'ի նոսա Հաց և գինի շատ, նաւթ և աղ, ապրեշում և բամբակ և անթիւ ձիթենիք: Եւ Հատանի 'ի լերանցն ոսկի, արծաթ, պղինձ և գեղնախունկ: Եւ որ ինչ վայրենիք՝ առիւծ, ինձ, յովազ և ցիռ: Եւ 'ի թռչնոց յոլովից՝ արծուիք և բազէք և նմանք նոցին: Եւ մայրաքաղաք ունի զմեծն Պարտաւ:

## ԳԼՈՒԽ Զ.

### Գերութիւն Երուանդն Արտաշիսի որդւոյ որդւոյ Տրդատայ.

Պատմութիւն ճշմարիտ տաւել քան զհնախօսահիլն Առանայ 'ի Վաղարշակայ տանս Արշակունեաց այլ ինչ ոչ գըտաք մինչև ցքաջն Վաղարշակն, որ միանգամայն տիրեաց կողմանցս Արշակունեաց: Իսկ 'ի հասանել ժամանակի երևման Արեգական արդարութեան և յայց լինել փրկութեան մերոյ անքնին Աստուածութիւն՝ լոյս փառաց և էութեանն Հօր ծագումն՝ զանօրինականն կատարեալ զամենեցուն, նաստեակ յէութեանն փառս, ուստի ոչն էր մեկնեալ: Նոյն զօրք և զցանկալի աշակերտս իւր առաքեաց քարոզս տիեզերաց, որով և մերոցս աշխարհաց վիճակեցաւ սուրբ առաքեալն Թադէոս: Սա եկեալ 'ի Հայս յԱրտազ գաւառ՝ անդ առնու զվախճան մարտիրոսութեան 'ի Սանատրկոյ արքայէն Հայոց: Նոյն աշակերտ նորա սուրբն Եղիշէ գառնոյ յԵրուսաղէմ և պատմէ ըղձնչալի նահատակութիւնն առաքելակցացն նորա: Ընդ անոր յաջորդանէ Սուրբ Հոգւոյն ձեռնադրի Եղիշէ 'ի ձեռաց սըրբոյն Յակոբայ եղբօր Տեառն, որ էր առաջին հայրապետ Երուսաղէմի: Նոյն վիճակ առեալ իւր զԱրևելս՝ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ Պարս, մտանէ 'ի Մազքութըս՝ խոյս տուեալ 'ի Հայաստանեայց, և սկիզբն առնէ քարոզութեան 'ի Չողայ. և 'ի տեղիս տեղիս զբազումս աշակերտեալ՝ ծանոյց զփրկութիւն: Անտի եկեալ յՈւտի գաւառ 'ի Արհաւն քաղաք երիւք անձամբք աշակերտելովք, որոց անօրէնք ոմանք զկնի եկեալ՝ մի յաշակերտացն ընկալաւ 'ի նոցանէ զնահատակութեան վախճան, և երկուցն թողեալ զերանելին Եղիշէ գնացին զկնի խաղխաղիչ արանցն: Իսկ սուրբ հայրապետն՝ եկեալ 'ի Գիս, կանգնեաց զեկեղեցի և մատոյց

զմնարիւն պատարագն*)։ Եւ անտի անցեալ ընդ դաշտսն Չերգունի 'ի տեղի զոհարանի գլխացանց կռապաշտից՝ անդ էառ զնահատակութեան պսակն։ Եւ անյայտ իսկ է, եթէ յորում եղեւ եկք կրացն։ Եւ անդէն 'ի գուբ մի մահապարտաց ընկեցան պատուական նշխարքն եւ ծածկեցան 'ի տեղւոջն, որ կոչի Խոմէնք, 'ի բազում ժամանակս։

## ԳԼՈՒԽ Է

Գիւտ նշխարաց Արեւելեայց լուսաւորչին՝ սրբոյն Եղիշէի։

Ոչ է պարտ ծածկիլ ճշմարտութեանն եւ ընդ փակմամբ լինել լուսոյ։ Յետ բազում ժամանակաց երեւեալ նորա երկիւղած արանց ոմանց տեսլեամբ՝ զան միախումբ ժողովել 'ի տեղի գբոյն անդ եւ տեսանեն զոսկերս յոգունս շեղջակուտեալս՝ եւ առհասարակ տարակուսեցան. սակայն հանին զիջելին եւ հակեցին յաղօթս զգիշերն զայն։ Եւ եղեւ յառաւօտուն շարժումն մեծ՝ մինչեւ որ անդն կային անկանել յերկիր։ Եւ եկն հողմն սաստիկ յանապատէն՝ ցիրեցան ապարեալ զանարգացն ոսկերս ընդ դաշտն ամենայն, եւ մնաց միայն 'ի տեղւոջն առաքելականն այն նշխարք՝ զորս զգլուխն միայն մեծահաւատ ոմն Սախիմննոս քահանայ Մլուեկան դեղջէ յափշտակեալ 'ի միջոյ անձապարեալ յերկիր իւր 'ի բաց գնաց. եւ շարժեալ բազմութեանն զկնի նորա՝ մառախուղ խաւարային ընդ մէջ անցեալ զարհուրեցոյց զնոսա, որք եւ դարձան 'ի բանակն. եւ տեսլեամբ յայտնեալ սրբոյն Եղիշէի՝ տարան հանդուցին զնշխարս նորա, ուր եղեալ էր գլուխն յաւանն Ռուեկան 'ի ձեռն սրբոյ քահանային Սահ-

*) Աստանօր յօրինակս մեր մաշեալ տեսանի 'ի գրչաց հետագայ բանս. ,,Ցայսմ տեղւոջ եղեւ սկիզբն արեւելեայցս եկեղեցեաց, մայրաքաղաքաց եւ լուսաւորութեան տեղի''։

փաննոսի, և ապա անտի փոխեցին 'ի Ներսմեհրայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Գ.րիշաիկ՝ 'ի փառս տեառն Աստուծոյ ամենակալի: Իսկ յետ բազում ժամանակաց բարեպաշտն Վաչական Աղուանից արքայ կանգնեաց զսիւն 'ի տեղի նահատակութեանն, և սենեկապանն արքայի մենակեաց եղեալ 'ի վերայ սեանն՝ կատարի:

## ԳԼՈՒԽ Բ.

Բան հարկէ պատմել յԱռանայ մինչ ցՈւռնայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ու քաջն, այլ հարեւանցի քրեցա, որ էին 'ի դէպս էր տեղեակ լինել:

Յոյժ ցանկալի էր ըստ կարգաց դնել զպատմածս, որ ինչ յԱռանայ նախադասութենէն ցայսր գործք, բայց արևելեայցս բազմազգութիւն և կատարածացն հրկիզութիւնք ամբոխեալ ցուցանէ զօրացէն: Սակայն յայսմ վայրի նախատորէ մեզ քերթողահայրն Մովսէս զպատերազմն Արտաւազդայ ընդ Հռոմայեցիս. վասն զի 'ի գումարելն նորա զօրաբանակն Ատրպատականաց՝ անդր կոչեաց զհզօր ազգս լերինն Կովկասու և զզօրս Աղուանից և Վրաց և խաղաց 'ի Միջագետս, և սոյն ուժով հալածեաց զզօրսն Հռոմայեցւոց: Իսկ 'ի շահատակելն Արտաշիսի 'ի վերայ Երուանդայ՝ էր նա 'ի սահմանս Աղուանից յՈւտի գաւառի, թողու անդէն զզօրսն և ինքն գնայ յիւր քաղաք: Եւ եկեալ Արտաշէս միաբանէ զզօրս Աղուանից ընդ ինքեան՝ եւանէ առ ափն ցամաքին Գեղամայ և սրով վանէ զԵրուանդ և ինքն տիրէ Հայաստանեայց: Զ.այսու ժամանակաւ միաբանին Աղուանք ընդ նախարարացն ամենեքումբք և մանաւանդ ինչ 'ի Վրաց՝ և մեծաւ ամբոխիւ տարածանին յերկիրն Հայոց: Խոզմէ և Արտաշէս զզօրս իւր ընդդէմ նոցա և բանակի առ Կուր գե-

տով. սաստկանայ պատերազմն և ըմբռնի արքայորդին Ալ-ուանից 'ի ձեռս Արտաշիսի: Վասն այսորիկ զօրիորդն Սա-թենիկ առնու 'ի կին Արտաշէս և դառնայ՝ խաղաղութիւն հաստատեալ: Վախճանի հայրն Սաթենկայ և այլ ոմն բռ-նացեալ թագաւորէ և զեղբայրն հալածէ: Եւ գալեալն Ար-տաշիսի Սմբատ՝ եկեալ զօրու մեծաւ վանէ զբռնացեալն և տիրել տայ եղբօրն հայրենի աթոռոյն, և դառնայ մեծաւ աւարաւ և բազում գերեօք 'ի Հայս և բնակեցուցանէ զգե-րեալսն 'ի Շաւարշան, որք էին յԱրտազ գաւառէ: Եւ նա-խարարութիւնն Առաւեղեան տոհմին յազգէ Սաթենկայ է կարգեալ, որ 'ի Մեծէն Խոսրովու հօր Տրդատայ խնամեցաւ տուն քաջի 'ի Բասեաց եկելոց:

## ԳԼՈՒԽ Թ.

Հաւատալն Ուռնայրի և վկայելն 'ի ձեռաց Սրբոյն Գրիգորիսի և Աղուա-նից աշխարհին լուսաւորելն ընդ ձեռամբ Ուռնայրի արքայի:

Վասն զի երանելին Եղիշէ առաքելագործն մշակութիւն 'ի ծագաց երկրի սկսեալ՝ լուսաւորեաց զմատունս ինչ միայն արեւելեայցս հիւսիսոյ, այլ ոչ զամենեսեան. և նոյն ինքն ըղ-բարուտքն կատարեալ զմարտ 'ի վերայ ժողովրդեանն իւր ծըղ-նեցաւ: Եւ յոր ժամանակս այց արար Աստուած ազգի մարդկան և ընդհանուր ծաղկեցոյց զարեւմտեանն կոյս մեծ կայսերբն Կոստանդիանոսիւ՝ լուսաւորեաց և զՄեծ Հայս երանելեաւն Տրդատաւ, ած 'ի հաւատս և զնս արեգակնն. որք սակաւ ինչ ծանուցեալ էին զծագումն փրկութեան ճըշ-մարիտ Արեգականն և կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերա-գոյն լուսաւորեցան: Եւ այսք 'ի միում ժամանակի եղեն հը-րաշք աստուածուստ: Եւ էր Ուռնայր արքայ Աղուանից քե-ռայր Շապհոյ Պարսից արքայի՝ քաջազօր այր որ 'ի մեծա-

մեծ պատերազմաւն զհոյակապ անուն ժառանգեաց, 'ի մէջ Հայաստանեայց նշան յաղթութեան կանգնեալ. առնու և զվերջին ծնունդն 'ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ, զայ լուսազգեստեալ 'ի Սուրբ Հոգւոյն՝ առաւել լուսաւորէ զԱղուանս, կայ մնայ որդի մշտնջենական լուսոյն և փոխանէ զմարդկային կեանս: Իսկ զկնի սորին մահուանն խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս 'ի կաթուղիկոսութիւն իւրեանց, զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց 'ի սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբն լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ. որ և այսու կանոնաւ կացին աշխարհն Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր:

## ԳԼՈՒԽ Ժ

Վասն Վաչէի Աղուանից արքայի, թէ զիարդ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] յԱ[illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] ընդ Պարսս և [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Յերկոտասաներորդի ամի թագաւորութեանն Յազկերտի հասանէ նմա փոխման մահու. և ընդ հակառակս լեալ երկու որդիքն նորա 'ի վերայ տէրութեանն կռուեցան. և մինչդեռ նոքա 'ի խռովութեան էին՝ ապստամբէ և Վաչէ արքայն Աղուանից, զի էր նա նոցա քեռորդի և յառաջ լեալ էր քրիստոնեայ ըստ հայրենի աւանդիցն, զոր Ուռնայր հաստատեաց և անօրէնն Յազկերտ արար բռնութեամբ զնա մոգ: Իսկ յայնմ վայրի ժամ գտեալ պարապոյ անձին իւրոյ՝ լաւ համարեցաւ մեռանել պատերազմաւ քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւն: Յընդերկար խռովութեանն Երեաց զենգին այն Ռահամ անուն 'ի Միհրեան տոհմէ, որ էր դայեակ կրտսեր որդւոյն Յազկերտի՝ զինեաց զօր անթիւ գնդիւ իւրով 'ի վերայ երէց որդւոյ թագաւորին. եհար սատակեաց

զգունդն և ձերբակալ արար զորդի Թագաւորին, զոր և ան-
դէն 'ի տեղւոջն սատակեաց. և զմնացեալ զօրսն ած հաւա-
նեցոյց և միաւորեաց 'ի գունդն Արեաց և Թագաւորեցոյց զիւր
սանն, որում անուն էր Պերոզ: Իսկ այլքն Աղուանից ոչ
կամեցան նուաճիլ անդրէն 'ի ծառայութիւն նորա. այլ խրա-
մանեաց զպահակն Ձորայ, էանց յայնկոյս և անցոյց զզօրսն
Մասքութաց, միաբանեաց ընդ իւր և զնոստան Թագաւորս
զեւառորդեայս, ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին և
բազում վնաս արար զօրացն այլքունի: Նա զրեալ երկիցս և
երիցս զՀրովարտակս աղաչանաց, ոչ կարաց (Պերոզ)'ի հաւա-
նութիւն ածել զնա, այլ զրով և պատգամաւ յանդիմանէր զնա
վասն 'ի զուր աւերելոյն զաշխարհն Հայոց, յիշեցուցանէր և
զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն, որոց փոխա-
նակ զկեանս տայր սիրոյն և վաստակոյն՝ զարեանն հատիք. լա-
լեցի ինձ չարչարանօք մեռանել քան ուրացութեամբ կեալ:
Նա իբրև գիտացին, եթէ ոչ բռնութիւն և ոչ սէր կարէ ա-
ծել զնա 'ի հաւանս՝ զանձ սաստիկ ետուն տանել յաշխարհն
Խոյլանդրաց և բացին զԴրունս Ալանաց և հանին զունդ
բազում 'ի Հոնաց և կռուեցան ամ մի ընդ Աղուանից ար-
քային: Նա թէպէտ պակասեցան և ցրուեցան զօրք նորա, սա-
կայն զնա ոչ կարացին ածել 'ի հաւանս: Այլև հարուածք
մեծամեծք հասին 'ի վերայ նորա, էր որ կռուով և էր որ չա-
րաչար ախտիւք ծիւրեցան: Նա երկարեալ պաշարմանն՝ մեծ
կողմն աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք 'ի նմանէ բաժանե-
ցաւ: Ապա յղեաց առ Վաչէ Թագաւորն Պերոզ՝ «Դքոյրդ
իմ, ասէ՝ և դքեռորդիդ 'ի բաց տուր ածել, զի 'ի բնէ մոգ
էին և դու քրիստոնեայ արարեր, և աշխարհդ քո քեզ լի-
ցի»: Իսկ երանելին այն ոչ թէ 'ի վերայ տէրութեան կռուէր,
այլ յաստուածպաշտութեանն մրցէր. և նա տանել զմայրն
և զկին, և զաշխարհն բովանդակ 'ի բաց եթող և ինքն զա-
ւետարանն առ և 'ի բաց կամէր գնալ: Զայն լուեալ Թագա-

ւորին Պերոզի 'ի գլուխ ելեալ՝ զամենայն զհասն 'ի Հայր իւր արկանէր, մանուա երդմունս կնքէր և տայր տանել առ նա, եթէ «յաշխարհէդ միայն մի գնար, և զոր ինչ ասես՝ առնեմ»: Իսկ նա հաճեցաւ միայն զանդհականն առնուլ բաժին իւր, զոր 'ի հօրէն էր առեալ հայր երդ, առ զայն 'ի թագաւորէն և նստաւ 'ի նմա միայնակեցօք հանգիւր: Նա այնպէս անզբաղապէս կեայր ընդ Աստուծոյ. և ոչ քիչեաց ամենեւին, եթէ թագաւոր լեալ իցէ յառաջ: Այս եղև վերք նորա:

## ԳԼՈՒԽ ԺԸ

Թուղթ Գելասայ Եպիփանեայ առ սուրբն Վաչէ եւ Երեմիայ ընկերին։

Ի ժամու սուրբ սիրոյ քո առաքինութեան 'ի կամաց անձին խոյ բղխեցին միտք իմ երկնաւոր զօրութեամբն՝ յօժարեցայ պատմել լինել բանիւ. բայց ահ անկաւ ինձ մեծ և ահագին և բարձրագոյն քան զերկնի երկինս և խորագոյն քան զանդունդքն կլանողն, և յամենայն կողմանց շուրջ պաշարեաց զինև 'ի վեր և 'ի վայր, 'ի վերջ և յառաջ, յաջ և յահեակ. փախչել ոչ կարեմ և խորամուտ լինել երկնչեմ, մի եթէ գուցէ ընկղմեցայց որպէս առաքեալն Պետրոս 'ի ծով անդնդային: Բայց եթէ տէր Յիսուս ձեռն կառկառեսցէ յօգնականութիւն, յայս սակաւ քաջալերեցայց և յանձնս մխեցայց: Քանզի բան ունիմ մեծաց գործի, եթէ գոցի ինչ հիւթանիւթ 'ի հոգեկիր յառաքինութենէ արանց քաջաց, որք զհրեշտակս ածին 'ի զարմացումն և անդրի օրինօք անձամբ անձին օրէնք եղեն, առանց օրինաց զՏէրն 'ի վեր ծանեան և զեղեալն ընդ օրինօք գիտացին, և առանց առաջնորդի և մարգարէի ուրուք կամ երկնաւոր հրեշտակի աստուածասունք եղեն: Արդ ահա յորմէ երկուցեալն էի՝ 'ի ձեռն սիրոյ մտօք և յուսով մերձենամ և հաւատով աներկիւղ

հաստատիմ, և սկսանիմ ուստի արժանն է սկսանել: Որպէս յառաջագոյն ակն Քրիստոսի բնակեաց 'ի նախնին ձեր Մեոնայր, նախանձ երկնաւոր եկեր ընդ Տրդատայ Հայոց արքայի՝ իբրև լուաւ զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, որ 'ի ձեռն Սրբոյն Գրիգորի նշանք և արուեստք գործեցան յաշխարհին Հայոց՝ դառնալ փափագանօք սոցա 'ի բազում շաւղաց մոլար ճանապարհին առ ճշմարիտն Աստուած, որոյ ծանօթութեամբ և բարեկամութեամբ 'ի բաց ընկեցին զծանրատաղտուկ զլուծն հեթանոսաց. թեթևացան, թօթափեցան, թեւակոխեցան, թռեան և յերկինս ճախրեցին: Զայս լուեալ քաջին Ոսոնայրի ոչ զլացաւ և ոչ դադարեաց և ոչ 'ի ձեռն ծառայական հրեշտակի, այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծօք, նախարարօք և բազմազգունդ զօրաւք գայր հասանէր յաշխարհն Հայոց, յանդիման լինէր հսկայազօր թագաւորին: Իսկ նորա եղբայրաբար սիրով և բարեկամութեամբ ընկալեալ՝ զոլոր զինքն առաջի առնէր նմա, զներքին և զարտաքին խորհուրդս մերկանայր և դնէր առաջի նորա հանդերձ որոմն Գրիգորիւ և ամենայն բազմութեամբ զօրացն Հայոց: Խոնարհէր թագաւորն ձեր, անկանէր և պատէր զոտիւք և զձեռօք, պատմէր զամենայն մոլորութիւնս հեթանոսաց և խոստովան լինէր վասն ողխագործ մեղացն անցելոց: Պաջալերէր զնոսա սուրբն Գրիգորիւ 'ի գալուստ մարմնաւորութեան Որդւոյն Աստուծոյ, որ 'ի թողութիւն եկն և ոչ 'ի դատապարտութիւն, 'ի կեցուցանել և ոչ 'ի մեռուցանել, և յառաջանցելոցն 'ի հողոյ կեանս խոստացաւ: Զայս ամենայն իբրև լսէր թագաւորն ձեր՝ ինքն և ամենայն զօրքն որ ընդ նմա զաւուրս քառասուն պահոց առանձնէին զանձինս իւրեանց, 'ի բաց հրաժարելով յառաջին բազմանելի գործոց: Եւ յաւուրն յիններորդի իբրև ուրացան 'ի սատանայէ և յամենայն գործոց նորա և խոստովանեցան զՍուրբ Երրորդութիւնն՝ էջ թագաւորն յամենասուրբ ջուրսն և ամենայն

զօրքն ընդ նմա: Նա կատարեաց զնոսա քահանայութեամբ 'ի վերստին ծնունդն յերկնաւոր յորդեգրութիւնն. և եղեն ամենեքեան լցեալ Հոգւովն Սրբով: 'Ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն 'ի Հռոմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային: Այսու երկնաւոր բարիօք լցեալ՝ եկն Ուռնայր արքայ եմուտ յաշխարհն Աղուանից, ուսոյց և կատարեաց զնոսա առաքելական կանոնօք. ընկալան ամենեքեան զդրոշմ երկնաւոր և գրեցան 'ի ժառանգութիւն երկնաւոր: Հալածեցան դևք աշխարհէդ, խափանեցան զոհք և ճենճերք, անցեալ մոլորութիւնն, բարձրացաւ ճշմարտութիւնն, թագաւորեաց լոյսն աներևոյթ, մերժեցաւ կամաւոր խաւարն. կարգեցան երեխայրք եկեղեցւոյ, տասանորդեցան պտուղք կալոյ և հնձանաց, անդոց և խաշանց և ամենայն ընտանի անասնոց. նա և հող երկրին 'ի նոյն վիճակեցաւ և հաստատեալ կալակարգ ուղղութեան առ նախնեօքն ձեռամբ Հանւոյք և Հայրն քայով երանելաւ մինչև 'ի ժամանակս քոյդ սքանչելի տէրութեանդ: Վաչագան, որ հին էր յաւուրցն առաջին մարդոյն՝ եսես զչքնաղ ծնունդ քոյդ բնութեանդ յառաջին 'ի հայրենի հաւատոյ. յոյժ կասկած 'ի միտս անկաւ չարաներ թշնամւոյն, եթէ զուցէ ընդ որ եղև մուտ կենաց յաշխարհս արևելից, ընդ նոյն եմուտ ծնունդ ճշմարտութեան յաշխարհըս Աղուանից: Աշտապեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ առաւել քան յաւուրս Յոբայ արդարոյ. ժողովեաց և գումարեաց զզօրսն իւր խաւարայինս՝ յայտնեաց նոցա զախտըն չար որ տանջէրն զնա. ամենեքեան զահի հարան և գոչացին, 'ի միաբանութիւն եկեալ՝ զելս իրացն խնդրէին. մի՛ այդպէս՝ ասեն, տագնապիր յանձն քո, ով քաջ, կանուխ է մոլորութիւնս մեր քան զճշմարտութիւն նորա. տկար զադամաւն յաղթեցեր առաջին մարդոյն, մեծ թագաւորաւ տղայոցն չկարեմք կալ առաջի: Զայս ասացին և զհամատարած

ծովն շարժեցին և յուզեցին զխաղաղութիւն ալեաց նորա: Սկսաւ մրմռալ, եռանել, տարածանել և ապականել զդաշտս և զլերինս: Դէն եհաս 'ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոր գազանօք, խառնադրոշմն նշանօք, բազմաձայն փողովք, զալարափող գոչմամբ, անտառախիտ նիզակօք, ճառագայթաւոր սուսերօք, ահեղդիմեայ վահանօք, թանձր և ստուար մկնդակօք. Հողեղէնքն զհողեղէնս երկեցուցանէին, ապականացուքն զանապականս կամէին կորուսանել, և մնաստուածքն զաստուածային շառաւիղ կամէին յարմատոյ կորել. երկիցս և երիցս մարտեցան և ոչ ամաչեցին: Իսկ այն, որ նստին յերկնից յերկիրս և տեսանէ զաշխարհս ամենայն, ակնարկեալ և կշռեալ զբարի օրէնս և որ ընդդէմ իցեն՝ նոսա դէպ միայն օրինաւոր. Թոյլ ետ սպանել դէպ շուրջ սաստիկ հնոցին. վառեցան, բորբոքեցան և այրեցան իբրև փուշք 'ի մէջ հրոյ: Նմանեցար դու երից մանկանցն 'ի հնոցին. զզօրութիւն հրոյն շիջուցեր, զկաշորութիւն կայծականցն 'ի կակղութիւն փարդի փոխեցեր, և զծրդձկութիւն ծխոյն 'ի ազխտակութիւն շուշանի շրջեցեր, զայրեցող բնութիւն հրոյն յարարող զօրութիւն ամփոփեցուցեր և զԱրարողն Աստուծոյ յերկնից յերկիր ածեր քեզ յօգնականութիւն: Խնամատուքն նոցա յիմարեցան, քաջք նոցա վառեցան, ապաստանք նոցա դադարեցան, նախահատակք նոցա դողեցան, բազմութիւնք նոցա սակաւացան: Երանի քեզ և երանի որ մերձ իցեն առ քեզ. սակաւ էիր թուով և անթիւ եղեր բազմութեամբք, սակաւ էիր յայտնեօք և անթիւ եղեր անյայտնեօք: Նիզակ քո նիզակ Յեսուայ, և պատաղնութիւնք քո պատաղնութիւնք պատարագելոյն Աստուծոյ, որ իջանէ ընդ նմա յաւուրն յաղթեան նորա. ձայն, որ զերկիր շարժէ, զվէմս դղրդէ, զգերեզմանս աւերէ, զմեռեալս յարուցանէ, զհնացեալս նորոգէ, զպատառատանն հատուցանէ՝ ոմանց 'ի ձախակողմն և ոմանց յաջակողմն. այն

ձայն, որ Աստուծոյ միայն է և նմա վայելէ, քեզ՝ խրատ հա-
ւատարիմ ծառայի և օրհնելոյ և ժառանգաւորի արքայու-
թեանն, ես զշնորհս երկնաւորս, որ զաւուրն յարութեան
բերէ զանմահութիւն: Որ պարծէր 'ի չարն՝ տագնապեցաւ, որ
խիզախէր 'ի մոլորութիւնն՝ յիմարեցաւ: Ամենայն ինչք քո-
յոյ գնդին կրկին են, եթէ զրահք էին պահապան մարմնոյ,
ընդ նմին և զրահք հաւատոյ. եթէ սաղաւարտ էր զգուշու-
թիւն սուսերի, ընդ նմին և սաղաւարտ փրկութեան. եթէ
վահան ունէիր ընդդիմահար լանջաց ատաքինեաց, ընդ նմին
ունէիր և զվահանն համբերութեան հաւատոյ. եթէ նետ 'ի
կորովեց քոց թռչէր ուղղակի, ընդ նմին և աղօթք սուրբ
խնդրուածոց քոց փաղփաղակի գնէր 'ի վերոյ զամպէին քան
զերկինս առաջի Աստուծոյ. եթէ շողայր սուսեր 'ի բազուկդ
ատաքինիս, լուսաւորութիւն հաւատոյ քոյ 'ի մէջ հրեշտա-
կաց զփայլատակմունս արձակէր: Դրօշակք քո դրօշակք երկ-
նաւորք և տէգ նիզակի քո ճառագայթաւոր իբրև զլար ար-
ծաթոյ արեգական: Այս է՝ որ զահի հարկաւ էի 'ի սկզբան
պատմութեանս, եթէ զնորդ կարացից բանիւ պատմել զայն-
մանէ, որ 'ի վեր քան զբան գտանի. զի բանս զչորեքնիւթեանս
աշխարհ ոչ կարէ ասել: Եւ այս վիճակ ոչ ամենեցուն, այլ
որք քաջն դեգերեցան յուսումնասիրութեան՝ 'ի թուաբա-
նին, յերկրաչափականին, յաստեղաբաշխականին, 'ի բժշ-
կականին, և այլս 'ի ծայրս ծագաց հանճին— 'ի մարգարէա-
կանս, և յառաքելականս և յաւետարանականս, որ է սկիզբն
և ձիւղումն այլոց: Եւ թէպէտ և ունէի զայս ամենայն ար-
ուեստս նիւթականաց պատմել, և էիր դու ևս երբեմն նիւ-
թական, այլ այժմ զաննիւթոյն ունիս զանմահութիւն: Ընդ
արուեստին կշռեցից զքեզ, դու պայծառագոյն քան զարու-
սեակն զնշոյլս արձակես: Արուսեակն զվեց ամիս արփիակ է
և վեց ամիս գիշերավար, իսկ դու յօր աւուր արուսեակ և
'ի վեր քան զարուսեակ: Արուսեակն յայգուն պահու և եթ

երեւի, իսկ դու 'ի քսան և 'ի չորս ժամս՝ 'ի տունջեան և 'ի գիշերի: Եթէ զլուսինն ածից քեզ յօրինակ՝ յոյժ ծիծաղելի է իմաստնոց՝ երկոտասան անգամ 'ի տարւոջն վիժած, ժանգակոծ, մանգաղաձև, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս, հիւանդոտ, գիշերագնաց, խաւարասէր, լուսատեաց, չղջիկանման, պակասընթաց, հրատանջ, բազում անգամ 'ի թագուստ մնեալ. իսկ դու լիալոյս, բարձր, լուսատարատ, աւետաբեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալերիչ, պայծառ, գեղեցիկ քան զամենայն հասակակից ընկերս քո: Ոչ ինչ բաւական քեզ բաւեմ ասել, որ քան զարեգակն 'ի մեր գաւառիս. ոչ զնա թշնամանեցից և զքեզ գովեցից, այլ զնութիւն նորա պատմեցից քեզ՝ — չեզագնաց, թերընթաց, կոշմնաւոր, սառնորաշուք, հարաւարնակ, ձմեռնասանջ, ամառնակէզ, թօնուտ գարնանի և աշնուտ աշնանի, գիշերակուլ, աւաւօտածին, ծաղկաթարշամ, գալարացանոք, կենդանահալած 'ի տաւերս 'ի մէջ աւօրէի և կիսաբաժին յաւուրն ողջոյն: Յիրաւի սմա Յոյնք Ապողոն կարդացին: Եւ ապա եթէ զլուսնաքեայ ճառագայթն ածցես զմտօք, ընդ նմին և զայն գիտասջիր, զի գիշերն է ծածկեալ, ամպովք թագուցեալ, փոշւով մթացեալ և մրրկօք պղտորեալ: Դու արեգական նմանեցար, 'ի Հօրէ զօրացար, Որդւոյ քաջալերեցար և 'ի Սուրբ Հոգւոյն լուսաւորեցար: 'Ի գիշերի տեսանես և 'ի տունջեան թափ անցանեն ճառագայթք հաւատոց քոց: Նայեցից առ քեզ բան ինչ առակաւոր. յամենայն կողմանց քաջացար, որպէս եւ քան զարծուի և երագալուր քան զփի 'ի հնդկաստանաց: Ոչ միայն զերկինս տեսեր, այլ և զերկնից զմեծն տեսեր, և զփոքրս թողեր, զանցաւորս ետուր և զանանցն առեր: 'Ի բաց ընկեցեր զանկեալ թագաւորութիւնն, և ահա կայ պահի քեզ անձեռագործ պսակն, զոր ընդունելոց ես յամենատուր ձեռացն Քրիստոսի: Որ թողէ վասն աւետարանին զհայր և զմայր, զքոյր և զեղ-

բարս և զամենայն ստացուածս իւր՝ զհարիւրապատիկն առ-
նէն ընկալցի և զկեանս յաւիտենից յաշխարհին՝ որ ոչն ան-
ցանէ: Զայդ ազգաւ ումեք դիւրագոյն է առնել, իսկ առն
թագաւորի իբրև զքեզ՝ անհնար է: Այս եթէ արասցէ ոք,
որպէս արարերդ՝ մարդկան անհաւատալի է և հրեշտակաց
զարմանալի, նաև Աստուծոյ նմանելի, որ թողեալ զանթիւ
և զբազում զօրս հրեշտակաց՝ եկն 'ի գծուծ կերպարանս
մարդկան: Գտաւ քո գործդ այնմ նման. նա բոլոր աշխար-
հի եղև կեանք և փրկութիւն, և դու բոլոր աշխարհի բա-
ցեր զդուռն փրկութեան: Քոյին իսկ աշխարհի հայրենի հա-
ւատքն պահեցան, եկեղեցիքն չէն մնացին, վկայարանք 'ի
խաղաղութեան, քահանայք 'ի քահանայութեան, պատա-
րագք 'ի սեղանս, մարգարէք յընթերցուածս, առաքեալք 'ի
մխիթարութիւնս, սաղմոսերգուք 'ի յօրհնութիւնս, կու-
սանք 'ի կուսութեան, կրօնաւորք 'ի սրբութեան և ամենայն
ոք յիւրաքանչիւր կարգի: Եհաս լուր առաքինութեան քո
յարևելից մինչև 'ի Գադարոնն, 'ի հարաւոյ մինչև 'ի հիւ-
սիս: Գրեցաւ անուն մարտիրոսութեան քո յանկի տախտակ-
ացն ընդ առաքելոյն և ընդ նախավկային, ընդ հայրապետս
և ընդ եպիսկոպոսապետս միանգամայն և 'ի դպրութեան կե-
նաց 'ի յերկինս: Զգոյշ լեր, քաջանկէ, որ այսչափ մեծա-
մեծաց արժանի եղեր, և յայսչափ բարձրութիւնս վերացեալ՝
հասեր: Հաստատուն կաց 'ի յոյսն, անհաս լեր 'ի սիրոյն և
համբերող լեր 'ի հաւատս ճշմարտութեան, զի մի՛ վիշապն
մեռեալ զատուն շարժեսցէ 'ի վերայ կենացդ քոց: Զի եթէ
մինչ տղայն էիր՝ յաղթեցեր նմա, 'ի չափ հասեալ՝ զինեմ,
թէ առ սմն կոխես զամենայն մեքենայս չարեաց նորա: Նմ
ուչափիմիւքս զքեզ սիրեն՝ և մարթ էր զայս բանիւ ընդ պատ-
մութեամբ արկանել — բազում մագաղաթի ծախք լինէին:
Բազում անգամ յառաջ եկի վասն քո սիրոյն գալ առ քեզ,
և այժմ 'ի մերմէ բարեխօսութենէ և յամենայն սուրբ ուխ-

ափ եկեղեցւոյ յանձն արարեալ զքեզ Հոգւոյն Սրբոյ՝ Տէր ընդ քեզ՝ ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ ԳԻՒՏԱՅ ԱՌ ՆՈՅՆ ԱՐՔԱՅ։

Ա՛կայ Քրիստոսի, չարչարակից խաչին, 'ի հրեշտակաց փառաւորեալ պատմուճանաւ զարդարեալ՝ անպարտ որդեակ իմ Վ՛աչէ Աղուանից արքայ, Գիւտ եպիսկոպոս, 'ի Տէր բերկրեաց։

Յանկարծակի հեզգութիւնէ չէարեաք համարձակիլ առնել բանս մխիթարութեան յաղթողիդ աներեւոյթ պատերազմին, որ ոչ 'ի մարդկանէ առեալ քաջալերութիւն, այլ յոյժ յահեղ գործութենէն Քրիստոսի՝ քեզ յօգնականութիւն կոչելով՝ մեհեկացն զերագանցեալ քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար։ Բայց արդ զքեզ 'ի հաւան ածեալ քոյով ժուժկալութեամբդ աղաչեմ, զի ախորժ և անոյշ իմ ողջոյն քեզ թուեսցի։ Եւ ըստ գոհանալով զքո վերափերութենէդ՝ ով զօրական Քրիստոսի, ոչ ունիմ զիտութիւն յաղթութեանս իմում կարծութեան՝ պատարտութեան զենն, և ոչ 'նիւթ ինչ ճարտարեալ՝ իմաստութեամբ համբերել կարացից 'ի կեղզգեստ զօրութեան քում արիութեան։ Նա մանաւանդ եթէ ամենայն հռետորական փիլիսոփայքն աշխարհին Յունաց 'ի մի անդի գումարեսցին, ոչինչ կարասցեն առնել զարմանն զօրութեան քում հոգեկից յաղթութեանդ։ Վ՛ասն զի դու ծանեար սիրելով զԱստուած յամենայն սրտէ, յանձնէ և 'ի զօրութենէ. զամենայն ինչս և զմեծութիւնս փոխանակեցեր ընդ միոյ Տեառն ամենայնի, զի զնա ընդ քեզ հաշտ ունիցիս, ոչ միայն զերկիրս, այլ և զերկնից զմեծութիւնն առեալ ընդունեցեր։ Հրաժարեցար 'ի զոհիցն ձեռձերաց զխաւար հեթանոսաց՝ և ահա եղեր հոտ անոյշ 'ի Քրիստոս, որ հասեալ մինչև յարեւմուտս՝ հաշակեալ ծաւալեցաւ և բերկրեալ զուարճացոյց զամենեցուն հոգիս։ Թո-

ցեր զմեծութիւն երկրային՝ որ ստէթի մեզ, ժառանգեցեր զարդարութիւն հանդերձ երկնային մեծութեանն: Հեռ այսր բնաւ խիկ 'ի զբօսանաց աշխարհիս և մերձեցար 'ի Քրիստոս, որ է հանգիստ խաղաղութեան: Եւ դու մարթաս զբանս իմ 'ի մի տեղի խօսեցայց, թէ էիր մարդ և եղեր հրեշտակ. ունէիր ազգականս յերկրի և գտեր եղբայր Քրիստոսի 'ի յերկինս. էիր մահկանացու և եղեր անմահ. ոչ թէ դու միայն ես անմահ, այլ հաղորդակցութիւն ունիս առ Քրիստոս, որ բազում մահկանացուաց կարէ տալ զկենդանութիւն: Ձանկալի ես հրեշտակաց, փափագելի մարդկան, սոսկալի անձկալի ինձ հեռացելոյս՝ չլինելոյս մարտակից քեզ յանկարծայն պատերազմի ամենաչարին սատանայի: Բայց արդ աղաչեմ և փոխանակ սակս չունելոյ զնա 'ի մօտ և չկարէլ զիմ հեզութիւնս: Այն որ արարն զքեզ խմում որդեգրութեանս արժանի, նոյն և շնորհեսցէ մեզ զքեզ առողջ հոգւով և մարմնով տեսանել յաշխարհի և փակել 'ի քո շնորհալից փառաւորութեան:— Ողջ լինել 'ի Քրիստոս՝ լիցիս մեզ բազում ժամանակս պարապեալ և լցեալ սիրովն Քրիստոսի. ամէն:

## ԳԼՈՒԽ ԺԲ

Պատերազմն Տրդատայ ընդ Բասլաց արեւելեան յաշխարհին Աղուանից, և Բռնաւորելն Սանատրկոյ 'ի վերայ Աղուանից, և ընդդիմանալն Հայոց, և Խոսրովայ գալն յօգնական զօրօք և առնուլ զԱղուանս և զՃորէս:

Եւ լինի զօրաժողով Տրդատայ մեծ թագաւորին Հայոց. և իջեալ 'ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականաց սաստիկ պատերազմաւ: Եւ զթագաւորն Բասլաց մարտակից իւր լեալ, որ ձգեալ զձեռան արւոյն Տրդատայ և ոչ զօրեալ ընկճել զնա՝ ինքն լինի միջնորդ 'ի նմանէն. և վարէ Տրդատիոս զնոսա կոտորմամբ մինչև ցՀոնս. և բազմաց լինի անկանել 'ի զօրացն Հայոց: Եւ Արտաւազդ սպարա-

դեան Հայոց Մանդակունին մահուանն: Արդ առնու պատանեակս Տրդատիոս և միաբանեալ զհիւսիսայինսն՝ դիմէ 'ի վերայ Շապհոյ արքային Պարսից: Իսկ 'ի փախճանելն Տրդատայ՝ Սանատրուկ ումն թագաւորեաց Աղուանից 'ի փայտակարան քաղաքի և եկաց դիմակաց Հայոց: Իսկ խորհրդեալ որդւոյ Տրդատայ ածեալ զԱնտիոքոս յունական զօրօքն և զԲագարատարեանսն գնդին, և զՄիհրանն Վրաց բդեաշխ, այսոքիւք ամենքումբք միաբանեալ խաղայ 'ի վերայ Աղուանից: Աճապարէ Սանատրուկ զօրօքն Աղուանից և գնայ առ Շապուհ արքայ Պարսից՝ թողեալ զօր բազում 'ի քաղաքին Փայտակարան: Իսկ Անտիոքոս առեալ աւար բազում և բըհարկն արքունի՝ դառնայ առ կայսրն: Իսկ դարձեալ ժամ պարապ Սանատրկոյ՝ հրամանաւ Շապհոյ ժողովէ զզօրս Աղուանից թուով իբրև երեսուն հազար և արշաւէ 'ի միջոցս Հայոց: Իսկ զօրագլուխ ումն անարի հսկայ 'ի տիգաւորացն վառեալ թաղեւ կածեալ՝ շահատակէր 'ի մէջ պատերազմին առ Օշական առապարաւ. եթէ զինուք հարկանէին՝ ոչ գործէր, այլ ճախր առնոյր: Յայնժամ քաջն Վահան Ամատունի՝ նայեցեալ 'ի կաթուղիկէն, ասաց՝ օգնեա ինձ. և ուղղեալ զնիզակն՝ ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանէր զհսկագին վերայն:

## ԳԼՈՒԽ ԺԳ

Շապհոյ թագաւորեցուցանելն զՏիրան և փրկելն 'ի հեթանոսաց, և իրացուցանելն զՏիրան և խաղաղութեան հեթանոսացն, և մահն Արշակայ և գալուստ թագաւորելն և յոյժ Մեհրուժանայ և խոյս տալն Որոնայէ յայնմ պատերազմէ:

Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղութիւն ընդ Պարսս և լեալ օգնական Շապհոյ թափէ զնա 'ի յարձակմանէ հիւսիսայնոցն, որք զամս չորս բնակեալ յԱղուանս՝ նեղէին զՀայս: Արդ ըստ բարուց չարին Տիրանայ՝ կոր-

նայ 'ի Շապհոյ, և Արշակ նորին որդի առնու զթագաւո-րութիւն: 'Ի նմին ժամանակի եղև խռովութիւն Շապհոյ յազգացն հիւսիսոյ, և նա՝ անցեալ 'ի Բիւթանիա, նստի ամիս յոլովս, և ոչ կարաց առնել ինչ: Ապա սիւն առ ծովա-կին կանգնեալ, և առեալ 'ի վերայ՝ մատեան ընդ ոտիւք ու-նելով, նշան իմն կոչել առեալ զՊարս և մատեան զՀռով-մայեցիս: Մեռանի Արշակ և թագաւորէ Պապ. ապստամբի Մեհրուժան Արծրունի՝ զՆաքսոփեղին խորհեցեալ զկո-րուստ անձին իւրոյ. լինի մեծ պատերազմ 'ի մէջ Պապայ և Մեհրուժանայ: Յայնժամ քաջն Շերգիր՝ Գելաց արքայ մեռանի 'ի ձեռաց Սպանդարատայ Կամսարականի: Անդ առ-նու խոյ մեծ արքայն Աղուանից Ուռնայր 'ի Մուշեղէ Մա-միկոնէ՝ Վասակայ որդւոյ: Սատակի և Մեհրուժան յասպա-րապետէն Սմբատայ՝ պատկեալ բոցագոյն երկաթիւ զգլուխն, որպէս Ներսիսի աղօթիւք:

## ԳԼՈՒԽ ԺԳ

Սակաւիկ յաջորդութիւն տան սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և երանելի որդւոց նորին. և ընդ նմին յետնորդութիւն Սրբոյն Գրիգո-րիսի՝ որդւոյ Վրթանիսի՝ թոռին մեծի սրբոյն Գրիգորի 'ի կաթողիկոսու-թիւն Աղուանից և Վրաց, և ելն նորա յԱղուանս 'ի լուսաւորութիւն աշխարհին, և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն.

Արդ մի ոմն յաշակերտաց Տեառն, Թադէոս անուն՝ որ-պէս յառաջագոյն ասացաք, հանեալ սմա մասն ինչ Հայաս-տան աշխարհին, լուսաւորէր զկողմանս ինչ արևելեայ, մին-չև եկն հռչակելի պատերազմողն և երկիցս երանելի Գրիգոր, զոր 'ի մեռանելն Խոսրովայ Հայոց թագաւորի 'ի սպանանել զնա նենգութեամբ Անակայ Պարթևի հօրն Գրիգորի և իւր փախստեայ գնալով՝ հեղձամղձուկ 'ի ջուրս Երասխ գետոյ լի-

նէր—դայեկաց ոմանց առեալ փախուցեալ 'ի Յունաց աշխար-հըն զերծուցանէին զերանելին Գրիգորիոս: Նա այս լինէր նախախնամութեամբ մեծին Աստուծոյ յօրինակ նախամար-գարէին Մովսիսի, որ 'ի պատուեալ տապանակին 'ի մէջ ջուր-ցըն զերծանէր 'ի ձեռաց ամբարիշտն փարաւոնի առ 'ի փըր-կել զժողովուրդն Աստուծոյ 'ի ծառայութենէ եգիպտական տանջանացն: Այսպէս և ամենատուրն Գրիգոր զերծեալ 'ի սրոյ Հայաստան նախարարացն 'ի փրկութիւն պահէր նորին Հայոց աշխարհին և ամենայն արևելեան կողմանց՝ իբրև նա մի ընտիր 'ի կայսրն թագուցեալ 'ի յունական աշխարհին, ուր խոցոտեալ առաւելէր զանկրելոյթ թշնամին. զոր ընտ-րեալ յօրովայնէ մօր իւրոյ և սրբեալ յարգանդին յաղթող նահատակ, առաքեալ միանգամայն և վկայուչ առեալ քա-հանայապետ Թորգոմեան աշխարհին և Արամազեան զաւա-կին: Արդ սնեալ և ուսեալ երջանիկն Գրիգորիոս զքրիստո-նեական հաւատոյն զօրութիւն առաքելական և քաջալերա-կան համարձակութեամբ՝ եկեալ յանդիման լինէր Տրդատայ արքային Հայոց միամտութեամբ և քաղցր հարկանել ծա-ռայութիւն, պաղատանս հաւանեալ ձայնի՝ հեզագոյն քաջու-թեամբ ծառայել Տեառն զօրութեանց, մարմնաւոր տերանց, այլ ոչ առ ակնէ ծառայութեամբ և հնազանդութեամբ: Ուր սնանէր զերկուս որդիս՝ Արիստակէս և Վրթանէս: Իսկ թագաւորն՝ մոլեգնեալ 'ի դիւաց զանազան և պղծալից պաշտամանցն՝ ձեռն արկանէր յամենազօր նահատակն Քրիս-տոսի օժանդակութեամբ չար վիշապին կամեցեալ յիւրն ծա-ռայել 'ի խորխորատ կորստեանն դիցն աղանդութեան պաշ-տամանն, բազում և զանազան տանջանօք չարչարեալ զսուր-բըն՝ ոչինչ կարաց կամակից լինել յանշարժելի հաւատո երանելւոյն. այլ որ քան զոր քաջարար միջեալ առնոյր ըղ-յաղթութեան մրցանակն 'ի վերայ աներևոյթ և երևելի թըշ-նամեացն: Նա իբրև ոչինչ կարաց սպառնալիս դառնալ փոխ-

ըց զառաքինին յուղիղ հաւատոյն Քրիստոսի՝ յայնժամ աղգեալ չարին 'ի միտս չար արքայնեացն, տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապն Արտաշատ քաղաքի, յորում զերեքտասան ամս յօձախառն բնակեր փայլի՝ մինչև այլ ևս կանայք ամանք երանելիք, Հռիփսիմէ և Գայիանէ հանդերձ երեսուն և հինգ ընկերօք 'ի նորին 'ի Հայոց արքայէն կատարեցան: Եւ երանելեացն լինելին մարմինք բացընկեցիկք: Եւ ապա ամենազօրն Աստուած յայց ելանէր երանելւոյն Գրիգորի և երանելի նահատակացն՝ որորոց Հռիփսիմեանց, և պատուհաս մեծ հասուցանէր 'ի վերայ աշխարհին Հայաստանի, ոչ պատուհասի, այլ մեծի ողորմութեան նշանակ, որպէս առնէ զփրկելի որդին և մանուս սանել զօտարացեալ խորթն: Նզքին իսկ գեքն, զորս նախօք և զոհիւք մեծարէին՝ 'ի վերայ Թշնամեաց հասեալ՝ տային նոցա մերկանել և ուտել զիւրեանց մարմինս. այլ և զնորին Թագաւորին զկերպարանս 'ի խոզի դարձուցեալ 'ի բնութիւն յեղէգն լինել փախստեայ: Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ զամենեսեան ընդէր, մինչև մօտային կորստեան կենաց աշխարհին:

Մինչև յայսմ ահի և 'ի դողման կային 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս՝ երևէր 'ի տեսլեան զիշերոյ հրեշտակ ողորմութեան Աստուծոյ կնոջ ումեմն, Խոսրովիդուխտ անուն՝ քեռ Տրդատայ Հայոց արքայի: «Անհնարին է ձեզ՝ ասէ, 'ի հարուածոցդ զերծանել, բայց եթէ 'ի ձեռն սորայն Գրիգորի երթեալ հանէք զնա 'ի խոր վիրապէն»: Եւ զարթուցեալ պատմէր զերազն՝ և ամենեքին ընկերանեալ ծաղրէին զկինն և ասէին. «Եւ դու ուրեմն զխելահարիս. իսկ արդ և զոսկերացն անգամ զի՞նչ հնար է գտանել զնոյսա»: Եւ իբրև կրկնեալ և երեքնեալ զտեսիլն՝ յարուցեալ առ փութոյ հարուածոցն չոքան 'ի բերան վիրապին թերահաւատքն՝ կայս 'ի կոչս բարբառեալ բանիւն Աստուծոյ. «Եկ 'ի դուրս, եթէ իցես կենդանի». և փաղփաղուկ զեկուցանէր զկեայն կենդանի:

Բազում խնդութեամբ 'ի վեր առեալ ածին 'ի Նոր քաղաք թագաւորանիստ Հայոց աշխարհին: Այնուհետև դիւացն առեալ զմարդիկն ականց ընդառաջ մեծին Գրիգորի տանելին՝ մոլեգնելով և ուռելով զմարմինս իւրաքանչիւր. և զթագաւորն նոյնպէս յաղեգանէն առեալ դիւացն ածէին ընդառաջ սորայն: Որոյ ծունր եղեալ մեծին Գրիգորի արտաւօք խնդրէր յամենողորմէն Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին. և անդէն փաղփաղակի ընդունէին 'ի ձեռն սորայն աղաչանաց զբժշկութիւն մարմնական անձանցն ընդ նմին և զհոգւոյն լուսաւորութիւն: Եւ իբրև ոչ ումեք ինչ զեկուցեալ վասն երանելի կանանցն որք պատկեցան՝ ըղ-Հռիփսիմէն ասեմ և զնորին ընկերացն, ինքն իսկ 'ի խոր վերայքին մարգարէական ակամբն տեսանէր զնահատակութիւն երանելի վկայիցն Քրիստոսի և ասէ. «Ո՞ւր են նշխարք սրբոցն». և մարդիկն զարմացեալ ասէին՝ «Զո՞ր սրբոյն ասէ». և իբրև լուան 'ի նմանէ զանուանս պատկերոցն, ասա 'ի մեռ տեսեալ՝ ցուցին զպատուական և զամենասուրբ նշխարս ս-կերացն: Եւ առեալ Գրիգորի պատէր իւրեանց իսկ պատառատուն հանդերձիւքն՝ չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեաց մերձեցուցանել 'ի մարմինս, մինչև արբեալք երանելին յաւազանէն փրկութեան. և դնէր 'ի հանգստարանի 'ի տեղւոջն, յորում պատկեցան սուրբքն: Իսկ զբոլոր աշխարհն Հայոց ուսուցանէր և խրատէր և կնքէր կենսատու խաչիւն և լուսաւորէր մկրտութեամբ աւազանին փրկութեան և արժանաւորս առնէր՝ զանձառելի Հոգւոյն ընդունել շնորհս ճաշակմամբ կենսատու մարմնոյ և արեան Տեառն:

Եւ ոչ կամեցեալ իւր իսկ ունել զաթոռ քահանայապետութեան՝ հրեշտակ Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս ասէ ցնա՝ ոչ հեռանալ և յամառել առ խոնարհութեան կարգին, այլ յայտ քաջանալ և առնուլ կրկին զաստիճան պատուին, որ վասն քահանայապետութեան շնորհի յԱստու-

ծոյ։ Եւ առեալ այնուհետև զքահանայապետութիւնն ըղպատիւ՝ երթեալ լուսաւորէր զՎրաց և զԱղուանից աշխարհըն։ Երթեալ 'ի Հաբանդ գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ։ Եւ արկանէր հիմըն եկեղեցւոյ 'ի գիւղաքաղաքին Ամարասայ և կացուցանէր գործունեայս և հրամանատարս շինել զեկեղեցին։ Եւ երթեալ 'ի Հայոց աշխարհն՝ օծանէր փոխանակ իւր զորդին զՎրթանէս նստուցանել յիւր աթոռ քահանայապետութեան, զհրաման հայրենի վարուց լինել շնորհ հաւատոյ բանիւ վարդապետութեան։ Որ ուղիղ և առաքինասէր վարուք կեցեալ՝ պատուհասէր և խրատէր զայնոսիկ, զորս 'ի դիւապաշտութեան գտանէր յաղանդին․ յանդիմանէր և զկին թագաւորին վասն այլանդակ պոռնկութեանն։ Եւ մինչև մտեալ յեկեղեցի 'ի Տարօն գաւառի զտէրունեանն կատարել խորհուրդ՝ չար և դիւապաշտ մարդիկ ժողովեալք բազմութիւն յոյժ առ 'ի սպանանել զերանելին Վրթանէս խորհրդեամբ կնոջ թագաւորին։ Եւ յորժամ փակեցին 'ի գաւիթ եկեղեցւոյն՝ 'ի դիւայինդ կալեալ կաշկանդեալք եղեն հրամանաւ բարերարին Աստուծոյ, ուժգնակութեամբ ընդկայծեալ կային անմռունչ ամենքեան՝ մինչև կատարեալ երանելոյն զաստուածեղէն խորհուրդն և 'ի դուրս եկեալ զարմանայր։ Եւ հարցեալ զպատճառն՝ խոստովանէին զիւրեանց չարեաց խորհուրդն և զկամս կնոջ թագաւորին։ Եւ նա կացեալ յաղօթս՝ ձեռնադրութեամբ զամենեսեան բժշկէր և խրատէր մի ևս գործել չար ինչ, այլ ապաշխարութեամբ գտանել ողորմութիւն։

Եւ սորա երկու որդիք, միուն Յուսիկ անուն՝ առաքինասէր և սրբամիտ վարուք, որ և սա նորին խոստովանական վարուք կատարեալ պսակէր։ Քանզի հասեալ յաթոռ քահանայապետութեան հօրն՝ յանդիմանէր զթագաւորն վասն մեղանէր չարագործութեանն․ և նորա հրամայեալ անդէն

յեկեղեցւոջն բրով տապանակել զնա: Եւ անուն միւսումն Գրիգորիս յանուն հաւուն, և համանման և հաւասար նորուն վարուցն առաքինութեան, ոչ անուանեցեալ 'ի կարգս աշխարհիս, այլ փոխադրեալ բաղձայր հայրենի հոգևոր ժառանգութեանն: Եւ անդէն 'ի տղայական տիոցն վարժէր զենքըն Աստուածաշունչ գրոց կրթութեամբ և զմարմնական զգայութիւնս պահօք և աղօթիւք պարկեշտացուցանէր, ըզհոգին սիրոյն հաւատով լուսաւորէր. և անդէն վաղվաղակի զնոքեան հաւուն զմեծին Գրիգորի զգերաշխարհիկն բարձրութեանց զերկնաւոր զպատիւն առեալ յօրինէր՝ զքահանայապետութեան զպատիւ և զաթոռն և զամենապատիկ բարութեանցն պսակ զմարտիրոսութեան: Քանզի զհնգետասան ամօք ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն զմանուկն Գրիգորիս Վրաց և Աղուանից աշխարհին՝ երթեալ լուսաւորէր զերկոսին աշխարհս և հաստատէր քրիստոնական հաւատոյն զնալ. շինէր և զեկեղեցիս ըստ կարգաց և քաղաքաց և ձեռնադրէր զերիցունս, յորդորէր 'ի պաշտօն սրբութեան և յիշատակ սրբոց կանխել հանապազ: Եւ նախանձեալ զբարի նախանձ առաքելական ուղղութեանն՝ կատարէր զհրաման մարմնացեալ Որդւոյն Աստուծոյ՝ շրջեալ ընդ ամենայն հեթանոսս՝ մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ուսանել պահել զամենայն տէրունեան պատուիրանսն և ոչ առնուլ ընդ իւրեանս ոսկի, արծաթ և պղինձ, և պարկ անգամ և ցուպ: Այց բոլորից զգուշանալով երանելւոյն՝ առեալ ընդ իւր փայլուն և յայտ պատուականագոյն թոշակ զմեծ քահանայապետին և մարտիրոսին Զաքարիայ՝ զՀօրն Յովհաննու, 'ի պատուական արենէն նշխարս, զորոյն Պանդալէոնի, որ դաւանեաց զբարւոք դաւանութիւնն Քրիստոսի և պսակեցաւ 'ի Նիկոմիդիա քաղաքի: Եւ տարեալ զամենասուրբ նշխարս վկայիցն 'ի մեծ քաղաքն Յոփ յԱղուանից իշխանութեան՝ շինէր փոքրիկ եկեղեցի և դնէր անդ մեծ

զգուշութեամբ զմասն ինչ յարենէ Զաքարիայ և 'ի նշխարաց սրբոյն Պանդալէոնի, և թողոյր երէց մի սպասաւոր և պաշտօնեայ վկայիցն Քրիստոսի: Եւ զկէս նշխարաց սրբոյն Զաքարիայ և երանելւոյն Պանդալէոնի առեալ ընդ իւր և երթեալ 'ի Մասքթաց աշխարհն՝ յանդիման լինէր Սանատրկոյ՝ թագաւորին Մասքթաց, համատոհմին Արշակունեաց. և քարոզէր զանձառելի Երրորդութիւնն, զմի արարչական զօրութիւնն, զմարմնանալն Բանին Աստուծոյ, զզանազան նշանագործութիւնս յերկրի առնել, զխաչելն և զթաղումն և յերիր աւուր յառնել և նովին մարմնով 'ի յերկինս վերանալ, նոյնպէս և յերկրորդ գալստեանն երևել՝ դատելով զկենդանիս և զմեռեալս: Եւ խնդութեամբ ընկալեալ հաւատային առաքելական բանին զառաջինն: Իսկ աննաչարին սատանայ մտեալ 'ի սիրտ նոցա գրգռէր չարանալ ընդ կենսատու հրամանին բանիցն տեառն. սկսան զնել բաղբաղս ճշմարիտ վարդապետական բանից երանելւոյն, քանզի 'ի քարոզութեան ասէր զկամս բարերարին Աստուծոյ՝ ոչ աւարել, ոչ յափշտակել և ոչ գողանալ, այլ վաստակել ձեռօք և վայելել մարդարար և երանելի լինել Աստուծոյ: Եւ ասէն. «Հայոց ազգային կեղծաւորութիւն է այդ՝ արգելուլ զմեզ յաւարէ Հայաստան աշխարհի. և բռ կեցցուք, զի ոչ աւարեսցուք»: Ապա և զթագաւորն եւս խառնակեցուցեալ յերկայց ամենաչար կեղծաւորութիւնն՝ կալեալ զմանուկն Գրիգորիս ընդ ամեհի ձիոյ կապէին ընդ ագի և արձակէին 'ի դաշտին Վատնեայ. և այսպէս սպանէր սուրբն: Զոր բարձեալ աշակերտացն՝ բերէին յԱմարաս զիւղաքաղաքն, որ էր 'ի գաւառին Հարանդայ. անդ եդեալ առ եկեղեցւոյն հուպ 'ի բեմն 'ի հիւսիսոյ կողմանէ, և զսուրբ արիւն Զաքարիայ 'ի միում ապակեղէն շշի եդեալ և 'ի միւսում շշի զերանելւոյն Պանդալէոնի զնշխարս: Եւ եդեալ զերկոսեան շիշս ընդ ամենասուրբ նշխարս մանկանն Գրիգորիսի՝ կնքեալք փակեա-

տեաց 'ի Հայս անկանէին: Վասն զի Յունական բազում և անթիւ զօրք Հոնաց 'ի Հայս արշաւէր. և յաստուածային բարութեանցն զօրութիւն տուեալ Հայաստան նախարարացն առ 'ի խնդրել զվրէժ արժան մանկանն սրբոյն Գրիգորիսի, բազմութիւն զօրացն 'ի սուր անկեալ՝ ոչ միայն զաւժարկ յաշխարհն Մասքթայ, այլ և զամենեսեան խողխողեալ սատակէր յիւրեանց ազգայնոցն սրոյ:

Իսկ ընդ ժամանակս ընդ այն թիւրդաքարտքն անուանեալ Ցօփ՝ ապստամբեալ յԱղուանից ալքայէն, ձեռն տայր 'ի Պարսից ալքայն. և եկեալ Եկեղեացիք ունէին զքաղաքն: Իսկ գտեալ զերէցն, զաշակերտ մանկանն Գրիգորիսի, զոր թողեալ էր 'ի պաշտօնութիւն սրբոցն՝ զերէցն զՅուսոյ և զմանուկն մարտիրոսացուցին: Քանզի էր նորա գտեալ ձիւղ մանուկ մի, որ լսէր Հաւատոյն Քրիստոսի, և Հաւատացեալ առնոյր զքրիստոնէական կնիքն և անդէն աշակերտէր երիցոյն և կամէր խելամուտ լինել փառաց քրիստոնէութեան. զերկոսեան զասա 'ի կապանս և 'ի չարչարանս արկեալ՝ առիպէին լինել մեխրապաշտ դիւթացն արտեղութեան: Իբրև ոչ կարէին կամագիւտ լինել բռնութեանն՝ մաղթէին զձիւղ մանուկն և ասէին. «'Ի միոյ աշխարհէս մարդ ես, զմեր կամս արա և մեծարու առնեմք զքեզ 'ի մերում իշխանութեանս»: Իսկ երանելին պատասխանի արարեալ՝ «Լաւ լիցի յառաջագոյն քան զերէցն մեռանել ինձ վասն անուանն Քրիստոսի, քան ընակեալ 'ի յարկս մեղաւորաց»: Իսկ վաղվաղակի սրով գլխատեալք՝ ընդունէին զկատարութեան զպսակ և զամենափայլուչ նաՀատակութեան յաղթանակ մրցանակն ըստ իւրեանց Հօգւոր Հօրն՝ մանկանն Գրիգորիսի: Զորս առեալ Ասարկաց ումանց արեղայից տանէին 'ի Հակու անուանեալ գիւղն, և անդ եդեալ 'ի գերեզմանի՝ և ինքեանք 'ի տեղւոջն վանս շինէին: Իսկ անդ է, ասեն՝ նշխարք երանելեացն մինչև ցայսօր: Իսկ լինէր այն առ քաջին Վաչէիւ՝ Աղուանից ար-

քայլ։ Նա ամփածածկեալ կային երանելեացն վկայից ամենասուրբ նշխարք մինչև ցթագաւորութիւն երրորդ բարեպաշտ Վաչականայ Աղուանից ազգի։ Քանզի 'ի քաջէն Վաչականայ մինչև ցՎաչէ թագաւորք էին Աղուանից թըուով լեն, յորոց առաջնորդ էր բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Վաչական Աղուանից ազգաց։

## ԳԼՈՒԽ ԺԱ

Գիր անուանց նախնեաց հայկեանց, որ յայտնէ 'ի Յաբեթէ և յԱռանայ մինչև ցերրորդն Վաչէն։

Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արմենակ, Արամանեակ, Ամասիա, Գեղամ, Հարմայ, Արամ (որ ասի Աբրահամ,) Արայն Գեղեցիկ (որ ասի Իսահակ,) Անուշաւան, Փառէտ, Արբակ, Զաւան (որ ասի Յեսու,) Փառնաս, Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամպակ, Առնակ, Շաւարշ, Նորայր, Վստամ, Կար, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ, Հորոյ, Զարմայր, Պերճ (որ ասի Գութիթ,) Արբուն, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայպակ, Սկայորդի, Պարոյր (որ էառ թագ 'ի Բաբելացւոց թագաւորէն,) Հրաչեայ, Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս, միւս Հայկակ, Երուանդ սակաւակեաց, Տիգրան։

'Ի սոյա ծննդոց կարգեցաւ Առան նախարար Աղուանից։ Եւ թէ ասուրցն յԱռանայ մինչև ցքաջն Վաչական, որ էր 'ի մեծ ազգէն Արշակունեաց՝ չէ յայտ։ Իսկ որք ըստ կարգի կացին թագաւորք տանն Աղուանից՝ անուանք են այսոքիկ. Վաչական քաջ (առաջին,) Վաչէ (առաջին) Ուռնայր, Վաչական (երկրորդ,) Մրհաւան, Սատոյ, Ասայ, Եսուաղէն, Վաչէ (երկրորդ.) ապա բարեպաշտն Վաչա-

գան (երրորդ) արքայ Աղուանից, յորոց բազումք 'ի սոցանէ քրիստոսասէր և բարի վարուք կեցեալ՝ տարան յիւրաքանչիւր ժամանակի զվախճան։ Սակայն ոչ ումեք 'ի նոցանէ այսպիսի աստուածային և հոգևոր ծածկեալ գանձ յայտնեալ ընծայեցաւ՝ որպէս վերջինս Վաչականայ բարեպաշտ Աղուանից արքայի։ Նա 'ի հրամանէ Պերոզի, Պարսից արքայի՝ շինեցաւ 'ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ։

## ԳԼՈՒԽ ԺԶ.

ԿԵՆԱՑ Ն ՎԱՐՈՒՑ Ն ԽՈՐՀՐԴԱՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՈՐ Ի ՎԱՉԱԿԱՆԷ ԱՐՔԱՅԷ ԵՂԱՆ, Ն ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՑ.

Իսկ զերեսուն ամ 'ի Վաչէէ մինչև զՎաչական բարեպաշտն առանց թագաւորի կացեալ աշխարհս Աղուանից. քանզի ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից զայրացեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն՝ կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի, միանգամայն շարժել զեկեղեցիս, բառնալ զկարգ քրիստոնէութեան և հաստատել, կարգել յիւրում իշխանութեան զմոլեգնութեան դիւապաշտութիւն. յոր ամենասուրբ վկայիցն Քրիստոսի 'ի պղծալից ձեռաց արիւն հեղեալ յերկիր. և յոյժ անթիւ անմեղաց անձինք խողխողեալ լինէին սրով չարին։ Այլև կանայք որդւովիւք հանդերձ արտօսրահառաչ ձայնիւ գերեալ լինէին յօտար աշխարհ 'ի դառն ստրկութիւն։ Զօրաւոր նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից 'ի մոգութիւն դիւապաշտութեանն ածեալ կործանէր՝ զոմանս բռնութեամբ և զոմանս պարգևօք 'ի մեծամեծ իշխանութիւնս ընծայելով, 'ի տեղիս տեղիս ատրուշանս կանգնելով՝ զօրանայր կրակալից պաշտամունք գիջն աղտեղութեան. և ազգի ազգի աղանդք չարախօսն սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ

մարդկի աշխարհին Եղեանից. զորս ամենայնիւն զօրար-
ձեալ ազատամբութեան պատճառաւ, կապանօք և բանդիւք
նեղէր և սպանց 'ի մարութիւն խոնարհեցուցանէր: Ընդ նո-
ւին և Վաշխան առ բունն սատակ չարութեան թագաւո-
րին սպանց հաւանէր մարութեանն, այլ գաղտ յայտնի և
'ի պահս և 'ի Քրիստոսի խոստովանութիւնն կանխէր հանա-
պազ. մինչև այց արար ամենողորմն Աստուած հեղման ա-
րեան սրբոց վկայիցն Քրիստոսի և առերածի սուրբ եկեղեցեաց
և 'ի զուր խողխողման ծերոցն և երիտասարդաց, և գերու-
թեան կանանց և աղջկանց և կորստեան հոգեաց անմեղաց, որք
մարութեամբն եղեն հերքացեալ: Նա առաքեաց զաւաղան բար-
կութեան բռնաւոր և արիւնարբու թագաւորին Պարսից ըղ-
Հեփթաղական ազգն, որք հարեալ սատակեցին և հանոյցին
արարին զամբարիշտ իշխանս Պարսից աշխարհին հանդերձ
խառնիճաղանճ ամբոխն անթիւ զօրացն բազմութեամբ: Նա
թերևս 'ի վերայ սորա մարգարէանայր երջանիկն Եսայիաս
զանէծսն, զոր ասացեալ 'ի վերայ Բաբելոնի. «Բա՛ռ զխեղդ
զան հոկայք յագեցուցանել զարամութիւն իմ, խնդան, զան
միաբանեալն և թշնամանեն: Տէր զօրութեանց հրաման ետ
ազգաց բազմաց գալ 'ի յերկրէ հեռաստանէ, և հասեալ է
Տէր իւրովք սպառազինաւք, եւն.» յորում արդարև երկրոր-
դեալ կատարեցաւ մարգարէութիւնս այս 'ի վերայ Պարսից
թագաւորին՝ ամենաչարին Պերոզի: Քանզի հոկայարար հրա-
մանաւ աստուածային զօրութեանն եկեալ Հեփթաղական
ազգն յագեցուցանէր զարամութիւն բարկութեան Տեառն.
զի նախ զորդիս նորա առաջի նորա հարեալ սատակեցին սրով
բերանոյ զչար զաւակն և զամենայն նախարարս և զհա-
կալս աշխարհին, ընդ նմին և զխառնիճաղանճ անթիւ զօրաց
բազմութիւնն. և նոյն ինքն թագաւորն՝ զամենաչար զՊե-
րոզ ասեմ, սրով խողխողեալ 'ի մէջ անթիւ դիականցն լինէր
կորուսեալ և զթագաւորն իւր թողեալ. և զամբարշտութեամբ

մթերեալ անրաւ մեծութիւնն աւարեալ 'ի բաց բառնայլն, զկանայս նոցա խայտառակէին և ոչ խնայէին 'ի մանկունս նոցա, և ոչ ողորմէին որբոց նոցա: Նոյն արդարև յագեցուցանէին զարամութիւն բարկութեան Տեառն, և հատուցումն չարեաց, զոր ամենայն ազգաց հատուցանէր արիւնարբուն Գերոզ՝ եօթանասնեկլին դարձաւ 'ի գլուխ նորա: Յայնժամ լցաւ եկեղեցին Աստուծոյ երանութեամբ, զի զչար մանկունս զայլազգեացն կալեալ հարին ոչ զքարի, այլ 'ի բերան սրոյ թշնամեացն, որք չարաչար մահուամբ վերացան 'ի կենցաղոյս. այլև զնոյն ինքն զվիշտն հանդերձ չար զաւակօքն սրախողխող չարամահ դառնութեամբ բառնայլն յաշխարհէ:

## ԳԼՈՒԽ ԺԷ

Թագաւորելն Վաղարշակայ և յետ նորա առաւել Վաղարշակայ չէոր Բագաւորութեան Աշտանայ.

Յետ բառնալոյ չարին Գերոզի չարաչար մահուամբ յաշխարհէս՝ թագաւորէր Վաղարշակ հօրեղբայր նորա ընդ նորա: Նոյն կատարի առ Վաղարշակաւ ակրուռնեան ասացեալ բանն, եթէ «որ արասցէ և ուսուսցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ,» զոր աստուածասէր արքայն Վաղարշակն արար. յառաջ զինքն դարձուցանել 'ի մեղանչական ճանապարհէն և գործել զբարգաւ և զանազան առաքինութիւնս և զբոլոր աշխարհս 'ի դիւական չարագործ պաշտամանէն 'ի սուրբ և յուղիղ աստուածպաշտութեանն դարձուցանել 'ի պղծոյն, և բարի քաւութեամբ աւանդել զառաքինութիւնն: Զանազի զեւրոյ աշխարհէն նախարարս, որք միանգամ մոգութեամբն աղտեղացուցեալ էին զհոգւոյն խահականութիւն զերն դարշելի պաշտամամբ և զմոգմինս աղբծալից պոռնկութեամբ խանձուցեալ յորդորական խրատու

ածէր 'ի խոստովանութիւն Քրիստոսի ճշմարտութեանն և
ուսուցանէր Աստուածաշունչ գրոց վկայութեամբ, թէ հա-
ւաստեաւ լինելոց է յարութիւն մեռելոց հրամանաւ Աստ-
ուածորդւոյն, և անշէջ հրով դատն դատաստան յանանց
յաւիտենին՝ յաւիտենից ուրացողաց և ոչ խոստովանելոց և
և ամբարիշտ չարագործաց, և մշտնջենաւոր անճառելի փա-
ռաց պարգևք խոստովանողաց զանքննելի աստուածութիւնն,
և ըստ կամաց նորուն աստուածութեանն բարեգործութեամբ
յարուցելոց: Նա որք յետ շնորհի աւազանին փրկութեան
էին զառածեալք 'ի մոլութիւն՝ ապաշխարութեամբ հաս-
տատէր. և որք 'ի ողջութենէ իսկ երթեալ էին զհետ կորս-
տեան ճանապարհին հրամայէր լուսաւորել աւազանին փր-
կութեամբ, և արժանաւորս առնէր ճաշակման ամենասուրբ
մարմնոյ և արեան կենդանացուցիչ Որդւոյն Աստուծոյ: Նա-
ինքն յոյժ ցնծացեալ ուրախանայր ոչ այնչափ ընդ թագա-
ւորութիւնն, որչափ ընդ բոլոր նախարարաց աշխարհին միա-
բանութեամբ հաստատել ուխտի եկեղեցւոյ, լուեալ 'ի կե-
նարար պատուիրանէն, թէ որ դարձուցէ զոգիս 'ի մոլար
ճանապարհէ և ուսուցէ զառաքինասէր վարս՝ զիւր հոգին
փրկեսցէ 'ի մահուանէ և քաւեսցէ զբազմութիւն մեղաց իւ-
րոց. և յօր աւուր յորդորելով յաստուածասէր պաշտա-
մունս՝ անձանձրոյթ յիշատակս սրբոց կատարէր: Հրաման
տայր այնուհետև Արցախամուր աշխարհին յիւրում ծառա-
թեանն 'ի բաց լքանել թողուլ զկռապաշտութեան կարգս
կարգս զաղտեղի դիցն զոհամատոյց պաշտամունս. յոյժ բա-
րեմիտ և աշխարհաշէն և խաղաղասէր և հրամանատար ամե-
նայն կողմանց իւրոյ թագաւորութեանն, զորոց չարին Պերո-
զի զթագաւորութիւնն հանեալ էր և իշխանաց զմիկ իշխա-
նութիւնն բարձեալ՝ մինչև առ իւրաքանչիւրսն դարձուցա-
նէր զանէրութիւնն: Յայնժամ Աղուանից աշխարհն հարեալ
զիւրեանց հայրենի թագաւորութիւնն և առեալ զՎաչական

'ի Թագաւորական զարմէն՝ քաջարութեամբ իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի նորոյ Վաչէի Աղուանից արքայի՝ տարեալ Թագաւորեցուցանէին 'ի ձեռն Վաղարշակայ արքային Պարսից: Նա եկեալ յաշխարհս Աղուանից՝ խնդրէր հնարս պատճառանաց, որով մարթասցի 'ի բաց թողուլ զաստուածուրաց զմոլութեան զդէնն, և յայտնապէս խոկ բերել խոստովանութիւն՝ Քրիստոս Աստուած ճշմարիտ գոլ:

Յայնժամ նախախնամութիւնն մեծին Աստուծոյ ալգեալ 'ի միտս Թագաւորին՝ հրաման տայր Վաղարշակ արքայ Պարսից, եթէ զիւրաքանչիւր օրէնս հաստատուն պահեսցեն ըստ իւրաքանչիւր աշխատելոյ կամաց և մի զոք փոխանգեալ դարձուցանել 'ի մոլութիւն: Նա լուեալ զայս բարեպաշտ և աստուածասէր արքային Վաչականայ՝ բազում խնդալից բերկրանօք զիմեալ յեկեղեցի Աստուծոյ բազում աղօթիւք և արտասուօք խոստովանէր զմշտնջենաւոր և զանճառելի սուրբ Երրորդութիւնն և մաղթէր բազում արտասնօք զեպիսկոպոսս և զերիցունս և զմանապատականս և զամենեսեան ուխտաւորս եկեղեցւոյ՝ ցաւակից և աղօթակից լինել իւր առ 'ի հաշտեցուցանել զամենողորմն Աստուած. և ինքն 'ի պահս և յաղօթս և յողորմութիւնս աղքատաց առատապէս կանխէր՝ հայեցեալ յերանելին Պետրոս, թէ յետ ուրացութեանն կարաց զլխաւոր առաքելոցն լինել և միանգամայն փականակալ և իշխան երկնից արքայութեան: Նա զարձեալ ամն յաշակերտաց Տեառն Թերահաւատեալ և յետոյ Տէր և Աստուած խոստովանելով՝ կալաւ զկարգ առաքելութեան և այլ ևս բազում և յոլով մեղուցեալք 'ի ծայրս առաքինութեան ընթացան և եղեն ժառանգորդք մշտնջենաւոր և վայելչական արքայութեանն: Ընդ որս բարեպաշտ Թագաւորին հայեցեալ՝ սրբեալ մաքրեաց զինքն յատակ հաւատոյն առաքինութեամբ՝ ճշմարիտ դարձիւ առ ճշմարիտ

աստուածութիւնն։ Նա այլոց եւս բազում աշխարհաց ըն-
ձիւղ լինէր դարձի առ բոլորեցունցն Աստուած Յիսուս Քրիս-
տոս՝ եւ ազատիչ 'ի դառն սատանայական ծառայութենէ։
Վասնզի բժշկաց իսկ է՝ հմուտ եւ առաւել ուղղակի բժշկու-
թեան, որ յիւր մարմինն առեալ զդժնդակութիւն խոցման,
եւ զառողջութիւն 'ի ձեռն հնարից եւ պատճառանաց բժշկա-
կան դեղոց ընկալեալ՝ նովին դեղովք եւ զայլս վիրաւորեալս
կարող է փաղփաղակի առնել յառողջութիւն։ Այնպէս եւ մե-
ղուցեալ ոք, որ դառնայ առ Աստուած յամենայն սրտէ եւ
բժշկական դեղս ապաշխարութեան ընդունի յառողջութիւն
հոգւոյն, նովիմբ կենարար դեղով խոստովանութեան եւ ա-
պաշխարութեան կարէ այլոց եւս առողջացուցիչ գոլ հոգւոյ
եւ անմահացուցիչ մարմնոյ, եւ դառնալ ամենեքին 'ի սուրբ եւ
'ի պարկեշտ քրիստոնէութեան պաշտօն։ Պատուհաս մեծ
եւ սուգանս 'ի վերայ կարգէր՝ որ ոք բաղնիս արասցէ եւ դիւթ
հնարեսցէ եւ կամ զննիցէ դիւցազգեաց պաշտօն տայցէ եւ
զկարգս քրիստոնէութեան ամբողջ եւ հաստատուն ոչ պա-
հեսցէ։ Օձկախարդս եւ զդիւթս եւ զքուրմս յետ միանգամ
եւ երկիցս խրատելոյ, եթէ դարձեալ 'ի նախին չարութեան
դառնէին 'ի գործ՝ չարաչար կապանօք եւ գանիւք 'ի դուռն
արքունի հասուցեալ մեծագոյն պատուհասի պատժէր՝ զո-
մանս խեղդելով, զոմանս շիօթակս առնելով եւ զոմանս 'ի
տարկութիւն արկանելով եւ զյոլովս խրատելով, առնել ըդ-
քրիստոնէական կենցն՝ առնէր ուսեալս աստուածգիտու-
թեան ճանապարհին։ Նա կարգեալ տեղեաց տեղեաց եպիս-
կոպոս եւ երիցունս եւ հայեցողս 'ի Կամբէճս, 'ի յԱղուանս
իսկ զնոյն հրամանս առաջից կարգեալ՝ հաստատէր զեպիսկո-
պոսս եւ զերիցունս եւ զսարկաւագունս. բոլոր իսկ ուխտ եկե-
ղեցւոյ մեծարեալ եւ յարգեալ էին յամս թագաւորութեան
բարեպաշտ արքային Վաչականոյ։

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն խնդրելոյ նշխարաց սրբոյն Վաչագանայ յարաժամեանք հանգուցելոց, և գտանելոյ զնշխարս սրբոյն մարտիրոսացն, և վերծանելոյ նոցանց։

Յաստուածուստ պսակեալն այն Վաչական՝ հրամայէր ժողովել զմանկունս կախարդաց և դիւթաց և քրմաց, և մանահաստաց և գեղատուաց. հրամայէր 'ի դպրոցս ունել և ուսուցանել զաստուածեղէն ուսումն, և անկեղծացուցանել վարուց քրիստոնէութեան առ 'ի հաստատել: Եւ յորժամ լինէր 'ի գեօղն գալ 'ի կատարել զյիշատակս սրբոցն, նստեալ լինէր 'ի դպրոցատանն՝ զորդիս դիւթաց և քրմաց զինքեամբ կացուցանէր՝ գուբդայարար բան առնել բազմութեանն յոյժ, ոմանց գիրս և ոմանց սաղմոսս 'ի ձեռին ունելով, և միաբան առհասարակ ամենեցուն մեծաձայն հրամայէր կարդալ. և ինքն ուրախ լինէր առաւել քան թէ մեծագոյն ուրուք գտեալ աւար: Ձեռն արկանէր յուզել և քննել և խնդրել զչար աղանդն մանահաստութեան. քանզի երկոքեան մարդասպանութեան են աղանդք. և մինչդեռ յայսմ էր 'ի խնդրուածս՝ մարդասէրն Աստուած կամեցաւ 'ի ձեռն աստուածասէր թագաւորին բառնալ զչար աղանդն յաշխարհէ: Քանզի 'ի բազում ժամանակաց՝ որպէս լուեալ էր Վաչէի զչարագործութիւնն յԱղուանից աշխարհին, այլոց թագաւորացն ոչ կարացեալ 'ի բուռն առնուլ, կամ թէ անփոյթ խոկ արարեալ: Իսկ անիծեալ և չար Պարսիկ Մարզպանքն՝ շատ անգամ 'ի բուռն առեալ, և կաշառօք 'ի բաց թողեալ: Իսկ 'ի ժամու միում՝ մինչդեռ կատարէին զչար գործն մանահաստութեան՝ յամուրս մայրուղին առ ափն Կուր գետոյ, չորիւք ցցիւք պըրկեալ զչորեցունց բութոցն կապեալ զմանուկ մի, և մոր-

թէին կենդանւոյն, այլոյ ուժեմ մանկագոյն պատանեկի դէպ եղև ճանապարհաւ հուպ անցանել առ նոքօք: Նա ՚ի վա, զեւ անդր ՚ի նեղքս յարեալ տեսանէր զմարդախողխող չարագործացն չարիս. և նոցա զհետ եկեալ զնա ևս, և փախըստեայ եղեալ մանկանն՝ անկանէր ՚ի Կուր գետ. և ՚ի մէջի գետոյն ծառ մի ՚ի կղզւոջն դիպեալ, ՚ի յուղւոյ անցեալ ելանէր ՚ի ծառն, չգիտելով չարագործացն. և ՚ի միտ առեալ՝ ճանաչէր զմարդիկն. և զերծեալ անցանէր ընդ գետն՝ և եկեալ փութապէս պատմէր արքային: Նա լուեալ թագաւորին յաղօթս կացեալ՝ գոհանայր զմարդասիրէն Քրիստոսէ. և հրամայէր ուխտի եկեղեցւոյն պահել և աղօթս առնել, զի յայտնեսցի չար դաւաճանութիւն և բարձցի յաշխարհէս: Քանզի սատանայի այնպէս կալեալ էր զմիտս իւրոց չար արբանեկաց, մինչ զի անկարելի ումեք էր զչար աղանդոյն մարդիկն ՚ի խոստովան առնել: Նա իբրև հրամայեաց թագաւորն ունել զմարդիկն, զոր ՚ի խողխողման իսկ տեսին, և յոլովագոյն այլ ևս մարդիկ, զորս համբաւու գիտէին, և բազում գանիւք և չարաչար տանջանօք ՚ի փորձ արկեալ ոչ կարէին խոստ կացուցանել զչարագործսն: Ապա բարկ քացախ և բորակ խառնեալ և զերկրեալ զչարագործսն՝ արկանել հրամայէր ընդ ունչսն մինչև աչքն լնագոյն եղեալ շրջէին համայն, և յայնժամ դառն տանջանան զոչ և զուլրաստ կալեալ՝ չլինէին խոստովք: Իսկ իբրև յԱստուծոյ յաջողեալ էր ՚ի ձեռս թագաւորին որպէս եղեն տացեալ՝ բառնալ զչար աղանդն յաշխարհէս, իմաստութեամբ խորհեցաւ ածել ՚ի խոստովն, հրամայէր զամենեսեան տանել ՚ի տեղի սպանմանն. և զմի ոմն ՚ի նոցանէ՝ որ էր մանկագոյն աւուրբըք, զառաջեաւ հրամայեաց թողուլ, և երդուեալ մեծապէս թէ զքեզ չհրամայեմ սպանանել՝ եթէ խոստովան լինիս և հաւատեաւ ցուցանես զհանդամանս դաւաճանութեանն: Նա մանկանն սկսեալ՝ և զգլուխն զերկիր ածեալ, պատմել

զխորհուրդս չար աղանդոյն, ասէ. «Դեւն յայտնապէս գայ 'ի մարդոյ կերպարանս, եւ հրամայէ երիս դասս լինել, եւ մէջնե-րիս զմարդն ունել. մի խօսել եւ մի սպանանել. այլ ողջոյն հանել զմորթն եւ զաջոյ ձեռին զբոյթն, եւ մորթովն տանել ընդ լանջս 'ի ձախոյ ճկոյթն, հատանել եւ լուծանել զճկոյթն եւս 'ի ներքս։ Նոյնպէս առնել եւ զոտիցն՝ մինչդեռ կենդանի կայ մարդն. եւ ապա սպանանել եւ զմորթն հանել, եւ կոխել եւ դնել 'ի սապատի. եւ իբրեւ ժամանակ չար պաշտա-մանն եկեալ լինի, արարեալ աթոռ երկաթի ծալածոյ, ուր յայնր մարդոյ ոտիցն նմանութիւն։ Զանդերձ ինչ պատուա-կան դնեն 'ի վերայ աթոռոյն, եւ եկեալ դեւն՝ զգենու զհան-դերձն եւ նստի 'ի վերայ աթոռոյն, եւ առեալ զէն մարդոյն զմորթն մատամբքն հանդերձ տեսանի։ Իսկ եթէ չկարեն ու-նել զայրն, զծառոյ կեղեւ հրամայէ հանել, եւ արջառ կամ ոչխար զենեալ առաջի նորա զոհ առնեն, ուտէ եւ ըմպէ ընդ չար պաշտօնեայսն։ Իսկ ձի թամբեալ եւ սանձեալ կազմ պահեն, եւ հեծեալ 'ի ձին արշաւէ այնքան՝ մինչեւ զկայ ա-նու ձին. եւ ապա ինքն չքացեալ աներեւութանայ. այնպէս առնէ տարւոյ տարւոյ»։ Իսկ եցոյց զայր եւ զկին աղանդոյն չարութեան։ Իսկ ապա այլք եւս եկեալ յաղանդոյն՝ զնոյն խոստովանեցան։ Իսկ հրամայեաց ապա թագաւորն նմին առն, որ պատմեաց զայս ամենայն, եթէ «Քեզ արեւ շնոր-հեալ վասն երդմանն՝ զոր վկայեցի. բայց արդ՝ որպէս զայ-սըն առնէին՝ դու նոյնպէս արա զնոսա»։ Իսկ որպէս խոստացաւն եղեւ՝ նոյնպէս արար զբազումս 'ի նոցանէ առաջի բազում արքայական բանակին, եւ զկէսն 'ի նոցանէ յիւրաքանչիւր գեօղս տանել առաջի նոցուն ընտանեացն՝ յիւրաքանչիւր գիւղս նոյնպէս խողխողեալ։ Իսկ բազում դեղատուս հրամա-յէր սպանանել, քանզի եւ այն աղանդ էր պաշտամանն, զոր դեւն 'ի տարւոջն միում մարդոյ հրամայէր տալ եւ սպանա-նել։ Իսկ եթէ այլում չկարէր տալ, այնչափ նեղէր դեւն՝

մինչ զի խորամ ընտանւոյն եւս տայր զմահաչափս: Եւ այլ եւս ազանդք զխաղաղութեան. զի մի զեն կայր առնել եւ միայն ոխակ, որք հեղգային առնել զպաշտօն չարութեան եւ եթէ զայլ ոք մատնեալ՝ կախարդութիւն չար դիւացն գնոյն ազէտս կորութեան եւ պխակութեան 'ի վերայ հասուցանէր: զօրս 'ի բուռն առեալ թագաւորին՝ չարաչար տանջանօք բառնայր յաշխարհէս: Եւ զայս անգամ ջնջեաց յաշխարհէն Եգիպտոսից, իբրեւ քաջ եւ առաքինի մշակ ջերմագութ սիրով խնամ տանելով անդաստանաց, զփուշն եւ զորոմն 'ի բաց խլելով, եւ զսերմն բարի սերմանել եւ տարածանել առ 'ի պտղաբերս առնելոյ զերեսնաւորս եւ զվաթսնաւորս եւ զհարիւրաւորս: Յայնժամ բուսեալ եւ առատատուր ողորմածին Աստուծոյ հայեցեալ յառնն ամենայնաբաւ բարուցն վայելչութիւն, եւ տեսեալ թէ որպէս փոյթ ունի առ աստուածային կանոնացն կատարումն, ապա այնուհետեւ շնորհեաց ուր ուրեք հոգեւորական եւ անպատում զանձ կայր ծածկեալ՝ նշխարք ամենասուրբ վկայիցն Քրիստոսի:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ԶԱՔԱՐԻԱՅԷ ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ՍՐԲՈՅՆ ՊԱՆՏԱԼԷՈՆԻ, ՈՐ ՀԱՅԵՑ 'Ի ՆԻԿՈՄԻԴԻԱ ՔԱՂԱՔԷ. ԶՈՐ ԲԵՐԵԱԼ ԷՐ ՄԱՆԿԱՆՆ ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅՈՑ.

Բազում նշանք եւ արուեստք լինէին 'ի քաղաքն անուանեալ Ջաւի, 'ի տեղւոջն յորում երանելի վկայիցն Քրիստոսի նշխարքըն կային. իբրեւ ոչինչ ուրուք գիտելով զգիւտ նշխարացն սրբոց. եւ յաշխարհին հեթանոսք էին, երթեալ ջերմեռանդք եւ ախտաժետք հող առնուին յեկեղեցւոյն՝ ուր նշխարքն սրբոցն կային, թէպէտ եւ հեթանոս էին, լինէր մեծ բժշկութիւն: Իսկ ամենաչար Պարսկաց պապանձական պաշտօնն՝ զի միշտ հա-

կատակ կայր եկեղեցւոյն Աստուծոյ, մնալ պարսիկ մի մոգ, ուր կային սուրբ Զաքարեանց նշխարքն առ 'ի ծայր տանելոյ՝ կամէր զպէտս իւր վճարել, և իբրև լուծեալ զխանջանն՝ աղէքն 'ի վայր թափեալ՝ չարաչար տանջանօք եղանէր 'ի կենցաղոյս։ Զայս նշանագործութիւն Յունան Հնաց եպիսկոպոսակն՝ որ 'ի Մակեթայ աշխարհէն էր և յոյժ ճշմարտախօս, որ ինքն իսկ ականատես եղեալ՝ պատմեաց։ Իսկ 'ի Հակու, ուր երանելեաց վկայից նշխարքն կային, որք վկայեցին 'ի Յուի առաջի Արքեսացւոյն Պարսկի, վանացերիցոյն երևէր 'ի տեսլեան գիշերոյ՝ որում անուն էր Յակոբ, այր մի տարապաշտ լուսաւոր կերպարանօք, և միւս ևս մանուկ յարանց՝ նոյնպէս ահագին լուսաւոր կերպարանօք, և ասէին. «Երթ 'ի Յուի, և ասա գործակալի քաղաքին, որ է Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն. մեք նմա ցուցանեմք զանխլդ. սուրբք եմք յեկեղեցւոջն, հանէք զու և նա»։ Եւ անխոյթ արարեալ երիցուն. և կրկնեալ և երեքկնեալ նոյն տեսիլ, և դարձեալ 'ի վերջ ընկեցեալ անփոյթ առնէր։ Եւ ապա յուժգին անկեալ 'ի հիւանդութիւն մերձ 'ի մեռանել՝ եկեալ նոյն արք հրեշտակաշուք և լուսաւոր կերպարանօք և ասեն ցերէցն՝ «Եթէ՞ ազդաս մեռանիս, գիտեա եթէ ոչ»։ և նա ասէ՝ «Ոչ՝ տեարք»։ Նոքա ասեն՝ «Վասն զի հեստեալ յամառեցար, ոչ չոգար 'ի Յուի առ Խոճկորիկ առնուլ զմեր նշխարս անտի. արդ մեռանիս առաւօտիկ»։ Եւ աղաչեալ երիցուն՝ հայցէր զժշկութիւն, զի փութով երթեալ կատարեսցէ զհրամայեալսն։ Եւ նոցա ձեռն եդեալ 'ի վերայ կենդանակիր խաչի նշանաւն՝ և վաղվաղակի ընդունէր զառողջութիւն, և յարուցեալ գնայր 'ի քաղաքն Յուի։ Եւ գտանէր զԽոճկորիկ, որ էր գործակալ 'ի քաղաքին, և նորա ոչինչ հարցաքննին արարեալ, այլ որպէս առն աբեղայի տայր ընդունելութիւն։ Եւ վասն զի 'ի տեսլեանն ասացեալ էր, եթէ Խոճկորիկայ նոյնպէս ցուցանեմ զանխլդ, երէցն

ոչինչ 'ի վեր հանէր զբանն: Իբրեւ յընթրեաց 'ի վեր յառնէին, երէցն յեկեղեցւոջն հանգչէր համդերձ երկու եւս երիցամբք որք ընդ գործակալին էին, եւ Խոճկորիկն երկու պատանեօք: Եւ եկեալ նոյն արքն նովին ահաւորագոյն կերպարանօք ասեն ցԽոճկորիկն. «'Ի վեր արի, յեկեղեցին երթ, զի սուրբքն անդ են՝ երէցն եւ դու հանէք»: Եւ զարթուցեալ 'ի քնոյ ասէր. «Ուրեմն 'ի ժամ վաղ չոգար. վասն այսորիկ է տեսիլդ». եւ փաղփաղակի անդէն քուն առնոյր: Եւ դարձեալ երեւէր նոյն տեսիլ, եւ ասէին՝ «Ոչ եթէ վասն այնորիկ ասացաք, եթէ 'ի ժամ վաղ չոգար, այլ մեր նշխարքն կան յեկեղեցւոջն՝ երթ դու եւ երէցն հանէք»: Եւ զարթուցեալ յերկիւղ ահագին, դարձեալ քուն առնոյր քաղցրագոյն: Եւ եկեալ երրորդ անգամ նոյն արքն լուսազգեստք՝ յոյժ պայծառ կերպարանօք շքեղացեալք. եւ ասեն. «Արի երթ յեկեղեցին, եւ տեսանես լոյս մեծ յեկեղեցւոջն, եւ ուշ կալջիր լուսոյն, յոր տեղ լոյսն ժողովի, անդանօր կան նշխարք սրբոցն»: Եւ նոյն տեսիլ նոյնպէս 'ի նմին ժամուն երիցուն երեւէր: Եւ յարուցեալ երէցն յեկեղեցւոյ 'ի դուրս ելանէր առ Խոճկորիկ գալ, եւ սա առ երէցն 'ի պատմել զտեսիլն. երկոքեան դիպեցան եւ խոստովանեցան երկոքեան զմի պատճառս, եւ պատմէին զտեսիլն իւրեանց: Այնուհետեւ երէցն Յակոբ եւ նախարարն Խոճկորիկ եւ երկու եւս այլ երիցունքն՝ որք էին ընդ գործակալին, եւ երկու պատանիքն տեառնագրեալ զանձինս կենարար նշանաւ խաչիւն՝ դիմէին յեկեղեցին: Իբրեւ մտին 'ի գաւիթ մօտ առ բեմն, արարեալ երկրպագութիւն առաջի խաչին՝ հայեցեալ տեսին լոյս սաստիկ յեկեղեցւոջն ահաւորագոյն յոյժ: Եւ յահագին երեւելւոյ լուսոյն ոչ կարէին 'ի վեր յառնել. եւ պաշտեցեալ սաղմոս մի եւ երկու՝ չկարէին յառնել. եւ զերրորդն կատարեալ՝ օգնութիւն առեալ յամենազօրէն Աստուծոյ, որպէս թէ եկեալ մարդ ոք զա-

մենեսին 'ի վեր առնոյր։ Եւ բոլորեցունց կնքեալ զենքեանս նշանաւ խաչին՝ 'ի ներքս յեկեղեցին մտանէին՝ լցեալ պայծառագոյն լուսով, և պաշտէին մինչև ցառաւօտն. և ընդ այգանալն ժողովել սկսանէր լոյսն բովանդակ 'ի բեմ անդր, և երթեալ միաբանէր 'ի տեղին՝ ուր երանելի վկայից Քրիստոսի նշխարքն կային։ Եւ 'ի սպառ լուսոյն զօրէն ճրագի մերթ լուցանէր և մերթ անցանէր 'ի վերայ տեղւոյն՝ ուր սուրբ նշխարքն կային, մինչև նշանակէին զտեղին։ Եւ ապա բացեալ զտեղին զնշխարս երանելեացն։ Եւ գիր 'ի վերայ զայս օրինակ. «Ես Գրիգորիս բերի զայս սրբուրբս Զաքարիա՝ զհայր Յովհաննու, և զՊանդալէոն երանելի, որ վկայեաց 'ի Նիկոմիդիա քաղաքի»։ Եւ առեալ լուանային և օծանէին զնշխարս սրբոցն անոյշ իւղովք։ Եւ կնքէր Խոճկորիկ իւրով մատանեաւ, և ինքն դեսպան ձիով առ բարեպաշտ արքայն Աղուանից հասանէր, և պատմէր զերևումն մեծագոյն նշանացն։ Իսկ աստուածասէր թագաւորին յոյժ ցնծալից ուրախութեամբ զուարճացեալ կանխէր յաղօթս և 'ի բարերարութիւնս մեծին Աստուծոյ. գոհանայր զմեծագոյն տուելոց պարգևաց։ Եւ անդէն փաղփաղուկ ժողովէր զեպիսկոպոս և զվանականս և զանապատաւորս. մեծապէս կատարէր զյիշատակ սրբոցն, աղքատաց առատապէս առնէր ողորմութիւն. զեպիսկոպոս և զերիցունս զգեցուցանէր պատուական հանդերձիւք, և զՄանասէ զիւր դրան երէցն՝ որ էր յոյժ հաւատարիմ, և հանդերձ իւր պաշտօնէիւք ակրունեան խաչին նշանաւ, խնկովք և զանազան ծաղկովք, և անթիւ ժողովոց բազմութեամբ՝ օրհնեալ փառաւորէր հոգևորական երգովք 'ի ձեռն առաքինասէր նահատակացն զՅիսուս Քրիստոս զճշմարիտ Աստուած։ Եւ այնուհետև զանազան թագաւորական զգեստիւք յարմարեալ սպաս սրբոցն կազմէր, ոսկւով և արծաթով և ակամբք պատուականօք։ Եւ հրամայէր առնել խորան

փայտեղէն ծածածոյ շէկակարմիր կաղմել մորթով և սպիտակ կտաւովք. և 'ի ներքոյ դրուագել զհանգստարանս սրբոյն և զբոլոր կտակարանաց կայեան: Իսկ Շուշանիկ աշխարհատիկինն Եղուանից՝ յոյժ հաստատեալ և բարեսէր կին, զիւր մեծագոյն խորանն հրամայեաց 'ի շէկակարմիր խորանի սրբոյ 'ի վերայ հարկանել եկեղեցարար, յորում պաշտօնեայքն և Թագաւորն և յոլովք 'ի ժողովրդենէ կային 'ի ներքոյ, որ 'ի ջերմին հով առնէր 'ի սուրբ խորանին և յանձրևարեր խոնաւէն ցամաք պահէր: Իսկ բեհ կտաւով զմեծ խորանաւն շուրջ արմած փակարար պատեալ՝ յորում բանակն արքունի 'ի ներքս մտեալ 'ի ժամ պաշտամանն առաջի խաչին և երջանիկ վկայիցն Քրիստոսի, երկրպագութեամբ մաղթէր զԱստուած և ունկն դնէր Աստուածաշունչ գրոց: Իսկ քանզի միշտ ընդ իւր առեալ մնչեարս երանելեացն, հրամայէր դեսպակ առնել յանուն սրբոյն՝ նոյնպէս շէկակարմիր մորթով կաղմեալ, և սպիտակագեստ պատուական կտաւով 'ի վերայ յարմարեալ, և խաչ ոսկեղէն 'ի պատուականագոյն ականց՝ զանուն Թագաւորին ոսկեգործ քանդակով 'ի վերայ գրեալ, զոր 'ի վերայ դեսպակին հարեալ կանգնէին, և յարքունի աստուածանէ սպիտակ ձիս ընտրեալս՝ որ իւր յոյժ սիրելի և պատուական երևէին, և զայլ ձիոցն կարմիր 'ներկուածով տայր յարմարել, և պաշտակս յայս արարեալ սրբոյն դեսպակի և ձիոցն սպաս ունելոյ. և մի ինչ ունել դեսպակին՝ բայց միայն զսուրբսն և զԱւետարանն հանդերձ այլ ևս Աստուածաշունչ գրովք: Իսկ այլ հրամայէր կաղմել սպիտակ եղամբք լծելովք, որ զխորան սրբոյն բառնայցեն. և երիցունս բազումս և սարկաւագունս և զլահարդացս, և փառաւոր պահէր յարքունի դրանն, որք միշտ 'ի տուէ և 'ի գիշերի պաշտեալ սպաս ունէին սրբոյն: Իսկ յորժամ չու լինէր բանակին՝ յառաջ սրբոյ դեսպակն ելանէր առաջի սպիտակագեղեաց կտաւով ծածկեալ,

և ոսկեխաչ 'ի վերայ դեսպակին թագաւորական թագով, գունակ գունակ կերպարանացն փողփողելով ալխասի ձիովք և զարդուքս թագաւորական թիկնացն կազմեալ թագիւ, և բազմութիւն պաշտօնէիցն առաջի և զկնի դեսպակին խաչ 'ի ձեռին, ամենանուագ երգով բարեբանէին զԵրրորդութիւնն 'ի մի զօրութիւն: Իսկ ապա դեսպակ աշխարհատիկնոջն և տիկնունի գունդն զհետ նորա: Իսկ յորժամ բանակել կամէին, յառաջ սրբոյն հարկանէր շեկակարմիր խորանն և խաչ ունէր 'ի վերայ. և ապա ալխասի մեծ խորանն 'ի վերայ նորա, յոր եկեալ սուրբքն մեծաւ զգուշութեամբ՝ անուշագոյն խնկովք ծխեցելովք, և քաղցրաձայն ամենանուագ երգովք 'ի հանգստարանն մտանէին. և ապա արքունական խորանն՝ և այլ ևս զանազան պատկք արքունեացն հարեալ կազմէին: Իսկ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւն և բոլոր բանակօքն կանխէր զցայգ և զցերեկ յաղօթս և 'ի փառաբանութիւնս սրբոցն, և զի ոչ ունէր մանուկ աստուածասէր և բարեպաշտ թագաւորն՝ վանականաց ուխտադրութեամբ աղաչէր զԱստուած 'ի ձեռն սրբոցն, զի շնորհեսցէ նմա զաւակ: Իսկ մարդասէրն Աստուած՝ որ է՝ մատակարար բարեաց, լուեալ աղօթից նորա՝ շնորհէր նմա զաւակ արու. և խնդութեամբ ընկալեալ զպարգևսն յԱստուծոյ 'ի ձեռն սըրբոց վկայիցն դնէր անուն մանկանն՝ Պանդալէոն, և հրամայէր սնուցանել ընդ երկիւղիւն Աստուծոյ՝ միշտ առաջի ամենասուրբ վկայիցն Քրիստոսի երկրպագութեամբ կանխեալ: Իսկ յորժամ յընթրիս լինէր բարեսէր թագաւորն, թակոյկ մի յարքունի սպասէն լցեալ արքային ընկալէր գինի, և երկուս արծաթի մեծագոյն սկուտս՝ լցեալս արքունական հացիւ հանապազ առաջի արքունական սեղանոյն դնել հրամայէր, և սարկաւագ մի յատ կացեալ առ արքունական սեղանոյն՝ որ ինչ 'ի սկուտն գայր յամենայն խորտկաց առեալ 'ի վերայ սկուտոյն դնէր և իբրև զբաւ լինէր արքունի ընթրեաց,

յայնժամ առեալ սարկաւագին մատակարարէր աղքատաց։ Նոյն յամենայն կիւրակէի՝ յորժամ զաստուածեղէն խորհուրդն հանդերձեալ էին կատարել, և կենարար աւետարանական բանքն ընթերցեալ լինէին առաջի յոլովագոյն ժողովրդոց, ոչ ունայնաձեռն երթայր Թագաւորն յողջոյն աւետարանին. և արդարև միշտ բևեռեալ էր ընդ երկիւղին Քրիստոսի, և ջերմեռանդ սիրով փութայր հանապազ 'ի պահս և յաղօթս հանդերձ Թագուհեաւն և ամենայն զրամբն. և անձանձրոյթ կատարէր զյիշատակս սրբոցն՝ յորդորելով զամենեսեան 'ի հաւատն Քրիստոսի, և խրախուսեալ միշտ յօրանայր հանդերձ յուսովն Քրիստոսի անանցական բարութեամբ յաւիտենից։

## ԳԼՈՒԽ Ի

Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, որ վկայեաց 'ի Մազքթաց 'ի ձեռաց Սանեսանայ արքային.

Յայժ ցանկալի տենչանս ունէր բարեպաշտ Վաչական արքայն Աղուանից առ գիւտ նշխարաց սրբոյ մանկանն Գրիգորիսի. քանզի տեղեկացեալ էր 'ի հնագրացն պատմութենէ, եթէ 'ի Վատնեայ դաշտին կատարեցաւ երանելին Գրիգորիս, և բարձեալ աշակերտաց նորա՝ բերին յԱմարաս գիւղն և եդին յեկեղեցւոջն, յորում հիմնարկեալ էր մեծին Գրիգորի՝ ոչ նշան ինչ արարեալ 'ի տեղւոջն, երկուցեալ յայլուրեք բառնալոյ զնշխարս երանելւոյն, կամ թէ յերկիւղէ հինին ձեռելոյ, և 'ի յոլովութենէ ամաց բազմանալոյ 'ի մոռացումն ընկեցեալ լինէր տեղին նշխարաց սրբոցն։ Խորհուրդ կալեալ Թագաւորին ընդ եւրոյ դրան երիցուն, խորհել պատճառս ինչ, որով կարասցէ գտանել զցանկալին յայժ բարի անձինն։ Նա կոչեցեալ զմանկացերէց գեղջն՝ հար-

ցանէր, եթէ նշան ինչ ուրեք է՞ առ եկեղեցեաւն 'ի գերեզմանին վերայ՝ թէ ոչ. և նա ասէ՝ «Բազում գերեզմանք են արդ շուրջ զեկեղեցեաւն, վասն զի 'ի հինախաղաց ժամանակէն 'ի մեծագոյն հիմնարկութենէ եկեղեցւոյն ոչ ոք կարաց շինել, զոր մեծին Գրիգորի հիմնարկեալ էր»: Եւ ասէ թագաւորն՝ թէ «Զ՚հող անդուոյն 'ի բաց հրամայեմ ակել, զուցէ 'ի բազմութենէ գերեզմանաց ոչ կարեմք կալ 'ի վերայ գերեզմանի երանելւոյն, այլ ապաստան պարտ է լինել 'ի պահս և յաղօթս, և բազում աղաչանօք խնդրել յամենողորմէն Աստուծոյ, յիշեցեալ զտէրունեան զբանն՝ զոր ասէ, զբարի հայցումն վաղվաղակի առնուլ յաստուածութենէն Աստուծոյ:

## ԳԼՈՒԽ ԻԸ

Թագաւորն արքայն Վասպուրականայ առ ամենայն եպիսկոպոսունս և քահանայս առ 'ի շնորհել նմա 'ի յետս աղօթից և պաղատանաց նշխար զթաղեալ քանցն.

Յայնժամ հրամայէր թագաւորն հրովարտակս առնել ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ առ եպիսկոպոսս, երիցունս, տանուտեարս և առ ամենայն ուխտաւորս եկեղեցւոյ՝ պաշտել և պահել և առնել խնդրուածս առ մարդասէրն Աստուած առ 'ի շնորհել մեզ զնշխարս երանելւոյն Գրիգորիսի: Եւ ապա այնուհետև ամենայն եպիսկոպոսք զեւրաքանչիւր իշխանութեան զերիցունս և զսարկաւագունս և զկղեր ուխտ եկեղեցւոյ հանդերձ տէրունեան նշանաւ խաչին առեալ միաբանութեամբ և յոյժ փութով ժողովեցան 'ի սեպհական գիւղն արքունի՝ յանուանեալն Գիւտական: Եւ որ պարուհեալ յամէր ոք՝ մեծ պատուհաս 'ի վերայ հրամայէր դնել: Եւ անդ զերիս աւուրս մեծապէս կատարեցին զպաշտօն սրբոյն, յորում ինքեան իսկ թագաւորն անխա-

րութիւն էր յառն կալ և պաշտել՝ զբոլոր ուխտ եկեղեց-ւոյն անդր ժողովեալ. գտանէր և զամենասուրբ նշխարս Գրիգորի և զյոյժ հռչակելոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ 'ի Գառարահոջ գեօղն՝ որ է 'ի նահանգին Արցախայ, զոր էր բերեալ երիցուն՝ Մաթէ անուն, 'ի Յովհաննէ Հայոց կա-թուղիկոսէ, զոր ունէր նորին մատանեաւն կնքեալ, և առա-քեալ անդ երիցունս առնոյր առ իւր: Եւ 'ի գալ մեծին Գրիգորի հանդերձ պատկերազմակից պատկերովքն Հռիփսի-մեաւ և Գայիանեաւ 'ի մեծ ժողովն Գիտակառու, ընդ առաջ եկանէր Թագաւորն հանդերձ Թագուհեաւ և ամենայն մեծամեծ նախարարօք հեռագոյն 'ի գեղջէն. ընդ առաջ եկանէին և ամենայն եպիսկոպոսունք իւրաքանչիւր իշխանու-թեամբ և պաշտօնէիւք դասք դասք յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոյն մեծապէս ընդ Աւետարանին պատուեալք, բազմութիւնք խաչից և զանազան նշանացն փողփողելով, ծուխ խնկելոյն ուժգին բուրեալ յիւրաքանչիւր դասուէ, ձայնք սաղմոսանուագ հոգևոր երգոյն քաղցրագոյն հնչմամբ անհատ բարբառելով զԱստուած՝ զտուօղն մեծագոյն պար-գևին: Եւ այնպէս Թագաւորն մեծագոյն բերկրանօք ողջու-նեալ զսուրբն հանդերձ բազմութեամբն, ինքն մեծաւ զգու-շութեամբ սպասաւորէր երիցուն, որ զնշխարս սրբոյն բարձ-եալ տանէր: Եւ բերեալ 'ի հանգստարան սրբոյն՝ դնէր առ երանելեացն Զաքարիա և Պանդալեոնի: Եւ փառահացեալ այնուհետև բարևէր ալքայն յիւր հաստատուն հաւատոյն խնդիր և յառաջինի ժողովոյն բարի հայցումն, ասէ «Հաս-տատուն գիտեմ, զի տայ ինձ Աստուած 'ի ձեռն մեծին Գրի-գորի զնշխարս սրբոյն Գրիգորիսի»: Անոյր այնուհետև Թա-գաւորն զբազմութիւն ժողովոյն և հրաման տայր բոլոր եպիս-կոպոսաց երիցամբք և սարկաւագօք, անապատաւորօք և բոլոր ուխտի եկեղեցւոյ պաշտօնէիւք՝ իւրաքանչիւր աւետարանաւ և խաչիւ, և բազմութեամբ բուրվառաց խնկելոց ծխելոց,

և ինքն արքունի դրան երիցամբ և յոլովագոյն պաշտօնէիւք։ Եւ զաշխարհատիկինն թէպէտ և կամեցաւ անդէն թողուլ, քանզի ժամանակն գարնանային էր և յոլովութիւն անձրև-ւացն բերման առատանայր յերկիր, ոչ հաւանէր նա առնուլ յանձն. այլ մեծաւ փափագանօք տենչացեալ, և ինքն երթայր 'ի խնդիր սրբոյն։ Եւ զՀնդեսին վկայն Քրիստոսի առեալ (Թագաւորին) 'ի բարեխօսութիւն մեծին և բոլորեցուն Աս-տուծոյ առ 'ի շնորհելոյ 'ի ձեռն նորա զինքեան փափագե-լին։ Եւ Թագաւորական հանդերձիւք պատեալ զնշխարս նորա բազում խնկօք և անուշահոտ ծաղկօք հանդերձ դնէր 'ի դեսպակի, զոր շիկակարմիր մորթով կազմեալ և սպի-տակ կտաւով 'ի վերայ յարմարեալ, և ոսկի խաչ 'ի պա-տուականագոյն ականց քանդակեալ 'ի վերայ դեսպակին հա-րեալ, և ձիս սպիտակս կարմիր ներկուածով զարդեալ կազ-մեալ, և զպալս Թագաւորական ձիոյն Թագիւ պերճացու-ցեալ, և բազմութիւն պաշտօնէից արքունի դրանն յառաջոյ և 'ի վերջոյ դեսպակին խաչ 'ի ձեռն անհատ պաշտամամբք բարեբանէին զԱստուած։ Եւ ինքն Թագաւորն առ դեսպա-կաւն երթայր և երգակից էր սաղմոսաց օրհնութեան։ Եւ դասք եպիսկոպոսաց հանդերձ ժողովովն երթային 'ի չորե-ցունց կողմանց դեսպակին, սաղմոսելով խնդրելով զամենե-ցուն ցանկալին։ Եւ հրաման տուեալ Թագաւորին հանդերձ եպիսկոպոսօք ոչինչ ճաշակել ումեք մինչև ցերեկոյ, և յերե-կոյին լոկ հացիւ զօրանալ։ Եւ ինքն Թագաւորն զնոյն առնէր մինչև 'ի գիւղ սրբոյն։ Իսկ դրան երիցունքն յայժ ջերմագոյն պահէին. և ումանք բնաւ ոչ ճաշակեցին մինչև 'ի գիւղ սրբոյ նշխարացն։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄաթէ երէցն Գարահալու հանդերձ պաշտօնէիւք 'ի Սուհառ պաշ-տօն առնել և պատարագս մատուցանել յանուն սրբոյն, որք անդ յայտնեցան։ Եւ մինչդեռ զաւուրսն կատարէին

զպաշտօն յանկալեաց, նիրհ անկանէր եկեղեցւոյն Մատթէի. ձայն լսէր ուժգին ասելով. «Զաւուրքն Գրիգորիս խնդրեսջիք, ընդ արևելս է», որ եղեն իսկ. զի յորժամ բրէին զանգն գերեզմանին՝ սկսեալ 'ի հիւսիսակողմն արարին զբրածն. և իբրև ոչ պատահեաց, յայտ տրտմութիւն կալաւ զամենեսին: Եւ ապա ողորմութեամբն Աստուծոյ յարևելս կոյս արարեալ զբրածն՝ գտին նշխարս երանելւոյն բաց եկեալ ձայնի հնչմանն: Իսկ յորժամ չու արար Թագաւորն 'ի Գիտահանէ բազմութեամբ ժողովրդեան և հասեալ 'ի գիւղ մի՝ Երաժմնս անուն, սարկաւագ մի՝ Յովէլ անուն նորա 'ի դրան արքունի, տեսանէր 'ի տեսլեան յառաջ քան զծագել առաւօտուն, իբրու այն թէ՝ բարհ ունիցի յուռն և զնշխարս Գրիգորի խնդրեցէ: Եւ ինքն իսկ Գրիգորիս երևեցաւ ալխատակ հանդերձիւ յարեւելի կերպարանս: Եւ հարցեալ զսարկաւագն, թէ՝ «Զի՞նչ խնդրես». իսկ նորա պատասխանի արարեալ՝ «Եթէ արքայ և ամենայն պաշտօնեայք և բովանդակ գաւառն Եգուանից զԳրիգորիս խնդրեմք և ոչ կարացաք գտանել»: Իսկ երանելւոյն կալեալ զձեռանէ սարկաւագին և խոնարհեցուցեալ 'ի տեղին, ուր կային նշխարք սրբոյն, «Եթէ զԳրիգորիս խնդրէք՝ աստ է», ասէր. և հրամայէր բրել զտեղին. իսկ մօտ 'ի գերեզմանն անդր փոքր բլրակ մի էր և խաչ 'ի վերայ: Եւ երթեալ երանելւոյն 'ի վերայ բլրոյն՝ առընթեր խաչին կայր. և երէց մի Նաթան անուն՝ եղբայր նորուն սարկաւագին, և միւս ևս երէց Գեդէոն անուն բրէին զտեղին, և Յովէլ 'ի ծունգս իջեալ՝ շալակ ունէր առաջին: Եւ գտեալ զնշխարս սրբոյն՝ զնոյն խնդալով: Եւ նորա ձայնեալ անդրէն ասէր. «Կողքս և գլուխս աստ են՝ 'ի ձեռն առէք». և մեք գտանէաք զոր ասացն: Եւ զարթուցեալ պատմէր զտեսիլն արքային. և զի չէր բնաւ երթեալ սարկաւագին յԱմարաս, ասէր՝ զտեղին զոր եցոյց՝ գիտեմ: Եւ արքայ յոյժ խնդալից եղեալ՝ զՄանասէ զեւր դրան երէցն և զնոյն սարկա-

ւայն առաքէր յԱմիրաս յառաջ քան զեւր երթալն, որ երթեալ ցուցանէր զնոյն տեղին, յորում խել գտանէին զնշխարըս արքային: Եւ չուեալ յԱրաժանից արքայ նշխարացն հանդերձ Թագաւորաւ և յոլովագոյն ժողովովն և հասեալ 'ի Բարուէձ փոքրագոյն գիւղ մի՝ լինէր անդ ցայգապաշտօն: Եւ յորժամ սկիզբն լինէր պաշտամանն, բարեպաշտ արքայն անդադար խնդրէր յԱստուծոյ զգիւտ սրբոյն Գրիգորիսի: Եւ տեսանողքեալ զնոքն ակերունեան խաչն նշանաւն, յոյժ բաղում արտասուօք և ծածուկ սրտիւ՝ հայցէր զառատատուրն Աստուած: Եւ մինչ նստեալ 'ի գիշերապաշտամանն էր՝ նիրհ առնոյր փոքրագոյն գլխագաւորն. և եկեալ հնչիւն ձայնի ասէր. «Զոր դու հայցես արտասուօք՝ անդ երեւեցաւ»: Եւ Յովէլ երէց մի անապատական, որ առ արքային լինէր, պատմեաց՝ «եթէ ես տեսի 'ի նմին տեղւոջ, ուր Յովէլ սարկաւագն բրել հրամայեաց՝ զի աղբեւր եղանէր յականէ նորագոյն, և յառաջ խաղացեալ յոյժ յորդագոյն լինէր, և իմ զարմացեալ եթէ յառաջ չէր աղբեւր 'ի տեղւոջս, արդ՝ այս յորդ ուստի՞ եղանէ»: Յորժամ չուեալ 'ի Բարուեձէ, կանայք յառաջ եղանէին 'ի գիւղաքաղաքն Ամիրաս. և զի որպէս եղեն տեսեալ, ժամանակին զարնանային էր՝ և յորդութիւն անձրեւաց անդադար հոսմամբք իջանէր յերկիր, բազմութիւնք ամպակտրոյ ձիոյն յոյժ վարակոյ գործէին զճանապարհն: Իսկ Թագաւորն ասէ ոչինչ դանդաղել. և առ 'ի յոյժ ցանկալի անձկանացն, 'ի վայր յերիվարէն իջանէր. և շրջեալ ընդ դասս եպիսկոպոսացն և երիցանց՝ կարդէր յարմարագոյնս երթալ հանդարտիկ և յոլովագոյն քաղցր ձայնիւ սաղմոսանուագ երգովք բարեբանել զկենարար Երրորդութիւն: Եւ ինքն անցեալ մեծաւ զգուշութեամբ ապաստաւորէր զեպարակի վկայիցն Գրիգորիսի: Եւ 'ի բազմութենէ ձայնից պաշտամանց յայլ և յայլ լեզուս մեծագոյն հնչէր երկիրն: Եւ 'ի յոլովութենէ ակերունեան խաչանձեւ նշանացն,

և 'ի փողփողելոյ նշանարձակ գունակ գունակ երախխառն կերպարանաց փայլունք ոսկւոյ և արծաթոյ և պատուական ականց, որ 'ի բազմութիւն խաչերոյն էին կառուցեալք՝ իբրև լուսաւոր ամպք կայեալ ունէին զերկնիւ։ Իսկ զդեսպակ սրբոյն ալխառնգղեսա կազմածով, ալխառն ձիով, ոսկի ականակապ խաչիւն և յոյժ պատուական նշանարձակ թագիւն խաչին իբրև աստղ պայծառագոյն լուսով, և ուժգին շքեղացեալ փառօք երթայր 'ի մէջ քրիստոնական բանակին։ Եւ յորժամ 'ի գեօղն մտանէր սուրբ և աստուածասէր ժողովն, գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին և կամուրջ կապմեալ յարքունի պողոտային. և արքայն առ 'ի յոյժ սիրոյն, զոր առ սուրբն ունէր՝ ոչ հաւանէր զդեսպակ սրբոյն յայլս թողուլ. այլ ինքն թագաւորական զդեսպակն հանդերձ ադեղուն անցանէր ընդ գետն։ Եւ երթեալ 'ի նշանակեալ տեղին երկարագոյն ծնրադրութեամբ հանդերձ եպիսկոպոսօք և բազմութեամբ ժողովոյն առնէր խնդրուած։ Եւ հարեալ զխորանն արքունի 'ի վերայ տեղւոյն՝ հրամայէր զգուշանալ մինչև ցվաղիւն։ Եւ ընդ այն ժամանակս եպիսկոպոս ոչ կայր յԱմարաս, և հարցեալ զվանացերէցն գեղջն և զայլ ես ռամկանին եթէ՝ «Չեր նշան ինչ տեսեալ է 'ի տեղւոջս, թէ ոչ»։

## ԳԼՈՒԽ ԻԲ

Երանելւոյն Յոբայ ճգնաւորի հաստատութեանն վկայելոյն Աստուածատան Պարսկին։

Եւ պատմեաց վանացերէցն և ասէ. «Երէց մի էր Վ.եկերտու Յոբ անուն, ճգնաւոր և յոյժ առաքինի վարուք կեցեալ յաշխարհի, ունէր և առաքելական շնորհս. քանզի զմեծագոյն աշխարհ մի Արցախոյ՝ Պարսական անուն, դարձուցա-

նէր 'ի մոլորութենէ, և առնէր աստուածածանօթս անձառելի խորհրդոց խորհրդակիցս և Երրորդութեանն պաշտօնատարս։ Այս եկեալ բազում անգամ կատարէր զյիշատակ սրբոյն Գրիգորիսի և ասէր երկիցս և երիցս առաջի բազմաց, եթէ Թադէոս հաստատեալ յառնելոց է յաշխարհիս Ռուզանից, և խնդրէր առնէ տեղւոյս և սուրբ նշխարացս Գրիգորիսի։ Եւ դարձեալ այլ ոմն անապատաւոր հիւր եկեալ մեզ և մեր ընդ յառաջ եկեալ՝ ընկալաք զնա որպէս սովորութիւն է եղբարց և լուացեալ զոտս՝ ճաշակէր փոքրագոյն ինչ։ Եւ եղեալ 'ի տեղւոջդ յայդմ՝ 'ի քուն մտեալ հանգչէր և յարուցեալ վաղվաղակի՝ խաչ արարեալ իւրով իսկ ձեռամբ՝ կանգնէր 'ի տեղւոջդ և պատուիրէր ասելով, մի որ զխաչդ 'ի բաց հանցէ, այլ մեծագոյն խաչ տուք արկանել 'ի տեղիդ, և այգուն և երեկուն աղօթս կատարել և խունկ ծխել, զի մեծ պատճէնս տեսանեմ 'ի տեղւոջս։ Եւ այլ արեղայ ոմն հիւր եկեալ՝ մեզ ճաշ հրամայեցաք տալ. և մինչ նա հաց ուտէր և մանուկ մի զինի տայր բաժակաւ, և 'ի չինին ամբոխ ինն լինէր, և մեր ամենեցուն զհիւրն թողեալ միայնակ՝ յաղագանն երթայաք. և հիւրոյն յարուցեալ զբաժակն առեալ զնայր և տարեալ վաճառէր. զգինին առեալ 'ի գաւթոց մտանէր և ուտանէր թոշակաւն։ Եւ տեսանէր 'ի տեսլեան բաժակադրն զայր մի եպիսկոպոս՝ նստեալ աթոռով առ խաչին, զոր անապատաւորն կանգնեաց. սպիտակազգեստ հանդերձիւ և յոյժ ահաւորագոյն տեսլեամբ. և զինքն կալեալ տանջել հրամայէր 'ի վերայ սրբոյ գերեզմանին։ Եւ յարուցեալ ցուցանէր բազմաց զմարմինն, զի կապուտակացեալ էր հարուածովք ահագին տանջանացն, և այնպէս օր ըստ օրէ հրամայէր տանջել. և նորա 'ի բռնութենէ տանջանացն ապաստանել 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ խնդրելով զերծ տանջանացն։ Բայց տեսանէր դարձեալ անդ զնոյն եպիսկոպոսն, զի դժնդակագոյն ես հարկանել հրամայէր և ասէր.

«Ձեր հնար բուժիլ քեզ 'ի տանջանացդ, եթէ ոչ երթեալ խոստովանեսցիս 'ի նմին տեղւոջ՝ ուստի զբաժակն գողացար»: Նա յարուցեալ արեգայն առնոյր զգինս բաժակին, և դնացեալ յԵրուսաղէմ գայր յԱմարաս. և մտեալ յեկեղեցին՝ կոչէր զվանացերէցն առ ինքն, սկսանէր լալով խոստովանել զերան, և բազում աղաչանօք խնդրէր առնուլ զգինս բաժակին՝ և եկեալ ցուցանէր զտեղին ուր խաչն կայր՝ «Այդր եղխկալաս նստէր՝ ասէ, լուսաւոր զգեստու և ահաւոր կերպարանօք». զտեղին ցուցեալ զգերեզմանին, եթէ այդր զիս հարկանել հրամայէր. և ընկալեալ զառողջութիւն տանջանացն գնայր խաղաղութեամբ: Նա բազումք 'ի գեօղս անտի, թէ որ անորդի լեալ են և եկեալ ուխտեալ և հող առեալ 'ի տեղւոյս՝ որդեծնութեան զաւակի հասան: Նա ամենայն ջերմոտք հող առեալ փարփարակի ընդունէին զառողջութիւն անձանց իրեանց: Նա մինչ զայս ամենայն նշանագործութիւն պատմէին առաջի արքային, 'ի նոյն խորհուրդ և

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Տեսիլ մի Խոծկորիկի զառնկերպայն Զաքարիայ՝ սրբոյն Պանդալէոնի, որ էր նշխարաց նշանադրեաց. և զաւակ սրբոյն.

Այլ ևս այն Խոծկորիկ անուն, որում երանելին Զաքարիա և սուրբն Պանդալէոն յայտնեցան 'ի Յաւի 'ի հասարակ աւուր, 'ի քուն կայր և տեսանէր 'ի տեսլեան նոթն այր յեկեղեցւոջն՝ սպիտակ և պծղնաւոր պարեգօտիւք: Նա խօսեցեալ ասն ընդ արեգայն՝ ասէ, «Օրհնեալ այք՝ յորժամ դուք աստ էք, ընդէ՞ր ոչ ցուցանէք զտեղին նշխարաց սրբոյն Գրիգորիսի. զի ոմանք աստ եթէ ասէ է, և ոմանք եթէ անդ, և մեք յուշկառութեան և 'ի բազում հոգս եմք»: Պատասխա-

նի եառն ամենեքեան և ասեն. «Նշան ինչ ոչ տեսեր»։ Նորա պատասխանեալ, թէ ոչ. և մի յեօթանցն առաջնորդեալ առնն՝ ասէ. «Եկ զկնի իմ և ցուցից քեզ զնշանակեալ տեղին»։ Եւ տարաւ զնա 'ի տեղին զոր ցուցեալն էր յառաջ. և տեսանէի զի երկիրն պատառէր՝ և ընդ պատառուածն ձրաղ լուցեալ երևէր, և բոց ձրաղին յերկուս բաժանեալ բուրէր 'ի վեր. և ասէ ցարեղայն որ զնշանն ցուցանէր, թէ երթամ պատմեմ արքայի զնշանդ զոր ցուցեր ինձ. և նա ասէ՝ երթ և պատմեա։ Եւ գայր այրն առ արքունիսն, և թուէր թէ արքայ 'ի քուն իցէ. և ինքն չիշխէր զարթուցանել։ Եւ անդրէն դարձեալ առ արեղայն ասէր՝ արքայ 'ի քուն էր և ոչ կարացի զարթուցանել. և մինչ անդրէն դառնայր այրն, երկիրն պատառեալ կայր, և ձրաղն լուցեալ և արեղայն առընթեր կացեալ 'ի տեղւոջն։ Եւ ասէ արեղայն ցայրն, յորժամ զարթնուցու արքայն՝ զոր տեսեր, պատմեսջիր նմա։ Եւ կամեցաւ տուաւբն զպատառուածն ծածկել, և զբոյսն արգելուլ։ Եւ խոնարհիկայ բուռն հարեալ արգելուլ, թէ մի առներ դայդ, մինչև արքայն եւս տեսցէ։ Եւ նորա չառեալ յանձն՝ տուաւբ հարեալ զտեղին, անյայտ արար զպատառուածն, և ասէ՝ արքայ յորժամ զարթիցէ, պատմեսջիր զնշանդ զոր տեսեր։ Եւ զարթուցեալ 'ի քնոյ, եկն պատմեաց զայս ամենայն արքային։ Վասն որոյ զցայգն բոլոր ամենայն բազմութիւն ժողովեցան անդադար խնդրուածս և պաղատանս մատուցանէին առ Աստուած՝ տուողին ամենայն բարութեանց։ Իսկ 'ի վաղիւ անդր, յորժամ զառաւաւտն կատարէին զպաշտօն, եկեալ միաբանութեամբ ամենեքեան 'ի տեղի նշանաւոր խաչին, և զխորանն արքունի 'ի վերայ տեղւոյն հարեալ, և շուրջ զխորանաւն բէժ ածին բաղադոյն. և արտաքոյ բեժին ժողովեալ եպիսկոպոսացն դաս դաս իւրաքանչիւր աշակերտօք շուրջ կացեալ զբեժովն, սարկաւագացն խաչ 'ի ձեռս և երգեցից ուռանաւորան 'ի գլուխ, և պաշտօնէից

բուրվառ 'ի ձեռս զանազանութեամբ խունկս ածել առ միաբանութեամբ սաղմոսելոյն և բարեբանելոյն զանճառելի երրորդութիւնն՝ հնչէր երկիրն։ Իսկ առաքինասէր թագաւորն՝ հրճուեալ և բուռն 'ի ձեռն առեալ՝ քաջարար առնէր զբրածն. նա և բարեխէր և յոյժ հաստատեալ թագաւորին զխինձ մատուցեալ թագաւորական զգեստս 'ի հողոյն կրէր փութապէս։ Յայնժամ եպիսկոպոսունք և երիցունք և նախարարք և կանայք նոցա՝ իւրաքանչիւր զգեստուք մեծաւ փափագանօք կրէին 'ի դուրս զհող. բայց սկսեալ՝ առ կողմամբ առնէին զբրածն. և երանելոյն նշխարք յարևելս կոյս էին։ Յայնժամ յոյժ տրտմութիւն կալաւ զթագաւորն և զամենայն ժողովս բանակին, մինչև նստէր տարջացեալ թագաւորն 'ի մեծագոյն հոգս։ Իսկ այս քաջալերեալ ճշմարիտ հաւատով ասէր. «Ընկալ լինի բան ամենակեցուցչին Աստուծոյ, յերկուց և յերից ժողովելոց յանուն կենարարին, վաղվաղակի գտանել զխնդիր բարւոյն։ Իսկ այսչափ բազմութիւն ժողովելոցս յանուն բոլորեցուն Աստուծոյ՝ հաստատեալ գիտեմ, զի ոչ անփոյթ արարեալ մերժեսցէ զմեզ անօթութ»։ Իսկ հրամայեաց զուրքն Զաքարիա և զՊանդալէոն զմեծ և զյոյժ հաշակելին Գրիգորիս և զՔոխախակ Գայիանեան հանդերձ՝ բերել և դնել առաջի բրածին։ Ընդէն վաղվաղակի առեալ առն միոյ զբահն, թողոյր զառաջին բրածն և սկսանէր զկողմանէ յարևելս կոյս զինել. և պատահէր գերեզմանի երանելոյն։ Ապա յոյժ խնդալից եղեալ թագաւորն, և ամենեքեան որք էին 'ի խորանին՝ ազդումն առնէին բազմութեան ժողովոյն զգիւտ նշխարաց սրբոյն։ Իսկ զինեալ ամենայն բազմութեան առ 'ի նշխարսն առ ոտս կամէին հարկանել զբէժն և զխորանն, մինչև արտաքս եհան թագաւորին և հազիւ ուրեմն դադարեցուցանել զխմբեալսն։ Իսկ 'ի բանալ գերեզմանին և յերևել նշխարացն՝ անընդհատական իմն բուրէր հոտ անուշից, մինչև ամենեցուն 'ի թմրութեան լեալ

ժամս բազումս, ծածկելով զոլովէց խնկարկութեանցն զՀօտ: Ընդ որ յոյժ հիացեալ արքայ, և ամենայն որք ընդ նմա միաբան տային փառս Տեառն այնպիսի ահաւոր բարեաց: Ապա նստէր առ գերեզմանի սրբոյն Թադէոսին 'ի վերայ երկրի, և 'ի զանազան պատուելի սպասուց արքունի հրամայէր բերել. և եդեալ սպաս 'ի վերայ իւրեանց ծնգացն՝ յոյժ երկիւղիւ սպասէր: Եւ երիցունքն հանելով զնշխարս՝ հաւաքէին 'ի վեր 'ի սապասն. և գտին ևս շիշս երկուս ապակիս առ նոյն նշխարաց, 'ի միում կայր յարենէ Զաքարիայ, և 'ի միւսումն 'ի նշխարաց սրբոյն Պանդալէոնի. և առեալ զամենն 'ի դուրս՝ ողջունէր ամենայն բազմութիւն մինչև յերեկոյ: Եւ կնքեալ Թադէոսին արքունի մատանեաւն՝ հրամայէր մեծաւ զգուշութեամբ պահել մինչև ցառաւօտն: Եւ գտանէին տապակի մի նորին Գրիգորիսի ընծելի, զոր առեալ գոհանայր արքայն զԱստուծոյ ամենակալէ: Իսկ 'ի վաղիւ անդր հրամայեաց զեւր իսկ փառն արկանել 'ի վերայ երկրին, և ոսկեղէն մաղզմայս բերեալ անոյշ գինով զնշխարսն հրամայէր լուանալ և յարկացուցանել 'ի վերայ սարարկեալ փառին: Ընդ ուրեմն գողացեալ արեղայի միոյ 'ի նշխարացն՝ որ էր յԱմարասայ վանից, եկեալ Գրիգորիսի 'ի տեսլեան մեծափայլուչ փառօք՝ երևեալ ումեմն ասաց զանուն արեղային և զգողանալն: Զոր հարցեալ արքային՝ խոստովանեալ երեք առաջի նորա զլորեալ մնանն: Եւ արանջեալ առն միոյ 'ի քարակէրացն, սկսաւ հայհոյել զնահատակն Քրիստոսի՝ զԳրիգորիս, և ասէր, մեզ նման ընտրեցաւ Գրիգորիսն այն: Եւ խոկոյն հասեալ նմա պատուհաս յԱստուծոյ, զգենեալ յերկիր՝ դառնայր երեսքն յետս. և այնպէս բազում աւուրս առնէր ընդ առնն՝ մինչև եկեալ և հող առեալ 'ի տեղւոյն՝ ուր կայր գերեզման սրբոյն, հեղեալ արտասուս յոյժ՝ ապա գտանէր զառողջութիւն, և յանցանացն զթողութիւն: Ահ մեծ յայնժամ արկանէր 'ի

վերայ գործունէիցն և գործակալաց. և փութայէս երկուցն գործէին զշինուած սուրբ եկեղեցւոյն: — Նոյնպէս հրամայէր թագաւորն տալ նման իւրաքանչիւր եպիսկոպոսաց, առ 'ի բաշխել վճարելոց իւրեանց, և մեծագոյն ևս նման յԱմարաս հրամայէր թողուլ 'ի նշխարացն և զգլուխն մեծազգուշութեամբ և զանազան սպասուք պահէր թագաւորական նկարն նկեալ: Իսկ 'ի վերայ գերեզմանին հրամայէր հիմն արկանել մատրան և փութայէս աւարտել և անուանել մատուռն սրբոյն Գրիգորիսի: Իսկ այնուհետև ոտանաւոր տօնութեամբ անձնապաշտ լեալ արքայն զեպիսկոպոսունս՝ ցնծալից ուրախութեամբ պաշտէր զհամայն ժողովն և 'ի ձայն քաղցր յերգս սաղմոսաց յորդորէր 'ի բարեբանութեան Աստուծոյ եկանէր բանակն: Իսկ յերրորդում գիշերին, յորում չորրորդն մերկանայր տիւ՝ կատարէին զտէրունեան և զկենդանական ահաւոր խորհուրդն: Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն և սրբոյն գաւոք: Ընդանոր բարեպաշտարարն Վաչական արքայ զհոգևորական և զեկեղեցական զայն աւար առեալ, որ էր անանց և անապականելի բարեացն առիթ, որ նախ քան զնա եղելոցն թագաւորաց ոչ ումեք համբարեցաւ այնպիսի մեծաքանչ պարգևք, առ քրիստոսաժողով բանակին աւարտման առեալ զգործութեանցն Աստուծոյ, ընկերումն անձնատուական տանայքն 'ի ձեռն քրիստոսազգեաց արքային, զորոյ գովութիւնն ոչ ինչ նուազ գոլ վարկանիմ, քան զարեմտականին տիրող Կոստանդիանոս կայսր, կամ զԱրշակունին Տրդատիոս Հայոց Մեծաց փրկութեան դուռն, զի և մեզ արևելեայցս առ եղև դուռն լուսոյ աստուածգիտութեան և բազմազան բարեաց օրինակ: Սա մեծապէս եկեալ 'ի հանդէս յայս՝ զառնայ ըստ որում զգալի էր պատարագաւորեալ՝ նոյնգունակ և առաւելագոյն ևս հայեցուցանող պայծառութեամբ զճանապարհն յօրինեալ՝ շարժի 'ի առաջէն. և հետևեալ կա-

ցեալ ամենայն բարեմտութեամբն հանդարտ և ցածագնաց քայլիւք՝ նման խաղաղացեալ ծովու երթային: Եւ 'ի քաղցրաձայն հնչմանց և 'ի ճառագայթարձակ նշողից փողփողելոց օդն զուարճացեալ և հրեշտակք իսկ երգակիցք, թուէր թէ երկիրս երկինք վերերևէր: Եւ ինքն իսկ թագաւորն անխուռն փառաւորով՝ որպէս 'ի գալն նոյնպէս 'ի դնալն անցուցանէր ընդ նոյն գետն. և կացուցեալ զդեսպակ սրբոցն նըստէր ամենայն բարեմտութեամբն. և եպիսկոպոսացն օրհնեալ զխանդաղատանն բարեմտութիւն՝ հրամայէին գնալ յիւրաքանչիւր տեղիս: Իսկ զդասս եպիսկոպոսաց և երիցանց և այլ պաշտօնէից արանցն առեալ թագաւորին ընդ սըրբոյն՝ տանէր մինչև ցՎարուէճ օթի տեղի: Եւ այսր անդ գոհացեալ զամենեցունց և երկիրպագութիւն մատուցեալ շնորհին եկելոյն 'ի նորա հրամանս և 'ի գործակցութիւն խնդրոյն այնմիկ՝ շնորհս մատուցանէր և ասէր. «Արդ բարեխօսութեամբ և ձեր աղօթիւք ցանկալին ինձ և ձեզ շնորհողէն Քրիստոսի միշտ փառք և գոհութիւն»: Եւ նոցա միաբան օրհնեալ զթագաւորն թագուհեաւն հանդերձ և ամենայն զօրամբն՝ ասեն. «Զամենայն բարի զոր խնդրեցեր դու յԱստուծոյ 'ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տայցէ քեզ, և շնորհեսցէ մեզ լինել քեզ ընդ երկայն աւուրս խաղաղասէր ընդ աշխարհի 'ի փառաւորութիւն եկեղեցւոյ առաւելապէս յորդորելով օր ըստ օրէ, և զխնամս քո Քրիստոսի խոստմանութեամբն կնքեսցէ կենարարն Քրիստոս և Նորին Հայրն երկնաւոր»: Եւ առեալ թագաւորին ընդ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ գնայր. և յորժամ գեղջ ուրուք 'ի յայտ եղանէր դեսպակ սրբոցն՝ իջանէր և հետևակ ապաստաւորէր սրբոցն, մինչև տարեալ ընդ շինանիստն անցուցանէր՝ ոչ որպէս զօրէն թագաւորի փափկութեամբ յօրացելոյ հպարտացեալ, և կամ արգելաւորութեամբ վարեցեալ 'ի հանգստարանի փափկութեան, այլ իբրև զկիրթ և յոյժ

հնոյ կարգի քրիստոնէութեան երկարութեամբ հայատակէր պատուիրանացն Աստուծոյ: Այսցիկ այսպէս եղելոց՝ և յոյժ հռչակեալ լուր որդւոյն Գրիգորիսի ընդ ամենայն աշխարհն Ուտէացւոց գաւառին, յոր գեօղ կամէին մտանել սուրբքն, ընդ յառաջ ելանէին ծերք և տղայք, այրք և կանայք, և հեռաւորն ևս գեօղք խաչիւք և զանազան ծաղկօք և բուրմամբ խնկոց անուշից, անթիւ բազմութեամբ գային խնդացեալք, և անդադար փառաբանութեամբ օրհնէին զխնամակալն սուրբ Երրորդութիւն: Այսու ձևով գային հասանէին 'ի սեպհական գիւղն Գիւտական. և անդ հանգուցանէին կատարելով զյիշատակ նոցա մեծապէս և մեծարնոյ իւղով օծանել հրամայէր զնշխարս սրբոյն: Եւ դուստր մի Խոնչեկ անուն՝ տղայ հասակաւ յոյժ սիրելի արքայի, որոյ անուամբն շինեալ էր դաստակերտ մի՝ տայ նմա մասն մի 'ի սուրբ նշխարացն. և 'ի նմին դաստակերտի մեծապէս կատարի յիշատակ սրբոյն պատուով: Առնոյր (Թագաւորն) և ինքեան մասն, զոր միշտ 'ի բանակին շրջեցուցանէր ընդ Ջաքարիանց և զմնացեալսն 'ի նշխարացն կնքեալ մեծաւ զգուշութեամբ տայր պահել 'ի սուրբ և յաղօթական սենեկի, մինչև կատարեսցի հիմնարկութիւն մատուռին՝ որ 'ի Գիւտական գեղջն՝ յանուն Պանդալէոնի, զի անդ փոխեալ զերանելին՝ մեծարեսցէ յոյժ: Խնդայր առ նշխարօքն զերիցունս և զսարկաւագունս և յոլովագոյն դունդ պաշտօնէից. և ինքն 'ի տարւոջն երկիցս անգամ կատարէր զյիշատակ սրբոյն երիս աւուրս: Եւ միշտ անձանձրոյթ էր 'ի պահս և յաղօթս և 'ի տուրս աղքատաց: Իսկ որոց 'ի նշխարացն հրամայեաց տալ՝ պատուէր տայր մեծապէս կատարել զյիշատակ սրբոյն, յուշ առնէր հեղգացելոցն զաստուածային ահագին դատաստանն՝ իսկ ջերմագոյն փութացելոցն՝ զնորին բարեբարութեանցն անպատում պարգևս: — Այսպէս փառաւորէ Աստուած զսուրբս իւր:

## ԳԼՈՒԽ ԻԴ

Հարցուած վասն զգայութեան ոգւոյն Աստուծոյ զՄովսէս երեւց [illegible].

Եւ է այլոց. «Հոգիք հրաժարեալք 'ի մարմնոյ զգայո՞ւն են թէ անզգայ, եւ կամ կենդանիքս ննջեցելոցն զե՞րդ կարեմք օգնել»: (Լուծումն)—Աղաչելով զԱստուած, պահօք եւ աղօթիւք եւ պատարագօք եւ կամ այլ ինչ բարի յիշատակօք, որ յանուն նոցա կատարի: Զի զորօրինակ Դաւիթ զգեցեալ զպատուականութիւնն Սաւուղայ՝ կաղալ եւ գթել սկսաւ, իսկ յորժամ մերկացեալ 'ի բաց ընկէց զծանրութիւն զէնուցն՝ թեթեւացեալ յիւրն դարձաւ բնութիւն. այնպէս եւ հոգիք՝ մինչ դեռ զգեցեալ են զպատուականութիւն մարմնոյ, կան 'ի ծանրութեան. իսկ յորժամ զնա 'ի բաց դնիցեն՝ որպէս եղեն առացեալ, սրատեսիկ եւ քաջիմաց եւ առաւել զգայուն լինին: Նա ոյք ասացին անզգայ լինել զհոգին՝ ելեալ 'ի մարմնոյ, յանդիմանեմք զնոսա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ, որ ասէ՝ Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. իսկ արդ՝ եկեալ էր Մովսէս չքնաղագեղ փառօք առաջի Աստուծոյ, ոչ մարմին զգեցեալ, որում Պետրոս բաղձացեալ խնդրէր 'ի Տեառնէ զանդէն բնակութիւն: Իսկ եթէ անզգայ էր հոգի մարգարէին, որ աստեն ելեալ 'ի մարմնոյ, ե՞րբ գայր 'ի զգայութիւն եւ յայտնի փայլուն կերպարանս 'ի խօսել ընդ Աստուածորդւոյն. այլ եւ Աստուած՝ ասէ, կենդանեաց է, եւ ոչ մեռելոց: Մեռեալ մարմինն ո՞չ արդեօք անզգայ է. իսկ անզգայացեալ հոգին յայտ է, թէ մեռեալ է: Նա դարձեալ՝ թէ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ փառն իմ եւ փառն Դաւթի ծառայի իմոյ: Արդ աղէ ասա, անզգայացեալ հոգւոյն զի՞նչ մեծարանք էին վերակացու լինել քաղաքին՝ փրկել զնա 'ի սրոյ թշնամեացն: Նա առաքեալն Պօղոս ասէ՝ երանել 'ի մարմնոյս եւ ընդ Քրիստոսի լինել լաւ հա-

մարմին. և նոյն իսկ կենարար Բանն առէ ցՀայրն, զորս ետու-րն ցիս՝ կամիմ, զի ընդ իս իցեն և զփառս իմ տեսցեն։ Եզր-բառ քո բանից՝ անզգայ հոգւոյն որպէս մարթ էր ընդ Տեառն լինել, կամ զանճառելի փառսն տեսանել, կամ մտանել մե-ծատանն հոգին 'ի հեռագոյն սահմանարքն սրտոս աչօք զԱբրահամ և զՂազար տեսանել և կամ զխօսել ուսանի՞ էր։ Զի յայտնապէս փրկչին ձայն երևեցուցանէ ճշմարիտ առա-կան. թէ առաւել քան 'ի մարմնի, յորժամ արտաքանայ քան զմարմինն՝ լինի քաջատես և առաւել իմաստուն հոգին, և ոչ միայն սրբոցն և փայլեցուցելոցն հոգիք, այլ և մեղաւո-րացն զգան և են լցեալ իմաստութեամբ։ Որպէս մեծատունն քաջատես լինէր, զի մեծ վիհ ընդ մէջ՝ կարէր ճանաչել զԱբ-րահամ։ Նա և մեզ ուսոյց ճշմարիտ հաւատն յիշումն Աս-տուծոյ 'ի դժոխս 'ի փրկել դեռս, թէ արդարև զգայուն են և առաւել իմաստնագոյն հոգիքն հրաժարելոց 'ի մարմնոյ։ Նա թէ ողք կատարեն զյիշատակ սրբոց և մեծարեալ պատա-րագօք աղաչեն զհոգիս նոցա, և 'նոքօք հայցեն զողորմու-թիւն յամենասուրբն Աստուծոյ, արդարև կարեն բարեխօ-սել հոգիք սրբոցն, և վաղվաղակի ընդունի Աստուած զխնդ-րիս նոցա և մեղացն շնորհէ զթողութիւն։

## ԳԼՈՒԽ ԻԶ

Երանելւոյն Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչէն Աղուա-
նից արքայ [illegible]

Արդ դիր՝ ով սիրելի, զի եթէ գիտութեան և անգի-տութեան յաղագս հոգւոյն ննջեցելոց առնելով ինչ բանս, ով որ այնպէս տխմարք՝ եթէ ոչ հանգուցեալքն։ Այլ Աս-տուած, որ ընդունիչ է պատարագաց և կատարիչ ուխտից՝ լսէ աղօթից կենդանեաց, ընդունի զպատարագացն և թէթե-

ւացուցանէ զբեռինս յոգւոց մեռելոց յաւուր ննջեցելոց. զոր և ուսուցանեն մեզ Գիրք սուրբք: Որպէս Եղիսէոս ոչ մանկան մեռելոյ լսէր, այլ մօրն աղաչանաց լսելով կենդանացոյց զմանուկն և աւանդեաց մօրն: Եւ Տէր Աստուած մեր՝ գթացեալ յայրին, յորոյ զմիամօր որդի նորա: Եւ առաքելոցն յայրեացն ապաստուս և 'ի հառաչանս նայելով՝ յարուցին զՏաբիթայն և աւանդեցին զնա նոցա: Արդ եթէ ընտանեացն աղօթք 'ի մեռելութենէ 'ի կենդանութիւն կարեն ածել, ապա յաստուածային զօրութենէն կարի յոյժ և մեղաց թողութիւն հաստատեսցուք առնուլ՝ յաւուր ննջեցելոցն, որ կենդանիքս վասն հանգուցելոցն խնդրեմք զթողութիւն մեղաց յԱստուծոյ ներողութենէն:

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Սահմանադրութիւն կանոնական 'ի Վաչագանայ Աղուանից արքայի եդեալ 'ի ժողովն, որ յԱղուանս եղեւ:

Յամս Վաչականայ՝ Աղուանից արքայի, բազում հակառակութիւն լինէր 'ի մէջ աշխարհականաց և եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից, ազատաց և ռամկաց: Ապա կամ եղև արքայի առնել ժողով յԱղուէնն բազմամբոխ ատեան յամսեանն Մարերի՝ որ օր երեքտասան էր ամսոյն:

Եւ Վաչական՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ, Մանասէ Կապաղայ եպիսկոպոս, Յունան Հաշուայ եպիսկոպոս, Անանիա և Սահակ և Ռոստ քորեպիսկոպոսք, Յովսէփ Կաղանկատուաց երէց, Մաթէ Պարտաւայ երէց, Թովմաս Թագաւորի դրան երէց, Պօղոս Գեղամնայ երէց, Շմաւոն Ճուայ քորեպիսկոպոս, Մաթէ Գարահնամայ երէց, Աբիկաղ Բեթայ երէց, Ուրբաթ Ամմանուշայ երէց, Յովէլ և Պապ և Մելքէ և Յակոբ երի-

ցունք, և ազատ մարդիկ և նախահայրքն Արցախոյ, և Բա-կուր Կաղանկատուաց նախապետ, և այլք բազումք, որք միա-բան առաջի իմ եկին 'ի հանդէս 'ի հովոցի տեղւոջս յԱ-ղուէնն, և կարգեցաք այսպէս.

ա. Երիցունք, որք 'ի շէնս լինին, երկիցս անգամ 'ի տար-ւոջն եպիսկոպոսին երկիր պագցեն, և զկարգս հոգևորս ու-սանիցեն 'ի նմանէն ըստ Գրոց. և որպէս կարգն է՝ 'ի տարւոջն եպիսկոպոսին ընծայ տարցեն:

բ. Քահանայ և սարկաւագ յորժամ ձեռնադրեն, չորս դրամ քահանայն և երկու սարկաւագն տացեն:

գ. Ազատ մարդ և թագաւորազն, որ ինչ հոգւոյն մասն է, տացէ իւրով ձեռամբ 'ի կենդանութեան, ձի թամբօք և սան-ձիւ, և զինչ կարողութիւն է իւր՝ տացէ. ապա եթէ 'ի կեն-դանութեան չտայցէ, յետ մահուանն ընտանիքն տացեն:

դ. Պտուղք 'ի ժողովրդենէ երիցուն՝ կարգն այս լիցի. թուանիկն՝ չորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և վիշտասան փաս քաղցու. և որ տատապեալն է՝ զհացիդ կէսն տացէ, և զինի՝ որչափ և կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի տացեն: Իսկ այնք՝ որ աւելի քան զայս տացեն սակս հոգ-ւոյ, բարի առնեն, որպէս Պօղոս ասէ, «Որ առատութեամբ սերմանէ՝ առատութեամբ հնձեսցէ»: Եւ ոյր ոչխար է 'ի տան՝ ոչխար մի և երեք գդալ բուրդ և մեկ պանիր. և ոյր ձիք 'ի տան իցեն՝ մին յաւանակ. և ոյր պախրէք իցեն՝ որթ մի:

ե. Եթէ ազատ եթէ շինական և թէ այլ ոք յաշխարհա-կանաց 'ի տարւոջն զպատարագն մի խափանեսցէ. այսինքն՝ զմեռելոց յիշատակն՝ որպէս և կարողն է. և անմասն մի ա-րասցեն զմեռեալսն 'ի վաստակոց իւրեանց: Եւ մեռեալ մար-դոյն եթէ ձի է՝ մի ձի զոր և կամիցի. և թէ արջառ է՝ մի արջառ զոր և կամիցի՝ յեկեղեցին տացէ:

զ. Վանացերէց կամ վանական ոք՝ եթէ 'ի վանացն գայ-

թանք առնէ և 'ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և 'ի տեղւոյն 'ի բաց արասցեն, և զխոստովանն յեկեղեցին կալցեն։

Է. Եթէ վանաց երիցունք բազում են և ժողովուրդք սակաւ, և այլ վանաց ժողովուրդք բազում են և երիցունք սակաւ, 'ի բազում ժողովրդենէն առցեն և տացեն այնմ, որոյ երիցունք շատ են։

Ը. Քրիստոնեայ մարդ՝ որ կռուի և արիւն հեղու, տարցեն առաջի եպիսկոպոսին և ըստ օրինացն պատուհասեսցեն։

Թ. Երէց, որ զշէն մեծ պահեսցէ՝ զայլ շէն մի պահեսցէ. և որ մօտ երկու ագարակք են՝ զմի երէց պահեսցեն, և այնչափ հովուեսցէ երէցն, որչափ առաջնորդել կարիցէ։

Ժ. Այր զերրորդ ազգի կին մի արասցէ, և զեղբօր կին մի արասցէ։

ԺԱ. Եւ որ զկին թողու առանց պատճառանաց, և որ առանց պսակի կին առնէ, և որ անօրէն և մարդասպան է, կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ՝ 'ի դուռն արքունի տարցեն և դատն մահ 'ի վերայ դիցեն։

ԺԲ. Եւ այնք՝ որ կոծ դնեն, զտանուտէրն և զգուսանն կապեսցեն և 'ի դուռն արքունի տարցեն և պատուհաս 'ի վերայ դիցեն. և ընտանիքն զհետ արտասուել մի իշխեսցեն։

ԺԳ. Որ զմեռելոտի ուտէ, և որ 'ի քառասներորդին միս ուտէ, և որ 'ի կիւրակէի գործ ինչ գործեսցէ և յեկեղեցին ոչ երթիցէ, երէցն պատուհաս արասցէ ժողովրդեանն հանդերձ։

ԺԴ. Որ 'ի չորեքշաբաթի և յուրբաթի միս ուտէ, յառաջ քան զաղուհացն շաբաթ մի պահեսցէ. և եթէ առաջի երիցուն ոք գայ և վկայէ վասն մարդոյն՝ թէ չէ այդպէս, ապա շինին կալցէ զմարդոյն եղն մի և յերէցն տացէ։

ԺԵ. Եթէ աշխարհական ոք յերիցու կամ 'ի սարկաւագի վերայ բամբասանս դիցէ, և նոքա խոստովանեսցին՝ թէ այդպէս է, եպիսկոպոսն դիցէ 'ի վերայ նոցա կարգ և յանապատի ապաշխարեսցեն։ Ապա եթէ ոչ խոստովանեսցին ճշմար-

տութեամբ, և զոր այլք ասեն՝ ճշմարտութեամբ յայտնի լի-
ցի, որպէս 'ի կանոնս գրեալ է՝ պատուհաս դիցեն և 'ի բաց
հալածեսցեն 'ի շինէն։ Ապա եթէ մեղքն չեն յայտ, հրամա-
յեսցեն քահանայքն զպատարագ մատուցանել. և այն եր-
դումն լիցի նմա։

ԺԶ. Եթէ ընկերք իւր և աշակերտք մեղս 'ի վերայ դնեն
երիցուն, և ինքեանք հաւատարիմ են, երէցն առաջի սեղա-
նոյն կացցէ և ամբաստանօղքն առաջի ժողովրդեանն, 'ի բե-
մէն 'ի վայր առցեն և 'ի շինոյն արտաքս հանցեն։ Ապա եթէ
ընկերք և աշակերտք նորա քինու լինին, և ժողովուրդք գի-
տէին եթէ յառաջն խոտել էին, քահանայն մատուցէ պա-
տարագ, և ժողովուրդք զնոսա անիծիւք 'ի բաց հալածես-
ցեն։ Ապա եթէ խոստովանին, եթէ սուտ ասացաք, ապաշ-
խարութիւն 'ի վերայ դիցեն, և 'ի վանաց մի հանցեն։ Իսկ
եթէ յետ այնր մեղս ինչ գործեսցեն՝ կանոնիւք դատեսցին։

ԺԷ. Եպիսկոպոսունք և երիցունք զազատ արանց առաջի
արքայի եղեն մատնիչ, եթէ 'ի շինի զերկուս կամ զերիս ե-
կեղեցիս առնեն վանս. և առաջի արքայի ազատ մարդիկ պայ-
մանեսցին, և արքայի և եպիսկոպոսաց և ազատաց այսպէս
հաճոյ թուեսցի, թէ զարարեալ եկեղեցիսն թողցեն և ըղ-
պտուղ և զհաս եկեղեցւոյ 'ի վամն եկեղեցին տացեն։

ԺԸ. Եւ որ տասանորդս տան ազատ մարդիկ՝ զկէսն 'ի
բուն եկեղեցին տացեն, և զկէսն յիւրեանց եկեղեցին։

ԺԹ. 'Ի Կիւրակէի տէր և ծառայ 'ի վամն եկեղեցին եր-
թիցեն յաղօթս, և զպիշտաակս յեկեղեցին տարցեն. այլ ա-
նաշխարհիկն զհոգեցատուրն յեկեղեցին տացէ։

Ի. Արք ազատք՝ որչափ իւրեանց դաստակերտքն իցեն,
զերէց առանց եպիսկոպոսին մի իշխեսցեն հանել՝ և մի եպիս-
կոպոսն իշխեսցէ առանց նոցա հանել և առնել։ Եւ երիցուն
եթէ յաղագս կամ 'ի ժողովրդենէ վանից լինիցի, առանց
եպիսկոպոսին գնալ մի իշխեսցէ։

նս. Ազատ մարդ յիւր եկեղեցւոջ եթէ սեղան կանգնէ, կամ նշխարս ինչ բերէ, կամ պատարագ առնէ, եպիսկոպոսին հրամանաւ արասցէ որչափ իւր կարողութիւն իցէ: Եւ որ զայս հրամանս առնէ և կատարէ՝ օրհնեալ եղիցի. և որ ոչն առնէ, հեռի եղիցի յեկեղեցւոյ և ապա ըստ կարի տուգանս բերցէ առաջի եպիսկոպոսին: Եւ յետ այնր որչափ տուգանս տացէ մարդն այն, որ 'ի կանոնս գրեալ է՝ ընդ օրհնութեամբ արասցէ:

Զայս պայման արարին եպիսկոպոսքն և քահանայք և ազատ մարդիկ առաջի արքային, թէ 'ի մեր եպիսկոպոսաց և յերիցանց և յեկեղեցւոյ բերանոյ՝ օրհնեալ եղիցի թագաւորն թագուհեաւն և զաւակաւն հանդերձ և յամենայն աշխարհէս, որք աստ ժողովեալս են՝ օրհնեալ եղիցին: Եւ զայս հրամանս մատանեցին Մուծիկ արքայի հրամանատար, Միրհաւրիկ հազարապետ, ազգապետք Մարութ, Տիրազդ, Ապբակոս, Շամոյ, Բակուր, Արատամ, Արշէս, Վարդան քաջ Գարդմանատէր, Խուրս, Գերմանոսան, Խոսրեան, Փիրոզ նահապետ, և ամենայն ազատք Աղուանից: Վասն առաւել (հաստատութեան) գրոյս Վաչականայ արքային Աղուանից մատանին եդաւ 'ի վերայ:

## ԳԼՈՒԽ ԻԷ

Յաղագս որդւոյն Մեսրոպայ և ընկերաց նորա դարձուցելոյն զեկեղեցիսն

Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի՝ բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին 'ի գլուխ ելեալ կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս աստուածային կատարելով՝ յարուցին հալածանըս 'ի վերայ քրիստոնէից: Մի ոմն 'ի նախնեաց վարդապետաց, որ 'ի Հոգւոյն Սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգաց

առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց, և այնուհետև 'ի սուրբն երթայր յԵրուսաղէմ մատուցանել ուխտադրութիւն, անտի դարձեալ աշակերտօքն՝ ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն ոսկեխառնց տեսակաւ, յորում 'ի տէրունեան խաչէն էր մասնաւորեալ, և անցեալ ընդ Հայաստան՝ ճանապարհ առնէ հասանել 'ի սահմանս արևելից 'ի գաւառն Ուտիական. և մնեալ բնակէր 'ի ճաղճապուտ տեղիս և'ի լօռաբոյս մօրս, առ տեղեաւն՝ որում Գիսն կոչեն: Նա նորոգեալ զեկեղեցւոյ հաւատս հաստատէր. և ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց, և յԱղուանս և 'ի Լփինըս և 'ի Կասպս և 'ի Դրունն Ճորայ և յայլ ազգի ազգիսն, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու. զԳարգարս և զԿամիճիկ Հեփթաղսն դարձուցեալ 'ի հաւատս՝ զկարգ աստուածպաշտութեան ուսուցանէր, զոր 'ի վաղնջուց ուսեալն էին և մոռացեալ. և բոլորովին քարոզ և առաքեալ խուժադուժ սարտանեացն լինելով ըստ նոցին բարբառոյ դըպրութեան առնէր զնոսա ծանօթս: Նա անտի դարձեալ 'ի մօրսն երթեալ բնակէր, զօղեալ 'ի սպառնալեաց դժնդակ իշխանացն: Նա անդ յանտառսն ծածկեալ՝ որ ըստ օրէ հաստատէր զեկեղեցին Աստուծոյ: Անդէն ոգի մոլորութեան զրգռւէր զմիտս գազանացեալ բռնաւորացն՝ զայրագնեալ նոցա և փոյթ կալեալ 'ի սպանանել զնա: Իսկ երանելւոյն Մաշտոցի 'ի Հոգւոյն Սրբոյ ազդեալ՝ փութացեալ փարէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զաստուածայինն առեալ զանձ, որ է խաչն տէրունեան՝ եդեալ 'ի տապանի ծածկէր 'ի գետնափոր կայանին: Նա այնուհետև հաւատարիմ և զուգակրօն աշակերտքն միաբան յաղօթս և 'ի խնդրուածս ապաւինեալ՝ միմեանց կամաւ յերկուս բաժանէին ջոկս. կէսք 'ի կողմանս գաւառացն եկեալ խորհէին, և կիսոցն բազում աշխարհս հասեալ՝ անցեալ քարոզէին զհաւատս: Բայց մնացեալ գամն

'ի տեղւոջ կայանի խաչին յետ սակաւ ինչ աւուրց զմարտիրոսական անոյր զպսակ. յորոց նահատակութեանց տեղւոջ նշանք լուսեղէնք և հրաշալի սքանչելիք երևեալ. զոր տեսեալ բազում անգամ անհաւատից, և ուսեալ թէ մեծին Աստուծոյ է այն նշան՝ հաւատային միաբան և մկրտէին առհասարակ: Իսկ մի ոմն 'ի նորահաւատից՝ որ բազում անգամ տեսեալ էր զնշանն զայն 'ի վերայ գետնափոր կայանի խաչին՝ շինէ մատուռն մի հողեղէն չորեքկուսի և տապան տախտակամած արարեալ՝ ամփոփէր զնշխարս նոցա 'ի տապանի անդ և ամ յամէ ուխտաւորեալ՝ կատարէր զյիշատակս նոցա, և յոլովից լինէր բժշկութիւն 'ի տեղւոջն, յորս հաստատեալ նուաճեցան հաւատացեալքն: Իսկ նախ անդ եղեալ հիմունս՝ հաստատէին զեկեղեցի Աստուծոյ 'ի կայարանի խաչին, զոր Քին Եկեղեցի տեղւոյն անուանէին, որում Գրիան կոչեն: Այլ և յետ բազում ժամանակաց վեհազգի ոմն իշխան Վարազպերոժ անուն՝ յԱռանշահիկ տոհմէ, կամեցեալ նորոգել զհին եկեղեցին և ոչ կարէր քակել զաղիւսաշար պայր զմբեթին, զի բնակեալ էր անդ խաչն տէրունական և նշխարք վկայիցն:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Շարագրած յաղագս աշակերտաց սրբոյն Մաշտոցի ընդ Ներսէսի շրջագայեալ:

Յետ սրբոյն Մաշտոցի սուղ ինչ անցեալ ժամանակ՝ նորին աշակերտացն որք 'ի կողմանս գաւառացն Աղուանից, գումարեալք 'ի մի վայր յարգմանէ Սուրբ Քողայն և խորհըրդակցեալ լինելով՝ փութային հասանել գործոց բարեաց: «Զ՞ի՞նչ մեք արասցուք՝ ասեն, զի որ մեր լուսաւորութեանն էր առիթ՝ ննջեաց 'ի Քրիստոս, և ահա 'ի նմանէ մնացեալ եմք որբք. եկայք, եղբարք՝ յաստուածային 'ի քաղաքն Երու-

սաղէմ երթիցուք և 'ի նոցանէ խնդրեսցուք մեզ առաջնորդ,
զի բնական լուսաւորութեան երկրիս արևելից 'ի ձեռն սրբոյն
Եղիշայի յԵրուսաղեմէ եղեալ է սկիզբն»։ Յայնժամ հան-
դերձեցան, կազմեցան` յերկուս բաժանեալ գունդս, և համ-
բարձեալ 'ի կողմանցն Աղուանից` յառաջ խաղային առ սահ-
մանօք Այրարատանի և երթեալ հետևողաբար յԵրուսաղէ-
մեան հասանէին քաղաք և մտեալ յաստուածարեան եկեղե-
ցին` երկրպագանէին ամենակեցոյց փայտին կենաց։ Եւ հանդի-
պեցան հոգեզուարճ աստուածազարդ հայրապետին, առեալ
ողջոյն եկեղեցւոյն` խոնարհամիտ համբուրիւ ընկալեալ 'ի նո-
ցանէ լինէին։ Եւ զջան քրտանց սրբոյն Մաշտոցի բովանդակ
պատմէին առաջի սրբոյ հայրապետին, եթէ` զինչ գունակ
սքանչելեօք առ բարբարոսականն կատարեալ լինէին ուղղու-
թիւնք։ Զոր լուեալ նոցա, մեծաւ խնդութեամբ ընկալեալ`
բազում մեծարանս ցուցանէին խնամով. և տանէին ընդ ա-
ւուրս բազումս` յարելով յինքեանս այս երիս աստուածասէր
քահանայս, որոց առաջինն Եթանասիոս. զնոսա ողոքական
բանիւք հաւանեցուցանէին գալ ընդ իւրեանս, զի յառաջ-
նորդութիւն զնոսա վիճակեցուսցեն յաշխարհին իւրեանց։ Եւ
կատարեալ նոցա զերկրպագութեան ուխտս` երանաւէտ համ-
բուրիւ ողջունէին զսրբոյ պատրիարգին ոտս և նորին հրամա-
նաւ ուղարկեալք անտի` ոսկեղէն և արծաթեղէն սպասուք և
բազում նշխարօք յամենայն սրբութեանցն Աստուծոյ` յա-
բազուարճ ցնծութեամբ հրաժարեալք քահանայիւք հան-
դերձ գնային. և եկեալ հասանէին 'ի սուրբ պահս քառա-
նորդացն յեօթներորդ շաբաթու պասեքի Զատկին 'ի ձորա-
խորխում անտառայր մայրաստանիկ աշխարհն Արցախայ 'ի
գաւառն Մեծ Կուենից. և 'ի կիրճս ճանապարհին երկաջո-
կեալ գունդն յերկուս բաժանելով` նստէին գուպարս յայնմ
տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր 'ի հիւսիսոյ կողմանն.
իսկ գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն 'ի հարա-

ւական կողմանն 'ի մայրոլորտ հովտին 'ի պուրակին բնակէր Չղախ անուանելոյ, զի ուխտիւք խոստացեալ էին առ միմեանս կատարել 'ի տեղւոջն զամենասուրբ զատիկն:

## ԳԼՈՒԽ ԻԹ.

Գերումն հեծելազօրացն յամենայն սահմանս Աղուանից, Հայոց և Վրաց, և վնասուածն զօրերացն որդւոյն Մեծարգայ.

Ընդ այն ժամանակս Թագաւորն Ոսոմոսքեան իւրովք զօրօք և Թորքական գնդիւն գումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Էանց յայսկոյս Կուրական գետոյն, տարածեալ յՈւտէացւոց գաւառն, և ածեալ նստուցանէր զզակիշ իւր մերձ 'ի Խաղխաղ քաղաք: Նա անդէն արս երիս ընտրեալ զօրաւորս՝ տարիկանս առնէր 'ի վերայ գնդին մեծի, և բովանդակեալ գումարէր 'ի ձեռս նոցա զմեծամեծ զօրացն բազմութիւն. հրամայէր երիս առաջս առնել և ասպատակել 'ի վերայ աշխարհին Աղուանից, Հայոց և Վրաց: Իսկ երրորդ մասն զօրուն հասեալ 'ի մուտս գաւառին յԱրցախական գաւառն տայր ասպատակ 'ի վերայ Մեծ Կուենից: Զայն հէն համբաւս լուեալ Չղախեան գնդին երուսաղեմեան՝ զահի հարեալ մեծաւ երկիւղիւ աճապարեալ 'ի մի վայր ժողովէին զմասունս նշխարացն ամենայն և յերկուս ամփոփեալ արծաթեղէն կողովս՝ ծածկէին յերկրի: Նա խկոյն հասեալ օրհասականն այն դըժակիչ աղմուկ նման ցողացայտ անձրեւի տարածեալ անճողոպրելի տարախուսանքն, զիմեալ որպէս այլք ծովու նախահաս յԱռանդն լինէր բլուր. նոցա անկասկած լինելով իրացն յեղակարծ ժամու զիմէին անխնայ խողխողման սրոյ առհասարակ. զպատս ոսկւոյ և արծաթոյ ասար առեալ ցիրեցան ընդ բլուրն Վ․իժան ճապաղէին. և զմնացեալսն գերի առեալ 'ի տեղւոջն բակարգել առնէին:

Բայց կին մի՝ Թագուհի անուն, յՈւտի գաւառէ 'ի բնաշխարհիկ ազատաց 'ի Բագնաց գեղջէ մեծատուն յոյժ, որ նոյն ինքն ընդ երուսաղէմացիսն էր ցանկորդեալ, զնա տեսեալ զօրավարին Հոնաց 'ի մէջ գերելոցն, դիւահորդոր բղջախոհական ախտիւն յեղաղեղեալ տուփէր 'ի նա, զի գեղեցիկ էր յոյժ. հրամայէր պահել զնա մեծաւ զգուշութեամբ՝ առնուլ 'ի կնութիւն իւր կամեցեալ. և ինքեանք զաւօրեայ արշաւանս վճարելով՝ ածին, ժողովեցին զամենայն աւեւար գաւառին և զնոյն խակ համագունդ եղբարսն՝ զբազումս 'ի նոցանէ սպանանէին և զմնացեալսն գերի վարէին՝ ածելով յՆասողն բլուր: Եւ 'ի մէջ գերելոցն ունէին զերկու քահանայսն, զընկերս Աթանասի վկային: Եւ քանզի մեծ զօրավարն Հոնաց անգէն բնակեալ կայր իւրովին զօրօքն զայն գիշեր, ընդ երեկս աւուրն սպահապետ զնգլին Թորբեկան հրամայէր ածել զերանելի Թագուհին, զի կատարեսցէ ընդ նմա զկամս վաւաշոտութեան իւրոյ: Իսկ նա վառեալ զինու զօրութեամբ Տեառն՝ այպանէր զնա, չանայր, չհաւանէր, ծաղր առնէր զկոփ բարբարոսին. «Բաւ լիցի ինձ, ասէ՝ տալ զզգաստութիւն պարկեշտութեան իմոյ անազգի և խողարարոյ հեթանոսաց. կամ թէ յերկիւղէ տանջանաց ինչ զանգիտել մինչև 'ի մահ, և փոխանակել զոչինչ կեանս ընդ այնմ՝ որ ոչ անցանէ»: Եւ համբարձեալ զձեռս իւր առ Աստուած՝ բարբառէր ասելով. «Տէր Տերանց և Թագաւոր Թագաւորաց, մի յանձն առներ զիս զյուսացեալս 'ի քեզ, անբիծ և ուղիղ պահեա յաժամանակեայ վտանգէս. որպէս շնորհեցեր ինձ զծնունդ աւազանին լուսոյ նորոգման ճանաչել զքեզ, արա և այժմ անարատ մնալ 'ի մեղաց հաւատովք և սրբութեամբք: Զաղես զայս ճշմարտութեան քո 'ի սիրտս անզգայ բարբարոսացս, զի և սոքա ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած»: Իսկ զայն իբրև լուան անօրինացն զօրքն, չոքան, պատմեցին իշխանին իւրեանց, զի Թարգման կայր 'ի միջի նոցա, որ լսէր զամենայն

խօսս նորա։ Յայնժամ մոլեկան սրամտութեամբ աղլեալ բռնաւորն ընդ խածանող և մռնչող գազանութեանն զայրացեալ հրամայէր, զի թէ ոչ եկեսցէ շքով և պատուով, անհնարին տանջանօք չարամահ արասցեն զնա։ Եւ երթեալ սպասաւորքն տաղակէին առնել զկամս իշխանին։ Եւ իբրև ոչ կարէին հաւանեցուցանել զանհրապուրելի Թագուհին, կապէին զձեռս նորա յետս և քարշէին զվարսից նորա, և դժընդակ փշով անտառի անապատին ծեծէին զերեսս նորա, և քանցէին մարմինք սրբոյն առ հասարակ։ Եւ ապա բռնայլին ըղգլուխ երանելոյն սուսերաւ, որպէս սուրբ տիկնոջն Սոփիսիմեայ լինէր մարտ նորա՝ և աստուածային պսակքն՝ Քրիստոսի պսակեալ լինէր մեծն այն Թագուհի։ Եւ յետ այնորիկ ՚ի նմին գիշերի մինչդեռ արթնական խնճոյիւք դեղերէին այլազուն իշխանքն հանդերձ զօրականօք և առնէին ծաղրական խնդութիւն, յանկարծակի նշան զարմանալի երևեալ ՚ի Տեառնէ, ակն յայտնի ամենեքեան տեսանէին լոյս սաստիկ ծագեալ ՚ի տեղւոջն, ուր սուրբն Թագուհի վկայեաց և ուր ցրեալ պատառած հանդերձի նորա սփռեալ և տարած ընդ երեսս անտառին փայլէին որպէս աստեղք։ Եւ հարուստ ժամանակաւ լոյս աստեղանման ծագեալ ՚ի տեղւոջն՝ փարէր ՚ի վերայ սրբոյ նահատակին, զոր տեսեալ բազմութեան մարդկանն՝ զանուն տեղւոյն Աստեղաբլուր անուանեցին մինչև ցայսօր։ Վասն որոյ առ սքանչ հրաշիւք հիանայր իշխանն և ՚ի մեծի ահի եղեալ՝ հրամայէր առ ինքն կոչել զքահանայս Տեառն և ուսեալ ՚ի նոցանէ զփրկութեանն ճանապարհ՝ հաւատայր յԱստուած կենդանի, և հրամայէր ամփոփել զնշխարս սըրբոյն, պատել սուրբ կտաւօք և ծածկել ՚ի բլրին։ Եւ անդէն կատարէին յօղեաց և յայծեաց պատարագ օրհնութեան և զուէրանական զոհն մեծապայծառ խմբէին յիշատակօք ՚ի նոցունց վկայելոցն։

## ԳԼՈՒԽ Լ.

Հաստատումն մեծի զօրավարին Թէոփիլեայ 'ի Քրիստոս, Թէ նա է Աստուած, և նահատակելն նորա զօրօքն և [illegible] և [illegible] [illegible] Բ[illegible] [illegible] Աստուծոյ:

'Ի հասանել ճշմարտութեանն լուրոյ 'ի սիրտ աստուածաբեալ իշխանին Թէոփիլոսի՝ 'ի բաց արձակել զմարդադրերին հրամայէր և ինքն չուեալ զայգոյ Զատկին՝ հանդերձ քահանայիւքն սրբովք և այլ բազում հաւատացելովք խաղայր գնայր Եգիպտոսեան գնդաւն: Եւ երթեալ հասեալ Մեմփի գաւառն՝ իջեալ բանակէին առ ափն Կուրական գետոյն մերձ 'ի նաւահանգիստն Զմիւռնական կամրջին. և ինքն իսկ մեծ թագաւորն Յովհաննէսեան դարձեալ լինէր ամենայն զօրօքն իւրովք ասպատակեալ բազմահոյլ զօրութեամբն և մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն 'ի յարեւելից կուսէ բանակէր յայնկոյս յանդիման նոցա: Յայնժամ հրաման տայր գլխաւորն մոլորութեամբ ձօնել նուէրս զոհից մեհենադարդինձոյիւք չաստուածոց իւրոց: Զայն տեսեալ քրիստոսազարդին Թէոփիլեայ և Եգիպտոսեան գնդին, մատուցանէին և նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոնական կրօնից 'ի ձեռն օրհնութեան քահանայիցն սրբոց. և խաչազարդ յօրինէին զնշանս դրօշիցն իւրեանց: Իսկ զայն իբրեւ ետես զազանամիտ և անօրէն թագաւորն բարբարոսաց՝ զիւազրդիւ մոլորութեամբն գառնացեալ՝ հրամայէր առ ինքն կոչել զաւրը զօրավարն Թէոփիլոս երեսուն արամբքն: Եւ նախ ողոքանօք, և ապա սպառնութեամբ խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. «Սիրելի գոլով մերոյս թագաւորութեան, քաջութեամբ յաղթող երեւեալ՝ մեծարեցար յոյժ 'ի մերմէ խընամակալութենէս. վասն որոյ նախապատիւ ես քան զամենեսեան եւամեննեայ զօրավարութեամբ փառաւորեալ. ընդէ՞ր

դու թողեր զքաջատոհմիկ աստուածս ազգի քո, որ եւ մեզ յաղթութիւն ստպատակիս, եւ ապստամբեալ քո յինէն քո-յով զօրականօքդ՝ պաշտօն մատուցանէք Աստուծոյ, զոր մեք ոչ գիտեմք: Սակս որոյ եթէ ոչ մատուսցես զոհս աստուա-ծոց մերոց՝ մահապարտ ես դու եւ զօրականքդ քո 'ի միա-սին»: — Պատասխանի ետ խոստովանողն Քրիստոսի քաջ զօ-րավարն Թէոփիլոս եւ ասէ ցթագաւորն· «Իմաստութիւն կե-նաց մարդոյ ծնունդ է առաքինութեան· եւ առաքինութիւն քաջալու բարեաց մայր է աստուածպաշտութեան: Արդ ե-թէ յառաւելութիւն փառացն Քրիստոսի ծնունդն միաւորե-ցաւ 'ի մարմին բնութեան, շնորհօք լուսոյն գիտել ճանա-չել զԱստուած արարիչ երկնի եւ երկրի, զմիահաւասարակ սուրբ Երրորդութիւնն, որ իւրով բարերարութեամբն կամեցաւ մերժել զմեզ 'ի չքոտի կռոցն վնասակարութենէ, մի թէ ար-գելուլ ինչ կարիցես 'ի մէնջ զշնորհսն երկնային, կամ հա-մեմատել զձեր վայրենի պատիւդ կամիս ընդ աստուածային պատուոյն, կամ թէ 'ի սպառնալեաց քոց համարեցիս զմե-զիտել մեզ եւ զառժամանակեայ ընտրել զկեանս՝ թողուլ զԱստուած՝ անմահից մատուցանել պաշտօն»: Յայնժամ դժնդակ բարկութեամբ ցասուցեալ մոլեալ թագաւորն եւ հրամայէր վաղվաղակի ամենայնուր մահուամբ կենազրկել զսուրբ զօրավարն Թէոփիլոս հանդերձ երեսուն ընկերօքն եւ սուրբ քահանայիւքն· որոց արիաբար կատարեալ զնահատա-կութեան մարտ՝ բարւոք վկայութեամբ ըստ մարտիրոսու-թեան հանդիսի 'ի Տեառնէ զյաղթութեանն ընդունէին բը-պսակ· սուրբ խոստովանողն Թէոփիլէ քահանայական դա-սուք եւ երեսնեակ զինուորօքն հանդերձ յերկնայինն փոխէին խորանս: Իսկ երանելին Մոկէս եւ Անդրողդէս որդիք սրբոյ զօրավարին հանդերձ Եգիպտատնեան ընդ իւն եւ այլ հա-ւատացելովք, իբրեւ զայն տեսանէին՝ անձապարէին յիւրաքան-չիւր երկիրս, փախստական լինելով յանօրէն թագաւորէն,

լաւ համարելով հալածիլ վասն Քրիստոսի, քան յանցաւոր կենօքս ամբարշտութեամբ կեալ. կարեւոր համարէին զնախատինս վասն Քրիստոսի, քան զմեծութիւն գանձուցն Հայրենեաց: Յայնժամ չուեալ նոքա ընդ կողմանս հարաւոյ՝ երթեալ հասանէին 'ի բարձրաբերձ կատարս լերինն մեծի, որ պարունակեալ շրջապատի զբազմաւորական գաւառս աշխարհին: Ապա 'ի հրամանէ անողորմ թագաւորին գունդք գունդք հասանէին և զհետ լինէին նոցա զօրքն [illegible]ոնաց. և հասեալ առ նոսա 'ի գլուխ լերինն՝ ջանային բազում ողոքանօք դարձուցանել զնոսա յերկրպագութիւն կռոցն և 'ի հնազանդութիւն թագաւորին: Եւ ոչ կարացեալ հնազանդեցուցանել զնոսա՝ հարկանէին սրով սուսերի 'ի նմին տեղւոջն: Այսպէս կատարեալ նոցա զընթացս՝ սուրբն Մովսէս երջանիկ եղբարբն և ամենայն Եգիպտատեան գնդիւն, և ընկալեալք 'ի Քրիստոսէ զմարտիրոսական պսակն՝ փայլեն անաղօտ փայլմամբ 'ի ծագաց հիւսիսոյ, յափշտակող եղեալք՝ անմահ առագաստին ընդ ամենայն սուրբս:

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ

# ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ը

### Պատմութիւն 'ի ներ Քերդա.

Որքան պայծառ է երկինք աստեղօք և երկիր բուսով, այնպէս է և ջանք աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարագայի:

Գտանին զրոյցք արևելից կողմանց, որք ոչ են անկեալ 'ի գիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաք մա-կագրել 'ի սառս ողջախոհութեան մերում: Յիշեսցուք աս-տանօր զՇապհոյ Պարսից արքայէ Որմզդեան, որ յիւրում տէրութեան հպարտացեալ յաղթութեամբ՝ կամեցաւ առնել քննութիւն, թէ ո՛ր ազգ և լեզու ունիցի բարձ և պատիւ: Նա գործեալ ճաշ մեծապէս ամենայն մեծամեծաց յինա-մենից առհմից ազատատոհմն Պարսից նախարարաց, և ըստ դաւհու նախապատիւ արարեալ բաժակս և ուռով առաջի իւր՝ զամենայն որ մեծարեալ ցուցանէր: Իսկ զմարդկանն մարդկանն սեղանն արքունի մեծապատիւ առնէր: Նա խոր-հուրդ բերեալ ընդ մեծամեծս իւր՝ ասէ. «զՊարսից և զՊար-թևաց զնախկին Պահլաւիկս և զազատ արանց զնախադրու-թիւնս քաջ գիտեմ. իսկ զԱրմենու զազատոհմն և զնոցին նախապատուութիւնն ոչ կարացաք գիտել՝ ոչ 'ի հարցն մե-րոց թագաւորաց և ոչ 'ի մատենագրաց: Նա արդ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց՝ ցուցանել զնախ-նական գիր իւրաքանչիւր ասից զատոհման և զպատիւ, և

դարձեալ մեծագոյն ունել 'ի մէնջ շքեղաշուք մեծարանս: Արդ թէ ոչ կարէք ամն յայտնի Արեաց գնդի ցուցանել զնախանձխոտ բարձս ձեր, զպատիւ և զտուն, զհող և զջուր և զամենայն ստացուածս ձեր Արեաց ազատ արանց շնորհեսցուք: Իսկ նոյնժամայն խորհուրդ բերեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զԱգաթանգեղոյ Պատմութիւն ցանկալի. և հրամայեաց ընթեռնուլ և թարգմանել 'ի Պարսիկ գիր և 'ի լեզու: Իսկ իմացեալ եթէ զսկիզբն յԱրտաշրէ առնէ 'ի նախնոյն իւրմէ, առաւել զուարճացեալ և ներբողումն գրոյն առնելով՝ դնէր 'ի վերայ աչաց իւրոց խանդաղատելով: Իսկ գտեալ 'ի նմա գիր տան և եօթն բարձի՝ սկսանէր ըստ այնմ յարդարել զնիստ իւրաքանչիւրոցն 'ի սեղանն արքունի: Հասանէ չորեքտասաներորդ բարձն Անդոկայ Սիւնեաց տեառն. և նա հպարտացեալ ոչ ինչ ճաշակեաց. և զգացուցեալ թագաւորին վասն այնր՝ ոչ ինչ փոյթ լինէր նմա:

Յայնժամ հասանէր համբաւ 'ի դուռն արքունի, եթէ Խազիրք բազմամբոխ գնդիւք ելին ընդ Դուռն Ձորայ յաշխարհս մեր: Իսկ ժողով անթիւ արարեալ Շապհոյ՝ Ասորոց, Խորասանի, Խորազմոյ, եւս առաւել քաջացն Պարսից Ատրպատական նահանգին, Հայոց, Վրաց, Աղուանից և տան և երկու լեզուաց խուժադուժ ազգաց լերինն Կովկասու՝ ելեալ գնաց անհամար զօրօքն 'ի դիմի հարկանել նոցա: Իսկ Անդոկայ չար խորհեալ անձին և աշխարհի իւրում՝ խրատ հասանէր տանն արքունի և դաւաճանեալ զօրօքն իւրովք՝ հազար և եօթն հարիւր արամբք, ժիր և քաջագնաց երիվարօք հասանէր 'ի քաղաքն Տիզբոն և զզօրս թագուցանէր արտաքոյ քաղաքին. և սակաւ փաշտօք մտեալ 'ի քաղաքն՝ հարցանէր 'ի չմերս եղեալ, եթէ ես առ Շապհու եկի: Իսկ քաղաքացիքն յայժ պատուեալ զնա՝ ընդ լուսանալ առաւօտուն դիմեցին զօրքն 'ի ներքս և առին զգանձս ոսկւոյ

և արծաթոյ անհամարս, և գոհարս ականց պատուականաց և զշատարն բազմազըն, զորինչ բառնայն կարացին 'ի Թա-գաւորական տանէն, և յամենայն մեծամեծաց տանցն առար առեալ յայժ անրաւ՝ ժողովէ զամենայն 'ի Բաղաց բերդն և զամենայն զաւառաց խոյոց զզարմանս անասնոց այրել հրա-մայեաց. և զոր ինչ ունելի էր մարդոյ 'ի բերդն հաւաքեաց, եւ և զգէնս և զաւձաւս և զկազմածս հեծելոց: Նա առեալ հրաման Ընդոկայ փախչել ամենայն Ափինեաց և զատնս և զհամբարս այրել: Նա ժողովեալ որ ինչ յաշխարհին եկե-ղեցւոյ էր զարդ՝ զամենայն բերեալ 'ի Հաղատու եկեղեցին հա-ւաքէին և զնշխարս սրբոց լալով համբուրէին իւրաքանչիւր-քըն, և ութ օր ցայգապաշտօն արարեալ՝ արարին հողաբը-լուր 'ի վերայ եկեղեցւոյն և ինքեանք ցրուեցան ընդ ամենայն երկիր: Նա ոչ որ իշխէր ասել զանուն Ափինեաց: Նա քան և հինգ ամի յանմարդս ապականեալ կայր երկիրն ամենայն: Եկա եկեալ Հաղուհ արքայ 'ի վճարմանէ պատերազմին՝ եւես զաղէտսն և 'ի ցասման եա հրաման ամենայն զօրացն երանել 'ի Ափինիս և գերել զխօտսն և զանասունս: Նա եկեալ ոչինչ գտանէին. և 'ի շրջելն հասին յեկեղեցաբլուրն Հա-ղատու. և ելեալ 'ի վեր՝ շարժումն մեծ եղեալ, ահացեալք 'ի բաց գնացին զունդքն Պարսից հանդերձ Եթաշխոդայիւ զօրապետիւ իւրեանց: Նա անտի անցեալ տայրն պատերազմ ընդ բերդին. և անտի վէմն գլեալ ընդ զառ 'ի վայրն սատա-կէին առ հասարակ. և կրկին և երեքկին առեալ սաստկա-գոյնս պատերազմ ոչ ինչ կարէին առնել, այլ բազումս կո-տորէին: Նա զայրացեալ արքայն այլ ևս սաստկացուցանել կամէր զպատերազմն: Յայնժամ ամենայն մեծամեծքն առա-ջի անկեալ աղաչէին մի ևս տալ պատերազմ, այլ շուրջ զամրոցաւն ածել: Յայնժամ Ընդոկայ պարապ գտեալ ժամ՝ թողու զբերդն և մեծաւ աւարաւ անցանէ 'ի Հռով-մայեցւոց աշխարհն. և անդ մեծագոյն առեալ պատիւ՝ ան-

դէն մեռանի։ Եւ նորին որդին Բարիկ փախուցեալ 'ի հող հայրենի՝ երթայ գնայ 'ի դուռն Շապհոյ արքային Պարսից և անդ ուժեմն 'ի զօրականացն պատահեալ՝ զեռեղի, և բազում արութիւնս Ալամանիաթս Պարսից ցուցանէ՝ ոչ ոք գիտելով զնա։ Յայնժամ եկեալ Քոնն 'ի Քոնաց՝ Քոնագուր անուն, յղեալ առ Շապուհ ասէր. «Ո՞վ է հզօրն արեանցս, եկ մարտնչեսցուք դու և ես»։ Եւ ինքն Քոնն վառեալ էր յկանանութեից զզահիւք — բարձր և լայն հասակաւ, բևեռաւորեալ սաղաւարտաւ զահագին զլուխն և զերկրթզեան ձեռաց պղնձի տախտակաւ յօրինեալ, զանհեղհեղ գեղարդն 'ի բարձրաւանդ փայտից, և զուսերն բոցանրշան ունելով, ահարեկ զանազան առնէր։ Ըստուստ յայտնի անուն Բարկայ առաջի արքային, թէ գործ այդ նմա վճարի։ Եւ արքայ արքայից կոչէ առ ինքն զԲարիկ և տայ վձիռ թագաւորական՝ կրքեալ փարազաղիր մտանելու և ասէ ցնա. «Եթէ մեծ քինոյս այսմիկ յանդուգն արասցես, մեծագոյն խոստմանց հասանիցես»։ Նորա յանձն առեալ կատարել զխնդիրն, և նոյնժամայն ապաւինեալ 'ի վերին օգնականութիւնն ասէ. «Եկեղեցիք Հայոց՝ օգնեցէք ինձ»։ Եւ առեալ զիւրոյ զօրութեանն զդէն և ձանձանչաւոր մարգարտական զզահիւքն արքունի զփայլչականն զայն զարդարեալ հասակ, և փողփողեալ սաղաւարտաւն զգեղեցիկ զլուխն, զուսեր ընդ մէջ և զակնակապ վահանն յահեակ ուսն ընկեցեալ, և զգեղարդն քաջամաւլ յաջ բազուկն առեալ՝ աշտանակէր 'ի սեաւն երիվար, ահոյանայր ընդդէմ թշնամւոյն։ Յարձակէին 'ի միմեանս. սուր և առ գեղարդացն իբրև ձայթիւն որոտմանց եկանէր յառաւօտէ մինչև ցինն ժամ. զատապարտէր անհնարին հոկայն և յաղթողանայր քաջն Բարիկ, և սճապարէր 'ի սուրն միանուի, որով անդէն սատակէր զմարդախոշոշ գազանն։ Եւ լեալ Շապուհ մեծաւ ցնծութեամբ՝ կոչէ զԲարիկ առ 'ի կատարել զառ 'ի նա

խոստմունսն. և նորա բան խնդրեալ ասէ. «Բարձցի սանդն պղնձի 'ի գլխանէ քումմէ»: Եւ սանդն էր լի մոխրով հնոցի. և որք գային 'ի տեղին յայն, կոփէին 'ի նմա և ասէին. «Ամենեաց տէրուԹիւն ընդ այս մոխիր 'ի վայր լիցի, և նոցա կեանքն և խորհուրդն»: Եւ արքայն մեծաւ զարմացմամբ հրամայեաց բառնալ զսանդն 'ի տեղւոջէն: Եւ ապա խնդրէր Բարէկ զբնակեան աշխարհն իւր 'ի նա դարձուցանել: Եւ շնորհեալ նմա արքային՝ մեծաւ պատուով առաքէ զնա յիւր աշխարհն և աւանդէ նմա պատիւ ընդ Բագրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուիլ: Եւ եկեալ էանց ընդ Եփրատ գետ և շինեալ գեօղ մի Դակորդ անուն, այսինքն է — —ջին կորդուն 'ի հայրենեացն. — Եւ յառաջին ամի տէրուԹեանն իւրոյ եկեալ յորս՝ շրջէր տեսանէր և լայր զերկիրն: Եւ հասեալ 'ի Շաղատ՝ ելանէ 'ի բլուր մի, և անտի փախչի եղջերու մի՝ դէպ ելանէ յեկեղեցարբլուրն. և Բարէկ զհետ մտեալ՝ եղջերուն 'ի բլուրն աներևոյԹ լինէր, և ոտք երիվարին խրեցան 'ի բլրին, և իջեալ յերիվարէն հայելս ուրեմն քարշէր զերիվարն: Եհ կալաւ զամենեսեան, արտաքս պեղէին զհողն 'ի բլրէն և գտանէին զգեղեցկաշէն եկեղեցին լի աստուածային գանձիւ և հոտ անոյշ բուրեալ: Եւ օրն այն լինէր հոռի ամսոյ՝ որ օր մի էր. զայն օր մեծապէս կատարեցին տօն. և ժողով լեալ՝ բազում բժշկուԹիւնք լինէին որոց 'ի ժամուն զիջեցան անդ. զոր տեսեալ անհաւատից՝ հաւատացին և մկրտեցան: Գորն և Գաղամն, որք բազում զօրք զկնի Բարէկայ եկեալ էին երկու եղբարք մեծատունք, որոց արկեալ վիճակ Բարէկայ՝ հասանէ Գորայ աւանն Խոտայ, և կրտսերին Գաղամայ գեօղն ցանկալի Շաղատ վիճակեցաւ: Յորժամ այս եղանէր՝ քան ամ յառաջ լինէր քան զԹագաւորելն Յազկերտի չարի, որ կամեցաւ բառնալ զհաւատս Քրիստոսի և դնէր մեզ զեհենի հնազանդել, որ և սուրբքն Վարդանանք նահատակեցան 'ի նմին Յազկերտէ հալալ

վաթսուն և վեց ամք ընտրելք։ Նա անուն մինչև ցհայ թիւն հարիւր քսան ամ լինէր։ — Այսպէս խօսս զերազ։

## ԳԼՈՒԽ Բ

Որէնք յանօրէն Յազկերտի կրօնքէն Աղուանից, և քաջութեան զօրութեան ՚ի Վարդանայ հայոց զօրավարէ.

՚Ի ժամանակս Յազկերտի արքայի պարսից վառէր բորբոքէր սատանայ ՚ի միտս նորա բառնալ զքրիստոնէութեան կրօնն։ Նա հրաման տայր կարգել յաշխարհս Աղուանից թագաւոր զհաւատս և հնազանդ կալ մոգական աղանդոյն կրակապաշտութեան. նոյն ազդեաց և ՚ի Հայս գործեցան ՚ի նոյն թագաւորէ։ Բայց դէմ եդեալ հազարապետն Աղուանից և սուրբ եպիսկոպոսապետն աշխարհին՝ համանէին միաբան յուխտն Հայաստանեայց և պատմեալ զանցս աղետին՝ մեծաւ աղաղակաւ փութացուցանէին զզօրս և առէին. «զօրն Պարսից, որ էր ՚ի կողմանս աշխարհին Հոնաց՝ դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր, և բազում ևս այլ այրուձի, որ ՚ի դրանէ եկին. և թող զերկոսեանդ, այլ ևս երեք հարիւր վարդապետք ածեալ են ընդ ինքեանս։ Պառակտեցին զաշխարհն, զոմանս յինքեանս արկին, կամէին յեկեղեցիս ձեռնարկել. և հրամանաւ արքայի առնլին զամենեսեան և ասեն. «եթէ կամաւ յանձն առնուք զօրէնս՝ պարգևս և պատիւ գտանէք ՚ի նմանէ և թողութիւն հարկաց արքունի լինի ձեզ. ապա եթէ կամաւ զայդ ոչ առնէք, հրաման ունիմք ՚ի գիւղս և յագարակս շինել ատրուշանս և զՎռամական կրակն ՚ի նոսա դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիրս աշխարհիս։ Նա եթէ ստամբակէ ոք, մահուամբ սատակի. և կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ լինիցին»։ Զայս լուեալ գնդին Հայոց՝ ոչինչ երկեան, այլ համագունդ եկեալ վասն զաւժին

այնմիկ՝ քաջալերս տուեալ արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի խաբէութեամբ կալցեն զնոսա, զի մի ձեռնարկեսցեն յուխտ եկեղեցւոյ, մինչեւ նոս խնդրեսցեն: Յայնժամ դրեցին զունդք Հայոց առ Թէոդոս կայսր՝ օգնել նոցա ՚ի մեծի վտանգին. իսկոյն հասանէր նմա վախճան. եւ անօրէնն Մարկիանոս թագաւորեալ՝ ոչ պահէր զուխտն. այլ ըստ իւրում բարուցն միակամ լինէր ընդ հեթանոս: Եւ ոչ ուստեք գըտեալ օգնականութիւն քաջացն Հայոց՝ ՚ի վերինն ապաւինեալ յամենակալ զօրութիւն Բարձրելոյն, յերիս բաժանեալ ըզզօրս Հայոց՝ զառաջինն տան ց՚Ներշապուհ Արծրունին՝ պահապան Ատրպատական կողմանն: Եւ զերկրորդ գունդն տան ՚ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց անցանել ընդ սահմանս Վրաց ՚ի վերայ մարզպանին Զողայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից: Եւ երանելին Վարդան ոչ գիտէր զդաւաճանագործութիւն անիծելոյն Վասակայ ուրացողի, որ յառաջքան զգալ զօրուն Հայոց յԱղուանս՝ ազդէ Վասակ մարզպանին Պարսից Մերսերուխոսայ, եթէ բաժանեցին զզօրս Հայոց եւ զՎարդան պակաս զօրօք յայդմ կողմն հանեցին. արդ պատրաստ լեր ՚ի գլուխ եկանել, զի ՚ի սպառ սատակեսցես զդոսա: Այս էր անօրինին խորհուրդն, զոր զգացեալ Մերսերուխոսայ զքաջալերսն ՚ի Վասակայ՝ ոչ եկաց ՚ի կողմանս Զողայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրացըն իւրոց եւ փութանակի գայ անցանէ ընդ գետն մեծ Կուր. եւ պատահէ նմա ՚ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորութեանն Աղուանից: Անդ եղեալ՝ զբոլոր մեծութիւն զաշտին ՚ի ներքս փակէր, զինեալ եւ վառեալ ՚ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց: Իսկ քաջն Վարդան եւ զօրքն որ ընդ նմա իբրեւ տեսին զբազմութիւն հեթանոսացն եւ նայեցան յիւրեանց սակաւութիւն, թէպէտ եւ կարի իսկ նուազ էին քան զնոսա՝ ոչ ինչ զանգիտեցին առ ՚ի յայժ բազմութենէն. այլ առհասարակ միաբա-

նեցին, և ամբարձեալ յերկինս զձայն խուռնից ասեն. «Գոհեմք՝ Տէր, զայնոսիկ, որք զատեն զմեզ, և մարտիր ընդ այնոսիկ, որք մարտնչին ընդ մեզ: Զինուք և ասպարօք օգնեա մեզ, շարժեա և դողացո զգունդ անօրինացն»: Այսպէս կացեալ յաղօթս և խումբ արարեալ յարձակէին քաջքն Հայոց, և զաջ թևն բեկեալ ընդ ձախու կողմանբն արկանէին. սրոյ ճարակ զամենեսեան առնէին և ընդ երեսս դաշտին փախըստական արկանէին յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն գաւիւք Լուրնաս գետոյ. ուր ընդդէմ դարձեալ Թագաւորաղնեաց Բաղասական արքայի, անդ ընկեցին 'ի ձիոյ զոմն 'ի նախարարացն Հայոց 'ի գնդէն Գինքանենից, զՄուշն սպանեին, զԳաղրիկն վիրաւորեցին: Յայն տեղւոջն զխաղին 'ի վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի. գոչէր առիւծաբար և յարձակէր վարազաբար՝ սատակէր զԼուրին քաջ՝ զեղբայր Թագաւորին Լփնաց և զայլս անհամարս, զորս յայնմ տեղւոջ սատակէր: Նա այնպէս ամենեքին այր զընկեր իւր սխալեան կործանէր. և առ յոյժ յանդուգն յարձակմանէն բազումք այն էին՝ զոր գետասայլ առնէին քան զանկեալսն որ 'ի ցամաքի: Նա 'ի բազմութենէ անկելոցն՝ յատակ ջուր գետոյն յարիւն դառնայր և ոչ գտանէր ոք 'ի նոցանէ ապրեալ: Նա 'ի Թագուցելոցն յանտառախիտ մայրս դաշտաց 'ի զօրաց թշնամեացն ոմն մի զինու հանդերձ եկեալ 'ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն մազապուրծ զերծեալ՝ գոյժ տանէր 'ի բուն բանակն, որք փախստեայ անկանէին 'ի մեծ շահաստանն: — Նա յայնմիկ զօրք Հայոց կատարեալ բղգործ մեծի պատերազմին՝ ժողովէին զաւարութիւն աւարին և կուտէին արծաթ և ոսկի յոյժ, զէնս և զարդս որք յարանցըն քաջաց և յերիվարաց, և դարձեալ յարձակէին քաջաբար 'ի վերայ բերդից և քաղաքաց, զոր ունէին Պարսիկք յաշխարհէս Աղուանից. հզօրապէս մարտնչէին, այրէին զամուրս արգելանոցաց նոցա և զերամ երամ մոգս գայթակղե-

ցուցիչս՝ ուր և գտանէին, որոց ճարակ առնէին՝ զէշ թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Սրբէին զանգեան յամենայն պղծագործ զոհից և պատուէին զեկեղեցիան յանհնարին նուրութենէն։ Նոյն բազումք 'ի նախարարացն Աղուանից և 'ի շինականաց, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ և փարեալ էին յամուրս լերանց Կապկու, իբրև տեսին զմեծ յաղթութիւն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա՝ և խառնէին 'ի զօրս նոցա, և միաբանեալ կցորդ լինէին նահատակութեան նոցա։ Խաղային գնային այնուհետև 'ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկք. առնուին քանդէին զպահակն, կոտորէին զզօրս, որ բնակեալ էին 'ի ներքս և զդուռն տային 'ի ձեռն Վարդանայ ումեմն, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից։ Նոյն յայսմ ամենայն քաջութեանց վերայ ոչ ոք անկաւ 'ի նոցանէ, բայց միայն որ նահատակեցաւն։ Նոյն անդէն գնոյն այր, որում զդուռն յանձն առարին՝ արձակեցին զեսպան յաշխարհն Հոնաց, բանս դնել ընդ նոսա և ուխտս հաստատել՝ անքակ ունել զմիաբանութիւնն։ Իսկ իբրև նոքա զայն լուան՝ խնդին հաւանին 'ի տեղին և ականատեսք լինէին յաջողմանն։ Երդմամբ եդին ուխտ օրինօք երկնից, յանձն առին զերդումն քրիստոնէութեան՝ պահել ընդ նոսա հաստատուն միաբանութիւն։ Նոյն այսպէս կատարեալ զամենայն կամս իւրեանց՝ մինչդեռ 'ի տեղւոջն էին, գուժկան հասանէր յերկրէն Հայոց վասն ուրացողին Վասակայ, եթէ աւերեաց զբազում երկիրս Հայոց։ Չու արարեալ Վարդան մեծաւ աւարաւն, անպատում ուրախութեամբ՝ առ Աստուած և նորին յուսովն հասանէր յերկիրն Հայոց յաւուրս երեսուն։ Եղև լինի Վասակայ բարկացեալ զալուստ քաջին Վարդանայ և միաբանութիւնն Հոնաց և Աղուանից, գնաց փախստեամբ յերեսաց նորա, ընդ չար բարուցն չար կրեալ անցս՝ նա և ոչ զտանէ յԱստուծոյ

ողորմութիւն։ Այս եղեւ 'ի ժամանակս Յազկերտի արքայի 'ի մէջ Աղուանից և Հայոց վերնոյն օգնականութեամբ։

## ԳԼՈՒԽ Գ.

Գալուստ Մեսրոպայ վարդապետի առ Արսվաղէն Աղուանից արքայ և առնել նշխարս և կարգել վերակացուս դպրոցաց և ընթացս հաստատել 'ի տունս Աղուանից և բառնալ զհմայեալ աղանդն։

Յորում ժամանակի Թէոդոս փոքր Յունաց էր կայսր, և Վռամշապուհ Հայոց թագաւոր, և Յազկերտ Պարսից արքայ և Արսվաղէն Աղուանից թագաւոր՝ եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս՝ մեծափառ ընտիր անօթ Հոգւոյն Սրբոյ, առ հայրապետն մեր Երեմիա և թագաւորն Արսվաղէն, որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւն նորա որ ըստ շնորհէից նմա յաստուածուստ պարգևին՝ Հայոց և Վրաց եւ նշանագիր 'ի ձեռն նորա Հոգւոյն Սրբոյ, հաճեցան և հասուն զմանկունս ընտիրս յուսումն. և զԲենիամին թարգմանն կոչեալ 'ի Սիւնեաց, զոր Վասակ մանուկ 'ի ձեռն Անանէի եպիսկոպոսին արձակեաց։ Իսկ նորա եկեալ առ Մեսրոպ, նոքօք առեալ զնշանագիրս կոկորդախօս, աղխալուր, խժական, խեցբեկադունի լեզուին Գարգարացւոց։ Թողու աստ վերակացու զաշակերտն իւր Յովնաթան. և 'ի տան թագաւորի կարգեալ զքահանայս՝ դառնայ 'ի Հայս, անցանէ 'ի Բիւզանդիոն առ Թէոդոս թագաւոր. և դարձեալ անտի՝ շրջէր զաշակերտօքն։ Իսկ լուեալ եթէ 'ի Գարգմանն մնացեալ է հեթանոսական աղանդ՝ դառնայ 'ի Սիւնեաց և գայ առ Խուրս՝ Գարգմանայ իշխան, և նովաւ ածէ յուղղութիւն, և ինքն գնայ 'ի կոչ բդեաշխին Վրաց առ Աշուշա վասն նորին գործոյ։ 'Ի նմին ժամանակի երևեցաւ Նեստոր անիծեալ, որ

նզովեցաւ յերկերիւրոցն յԷփեսոս։ Իսկ յերկրորդն Յազկերտի արքայի յառաջին ամի փոխի սուրբն Սահակ յելս Նաւասարդի ամսոյ. եւ յետ վեց ամսոց անցելոց փոխի եւ երանելի վարդապետն Մեսրոպ՝ հանգուցեալ ընդ սուրբս ՚ի Վաղարշապատ քաղաքի։ Խոսրով ոմն Գարդմանայ նախարար գնացեալ ՚ի Քայս՝ եղեւ նմա լինել առաջի Շապհոյ անարի թագաւորին. եւ գինեզեղեալ ՚ի խնճոյսն սեղանաւոր փախչէր ՚ի կէս մի, ընդ որ ցասուցեալ Շապհոյ զանդամնել հրամայեաց. եւ նա ՚ի փողոցառն յեցեալ՝ անց գնաց եւ ոչ ոք իշխեաց ձգել ՚ի նա ձեռն։

## ԳԼՈՒԽ Գ.

Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից ՚ի Չողայ եւ նորոգանել ՚ի մեծ քաղաքն Պարտաւ, զօրաշարժութիւն առն Խազրաց հինին, որ յետ իշխանաց աւերեցին։

Յետ այսորիկ գերեցաւ ՚ի Խազրաց աշխարհն Աղուանից. հրկէզ եղեն եկեղեցիք եւ կաթողիկէք։ Ապա յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքային, յորժամ սկիզբն հայ թուականին եղեւ, ՚ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ՚ի Չողայ քաղաքէն ՚ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի. եւ նստուցին հայրապետ զտէր Աբաս ՚ի գաւառէն Մեծիրանց, որ կալեալ զաթոռն ամս քառասուն եւ չորս, սրբական վարուք կեցեալ՝ փոխադրի յանմահ կեանս։

## ԳԼՈՒԽ Ե

### Ցուցանողութիւն վկայիցն 'ի Գիղափայ լերինն, և երևումն նշխարաց յաւուրս հայրապետութեան Աբրայ

Յառաջքան զանչաւորիլն տեառն Արտայ՝ 'ի թշնամեաց հրդեհեցան վկայարանքն 'ի Գիղափայ լերինն 'ի Կաստրոյ վանս, որք 'ի ժամանակս Վաչականայ Աղուանից արքայի և Գաւառնիկայ Շմարտայ եպիսկոպոսի յայտնեցան, որոց անուանքն են այսոքիկ. սուրբն Մովսէս, սուրբն Գանիէլ, սուրբն Եղիա. սոքա որդիք գոլով Սանեսանայ արքային Մասքութաց, որք աշակերտեալ սրբոյն Գրիգորիսի. և երեք հազար ութհարիւր և եօթանասուն այր ընդ նոսա: Ամենեքեան սոքա 'ի լեառնն Գիղափայ աճապարեալ խոստովանեալ կենօք. որոց զհետ եկեալ արիւնարբուն Սանեսան՝ 'ի սուր սուսերի արկ զնոսա յիննուտասներորդի ամսոյ. որոց բարեխօսութեամբ միշտ զթասցի Աստուած Աղուանից աշխարհիս և Հայաստանեայց երկրին:

## ԳԼՈՒԽ Զ

### Տեսիլ Վահէի

Յառաջնում ամի հայրապետութեանն Արտայ տեսի ես անարժանս Վահէի 'ի տեսլեան զայր մի անապատական, ո֊րում էր նշան աստուածային խաչի և ասէր ցիս զանուն իմ: Եւ ասեմ. «Ո՞վ ես դու՝ տէր». և նա ասէ. «Ես եմ Պօղոս, եկ երկրպագեա խաչիս. և մի՛ մերձեցիս 'ի սա»: Եւ ես զար֊թուցեալ 'ի քնոյ՝ ոչինչ փոյթ առնէի զիրացն: Եւ յետ եր֊կուց ամաց տեսանէի 'ի տեսլեան որպէս թէ սուրբն Վարոս 'ի

կերպ արեգական ասէր ցիս. «Մեք եմք նշխարք ծածկեալ 'ի դաւառին Երզնկոյ 'ի Մխանց աւանին 'ի վայրն Կոզանոյ։ Նախավկայն է անդ Ստեփաննոս և Թէոդորոս նահատակ, սուրբքն Վարոս, Մամաս, Սարգիս, Գէորգ վկայ, Կոզմաս և Դամիանոս. և մասն մի 'ի սուրբ քառասնիցն։ Եւ երևէր այր մի նոյն ձևով և ասէր ցիս. «Ես եմ Բասիլիոս ծառայ Քրիստոսի, որ չարչարեցայ 'ի խաչի, և խնդրեցի 'ի Փրկչէն մի կորնչել նշխարաց իմոց. և որք մասին ցանկան 'ի սուրբ խաչէս՝ ընկալցին, և է մասն մի յայն խաչէն և մասն մի յատուածընկալ նշանէն»։ Եւ ես Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ՝ մինչև ցելթն առ խնդրելով յամենողորմէն Աստուծոյ և 'ի սոյն վկայից ստուգութեամբ և ճշմարտութեամբ ցուցանել զխորհուրդ տեսլեանն։ Եւ յաճախէր ես առաւել նոյն տեսիլն և ճնշէր զհանելն, զի գեռ 'ի նեղի եմք՝ ասէր։ Եւ ապա յարուցեալ ես Վեհիկ՝ չոգայ առ սուրբ հայրապետն Երաս՝ պատմելով նմա զխմբումն մեծապայծառ վկայիցն. և նորա լուեալ զանունն յինէն՝ ետ փառս Աստուծոյ կենդանւոյ ամենապատիւ գոհութեամբ։ Եւ նոյնժամայն արձակեաց զԳանիկ մեծահաւատ քահանայն Տէրից երագէս լինել մեծաքանչ խորհրդոյն։ Եւ երագութեամբ ընթացաւ այն հաւատարիմ Բոհիւ քահանայիւ և Եղիկիէլիւ դպրաւ, որք փութանակի հասին 'ի վայրս Կոզանոյ առ ի Վեհիկս. հասին և այլք 'ի հանդէսն գործակից մեզ՝ Երաս Մոմհարեից երէց հօտին իւրով և Մարկոս քահանայ իւրով եղբարքն և հայրն Տիրիթ՝ Յովհաննու վանաց յանապատէն Քարմեղենոյ և այլ բազմութիւն յոյժ հաւատացելոց։ Ամօք հանդերձ կացեալ մեր յաղօթս մեծահայց խնդրուածովք՝ սկսաք զգերածն անել որպէս 'ի չափ մարդոյ. և յանկարծակի եղև բուրումն անուշահոտութեան 'ի տեղւոջն և յայտնեցաւ դանձըն ծածկեալ ըստ փրկչական բանին՝ եթէ չէ պարտ թաքչել լուսոյ և դնել ընդ գրուանաւ. այնպէս արտայայտեաց

Աստուած սրբական ծառայից իւրոց զճրագ և նա լոյս փափագող սրտի աննուաղելի ճառագայթ, յորոց 'ի յայտնիլն արար Աստուած ողորմութիւն աշխարհիս Աղուանից. և քաղցրութիւն առողջական փայլացն Կաղանկատոյ: Եւ նոյնժամայն օրհնաբանութիւն Աստուծոյ և գովեստ սրբոցն տուեալ ժողովքն, ամփոփեցին զնշխարս 'ի պատուական ինչ տեղարանս և իւրաքանչիւրոցն առնելով մասն՝ զմեծագոյնն պարփակեալ Գանձել քահանայն փայփայելի հասանէր մեծարգի ընծայիւն առ հայրապետն Աբաս: Ընդ որ յոյժ հրճուեալ նորա 'ի գալ սրբոցն՝ տօնախմբէ զնոցին յիշատակ. և դնէ 'ի մաքրագոյն արկեղս:*

## ԳԼՈՒԽ Է։

Թուղթ Յովհաննու Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս Աղուանից կաթողիկոս վասն հաստատոյ հաստատութեան Եկեղեցւոյ ընդդէմ [illegible]

Լուսոյ ճշմարտից աստուածասիրաց՝ սիրելի եղբօր և աթոռակցի մերում տեառն Աբասայ Աղուանից կաթուղիկոսի, Մովսիսի Բախաղատոյ եպիսկոպոսի, Գրիգորի Կոդաղակոյ եպիսկոպոսի, Քամիկայ Ամարասայ եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականաց եպիսկոպոսի, Ամրակումայ Շաքւոյ եպիսկոպոսի, Յոհաննկայ Գարդմանայ եպիսկոպոսի, Դանիելայ Մեծկողմանց եպիսկոպոսի՝

*) Աստանօր եղեալ տեառնի այս բան, որ գրչին երևի լինել յաւելուած. «Ես Ագրիանէ, որ զյիշատակս գրեցի՝ մաղթեմ յիշել զանարժանութիւնս իմ յընթերցողացդ, և զհայրապետն Աբաս մի մոռանալ, յորոյ 'ի ժամանակս լոյս աշխարհիս ծագեցաւ: Ընդ նմին և զԴ. Եհնէկ կարապետ նոցին յիշեսցէ Տէր Աստուած ողորմութեամբն իւրով մեծաւ: Եւ որք յիշէք, ձեզ վարձս ընդ երանեալ վկայիցն հատուսցէ Քրիստոս, այժմ և յաւիտեանս, ամէն»:

՚Ի Յովհաննիսէ Հայոց Մեծաց կաթուղիկոսէ, յԱբրա-համէ Տարօնոյ եպիսկոպոսէ, ՚ի Գրիգորոյ Մարդպետական եպիսկոպոսէ, ՚ի Սոփաննոսէ՝ Տայոց եպիսկոպոսէ, ՚ի Մաշ-տոցէ՝ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ՚ի Գիւտայ՝ Վանան-դայ եպիսկոպոսէ, յԵղիշէէ՝ Արեաց եպիսկոպոսէ, ՚ի Բա-բայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, ՚ի Քրիստափորէ՝ Ռշտու-նեաց եպիսկոպոսէ, ՚ի Սեկունդոսէ՝ Մոկաց եպիսկոպոսէ, և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց՝ օրհնութեամբ ողջոյն։

Քանզի եհաս մեզ լուր դժնդակ համբաւ, եթէ են ոմանք գայլք յափշտակողք զգեստուք ոչխարաց, որք եկին յաշխարհդ ձեր ՚ի վանաց Պետրոսի, որ անուամբ աղքատանէր կոչի և գործովք քրիստոսատեաց, և ուրացող զուրբ Երրորդու-թիւնն՝ զչար որոմն Նեստորի անարգելաբար սերմանել ՚ի հոգիս անմեղաց, թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոց, մատնել ՚ի յաւիտենական կորուստ. զորմէ լսելով՝ վշտակիր հոգւոյ և մարմնոյ եղեն անբժշկելի ցաւք։ Վասն որոյ ամենայն հարկաւորութեամբ փութացաք կարեկից լինել ձեզ և գրել յիշեցուցանել ձեզ զբանս սրբոյ Առաքելոյն՝ զգուշանալ ան-ձանց և Հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս և վարդապետս, հաստատուն ունելով զհաւատս ուղղափա-ռութեանն, զոր ընկալան հարքն մեր ՚ի Սուրբ գրոց հին և նոր Կտակարանաց ՚ի ձեռն Սրբոյն Գրիգորի և յերիցս երա-նեալ ժողովոցն երեք հարիւր ութևտասանիցն որք ՚ի Նի-կիա, ՚ի հարիւր և յիսնից՝ որք ՚ի Կոստանդնուպօլիս, և յեր-կերիւրոցն՝ որք յԵփեսոս, ջամբոյ՝ վեցհարիւր վաթսուն և ութ սուրբ հայրապետք, որոց ձայնակից և ժառանգորդ եղեք ուղղափառ նոցա հաւատոցն, այսինքն՝ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի Աստուծոյ։ Խոստովանիմք զմի Աստուած՝ Հայր ամենակալ՝ զարարողն ամենայնի, և ՚ի մի Տէր Յիսուս Քրիս-տոս յՈրդի Աստուծոյ, ծնեալ ՚ի Հօրէ՝ Աստուած ճշմարիտ,

յԱստուծոյ ծնանողէ, որով ամենայն։ Նաև 'ի Սուրբ Հոգին ելող 'ի Հօրէ, ընդ Հօր և Որդւոյ երկրպագեալ և փառաւորեալ. արարչակից և հաւասար Երրորդութիւնն կատարեալ միով բնութեամբ, փառօք և զօրութեամբ նախախնամելով զընդհանուր եղեալքս։ Իսկ 'ի վախճան յաւիտենից Աստուած գոլով մշտնջենաւոր Բանն Աստուծոյ, եղև մարդ կատարեալ անշեղապէս, մարմնացեալ անճառապէս 'ի Սուրբ Կուսէն, ոչ հեղացեալ 'ի բնութենէ և ոչ քայքայեալ 'ի մարմնաւորութեանն. այլ եկաց մնաց որ էնն՝ նոյն անփոփոխելի։ Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորովին. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ Հայր մարմնացեալ՝ այլ Որդին. ոչ Սուրբ Հոգին մարմնացեալ թանձրացաւ, այլ Միածինն 'ի Հօրէ, բայց կամաւ և զօրութեամբ Հօր և Սուրբ Հոգւոյն։ Նոյն ինքն անբովանդակելին խանձարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եդաւ 'ի մսուր, զի մեք զանմահական բարւոյն 'ի բաց ելիցուք. 'ի հրեշտակաց փառաւորեցաւ, զի մեք լիցուք նոցա երգակից. ընծայեցաւ 'ի մոգուց, զի պատարագեսցուք զհաւատս. կաթամբ բուժեցաւ, զի զանմեղութեան ընկալցուք. զարգացաւ ըստ մարմնոյ ամենակատարն, զի ժամանեսցուք 'ի չափ հասակի լըրմանն Քրիստոսի. եկն կամաւ 'ի չարչարանս, զի 'ի տանջանաց մեղացն զերծցուք. խաչեցաւ, զի 'ի կենդանութեան պըտղոյն վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբն մեռուսցէ զմահ. եդաւ 'ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիգս դժոխոց. յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ 'ի կենդանութիւն փոխարկեսցէ. համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր, զի դասակ լիցուք և մեք ընդ աջմէ նորա. գալոց է միւանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և չիք նորա թագաւորութեանն վախճան։ — Այսպէս հաւատամք, և փառաւորելով ասեմք Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ։ Իսկ դուք այսպէս խոստովանողն

նզովեցին սուրբ հայրքն: Նմանապէս և մեք նզովեմք զհին զամենայն եղեալ հերձուածողսն և զնորս, զՊօղոս Սամոսատցի, զՄանի և զՄարկիոն, զՆեստոր և զԹէոդորիտոս և զայլս, որք լրբաբար յանդգնեցան ասել երկու բնութիւնս և երկու դէմս 'ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ և թէ՝ Սուրբ Կոյսն ոչ ծնաւ զԱստուած՝ այլ զմարդ սոսկ ըստ մեզ և զլոկ տաճար Բանին Աստուծոյ: Են և այլք ոմանք, որք ասեն, թէ մինչ 'ի յերկրի էր Տէրն Քրիստոս՝ յերկինս ոչ էր, և մինչ 'ի խաչին էր, չէր յաթոռ փառաց, և մինչ 'ի գերեզմանի էր՝ ոչ էր ընդ աջմէ Հօր. զխորհոյն այսպէս նզովէ Աստուած, և մեք նզովեմք զամենեսեան, որք այսմ հաւանեցան կամ հաւանին:

Եւ առաքեցաք առ ձեզ յուխտէս մերմէ զայր հաւատարիմ զՄատթէոս քահանայ բերել զգրեալդ մեր առ ձեզ, յիշեցուցանել և զբանն Յոհաննու աւետարանչի որ ասէ, եթէ որ եկեսցէ առ ձեզ և զվարդապետութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ունիցի, մի ընդունիջիք զնա 'ի տուն և մի բարեւ ողջոյն ասել նմա. եթէ որ տացէ այնպիսոյն ողջոյն, կցորդ լիցի չար գործոց նորա: Զի որ ոչ խոստովանի զՏէր Յիսուս մարմնով եկեալ, նա խաբ է նեռն մոլորեցուցիչ. զայնպիսին 'ի սահմանաց ձերոց հալածեսջիք, և զմահաբեր վարդապետութիւն նորա ամենեւին ոչ լսել: Արդ վասն զի հայրքն ձեր հաւատակից էին հարցն մերոց և դուք մեզ, հաճոյ թուեցաւ գալ 'ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց՝ լսել 'ի ձէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն. զի մի որ կորիցէ 'ի հովուաց կամ 'ի հօտից. այլ 'ի վերայ բարւոյ գլխոյ ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս և մեզ յերկրի ծառայիցս և երկրպագուացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ողջ լերուք 'ի Տէր:

## ԳԼՈՒԽ Ը

Հալածումն հերձուածողաց յԱղուանից, եւ տէր Աբաս Աղուանից կաթողիկոս ընդ ձեռն թղթոյն արքայահրամանեաց։

Յայն փոյթ աղմկի սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի համբաւ ժողովոյն Քաղկեդոնի, որ 'ի ներքին Աստուծոյ գորացաւ վարդապետութիւն Նոցա, եւ դիւրալուր գրութեամբն, ներկեալ զբազմաց ազանց հոգիսն։ Նոյնպէս դաւանութիւնս այս եւ յաշխարհս Աղուանից 'ի ժամանակս տեառն Աբասայ Աղուանից կաթողիկոսի, որ յայժ քննութիւն առնելով խուռվք եպիսկոպոսօք, ովք վերնագոյնդ կան 'ի գրի, նոքօք հանգերձ հալածեաց 'ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ՝ զԹովմայն եւ զՆեղեայն եւ զՆոտոն եւ զԽրաս եւ զայլս ընդ նոսին զնմանողս նոցին արար տարաբնակ 'ի հեռաւոր վայրս։ Նոյնպէս եղեւ խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ 'ի ժամանակին յայնմիկ ողորմութեամբ Տեառն ամենակալի։ Այլ մարմնաւորական պատերազմունքն կային անձէն։

## ԳԼՈՒԽ Թ

Պատմութիւն յարուցման ազգաց Խազրաց եւ ղեկավար Հոնաց տէրութեան բռնեն թագաւորքն, որ եղեւ աւերման։

Այլ զքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել 'ի լսելիս տիեզերաց՝ մտաւորաց եւ հեռաւորաց, որում ոչ համեմատեն ոչ դարուցն առաջնոց նշանագիրք այգի ազգի պատերազմաց եւ խռովութեանց, ովք 'ի տեղիս տեղիս եւ յազգս ազգս գործեցան, եւ 'ի Հոգւոյն Սրբոյ բազում մասամբք եւ օրինակօք կանխաւ 'գրոշմեցան, եւ ոչ արտաքնոցն

յարմարական ճարտարախօս առասպելաց երկրաւոր և չնչաւոր իմաստասիրական յօրինուածքն կարող են հանդոյն այսմ գտանիլ: Զի են եհաս 'ի վերայ մեր միանգամայն և կատարեցաւ, զոր Փրկիչն մեր 'ի կենսաբեր աւետարանի անդ 'ի ժամանակի չարչարանացն ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն մարդկօրէնս զեջանելով խօսէր, ասէ. «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց, և լինել սովոց յաճախութիւն, և սուրք և սասանութիւնք, և նշանք յարեգական և 'ի լուսնին և յաստեղս, և խռովութիւնք ժողովրդոց՝ որպէս ալեաց ծովու խռովելոյ»: Նաև նոյն ինքն Տէրն զգուշացուցանէր. «Արդ արթուն լերուք, զի ոչ գիտէք զօրն և զժամն»: Եւ արդ քանզի ընկղմեցաւ միտք իմ և զբաղեցան խորհուրդք իմ 'ի տխեղծական հարուածոցս, և մոռացայ զկարգ բանին, զոր համդերձեալ էի արկանել զհիմն և սկիզբն առնել ժամանակաց և անցից, որք անցին ընդ աշխարհս Եղուանից՝ ըստ բանի մարգարէին՝ թէ «Մոռացայ ուտել զհաց իմ 'ի ձայնէ հեծութեան իմոյ». սակայն և այժմ առ անգամ մի թողեալ զահ և զերկիւղ որ դեռ զմեզս ունի՝ 'ի նոյն կարգն դարձցուք, զի տեսանեմք զբազումս, զի կան և կամին լսել. եթէ զինչ արդեօք կարիցէ բովանդակել զանթիւ հարուածս բարբարոսական թշնամեաց շուրջանակի զմեօք, այլ և ընդ նմին նշանս մեծամեծս և զարմանալիս, որով զթշնամին մեր պարտեաց հզօր և մարդասէր այն Աստուծոյ, և անկան առաջի աչաց մերոց: Եւ զի անցեալ ժամանակն յետս յետս զկուրն պահանջէր 'ի մէնջ՝ պատմել սկսայց յառաջին ութևտասն նահանջէն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեհեկի ամսոյն՝ յերեսուն և հինգ ամէնխոսբովու Արտիգեան արքայից արքայի:

## ԳԼՈՒԽ Ժ

Յառաջին ութեւտասն նահանջին սկզբին պատմութիւն.

Իբրեւ լցաւ ժամանակ գերութեանն Երուսաղեմի, որ յաւուրս Փոկասու Հերակլէ քրիստոսասէր կայսերն, որպէս երբեմն եօթանասուն ամացն՝ յաւուրս Կիւրոսի պարսկի, այց արար Աստուած յանդիմանել զնեգ Թագաւորն Պարսից՝ զմեծն Խոսրով, որ 'ի բազում ժամանակաց յաղթահարեալ վանեաց, վարատեաց նա զոտն օգոստոսական մեծ աշխարհան իւրով Հռոմա և նշանաւոր քաղաքան Պաղեստինեա: Արդ իբրև ետես նա, եթէ յաջողեաց գործ մարտի պատերազմաց, զոր սկսաւ առնել ընդ արքային Յունաց 'ի ձեռն զօրավարին իւրոյ, զոր կացոյց 'ի վերայ զօրացն այնմիկ զոր կազմեալ էր ընդդէմ արեւմտից, որոյ բուն անուն իւր Խոռեհեան կոչէր. և վասն մեծոյ նորա և յօրինելոյ զճակատն պատերազմաց և զյաղթութիւնս կատարելոյ՝ ըստ խորագիտութեան Պարսից այլ և այլ պճնող անուամբ յորջորջէ զնա՝ երբեմն Ռոզմիոզան, և երբեմն Շահվարազ: Նա էառ և հրձիգ արար զմեծ քաղաքն Երուսաղէմ, և 'ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսաւոր տիեզերաց, որով դժոխք գերեցան: Նա զարդս ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականց պատուականաց, և ընդհանդերձ ծիրանիս մեծագինս ընդելուզեալս մարգարտօք, նաև զկահս անգամ շինուածոց զարմանալի հոյակապ մայրաքաղաքաց, զսիւն և զկոյակս կճեայս, նա և զշողքատանիս և զթռչունս մեծամեծս, զորոց զանուանս ոչ էր լուեալ անգամ 'ի կողմանս արեւելից: Նա զի ոչ յերկարեցից զբանս, քանզի անցանէ զանցանէ զչափ կարգի տեսութեանս խնդ գործըն, զոր գործեաց նա և զմթերս զանձուց զոր աւարեաց և

եւ բերել 'ի դուռն Պարսից արքայի. սակայն ոչ յագեցաւ եւ
ոչ շատացաւ անթիւ կարասւովն. եւ երգեցիկ ազգի ազգի ա-
րուեստաւորօքն խրախճանականացն՝ փափկասուն աղջկանց եւ
մանկանց։ Եւ այլ առաւել եւս ոգորէր ընդ ծով եւ ընդ ցամաք
եւ զգեղեցկաշէն քաղաքս Յոնիայեցւոց բնակչօքն իւրովք
հանդերձ խաղացուցանէր 'ի կողմանս Պարսից վասն անձա-
նաց իւրոց։ Նմանապէս եւ զճարտարս 'ի նոյն ձեւ օրինակի նրա-
ստուցանէր եւ անուանէր զնին առաւել քան զԱնտիոք քաղաք.
եւ զայլս յիւր անուն զատուածն 'ի վերայ յաւելեալ։ Արդ իբրեւ
ելեց յաղթութեամբն ըստ ցանկութեանն զկամս իւր 'ի վերայ
ամենայն ազգաց եւ թագաւորութեանց, մինչեւ յանչափս զօ-
րանալ եւ հպարտանալ եւ կարծել անձին քաջութեամբ ստա-
նալ զթագաւորութիւն իւր աշխարհ եւ զարմանալի, եւ ոչ էառ
'ի միտ եթէ Տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան եւ
ում կամի տայ զայն. ապա սկսաւ տկար նուաղել եւ անկա-
րանալ առաջի արքային Յունաց, եւ ոչ ամբառնալ զգլուխ
իւր ըստ առաջին զօրութեանն։ Զի յանկարծակի ազդ արա-
րեալ կայսեր ամենայն զօրաց իւրոց եւ զօրագլխաց գլխաւորին
Աստուծոյ առաջի նորա, հրամայէր փողփողակի 'ի մի վայր
գումարել հանդերձ ամենայն զօրութեամբք, որք ընդ ձեռամ-
բք իւրեանց. եւ լինէր ամենեցուն ժամադիր գումար-
տակին այնորիկ։ Ոչ ժամանէր այր ընդ ընկերի իւրում, այլ
առանց յապաղելոյ փութանակի կատարէին զկամս իւրեանց
'ի սուսերս եւ զգեղանիզս իւրեանց 'ի գեղարդունս. տեգաք եւ
հանդարտք խրախուսէին, եթէ հզօր եւ պատերազմող եմք մեք։
Նա յարուցեալ ամենայն զօրութեամբ իւրով՝ ինքն իսկ ի-
րովի զօրավար եւ առաջնորդ լինէր առաջի զօրաց իւրոց. եւ
զդուռն պալատանն թողեալ 'ի ձեռս որդւոյն իւրոյ՝ թագ
կապեալ նմա նստուցանէր փոխանակ իւր յաթոռ թագաւո-
րութեան։ Ոչ հարկանէր ընդդէմ զօրացն Պարսից, որք պա-
տեալ պաշարեալ 'ի հնազանդութեան ունէին զաշխարհս եւ

գրաւոյքս նորա, ոչ անցանէր մտօ առ նոքօք և ոչ զրգռէր զնոսա 'ի մարտ պատերազմի. այլ թողեալ զնոսա անդէն յերկրի խուռամ՝ եկն եկ ընդ ծով ճանապարհ կազմեալ ընդ աշխարհն Եգիպտացւոց, գայ ընդ Հայս և անցանէ ընդ գետն Եփրատ, և խորհէր յանպատրաստ ունել զմեծ թագաւորն Խոսրով: Իբրև ազդ լինէր Խոսրովու, հիանայր ընդ միտս իւր և ասէր. «Ո՞վ նա է սա՝ որ յերկիւղէն իմմէ յանդուգնս վարիցաւ. իսկ արդ՝ այս զի՞նչ»: Նա իսկ տուեալ յերեսաց նորա յամարայնոց սահմանացն Յունաց՝ գնաց անդէն յաշխարհն Ասորեստանեայց. փաղփաղակի առաքէ սուրհանդակս երագահասս և գրէ առ մեծ զօրավարն իւր Շահվարազ հրամանս մեծամեծս և սպառնալիս. «Եյնու քաւեսցի, ասէ՝ մեծ նախատինքս և ցասումն իմ, եթէ այսպէս ժամանեսցես փութով հասանել և ոչ թողուլ և ոչ զմի ոք 'ի մարդոյ մինչև յանասուն 'ի համարձակելոյդ յերեսս իմ»: Նա 'ի ձեռն առեալ զօրավարին զհրամանն և ընթերցեալ զուրն ահագին՝ փաղփաղակի հանդէս առնէր ամենայն զօրացն Պարսից, և թողեալ 'ի ձեռս դաւմարտակացն զքաղաքս Հռովմայեցւոց և Պաղեստինացւոց՝ զեկեալն 'ի հնազանդութիւն ծառայութեան, զգուշութեամբ պատուիրէր ունել մինչև դառնալ նմա յերացն հասելոյ: Նա ինքն շարժէր զզօրսն հանդերձ ընտիր սպառազինուք և քաջընթաց երիվարօք անձապարէր հասանել 'ի հրամանն թագաւորին: Իսկ կայսրն մեծ Հերակլէոս իբրև եւես եթէ յոյս եա յերեսաց նորա թագաւորն Պարսից, դադարեաց 'ի պնդելոյ զհետ նորա. և յապաղակ ափուեալ զկողմամբն Ասորպատականու մինչև ցանգէն՝ անուանեալ Գայշուան, տեղի ամրոցաց ջերմութեան ընտրեալ յառողջութիւն հովանութեան թագաւորացն Պարսից՝ որ է 'ի սահմանս Արաբաց աշխարհին, աւերէր քանդէր գերէր զերկիրն ամենայն. և անտի դարձեալ՝ կամէր ձմերել 'ի կողմանս Եգուանից, Վրաց և Հայոց աշխարհաց: Անտի և գիր առաքեալ առ իշխանս և

առաջնորդս աշխարհաց, զի ինքնակամ կամօք եկեն ընդ առաջ նորա և ընկալուցին և պաշտեցին զնա հանդերձ զօրօքն իւրովք յաւուրս ձմերայնւոյ. ապա եթէ ոչ՝ համարեցին առաջի նորա իբրև հեթանոսք, առցին ամուլք նոցա և գերեցին սահմանք աշխարհացն այնոցիկ 'ի զօրաց նորա: Իբրև լուան զայս ամենայն պետք և իշխանք աշխարհին Աղուանից, 'ի նոյն ինքն 'ի հրամանէ Խոսրովու թողեալ զմեծ քաղաքն Պարտաւ, ելեալ գնացին ամրացան 'ի տեղիս տեղիս. իսկ բազումք 'ի քրիստոնէից և 'ի հեթանոսաց յարուեստագործաց բնակչաց քաղաքին, որք վասն անկարութեան իւրեանց ոչ կարացին զերծանել փախչել առաջի նոցա՝ մնացին անդէն 'ի քաղաքի անդ: Իսկ քահանայ ոմն, անուն Զաքարիա՝ այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյ, հեզ և հանդարտ՝ եդ զանձն իւր 'ի վերայ նոցա. և երդմամբ և ազգի ազգի հնարիւք զերծոյց զբազում անձինս քրիստոնէից աղօթիւք իւրովք երաշխաւորեալ նաև վասն հրէից և հեթանոսաց. ուստի յետոյ զովեցաւ գործ նորա և վկայեալ յամենեցուն՝ կարգեցաւ յեպիսկոպոսութիւն աթոռոյն Աղուանից: Իսկ իբրև եկն եհաս զօրն Հռոմայեցւոց անթիւ բազմութիւն յոյժ՝ բնակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ 'ի մէջ սահմանաց գեղջն Կաղանկատուաց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ առացուածս այգեստանեաց և գեղաստանեաց ընդ որս անցանէին, և անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրդուայ մօտ 'ի գիւղն Գիւտական: Ապա եկեալ հասին զհետ նոցա զօր Պարսից, զորս [illegible] անուանէին, և էր զօրագլուխ նոցա Շահրապղական, և 'ի հաւատարիմ նախարարաց թագաւորին վերակացու և հրամանատար 'ի միջի նոցա այր մի՝ զոր Գորանիկ Սալար անուանէին, եկն էջ ընդդէմ նորա. և միւս զօրավարն Պարսից եկեալ 'ի Հռոմայ և դարձուցեալ զՀերակլեանն ընդ կրունկն՝ վարեցին ընդ աշխարհն Սիւնեաց: Զի թէպէտ և հարուածք մեծամեծք եղեն զօրացն Պարսից,

առեալ հանին տարան արկին զնա յաշխարհն իւր, և անդէն կալան զքաղաքն, զոր հանին բռնութեամբ ՚ի նմանէն։

## ԳԼՈՒԽ ԺԸ

Վասն փառաւորելոյ Խոսրովու ընդդէմ արքային Յունաց և յաղթահարելոյ ընդ նմա Բողոսան արօք և փերաբնեալք յաշխարհին Հայաստանեայց։

Սատանիկ ամբոխումն եղեն Խոսրովայ տապատակել յաշխարհս մեր՝ հրամանաւ Հերակլի։ Նա պատգամաւորք առ նոսա Խոսրովու Պարսից արքայի. «Եթէ դուք միր հրամանաւ եկեք յաշխարհս իմ. մինչ, որ թափառական շրջէք յերեսաց իմոց ՚ի կցգես ծովուն արևմտից։ Արդ եթէ կարօտացայք ՚ի նմանէն ոսկւոյ կամ արծաթոյ կամ ականց պատուականաց, կամ ոսկեման մարգարտաց հանդերձից՝ բեհեզաց և ծիրանեաց, կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս ձեր։ Վասն որոյ առնեմ քեզ՝ մի կրկնել առ իս վասն գործ ունայն խնդրոյն, ապա թէ ոչ, եղիցին կամք քո։ Բայց ահա կանխաւ ասացից քեզ, զոր ինչ ես գործեցից եմ յառաջագոյն։ ՚Ի թողացուցանելն ինձ նմա բառ բանիդ քում, կոչեցից ես յերկրէ նորա զայլեթող զմեծ զօրավարն իմ զՇահվարազ համեմատ երկու քաջ զօրականօքն իմովք՝ Շահենով և Բռատակարինով, և զզօրս իմ զբևրաւորս և զհազարաւորս և զընտիր սպառազէնս իմ, զոր յօրինեցի ընդդէմ արևմտից։ Արդ ահա դարձուցից զերասանակս նոցա ընդդէմ արևելից, և յարեայց ամենայն զօրութեամբ իմով ՚ի վերայ քո, ոչ թողից զքեզ և ոչ տաց քեզ դուլ և դադար, մինչև հանից զքեզ ընդ ծագս ափեղերաց. ապա զխառացես և ՚ի միտ առցես զանխնայական զարմացուցիչ անձին քո զլսելիսն, զոր առնես։ Օ՜հ ո՞ր տարայց հանդուցից՝ յորժամ հանիցեմ ես անոր զայն ամբոխ բազմութեան. ո՞ւր լիցի երկիր,

որ բաւիցէ առաջի նոցա, եթէ ոչ արարից ըստ բանիդ ըստ այդմիկ»: Այսպիսի սպառնալեաց պատգամաւ դադարեցին (Խազիրք) յամէն յայնմիկ և դարձան անդրէն ընդ նոյն դուռն: Ապա իբրև նաև իշխան ածէր նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարաց, մարդոյ և անասնոց և անօթոց ոսկեղէնաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ 'ի միտ իւրում՝ յայնմ կոյս ինքն իսկ իւրովի գալ եկանել: Արդ առնէ այնուհետև ամենեցուն որք ընդ ձեռամբ իւրով էին՝ տոհմից տոհմից և ազգաց ազգաց՝ լեռնականաց և դաշտականաց՝ յարկարնակաց և բացօթեկաց՝ ծովամերձաց և ցամաքայնոց՝ գլխագերծաց և գիսաւորաց, զի ընդ ակնարկել նորա՝ պնդակազմ պատրաստական գտանիցին:

Արդ յամին երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի աղետից սպանմանն Խոսրովու՝ եկեալ նոյն ինքն, զոր մերագոյնն ասացաք, որ էր նա Ջեբու Խաքան, ունելով ընդ իւր և զորդին իւր, և զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով: Իբրև եհաս յերկիրս Աղուանից բոթն ահագին, կամեցան ամրացուցանել զաշխարհս մեր 'ի մեծ մայրաքաղաքին Պարտաւարերդի. և լինէր այն 'ի հրամանէ առն միոյ, որում անուն էր Գայշաք՝ որ առաքեալ էր 'ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս. որ փակեաց 'ի ներքս զբազմութիւն շրջակայ գաւառաց և կամէր պնդեալ զինքն միաբանութեամբ հանդերձ մեծամեծաց աշխարհիս և բնակչաց քաղաքին՝ կալ ընդդէմ նոցա: Բայց հայէր տեսանել, եթէ զինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Ճողայ և ընդ գումարտակս սքանչելի պարսպաց նորա, զոր բազում ծախուք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս 'ի շինուածս մեծագանձ գործոյն, որով փակեցին աղխեցին ընդ լեառն Կովկաս և ընդ մեծ ծովն արևելից: Արդ 'ի մօտել տիեզերական ցասմանն՝ որ առաջի էր

մեզ ամենեցուն, նախ զնա բաղխեցին ալիք ծովուն ծաւալեալ և 'ի հիմանց տապալեալ. քանզի տեսանելով զա՜հն սաստկացեալ՝ ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ, անապատեւանուն բազմութեամբն 'ի ձև խղակմն զխարձակս դիմեալս 'ի վերայ, գողումն կալաւ զնոսա առաջի նոցա. մանաւանդ տեսանելով զպնդաքարշ կորովաձիգսն, որք իբրև կարկուտ սաստիկ տեղային 'ի վերայ նոցա, իբրև գայլք գիշախանձք անամօթացեալ դիմէին 'ի վերայ նոցա և անխնայ կոտորէին յանդս և 'ի փողոցս քաղաքին: Նա ոչ խնայէր ակն նոցա 'ի գեղեցկատես պայծառադէմ մանկահասակս արուս կամ իգս, և ոչ յանպիտանս և յանօգուտս, ոչ թողուին զհաշմս կամ զծերս և ոչ գթային կամ գալարէին աղէք նոցա 'ի խանդաղատանս տղայոց, որ զկոտորեալ մարքն փարէին և դիէին զարիւն առանց նոցա իբրև զկաթն. այլ իբրև հուր փառեալ յեղէգն մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւսն, գործ զազանաց և թռչնոց թողեալ 'ի նմա: Այս տակաւ շարժէին ալէքն ընդդէմ մեր:

Նա իբրև լսէր զայս ամենայն սեաւ իշխանն որ պահէր և ունէր զքաղաքն Պարտաւ, կամէր խօսել առ ամբոխեալ բազմութիւնն, որք էին ժողովեալք 'ի մէջ բերդին վասն սաստկացեալ ահին՝ եթէ զի՞նչ իցէ արժան գործել: Բայց զբերան իւր և յերկիւղէն մեծէ անդրէն զբանն կլանել ոչ կարաց. քանզի թափեցաւ սիրտ նորա և գողումն կալաւ զնա յոտից մինչև ցգլուխ, և ծունկք նորա զմիմեանս բաղխէին: Իբրև գիտաց բազմութիւնն զայնչափ վտանգաւորել առնն՝ աղաղակ բարձին և ասեն. «Ընդէ՞ր բնաւ արգելեր զմեզ պահել 'ի ժամու յայս՝ տալ զմեզ կանամբք և որդւովք մերովք 'ի ձեռս արիւնարբու զազանացն. և արդ ո՞րպէս կարիցեմք ելանել փախչել առաջի նոցա՛ այսչափ խառնիճաղանճ բազմութիւն քաղաքիս. քանզի եկն եհաս ահա սաստիկ թշնամին մօտ առ մեզ իբրև մրրիկ ելեալ»: Այս ասեն այր ցընկեր, «Ընդ-

էր հեղգանք՝ առնելով զքաղաքս գերեզմանս անձանց մերոց. Թողցուք զկահ և զկարասի մեր և ելցուք գնասցուք, Թերևս զերծանիցիմ մարթասցուք»։ Եւ զեմ եղեալ առ հասարակ ընդ չորս դրունս քաղաքին՝ անապարէին անկանել 'ի լեռնակողմն Արցախագաւառին։

Իբրև իրազգած եղեն Թշնամիքն եղելոյն՝ պնդեցան զհետ փախստէից և հասեալ 'ի մասն ինչ նոցա առ ստորոտով լե-րինն՝ որ է յանդիման գեղջն մեծի Կաղանկատուաց, որ 'ի նմին Միւսի գաւառի՝ յորմէ և ես, 'ի նախամնալ աւուրն ոչ կարացին ժամանել 'ի բազում ինչ 'ի վնաս, այլ զանկեալն փոքր 'ի շատէ 'ի ձեռս՝ զորս կոտորեցին և զորս զհետ կալհից առլէց և զբաստուց դարձուցին անդրէն 'ի բանակն իւրեանց։ Իսկ 'ի գիշերին յայնմիկ անցին ամենեքեան, որպէս երբեմն Եբրայեցիքն ընդ ծովն Կարմիր, և անկան յամուր գաւառս Արցախոյ։ Նոյնպէս և իշխանն այն՝ Գուշչաք անուն, զեր-ծաւ համօրէն տամբ իւրով և անկաւ 'ի կողմանս Պարսից, և այլ ոչ ևս կարաց կարդել զինքն 'ի նոյն իշխանութիւն։

Յետ այսր ամենայնի զկնի ուղին յարուցեալ և գնան յորձանուտ ընդդէմ Վրաց աշխարհին և պատեալ պաշա-րէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփխիս։ Եզդ լինէր մեծի կայսերն Հերակլեոսի. և ժողովեալ նորա զամենայն զօրս զօրութեան իւրոյ՝ գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր։ Եւ 'ի մատուցանել զօրէնս և զընծայս Թագաւորականս՝ ընկալեալ յոյժ բերկրե-ցան 'ի տեսանել զմիմեանս։ Եւ այնուհետև անդ էր տեսանել զեղկութիւն անձանցն, որ փակեալ էին 'ի բերդին, հասեալ 'ի վերայ նոցա Թշուառութիւն 'ի վերայ Թշուառութեանց։ Բայց վասն զի չև ևս էր հասեալ ժամանակն որ առաջի կայր, եղև՝ զի խմիցեալ Խոսրովու զժամանդիր մեծ Թագաւորացն երկոցունց 'ի քաղաքն յայն յառաջ քան զպաշարելն՝ զոր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա և 'ի պահ-

պանութիւն քաղաքին գլօժային և զքաջ պատերազմող զօրագլուխն իւր՝ զՇարհապարազ և յետոյ հեծելոց թիկնապահաց և զունապահաց իւրոց ընդ նմա իբրև արս հազար· զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զզօրավիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմիկցօքն՝ յոյժ զօրացան յանձինս իւրեանց և սկսան ծաղր առնել զերկու թագաւորսն: Զի թէպէտ և տեսանէին զանթիւ բազմութիւն զօրացն Հիւսիսոյ և արևմտից 'ի նմանութիւն լերանց ճակատեալ շուրջ զքաղաքաւն, նաև ընդ նմին զմեքենայսն և զչորեքանիւսն և զայլ ազգի ազգի հնարսն յօրինեալ 'ի ձեռաց ճարտարացն Հոռոմայեցւոց, որով անվրէպ առնէին զքարաձիգսըն 'ի փլուզանել զպարիսպն քարամբք մեծամեծօք. նաև զուռուցիկ տիկսն մեծամեծս քարալից, որովք զգետն մեծ զՆիւր, որ պատէ զկողմն քաղաքին, ուռուցեալ յետ ընդդէմ ընդ պարիսպն զխմեցուցանէին. սակայն նոքա ոչինչ վատեալք և ոչ 'ի մի ինչ իրաց՝ քաջալերէին զմիմեանս, և ըղբեկեալն 'ի նոցանէ անդրէն շինէին և կանգնէին: Արդ իբրև լքան փանեցան վաստակեցան զօրք երկոցունց թագաւորացն և ոչ սակաւ էր թիւ անկելոցն 'ի մարտի հեռաւորաց, խորհեցան առ միմեանս թագաւորքն և ասեն. «Ընդէ՞ր է այս կորուստ զօրաց մերոց. ո՞չ ապաքէն յորժամ կալցուք զհզօրն՝ զառն նորա որպէս և կամիցիմք աւար հարկանիցեմք»: Յայնժամ կարգէր յօրինէր նախանձախնդիր մեծ կայսրն Հերակլէոս՝ եթէ զինչ արժան իցէ գործել. և ասէ ցայլն որ եկեալ էր յօգնականութիւն նմա. «Դարձիր դու՝ մեռ խաղաղութեամբ զօրովք քովք յամիս յայսմիկ 'ի տեղի քո. զի տեսանեմք զհովանութիւն ձեր և ահա ոչ կարէք տոկալ 'ի հասանել ամառնային տապախառն աշխարհին Ասորեստանի, որ է թագաւորանիստ Պարսից առ գետովն մեծ որ է Տիգրիս. և 'ի գալ միւս ամին և 'ի նուազել ամռոցն ջերմութեան վաղվաղեսցես եկանել այսրէն, զի կատարեսցուք զկամս մեր. և

ես ոչ դադարեցայց ողորել ընդ Թագաւորին Պարսից. և փառնգեալ նեղացուցից զաշխարհս և զծառայս նորա. և այնչափ հնարեցից խոհեմութեամբ՝ մինչև յիւրոցն վճարեցից։ Եւ եղև իբրև լուան բնակիչք քաղաքին զչքանել փառնել նոցա, առեալ հպարտացան յանձինս իւրեանց և սկսան ըղպատձառ կորստեան իւրեանց զնադն խաղալ՝ բերէին դղում մի մեծ, նկարէին 'ի վերայ նորա զպատկեր Թագաւորին Հոնաց կանգուն մի յերկայն և կանգուն մի 'ի լայն. և զանգի արտեւանաց աչացն յօտ մի ծրագրեալ, որ ոչ կարէր նշմարել. և զանգի մուրուացն լերկս ժայռհս. և զանգի շնչաւոր քթիցն Թիզ մի լայն Թուով մաղից պէրեւէշակէց, զոր Թէ ոք կարէր ձանաչել։ Եւ բերեալ եդեալ 'ի վերայ պարսպին յանդիման նոցա՝ աղաղակէին առ զօրսն և ասէին. «Ահաւասիկ կայսր Թագաւոր ձեր, դարձարուք երկրպագէք սմա՝ Ձերու Խաքան է սա»։ Եւ առեալ գեղարդ 'ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանեցուցեալն 'ի պատկեր նորա։ Նոյնպէս և զմիւս Թագաւորն ձաղէին, ծաղր առնէին, այպանէին, պիղծ և արուագեղծ կարդային։ Զայս տեսեալ և լուեալ Թագաւորացն՝ քինանային, փքանային, ոխս մԹերեալս ժողովէին 'ի սիրտս իւրեանց, շարժէին զգլուխս և մեծաւ նզովիւք նզովէին զանձինս իւրեանց, Թէ և ոչ հողի մի ապրեսցի յամենեցունց, որք են ընդ Թագաւորութեամբ նոցա, մինչև խնդրեսցի վրէժ նախատանացն այնոցիկ, զոր ձաղեցան նոքա 'ի նոցանէ։ Եւ դարձուցեալ զերեսս իւրեանց՝ նովին ապանալիօք գնացին։

## ԳԼՈՒԽ ԺԴ

### Գալ զօրացն Հեռաւեայ յօգնել Հերակլէ·

Ընդ այսու հետև յամին երեսներորդի վեցերորդի Խոսրովու՝ եղ 'ի մտի իւրում կայսրն Օգոստական Հերակլ, թէ զհետ արդեօք կարասցէ բռնել յանհնարին տանջանացն և 'ի նախատանաց։ Իսկ ընդ այն ժամանակս միաբանէր առ իւր զամենայն տունն Հռոմայեցւոց, զօրս կոչել յօգնականութիւն, խորամանկել զմեծ լեառն Կովկասու, որ փակեալ ունի զկողմանս արևելից հիւսիսոյ՝ բանալ զդրունս Ջորայ, հանել զազգս ազգս բարբարոսաց և նոքօք վանել զԹագաւորն Պարսից՝ զհպարտն Խոսրով։ Յայնժամ հանդերձէր կոչել զոմն 'ի նախարարաց իւրոց՝ Անդրէ անուն, այր հանճարեղ և իմաստուն. առաքէր զնա (առ Հոնս) բազում խոստմամբք անթիւ անհամար գանձուց, զի եթէ ձեռնտու լինիցին ինձ 'ի մեծ նախանձուէս, յանձն առնում և ես լնուլ զպարգևս գաղտնաբարոյ ուխտէր ազգին զխառնորդաց։ Արդ իբրև զայս լսէր յաջորդ արքային հիւսիսոյ, որ էր երկրորդ թագաւորութեանն նորա և անուն իւր Ջեբու Խաքան, և տեսանէր զմեծամեծ պարգևացն խոստմունսն ընդ նմին և առնուլ սպառատակաւ յաւարի զամենայն աշխարհս, որք ընդ հնազանդութեամբ Պարսից արքայի, մեծաւ յօժարութեամբ առնէր ընդ պատասխանին ասելով. «Ես եղէց վրէժխնդիր ընդ թշնամւոյն. ես եկից եկից հասից անձամբ իմով օգնական նմա քաջ զօրօք իմովք. և հանեցից զվրէժ նորա գործովք պատերազմաց, սրով իմով և աղեղամբք՝ որպէս ցանկայ անձն նորա»։ Յայնժամ առաքէր ընդ նախարարին ընդ այնմիկ առ 'ի հաստատել զխորհուրդ պայմանին այնորիկ արս հեծեալս ընտիրս զօրաւորս զօրութեամբ, և աղեղնաւորս կորովաձիգս՝ թուով իբրև հազար մի, որք գնային յանկարծակի ընդ դուռն Ջո-

գայ առ. ոչինչ համարելով զքաղաքապահն և զզօրավարսն Պարսից արքային, որք էին կարգաւորեալ 'ի մեծ դրանն, պա-ցեալք որպէս զարծուիս առ մեծ գետովն Կուրայ, յոչ ոք խը-նայելով որ համանէր ընդդէմ նոցա, ճանապարհ կալեալ ընդ աշխարհն Վրաց և Եգերացւոց, հասին անցին ընդ ծովն մեծ մինչև 'ի պաղատն արքունի. և յանդիման լեալ մեծի կայսերն Հերակլեայ՝ հաստատեն առ միմեանս զերդմունս ըստ իւրա-քանչիւր օրինաց և առնուն 'ի նմանէ զհրաման վասն ելիցն իւրեանց՝ ոչինչ կասկածեալ յումեքէ: Իսկ 'ի մտանել ամին երեսներորդի եօթներորդի առաքեաց թագաւորն Հիւսիսոյ ըղ-խոստացեալ զօրսն պատերազմող, զօրավար կարգեալ զեղբօ-րորդին իւր, որում 'ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ անուն կարգային, որ եկեալ արշաւեաց յամենայն սահմանս աշխարհիս Աղուանից և ընդ մտանելն Ատրպատականու և մաշեաց 'ի սուր սուսերի զբազում անձինս քրիստոնէից և հե-թանոսաց. իսկ զթիւ նոցա որք գերեցան 'ի նոցանէ ո՞ կարի-ցէ հասու լինել կամ ընդ գրով արկանել: Եւ բնակեալ նո-ցա առ գետովն Երասխայ՝ առաքէր 'ի ձեռն պատգամաց առ մեծ թագաւորն Խոսրով, յայտ առնելով զմիաւորելն իւր ընդ կայսերն և զգալն յօգնականութիւն նմա: Եւ էին պատճէնք պատգամացն առ միմեանս այսպէս. «Եթէ ոչ դարձուցանես զերեսս քո 'ի թագաւորէն Հռովմայեցւոց և թողուս 'ի նա զամենայն աշխարհս և զքաղաքս, զոր առեր բռնութեամբ քով, և յուղարկեսցես զամենայն գերեալսն յերկրէ նորա, զայս այժմիկ ունիս ընդ ձեռամբ քով հանդերձ փայտի Խաչին, զոր ամենայն ազգք քրիստոնէից երկրպագանեն և փառաւո-րեն. և կոչեսցես արտաքս քան զսահմանս նորա զամենայն զօ-րս քո, այսպէս ասէ արքայն Հիւսիսոյ, տէրն ամենայն երկ-րի, թագաւորն քո և ամենայն թագաւորաց, հաստատեցից և ես զերեսս իմ 'ի վերայ քո՝ կուտակինդ Ասորեստանեայց, և փոխանակ միոյ չարեացն, զոր ընդ նմա անցուցեր՝ կրկին հա-

տուցից քեզ. և խաղացից ընդ ամենայն սահմանս քո սրով իմով, զորօրինակ խաղացեր դու սրով քո 'ի սահմանս նորա։ Նա ոչ թողացուցից զքեզ և ոչ յամեցից առնել ընդ քեզ ըստ բանից ըստ այդմիկ, զոր խօսեցայ ընդ քեզ»։ Յայնժամ իբրև լուեր զայս ամենայն մեծ թագաւորն Խոսրով՝ յարուցեալ իբրև զհեղեղ անհուն, կամ որպէս առիւծ ընդդէմ որսորդաց և իբրև արջ որդեկոտոր՝ այսպէս և նա, թէպէտ միաբանեալ 'ի վերայ իւր տեսանէր զյոլովս, սակայն ըստ խորագիտութեան իւրոյ ոչ յայտնէր զերկնչելն և զդողելն իւր յերեսաց նորա, այլ հպարտութեամբ և մեծաւ սաստիւ առնէր պատասխանի։ «Երթ ասա թագաւորին քո և եղբօրն իմում Խաքանայ, եթէ 'ի վաղնջուց հետէ 'ի նախնեացն իմոց և յինէն մեծարեալ և պատուեալ էր տունդ ձեր՝ իբրև եղբօր մերոյ սիրելւոյ, վասն որոյ ուտէաք և ըմպէաք ընդ միմեանս պատուաստեալ էաք 'ի խնամութիւն։ Արդ ոչ էր պարտ և արժան քեզ թողուլ զանդամս քո և խառնել 'ի բանս ծառային իմոյ կործնին Հոռմնեցւոց»։ Իսկ կայսրն Հերակլ առեալ զզօրս իւր՝ դիմեաց 'ի կողմանս Պարսից և յամառեալ պնդեալ հասանել ջանայր 'ի դուռն Պարսից արքային. որ իբրև եաես թէ և այնպէս ոչ վճարեցաւ, այլ համարձակեալ դիմեալ գայ 'ի վերայ նորա, փախստական դնայ առաջի նորա և անկանի 'ի բուռն թագաւորանիստ իւր 'ի մեծն Տիզբոն, և զպատերազմական զօրս իւր, որք էին փոքր 'ի շատէ մնա առինքն ժողովեալ՝ կազմէր առաքէր ընդդէմ կայսերն և յօժարեցուցանէր զնա բազում մեծարանօք և կարասեօք, որ վկայեալ էր 'ի դրան նորա՝ փոխէր յայլ զանուն նորա և Խոռվեհ անուանէր, հրապուրելով մեծէր հարկանէր զնա ընդդէմ ալեացն և զօրավար զօրուն առաքեցելոյն 'ի նմանէ զնա կացուցանէր. որ վասն երկիւղի հրամանի նորա ակամայ կամօք յանձն առնոյր, այլ ինքն զինէր զպարտոսին յանկարծամղով տիոր զօրուն Խոսրովու առաջի կայսերն։ Առաքէր միանգա-

մայն և երկիցս և չորրորդէր գրով զգուշութեամբ առ Թագաւորն Խոսրով և ասէր, եթէ «Ոչ միայն վասն մահուան իմոյ, այլ վասն կորստեան զօրաց քոց յառաջագոյն ծանուցից քեզ, զի եթէ ոչ փութանակի յաւելցես ինձ զօրս 'ի թիկունս, ես ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ· բայց ապա գիտասջիր»: Այս անդէն հրամայէր թագաւորն Խոսրով գրել բդպատասխանին, եթէ «մի երկիցես յերեաց նորա, այլ մարտիր և յաղթեա»: Իսկ 'ի վերջնում նուագին յայտ խրոխտացեալ գրէր առ նա ասելով, «զի եթէ յաղթել ոչ կարասցես՝ իսկ մեռանել ընդէ՞ր ոչ»: Տեսեալ նորա զհրամանն զայն խիստ՝ վերացուցեալ զձեռս իւր հանդերձ զօրօքն յարեգակն և 'ի լուսինն, աղաղակեաց մեծաձայն և ասէ. «Աստուածք իմ, դատ արարէք ընդ իս և ընդ թագաւորն իմ անողորմ»: Եւ մտեալ 'ի պատերազմն՝ անկեալ առաջի զօրացն Յունաց ինքն և զօրքն իւր, և եղեն իբրև զփոշի, զոր տանի մրրիկ: Արդ իբրև լուան նախարարքն Պարսից զայն ես բեկումն մեծ, որ եղև զօրացն Պարսից, սկսան քրթմնջել ընդ միմեանս և ասեն. «Մինչև յե՞րբ հասեալցեն վտանգք արեանցս 'ի անդես անդես պատերազմաց անձանց Արեաց աշխարհիս. մինչև յե՞րբ իցեմք յահի և 'ի գողութեան արիւնահեղ թագաւորիս. մինչև յե՞րբ ժողովեսցեն ինչք մեր և ստացուածք, ոսկի և արծաթ 'ի գանձս արքունի. մինչև յե՞րբ սպանեալ կայցեն և կապեալ կիրճք ճանապարհաց յարգելուլ զշահս աշխարհաց կողմանց կողմանց. մինչև յե՞րբ սարսեալ թափեալ կան հոգիք մեր յանձանց մերոց յահագին հրամանէ նորա. ո՞չ ապաքէն սպառեաց եկուլ զնախ ընտիր ընկերս մեր առաջնորդս աշխարհաց. ո՞չ ապաքէն բազում եղբարք 'ի ժամանակս ժամանակս երամ երամ գաւք գաւք 'ի պէսպէս սանջանս հրամանաւ նորա վճարեցան, և մնանք խորտակեալ իսկ եղեն. ո՞չ ապաքէն զայր 'ի կնոջէ, և բդհայր յորդւոյ եհան բաժանեաց յազգս հեռաւորս 'ի ծառայութիւն և յաղախնութիւն և 'ի գումարտակութիւն ընդ

երեսս չարաչուք թշնամեաց»։ Զայս և նման սորին բազում շնչէին զնմանէ. այլ ոչ ոք իշխէր համարձակապէս խօսել ինչ՝ մինչև լցաւ ժամանակ կատարածի կենաց նորա։ Ապա յարեաւ ոմն ՚ի հաւատարիմ ընտանեաց նորա նախարար մի՝ դայեակ անդրանկանն Խոսրովու, որ Կաւատն կոչիւր. խորհուրդ արարեալ ընդ նմա՝ եթէ բառնալ զյիշատակ հօրն Խոսրովու և զբազմութիւն եղբարց իւրոց և եւս զթագաւորութիւնն։ Հնարելով և առաջնորդելով դայեկին իւրոյ, հրապուրեաց պղտորեաց զմեծայարմար կարգս բնակչաց դրանն Խոսրովու և խոտորեաց յանկարծակի զսիրտ ամենեցուն ըղձեա սանուն իւրոյ՝ Կաւատայ, առ ՚ի թագաւորեցուցանելոյ զնա փոխանակ հօր իւրոյ։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Սպանումն Խոսրովու.

Բայց անսացէք ինձ սակաւիկ մի, և պատմեցից կարճառօտիւք զխորագիտութիւն առն, եթէ զինչ կամ որով օրինակաւ կարաց արգելուլ ՚ի զառագեղն մահու զահեղ որսորդն՝ զառիւծն արևելից, յորոյ ՚ի դոչելն միայն ազգք հեռաւորք դողային և մօտաւորք յերեսաց նորա իբրև զմոմ հալեալ պակասէին։ Նա այնպէս ՚ի վայրկեան ժամանակի դողացուցանէր զամենեցուն սիրտս, և յարեաւ ՚ի վերայ նորա իբրև յորդոյ միոյ և առնելով զայս ամենայն, ոչ զայլ թագաւոր և իշխան ՚ի թիկունս կոչէր, ոչ զազգս և զլեզուս հեռաւորս զօրավիգն օգնականութեան սանուն իւրոյ ընդդէմ հօրն պատրաստէր, այլ առաքէր միայն ծածկաբար առ կայսրն Հերակլէս զնենգանալ նմա անդէն, ուր էին զօրքն իւրովք հանդերձ՝ առուրս ինչ։ Եւ հրամայէր գրել հրովարտակս յերեսաց Կաւատայ առ մեծամեծս և առաջնորդս գնդից գնդից մեծի դրան թա-

գաւորութեանն Պարսից. «եթէ բարձաւ 'ի հօրէ իմմէ և ինձ տուաւ իշխանութիւն թագաւորութեանս. պատրաստական լերուք սակաւ ինչ հեծելովք»: Եւ կացուցանէր զնոսա առ խելս կամրջին Տիգրիս գետոյ՝ ըստ վէհ Արտաշիր քաղաքի յանդիման գրանն Տիզբոնի, ուր էր հայրն նորա Խոսրով պահպանեալ մերձակաց զօրօքն իւրովք: Եւ քարոզն մեծաբարբառ աղաղակէր յաջմէ և յահեկէ Կաւատայ և ասէր. «Ո՞վ է մարդ, որ սիրէ զկեանս և կամի տեսանել զաւուրս իւր 'ի բարութեան, փաղփաղեսցէ ընդ առաջ նորոյ թագաւորութեանս Կաւատայ, զի սա է արքայից արքայ»: Եւ բացին զդրունս Անյուշն բերդի. և յախուռն կոչէր արտաքս զամենայն կալանաւորս արքայից՝ 'ի բազում ժամանակաց արգելեալս 'ի տուեալս մահու, անթիւ բազմութեամբ յոյժ յոյժ և ասէին ցնոսա. «Ելայք եկէք թշուառականքդ արտաքս 'ի Խոսրովայ, զի ձեզ բացան դրունք կենաց 'ի նորընծայ թագաւորէս՝ յորդւոյ նորա Կաւատայ»: Եւ բեկեալ իւրաքանչիւր ուրուք զշղթայս իւր՝ զիմեցին առ հասարակ արտաքս: Եւ եդանէր ձայն գոչելոյ օրհնութեան նոցա յերկինս, որք օրհնէին զԿաւատ և ասէին. «Արքայ՝ յաւիտեան կեաց». և միխեալ յմտանիր ընտիր երիվարս՝ ասպատակէին 'ի վերայ Խոսրովու. շղթայք իւրեանց 'ի ձեռս իւրեանց հեծեալք արշաւէին յայսկոյս յայնկոյս, արհամարհելով զԽոսրով: Այս և բազումք 'ի գնդից գնդից՝ 'ի գունդապահաց և 'ի թիկնապահաց, և յանուանեալ գրանն Խոսրովու՝ առեալ զնշանս գրօշից իւրեանց, զիմեցին առ Կաւատ որդի նորա: Եւ որք մնացին անդրէն 'ի գրանն՝ ճեպէին զնոսա պատգամաւորքն Կաւատայ 'զգուշութեամբ ունել պահել զԽոսրով՝ ապա եթէ ոչ, մահու մեռանիցին: Արդ իբրև լսէր Խոսրով զբարբառ աղաղակին այնորիկ՝ ասէ ցայնոսիկ որ մօտն կային. «զի՞նչ են ձայնք կողմանցն այնոցիկ». և նոքա լռեցին, քանզի պատկառէին պատմել նմա: Եւ խառնաձայնք փողոցն ևս քան զևս սաստկէ-

ին։ Դարձեալ ասէ ցնոսա ոյք մերձն էին. «զի՞նչ են անկարգ հնչմունք բարբառոյդ»։ Եւ նոքա ասեն. «Զանզի կամի թագաւորել փոխանակ քո որդի քո Կաւատ եւ ամենեքին ընթանան առ նա. եւ ահա ձայնատեալ յանդիմանն քաղաքիս առ եզերբ գետոյն, եւ արձակեաց զամենայն կալանաւորս մեծի բանտին զարգելեալսն 'ի հրամանէ քումմէ. եւ ցնծալով ամենեքեան օրհնեն զնա՝ արքայ կարդալով»։ Իբրեւ լուաւ զայս ամենայն աղէտս գուժին, մանաւանդ զարձակումն կալանաւորացն՝ հանէր, հառաչէր, փչէր, վարանէր յանձն իւր. ոչ 'ի նստելն իմանայր եւ ոչ 'ի յառնելն զգայր ամենեւին. քանզի հոսս զզօրն ահագին հասեալ 'ի վերայ իւր։ Եւ ելեալ հեծեալ ընդ դուռն բուրաստանին իւրոյ, գնաց եւ թագեաւ ընդ ծառովք եւ կայր դողեալ թաքեալ ուր նորա 'ի յանկարծ երկիւղէն. եւ զխոշբն աչք իւր վերանայր 'ի վերայ նորա անողորմ սրոյն։ Նոքա եկին հասին 'ի վերայ նորա գունդք ամենայն շուրջ զապարանօքն. եւ զհետ մտեալ խնդրակքն՝ գտին զնա 'ի տեղւոջն, ուր նստէր փարատեալ. եւ ածեալ զնա արտաքս քան զպարիսպն՝ մածին 'ի սրահ մի, զոր Քաստակիհնդուկն կոչեն՝ յապարանս Մարտապանդ կոչեցեալ։ Եւ իբրեւ եմուտ սուգեաց զանձուջէն եւ զամուսնաւանդէն, բախեալ զկուրծս՝ հեծելով ասէր. «Վա՜յ ինձ, եղո՜ւկ եմ ես, ո՞րպէս հրապուրեցայ 'ի կախարդացն, որք բղձային ինձ 'ի Հնդիկս՝ Մարտապան տեղւոջն ընթանեալ։ Եւ արդ ահա եհաս ինձ ըստ բանի նոցա ցնորք, այլ ոչ ճշմարտութեամբ»։ Եւ պահեալ զնա առ այն օր՝ 'ի փակեալ բանտին սրով զգլխին, բարձեալ զչարն 'ի միջոյ։ Նոյնպէս եւ զեղբայր իւր Կաւատ արքայ յաւից եւ 'ի ձեռաց անդփառնս արարեալ՝ կամէր խեղութեամբ չարչարել նոցա կեանս. ապա յամբաստանութենէ բազմաց բարձան եւ նոքա սրով։ Եւ ինքն կալաւ զանգի Խոսրովու հօր իւրոյ թագաւորութեանն։ Եւ էր բարեխառն ողորմած առ ամենայն աշխարհըս եւ առ ծառայս իւր. արձակեալ յեւ բարձանելու տեղիս զա-

մնոյն կալանաւորս, որք էին 'ի գերպահոջ դրան հօր իւրոյ՝ գրեալ հրովարտակս ընդ ամենայն աշխարհս թագաւորութեան իւրոյ՝ ցնծութեամբ և ուրախութեամբ կեալ ամենեցուն: Նա և զամենայն հարկս և զմաքս արքունի երկամեայ ժամանակաւ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեան շնորհեալ ամենեցուն. նա և ջանայր առնել, զի մի ոք կարկեցէ զաւր իւր յաւուրս իւրում զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ: Եւ քանզի վիրաւորեալ էին զմեզ մեղք մեր՝ անաւրանչ անկարգ ժամանակօք, ընդ նմին կորեան խորհուրդք նորա, կարծեցաւ կէս կենաց նորա և անցեալ ամիս եօթն՝ յաւելաւ առ հարս իւր հայրապետն այն. քանզի բառնալոց էր թագաւորութիւնն 'ի տանէ Ռուբինեանցն, և տալ 'ի ձեռս որդւոյն Լուսինեանն:

## ԳԼՈՒԽ ԺԳ

Յաղագս Վկայի աշխարհաշէն հոգևորականութեան Ալեքսիոյ, և մեծամեծ վերակացութեան և Ատոքեայ խնամոց.

Այս 'ի գտանել ամենեցուն զթողութիւն յանցանաց իւրեանց 'ի նորընծայ թագաւորէն Կոստասայ՝ շնորհելով զմեղս և պարգևս՝ կարի իմն ախորժելի թուէր կալանաւորացն և այնոցիկ, որք 'ի գերպահոցսն էին պահեալ 'ի մեծի դրանն և որոց մոռացեալ էր զոյս իւրեանց դառնալ յիւրաքանչիւր աշխարհս և յերկիր ծննդեան: Որք փութանակի յուղարկէին 'ի հրամանէ նորա՝ մեծաւ փափագանօք գնացին 'ի տունս հայրենի: Ընդ որս էր և կաթողիկոսն մեծ իշխանութեան Աղուանից, Վիրոյ անուն նորա. այր հանճարեղ և իմաստուն, զօրաւոր 'ի բանս իմաստութեան, և լեզու նորա իբրև գրիչ երագագրի 'ի պատմութիւնս խօսից խորհրդականաց և 'ի մըտաւոր խօսս թագաւորաց և մեծամեծաց: Նաև խոնարհա-

խոստումն նորա քաղցրալուր ռամկաց և խառնիճաղանճ ժողովրդոց, որ երկայնէր զխօսս իւր համեմատեալ ընդ ճառս իմաստնոց և ընդ առակս նոցա: Հնարէր յօրինէր զառակս բանից իւրոց, զորօրինակ զմարգարիտ յակն յեռուցու՝ մանաւանդ 'ի թարգմանութեան լեզուին Պարսից վարժեալ զամս քսան և հինգ 'ի գլխաւորոջ առ դրանն Խոսրովու՝ յանցական գտեալ ընդ ապստամբողս մեծամեծաց իշխանաց աշխարհին Աղուանից, որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան անկան բազումք 'ի նոցանէ՝ ոմանք 'ի սուր, ոմանք 'ի խեղդութիւնս անդնդոց և ոմանք տարագրեալք յաշխարհս հեռաւորս: Իսկ նա փախստեայ անկանէր 'ի դուռն արքունի, և յաջողեցաւ առաջի նորա. զի շնորհք սրբոյ նշանի նորա յորդեցին նմա ճանապարհ 'ի դուռն թագուհւոյն, որ մեծաւ ջանիւ կարաց գտանել 'ի պարգևի զկեանս նորա 'ի թագաւորէն: Բայց մեծաւ երդմամբ հաստատէր յանձն իւր թագաւորն վասն նորա՝ յամս կենաց իւրոց ոչ դառնալ նմա յերկիր իւր. այլ կալ նմա 'ի գլխաւորոջն առ դրանն: Նա ոչ արգելոյր 'ի նմանէ զհաստ իշխանութեան աթոռոյ նորա և ոչ զանուն կաթուղիկոսութեան երբեք 'ի նմանէն. այլ պահէր զնա իբրև զանօթ ինչ ընտիր և խնայէր 'ի նմա իբրև յերիվար քաջընթաց յօր մարտի և պատերազմի, մինչև մերձեցաւ ժամանակ պանդխտութեան նորա և եհաս երկունք հարուածոց անողորմ տանջանաց 'ի ձեռն չար թշնամեաց աշխարհիս Աղուանից: Նա առաքէ զնա Աստուած որպէս երբեմն զՄովսէս 'ի Մադիամայ, զի եկեալ կորզեսցէ հանցէ 'ի ձեռաց արուատապան և իգաչար ազգին առ 'ի բուծանել զաւակ 'ի վերայ երկրի զաւակս մնացելոյն՝ մի յազգէ և երկու 'ի քաղաքէ: Արդ իբրև ել նա յարքունուստ և եկն 'ի սահմանս ծննդեան իւրոյ, փարէր անկանէր ամենայն ուրեք զդրամբք և բդյատակօք եկեղեցեաց իւրոյ վիճակին. հեղոյր յորդէր զարտասուս եկլինեալ զծունր՝ թանայր զգետինն, և դարձեալ 'ի

յառնելն քաջալերէր զնոքն և մխիթարէր զօրս ընդ նիզեան էին՝ գոհանալով զԱստուծոյ, որ եղերծ զնա ՚ի ժանեաց առիւծոյն և շնորհեաց նմա տեսանել միւսանգամ զպարկս սըրբոց եկեղեցեաց. և խորհէր հանգչել սակաւ մի և լնուլ զանձուկ սիրոյ խանդաղատանաց իւրոց բազմաժամանակեայ հեռաւորութեանն: Բայց առաջի կայր նմա սուգ անհնարին և քրտունք տեսանելոյ զկործանումն, որ ընդհուպ լինելոց էր: Զի մինչդեռ սփռեալ էր զանձուկ սիրոյ իւրոյ ՚ի տեղիս տեղիս մանկանց իւրոյ՝ անկարծակի երկրորդեաց հնչեաց հողմն հիւսիսային և բախեաց զծովն մեծ արևելեան. եկն և գազանն ապականիչ հանդերձ արիւնարբու կորեամբն իւրով՝ Շահն կոչեցեալ, որ նախ հատանէր զերեսս իւր ընդդէմ Վրաց աշխարհին՝ քաղաքին Տփխեաց. և ոչ զոք գտեալ ՚ի նեղքս յառաջին քաջ արանցն, անդէն գտեալ սփռելով զոխան մթերեալս սակս առաջին նախատանացն ՚ի նոցանէ, պաշարեաց զքաղաքն և սկսաւ մարտնչել: Նեղէր զբնակիչսն որ ՚ի նմա, որք դարձան ընդդէմ նորա. և յայժ աշխատեալք որպէս յաւուրս երկուց ամսոց, ՚ի զուր ջանացեալ ընդդէմ հրամանի կատարածի կենաց և հեղման արեան իւրեանց, որ անդ էր դիպելոց: Յայնժամ գոչեաց գազանն ահագին ՚ի վերայ նոցա, որոտացաւ և հեղձոյց բռնակաւն կորեանց իւրոց, եկեց զմօրիս իւր որսով և զզօրս իւր յափշտակութեամբ, որք փերացուցեալ զուրս իւրեանց առհասարակ զխնցին ՚ի վերայ պարսպին, ուր զմխեալք դիզանալով այնչափ բազմութեամբ՝ վերանային քան զպարիսպն գեր ՚ի վերոյ: Նա անկանէր սաստիկ խաւարայն ՚ի վերայ եղկելի բնակչաց քաղաքին՝ լուծան յօդք անդամոց նոցա, թուլացան բազուկք նոցա, մատնեցան ՚ի պարտութիւն, անկան յետս ՚ի պարսպէն՝ խուճապեալք որպէս ծննդուկք ըմբռնեալք ՚ի գործիս որսորդաց, ոչ ոք կարելով ժամանել ՚ի տուն իւր՝ ձայն տալ ահագին դուժին, հրամայել սիրելւոյ ամուսնոյ իւրոյ զթալ ՚ի ծնունդս որովայնի

իւրոյ, կամ զմասն ածել ծնողաց զծնողական գութս. այլ պա-կուցեալք ջանային ծածկել զանձինս իւրեանց ոմանք 'ի վերայ տանեաց, ոմանք 'ի մէջ խողովակաց. իսկ բազումք դիմեցին 'ի սուրբ յարկս եկեղեցեաց՝ բուռն հարեալ զեղջերաւ սեղա-նոյն: Այլ եղանէր գոչիւն հառաչման նոցա ըստ նմանութեան բազմամբոխ հօտից մաքեաց առ դառինս, կամ մօր առ մանուկ իւր. և զհետ նոցա հնձողք անողորմք: Որոց ձեռք իւրեանց հեղուին զխառն արեանց, ոտք իւրեանց կոխէին զգլխակոտս և աչք իւրեանց տեսանէին զգլխաթաւալս իբրև զհեղեղս կարկ-տի: Այլ յորժամ հատան ձայնք ողբոց և փղձից, և ոչ մնաց ապրեալ և ոչ մի, ապա զխուցեն և նոքա, թէ յաղեցան սուրք նոցա: Այլ ածեն զերկուսին իշխանսն՝ զմին պետ կաթողիկոսու-թեանն Պարսից, և զմիւսն՝ իբրու բնակչաց աշխարհին Արաց, որք իբրև ածան ձերբակալք առաջի թագաւորին, հրամայեաց փորել զաչս նոցա: Փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նո-րա 'ի նախատել զնա. և դառն չարչարանօք հեղձամահ արա-րեալ զնոսա ողջէն՝ փորեցին զմորթ նոցա յանդամոց նոցա և ապրեալ կանգնեալ լցեալ զնոսա խոտով կախեցին 'ի վերայ դարպասէն: Յայնժամ ձեռս արկին յարկեղս գանձուց մթե-րեալս՝ և ծանրաբեռնեալ ամենայն բազմութեան զօրացն, ըն-թէին զհետ առաջի բռնաւորին իւրեանց շեղջս շեղջս և կոյ-տս կոյտս. և այնչափ յաճախեալ բերէին առաջի նորա, մին-չև ձանձրացեալ հայել տեսանել զանհամար թիւ աւարանաց ոսկւոյ և արծաթոյ: Իսկ զզարդս եկեղեցեաց զսպասականս բը-մարգարտայեն սպասուցն ո՛վ լցէ բաւական առ 'ի պատմելոյ:

Արդ իբրև կատարեաց նա զկամս իւր և հրամայեաց բառ-նալ անտի զաւարն ամենայն, ինքն չուեալ հանդերձ գանձի-քն դառնայ 'ի տեղի իւր: Այլ թողեալ զզօրս պատերազմողս 'ի ձեռս որդւոյն իւրոյ Շահթայ հանդերձ դաստիարակօք ա-րանց քաջօք՝ երթալ հրամայէր 'ի սահմանս Աղուանից, և պատուիրէր նոցա զայս ինչ. «Եթէ եղեն մեծամեծք և ա-

առաջնորդք աշխարհին ընդ առաջ որդւոյն իմոյ և տացեն 'ի ձեռս զաշխարհն իւրեանց ինձ 'ի ծառայութիւն, և ընդարձակեսցեն զքաղաքս և զամրոցս իւրեանց և զվաճառս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և դուք նոցա կեալ և ծառայել ինձ. ապա եթէ ոչ, մի խնայեսցէ ակն ձեր 'ի նոսա յամենայն հասակ արուի. և զմատաղատունկս արուացն և զայգս իգականացն պահեսջիք ինձ և ձեզ 'ի ծառայութիւն և յաղախնութիւն»: Եւ մեկնեալ 'ի միմեանց զօրացն՝ արարին բաս բանին բաս այնմիկ: Եւ ապա եկին հասին 'ի Հրամանեալսն: Յայնժամ առաքէր (Շահթ) պատգամս ըստ բանի հօրն իւրոյ առ կուսակալ իշխանն Պարսից, որ էր մարզպան Եղուանից աշխարհիս՝ Ալեմս Վշնաս անուն, և առ նոյն կաթուղիկոսն Վիրոյ, զոր վերագոյն ասացաք: Եւ ոչ առեալ յանձն Պարսկին՝ «Ո՛չ ես, ասէ՝ և ուստի, տո՛ւր Եղուանից, զի եղից ես փոխանակ դոցա զանձն իմ ընդ հրամանաւ ընդ այդուիկ»: Եւ առեալ զաղխն իւր ընդ իւր՝ յափշտակեալ և զբազումս ինչ յաշխարհէս տարի՝ զերծաւ գնաց անկաւ 'ի կողմանս Պարսից: Իսկ հայրապետն Եղուանից Վիրոյ որպէս լուաւ, եթէ եհաս լուծ ծառայութեանն 'ի պարանոց իւր միայն, փարանէր յանձն իւր, կակածէր, երկնչէր 'ի Պարսից թագաւորէն: Բանզի վասն նորին իսկ անուան ապստամբութեան պանդխտացեալ էր նա յօտարութեան յաքսորս 'ի բազում ժամանակս. և անտաղ պատգամացն և կալ առաջի Թըշնամւոյն վասն բեկման և կորստեան աշխարհիս կամէր յանձն առնուլ: Եւ ապա ըստ խորագիտութեան իւրում գրէր թուղթ 'ի ծածուկ առ թագաւորն Պարսից զապառնալիս թշնամւոյն. զի եթէ ներեսցէ թագաւորն, հաճեսցէ անդամ մի զմիտս թշնամւոյն իւր առաջի կալով, ապա թէ ոչ, զի 'ի բաց գնասցէ յաշխարհիս սահմանաց: Եւ մինչդեռ նա ակն ունէր պատասխանւոյ 'ի թագաւորէն, կամէր հուպ ունել պահել ըդպատգամաւորսն որք առաքեցան 'ի թշնամւոյն, կալեալ զաշ

նոցա սակաւ արծաթով՝ տանէր բերէր վնասս պատճառս կողգուրելով: Երբեմն ասէր՝ «կոչեցէք զգլխաւոր առաջնորդս ամենայն գաւառաց աշխարհիս, զի միաբանեսցեն և նոքա ընդ իս 'ի պատասխանի հրամանի թագաւորին ձերոյ». և երբեմն ասէր՝ «ոչինչ է պիտոյ յամենայն ինձ բազմացն խորհրդակցութեան. այլ ես ինձէն պատասխանի յօրինեցից ըստ պատշաճի թագաւորին ընծայիւք և ըստ պատուոյ ողջունի թագաւորին ձերոյ»: Յայնժամ սկսան պատգամաւորքն առնել և ասեն. «զի՞ կաս, հի՞մ յապաղես, զի ահա եհաս օրն սահմանեալ ասպատակ սփռելոյ ընդ ամենայն երեսս Եգիպտոսի. յայտնեսցուք ահա քեզ զծածկեալ խորհուրդ իշխանացն մերոց և տեառն մերոյ՝ Շաթայ: Արդ եթէ ոչ կամիցիս առնել ըստ հրամանի նորա, անճապարեա զերծանել փախչել, քանզի գտին անձինք մեր մեծարանս և տուրս 'ի ձեռաց քոց. և երկնչիմք մեք յաստուծոյ մերոյ և չկարեմք նենգել և տեսանել թէ՝ մեռցին ձեռք բազմութեան զօրաց մերոց 'ի ձեզ և 'ի մերձակայ բնակս և 'ի ժողովուրդս քո»: Մինչդեռ նոքա զայս խօսէին, յանկարծակի պատեաց մէգն և մառախուղն զամենայն երեսս երկրիս մերում առ հասարակ, զգաշտս և զգլուխս լերանց, զբլուրս և զձորս ձորոց, և ոչ ուրեք մնաց քայլ մի ոտին յամենայն սահմանս երկրի մերում, 'ի շէնս և յագարակս, 'ի տունս և յանցս ճանապարհաց. բերան ամենեցուն կարդայր վա՜յ, վա՜յ: Գոչիւն բարբարոսացն ոչ լսէր. և չէր՝ ուր ոչ եկանէր սատակիչ բարբառ չար թշնամեացն, և այն 'ի միում աւուր և 'ի միում ժամու: Քանզի բաժանեցին յառաջագոյն վեճակս ըստ գնդից գնդից զգաւառս և զշէնս, զհեղեղատս և զգետս, զաղբիւրս և զձորս, զլերինս և զգաշտս՝ յամենեսին միապէս ըստ ժամադրին սփռեալ զասպատակն աշխարհակուլ. և 'ի ծագաց մինչև 'ի ծագս գաւառին սահմանք մեր: Արդ այնուհետև անդ էր տեսանել նմանապէս կատարել բարբառոյ մարգարէին. «Եթէ զորօրինակ

փախնուցու մարդ յերեսաց առիւծու և պատահեսցէ նմա
արջ. և զերծեալ 'ի նմանէ՝ մտանիցէ 'ի տուն իւր և յեցու-
ցեալ զձեռս իւր յորմն՝ հարկանիցէ զնա օձ»։ այնպէս հա-
սին 'ի վերայ մեր աւուրքն այնոքիկ։ Ձի յերեսաց որոյ, որ-
պէս յաւհեղ առիւծէ 'ի մազիլ գիշատչ բեկանող արջոյն
'ի ժանիս սոսկյն մատնէին. 'ի միասին լքեալք, յօդալոյծք,
սոսկաբեկք, ակամայ դիմեալք 'ի գերութիւն՝ որպէս 'ի չարու-
թենէ օձից 'ի յաւհէ տեւեան դառնաշունչ թշնամւոյն խա-
ծանէին։ Ոպս 'ի ծածկել զմեզ ծովային ալեացն այնոցիկ՝ ըղ-
հեա մնեալ կաթուղիկոսին մերոյ, հանին զնա 'ի տեղւոջէ ա-
պառաժ վիմայատակ լերանցն 'ի գեղջն, որ կոչի Կողթ ագա-
րակ, և թողեալ նորա զկահ և զկարասի իւր և զսպաս զան-
ձուցն՝ հեծեալ 'ի ձի փախստական լինէր առաջի նոցա։ Եւ
ոչ ոք կարաց ընդ նմա երթալ 'ի սպասաւորաց իւրոց. բայց
մի ոմն յազատաց աշխարհիս՝ անուն նորա Գուրգ Վըշ-
նասպ, այր յաղթանդամ և զօրեղ 'ի տոհմէ գնդապետու-
թեան ազգին իւրոյ, նա միայն ժամանեաց երթալ ընդ նմա։
Եւ ոչ արգելին զարշաւանս թշնամւոյն վիմախառն ձորախիտ
ապառաժք լերանց Արցախական ամուր գաւառացն. այլ գոր-
ծեցին մեղք մեր առաջի նոցա զդժուարինն 'ի դիւրին. ա-
ռանց գայթակղութեան էին գնացք ընթացից երիվարաց նո-
ցա 'ի վերայ գլխոց լերանց. հասին զհետ կաթուղիկոսին թըշ-
նամիքն, լարեցին զաղեղունս 'ի վերայ նորա յիրս դառնու-
թեան։ Յայնժամ սքանչելի շնորհք սուրբ խաչին, զոր ունէր
ընդ իւր, անջրպետեաց 'ի մէջ նորա և թշնամեացն. և ոչ
մերձեցաւ 'ի նա ձեռն յաւուրն յայնմիկ։ Եւ 'ի նախամնալ ա-
ւուր զերծեալքն ուխտիւք նեղբէին զխաւար գիշերոյն առա-
ւել քան զլոյս տունջեան. և 'ի գիշերին յայնմիկ ընդարձա-
կէր ճանապարհն փրկութեան մեծի հայրապետին և ամենայն
աղբերցն։ Եւ կրկնեալ անդրէն հասին պատգամաւորքն թըշ-
նամւոյն, «Թէ արա զայդ և ապրեսցիս դու և տուն քո և ա-

միայն մնացորդք երկրի քո, ապա թէ ոչ՝ հրամայեսցես յենէն ունել ածել զքեզ առ ի սպանման կամօք»: Իսկ ժողովեալ առ ինքն կաթուղիկոսին զամենայն զկղերոս, զորդիս թագաւորազանց և մեծաց աշխարհիս, զգաւառապետս և բդգիւղապետս, զերիցունս և զաւրկապետունս, և զգեղս, որք 'ի ժամուն անդ հանդիպեցան յաժողին Զարարերդոյ, և ասէ ցնոսա. «Արք եղբարք՝ դուք ինքնին գիտէք զհարուածս մեծամեծս, զահ և զզողումն անյագ և անողորմ սրոյն, որ վասն մեղաց մերոց առաքեցաւ մեզ և ընկղմեաց յանկարծակի զանձինս մեր, և ահա եմք 'ի տարակուսանս և ոչ գիտեմք յո՛ երթիցուք, կամ ո՛ւր փախիցուք յերեսաց նորա: Իսկ արդ՝ եթէ արասցուք ըստ կամաց նոցա և եթէ ոչ, անկայն օր մահուան մերոյ 'ի ձեռս նոցա յամենայն ժամ նկարեալ է առաջի աչաց մերոց. ես անասցից տեսանել զօղուտն ձեր խորհրդոյն՝ վաղվաղակի արարէք ինձ պատասխանի. առնելէ զես եկեալ պատգամն, և առ ոչ 'ի ումեք, այլ նախարար 'ի զօրքս թշնամեացն, և հաստատեալ դայեակ և դաստիարակ թագաւորութեան Հալթայ»: Իբրև զայս խօսեցաւ՝ ձայն բարձին միաբան և ասեն. «Ընդէ՞ր խօսի տէր մեր ըստ այդմ բանի այգանել զթշուառացեալ անձինս մեր: Իսկ արդ դուցէ՞ որ 'ի մէնջ իմաստագոյն քան զքեզ՝ ճանաչել զիմաստութիւն և զխրատ, կամ համարձակեսցո՞ւք առաջի քո խօսել զբանս համաճարոյ: Արդ եթէ երկայնամնեացէ մեզ մարդասէրն Աստուած, մի յապաղեր որպէս հովիւ քաջ դնել զանձն քո 'ի վերայ մեր, վասն որոյ և մեք ըստ կարի մերում դիցուք զանձինս 'ի վերայ քո»: Յայնժամ ասէ ցնոսա. «եթէ միայն Տէր հաճեսցի, ես ոչ զանգիտեմ յերկիւղէ նոցա: Բայց դուք զայս արարէք զոր ասեմ ձեզ. իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ ըստ կարի իւրում բերցէ արծաթ և ոսկի և հանդերձս. և մի ագահեսցեն սիրտք յինչս ձեր, զի կարասցուք ցածուցանել զերեսս նոցա պատրաստք»: Յայնժամ բերեալ յօժարութեամբ ամե-

նեցուն առաջի նորա. ապա եհան և նա բազում ինչ 'ի գան-ձուց իւրոց, որ ինչ պատշաճ էր 'ի պատիւ յընծայ նոցա պար-գևաց: Եւ զեկեալն առ ինքն զզաւակ արքայորդւոյն Հար-ցեալ, և ստուգեալ 'ի նմանէ զանուանս մեծամեծաց և իշ-խանաց, նախարարաց և զօրավարաց, և պետաց ցեղից ցեղից ամենայն զօրուն ըստ առաւելութեան և ըստ խոնարհութեան նոցա, զի գիտասցէ պատուել կարգաւորն: Եւ այսպէս բա-ժանեալ զինչսն ըստ անուան տոհմից նոցա, և զլով նշանա-կեալ կնքեաց. և հրամայեաց կահաւարից և այլոց բառնալ, և տալ, յոր անուն կային. «Իրաւունս համարիմ ես բաց 'ի խառ-նիճաղանձ ժողովրդոց՝ ձեզ ամենեցուն յայտնի անձանց գալ 'ի բանակ այլազգւոյն, զի հաւատարմագոյն լեցի յաչս նոցա երթեմ իմ ձեօք հանդերձ 'ի հնազանդութիւն նոցա»: Իբրև լուան զայս՝ բազումք յօժարեցան զհետ նորա և սակաւք որ-տարբեկեալ: Եւ թոյլ տուեալ՝ ոչ զոք բռնադատէր, և ասէ. «Քաջալերեցարուք, որդեակք՝ մի երկնչիք. քանզի առաջնորդ է մեր Հոգին ճշմարտութեան և գաւազանն Մովսիսի, չոր-հրք սուրբ խաչին Քրիստոսի առ 'ի հարկանել զայն ծառա-լեալ ծովուն առաջի մեր»: Եւ չուեալ անտի՝ գնաց յառաջ եւանել. և իբրև անցին ընդ ձորս լերանց և թափեցան 'ի գե-ղեցկատես վայելուչ հարթհաւասար յուլթի դաշտն Ուտի գաւառին, ոչ կարէին խմանալ նշմարել զանդէին ընդ որ ան-ցանէին յանթիւ բազմութենէն զօրացն Խ̃աթայ. այլ որպէս երբեմն 'ի մէջ Կարմիր ծովուն, նոյնպէս և սահմանք անթիւ բանակին մինչև 'ի հասանել նոցա 'ի դուռն արքայորդւոյն պարապէին զնա ընդ աջմէ և ընդ ահեկէ: Եւ զոհին զնա բա-նակեալ 'ի նմին գաւառի ըստ հիւսիսոյ կողմանէ մերձ 'ի մեծ քաղաքն Պարտաւ 'ի մէջ յորդարուղի մորաջուրցն: Ընդ-տեսաք զբազմոցս նոցա 'ի գունձ 'ի վերայ ծնդաց ըստ նմանու-թեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց. խորաքանչիւր կանք մի լցեալ մով յանառըր անասնոց, ըստ նմին և սկուտք,

յորում Թամարին յուսալն իւրեանց յաղաջուր, և զբամակս և զմոմկալս արծաթեղէնս քանդակուն յակի Հնդկաց, զորս բերեալ էին յաւարէն Տփխիսայ. ընդ նմին և զմկոյս եղ-ջիւրեղէնս և զշորամանձևս փայտեղէնս մեծամեծս, որով զար-գանակն լափէին. և նովին պարարտական սաղցց անլուայ աղ-տիւքն՝ յարխուռն յանգգայս, 'ի միոյ բաժակէ՝ երկու երկու կամ երեք երեք 'ի նոցանէ զանապակ գինին, կամ զկաթն ուղ-տուց և ձիոց յանյագ որովայնս իւրեանց իբրև 'ի տիկս ուռու-ցիկս չափէին: Ոչ օրինաւոր մատուռակք էին առաջի նոցա և ոչ սպասաւորք 'ի Թիկանց կողմանէ, և ոչ անդամ որդւոյ Թա-գաւորին, բայց զինուորք, որք զգուռն նորա պահէին շուր-ջանակի ասպարափակ նիզակախիտ զգուշութեամբ: Եւ իր-րև մուծին զնոսա 'ի ներքս ըստ մի գունապահս մինչև ցերկ-րորդն՝ և զընծայս ող ջունին բարձեալ 'ի բաղկաց մերոց զկնի կաթուղիկոսին, ապա ընթացան ընդ առաջ նորա և հրամա-յեցին ամենեցուն փոխել ամն ամն և երկրպագանել երից ան-գամ. և զայլսն արգելեալ յերկրորդ դրանն և փոխեալ 'ի նո-ցանէ զօժիտսն 'ի բաղուկս իւրեանց, տարան զկաթուղիկոսն միայն 'ի ներքսագոյնն, ուր նստէր ալքայորդին: Եւ 'ի հանդի-ման լինելն երկիր եպագ կաթուղիկոսն 'ի վերայ երեսաց իւրոց և մատոյց նմա զպատարագսն, նոյնպէս և մեծամեծացն ամե-նեցուն: Եւ ընկալեալ 'ի ձեռաց նորա, և յայժ բերկրեալ 'ի տեսանելն զնա հանդերձ բազմութեամբն երթեալ առ նա, նստել հրամայեաց նմա մերձ առ ինքն 'ի խորանի անդ. և հա-յեցեալ ընդ երեսս կաթուղիկոսին իբրև ժամ մի՝ ասէ. «Հայր իմ ես դու, և տեսի քո իբրև զտեսիլ Աստուծոյ. և զի՞ յա-մեցար գալ առ իս, զի ոչ լինէր այդ չափ տագնապի 'ի զօ-րաց իմոց աշխարհի քո: Եւ արդ 'ի գալդ քո եղեն հրամանք յերեսաց իմոց առ ամենայն զօրս զօրութեան իմոյ, զի դարձ-ցին անդրէն 'ի բանակս իւրեանց և ոչ ևս եղեն ապստամբ սփռել ըստ սահմանս երկրի քո. և բերանոյ քո հնազանդ լի-

ցի ամենայն զօրութիւն իմ. և ես ուխտեցից քեզ երդմամբք յարև Հօր իմոյ՝ Գ.երու Խոսրովայ, զի զոր ինչ խնդրեսցես յինէն՝ անվրէպ կատարեցից: Եւ դու պատուէր տուջիր յամենայն իշխանութեան քո, զի դարձցին յիւրաքանչիւր տեղիս և 'ի փասատս իւրեանց և 'ի գործս ձեռաց: Եւ տապանակեցից ես ընդ աշխարհս, որք շուրջ զքև. և բերել հանդուցից զաւարն և զկապուտն 'ի սահմանս քո. և փոխանակ միոյ բեկմանն կրկին հատուցից քեզ զլուծիւն մարդոյ և անասնոյ, զի առցես հայր իմ զաշխարհս զայսոսիկ երեսին՝ Եգուանից, Լփինաց և Ձողոյ յիւր սեպհական ժառանգութիւն յաւիտենական»: Յայնժամ կաթուղիկոսն և երկրպագեալ նմա ասէ. «Ծառայք քո և հօր քո եմք՝ ես և ամենայն բնակիչք երկրիս. խնայեա այսուհետև յանձինս ծառայից քոց և դարձո զսուր քո 'ի մէնջ, զի քեզ ծառայեսցուք և հօր քո՝ զօրհնեալ ծառայեսցուք Աստուածականին»: Եւ զայս առնելով՝ զօրութեամբ սրբոյ խաչին շիջաւ ցասումն բարկութեան զանապարոյ իշխանին և ամենայն նախարարացն և զօրացն. և եղեն զգօնացեալ իբրև զաշխարս և իբրև զօրս երկիւղածս յԱստուծոյ առ սիրելի եղբարս և առ համաշունչ քաղաքակիցս և դրացիս: Եւ կարգային զանուն կաթուղիկոսին ընդ անուան ապքայորդւոյն իւրեանց. Աստուած Շահ և Աստուած կաթուղիկոս, և զանուանս երթեւոյն ընդ նմա՝ սիրելի եղբարս: Եւս հրամայեցաւ նոցա նստել յաւուր ընդ ինքեանս: Եւ իջուցին զնոսա 'ի վերայ ծնգաց ըստ օրինի իւրեանց՝ եղեալ առաջի զամանս 'ի մոյն պղծոյ, և ոչ կամեցան ճաշակել, զի էին աւուրք պահոց քառասնորդացն. և թոյլ տուեալ ըստ կամաց ծառայիցն Աստուծոյ՝ բարձին զմիսն և բերին եղին հացս սակաւս անօսրունս՝ խարշեալս 'ի տապակի. և գոհացեալ զԱստուծոյ օրհնեցին, բեկին կերան և հանեցին զմիտս նոցա: Եւ յարուցեալ յընթրեաց անտի հրամայեաց յաւարկել զկաթուղիկոսն հանդերձ իւրայնովքն, զի երթիցէ 'ի քա-

զարն և հեշտութեամբ ազգի 'ի տան իւրում: Այս յայնմ օրէ էր ընդ նոսա 'ի բանակի նոցա 'ի չուել նոցա և 'ի նաւել: Եւ իբրև հաստատեցան սիրտք նոցա 'ի նա, ապա և նա սկսաւ համարձակել և խնդրել և տալ առաջի արքայորդւոյն. «Որովհետև ծառայք քո եմք, խօսեցայց զօգուտն առաջի քո՝ տէր իմ. զի մի խոպանացեալ անապատասցի երկիրն՝ առաքեսցես 'ի քէն գործակալս՝ որս հաւատարիմս յամենայն տեղիս, 'ի շէնս և յագարակս, 'ի բերդս և յաւանս, զի դարձցին բնակիչք երկրիս և գործեսցեն առանց երկիւղի և պահեսցին նոքօք յամենայն բռնութենէ զօրաց քոց: Եւ եթէ միաբանութեամբ տացայք դու և հայր քո զերկիրս 'ի ծառայութիւն, խոնարհեա դու մեծամեծօքդ յաղաչանս իմ և հրամայեա արձակել զամենայն անձինս գերեալս 'ի զօրաց քոց՝ զարս և զկանայս, զաղջկունս և զմանկունս, զորս ունին արգելեալ 'ի խորանս իւրեանց. զի մի քեցեսցին բաժանեսցին հայք յորդւոց իւրեանց, և մարք 'ի դստերաց, և սարսուցեալ երկիցեն բնաւ երկիրս՝ որպէս եղենք գործելեալք յորդորդաց որթուց իւրեանց»: Այսպիսի մեղմ և ողոք բանիւք բա հոգևոր իմաստութեան իւրոյ դարձոյց զսիրտ նորա 'ի խնդիրս իւր: Եւ եղ հրամանն այն յերեսաց արքայորդւոյն առ ամենայն զօրս, զի արձակեսցին ամենայն գերեալք և մի ոք իշխեսցէ արգելուլ կամ թագուցանել. ապա եթէ ոչ՝ պատիժս մեծամեծս կրեսցեն: Եւ առաքեաց 'ի վերայ այնոցիկ որս յայտնիս, զորս Թնչեան անուանեն՝ ընդ արամբք սպասաւորք կաթուղիկոսին. որք եկեալ 'ի բանակս նոցա քննէին և յուզէին 'ի խորանըս և 'ի վրանս նոցա, և զթագուցեալսն 'ի ներքոյ կարասւոյ կամ զրաստու պատանեաց զմատաղ մանկունս քարշէին ածէին արտաքս, և ոչ ոք իշխէր հարկանել ընդդէմ նոցա: Եւ ժողովեալ երամ երամ ածէին 'ի դուռն կաթուղիկոսին: Իսկ նա իբրև հաւ 'ի վերայ ձագուց զթացեալ զգեցուցանէր ըզմերկսն և կերակրէր զկարօտեալսն և տայր յիւրաքանչիւր

տուն: Եւ շնորհք Աստուծոյ էին ընդ նմա, և յաջողէր յամենայն ձեռնարկս և 'ի խորհուրդս իւր. և մեծացաւ անուն նորա 'ի մէջ բազմութեան Թշնամեացն մինչև յօրն, յորում այց արար Աստուած 'ի ձեռաց նորա ժողովրդեանն իւրում 'ի փրկութիւն:

## ԳԼՈՒԽ ԺԴ

Վասն առաջնորդութեան նորին, որպէս և ժողովրդեանն 'ի գիւղն:

Պարտ և արժան է մեզ յիշել վասն ժամանակի նեղութեան սովոյն, զի եկն եհաս եռացոյց 'ի ներքոյ ոտից մերոց զմուկն ծախող և եկեր զամենայն բոյս և սպառեաց զամենայն պտուղս անդաստանաց մերոց: Այս 'ի մի վայր գումարեալ սատակէ զօրավարքն երկրին՝ սովն, սուրն և մահն գործակից նոցա զօգընթացեալք ընդ միմեանս խուձապէին, անխնայ վիրաւորէին և դիաթաւալ տարածանէին. ոչ արժանի լեալ հաղորդութեան յետին Թօշակին քաւութեան. զի արգելոյր սուրն, հեղձոյր սովն և հեղձուցանէր մահն: Ահ զարհուրութեան ժամանակիս այսորիկ. եղկելի են աչք նոցա, որք տեսին զվիշն զայն մեծ: Թշուառացեալ զերծեալքն աղերսէին լերանց, եթէ անկերուք 'ի վերայ մեր, աղաչէինք և 'ի տերեաց ևեթ խարխափելոց սրտաթափք: Եւ 'ի ժամանակի նեղութեան յաւուրս քառասնորդաց պահոցն յախուռն անխտիր մերձեցեալք 'ի դէշ մեռելոտեաց անսրբոց, այլ և զարմատս բանջարոց, և հանեալ զկեղեւս ծառոց և զծայրս ոստոց ծամէին և ոչ լինէր օգուտ ուժի ինչ ուտելն զայնս: Նաև ընդչոր խիղ խաղողոյ տայր անձանց Թշուառականացն աղալ և ուտել. առ որս բազմութիւն սովածացն ժողովեալ 'ի մի վայր դիմէին 'ի վերայ այնպիսեացն, յափշտակէին 'ի նոցանէ, պատահական առնէին և այնպէս սատակէին և նոքա ընդ չքաւորսն. և միշտ քաղցեալ կային աչքն յադահել և 'ի հանել

զինկերին։ Նաւայ 'ի հաւատարիմ մարդկանէ, եթէ տեսաք մեք
զոմանս ուտել զմեռելոցն անդամս, զհաղմաժամանակեայ մոր-
թըս արջառոց և զպարկա ծխակերս, նաև զօգս կօշկաց հնա-
ցեալս եփէին և ուտէին. զայլ օրինակ մերոյ փորձութեանս ոչ
կարեմք զասնել՝ բայց միայն զաւերն Նորուսաղեմի 'ի Վ՝եւ-
ոփասոսէ և 'ի Տիտոսէ. կոխեցաք զզիակունս սովամահաց՝ ան-
ւացեալս և ուռուցեալս ընդ երեսս դաշտաց իբրև գքարինս
հեղեղատի, առ որս կատարէր բանն մարգարէական՝ եթէ «ըղ-
թաղումն ոչ թաղեցի, և հաց ոչ մի գտցի 'ի տան նորա»։
Նա 'ի ժամուն յայնմիկ 'ի խառնել զաղարւոյն առաւել էր
թիւ սատակելոցն քան զամենայն առուրս ձմերայնւոյն։ Բայց
որ կարևոր է 'ի լսել և 'ի միտ առնուլ՝ այս է, զի մեծ 'ի փոխ-
ման ժամանակի կատարածի սովոյն այլ ինն ախտ հիւան-
դութեան տարածեցաւ ընդ սահմանս աշխարհիս, որ ոչ էր
լսու բնութեան այլոց ցաւոց. զի անկեալքն յախտ անտի ան-
զգայեալք իբրև զաւուրս անոյ միոյ կամ երկուց՝ կափկա-
փեալք կցէին զատամունս, յեղուին զաչս իւրեանց, ոչ մնշան
հիւանդութեանն խմանայեին, և ջուր խմպրել ոչ գիտէին. ո-
մանք իբրև մոլեգին փարամենահայս եղեալք յանկողնոյն մերկք
և խայտառակք ընդ որմ խօսէին և ընդ հողմ կծէին. այլք
զհիւանդապաշտս կափէին. և թէպէտ ցաւքն ժանտ էին՝ սա-
կայն մահք ոչ գործեցան, զոր անուանեցին ցաւ խելագարու-
թիւն, ծիւրէին սևացեալք, հալէին մարմինք նոցա, լուծա-
նէին յօդքն, ձողէին մազք հերացն և մօրուացն, զորոց ող-
բալի սուգ առին զաւուրս բաղումս 'ի վերայ անցից խայտա-
ռակացն՝ աղաչելով զամենողորմն Աստուած, զի յանդումն
արասցէ անտանելի հարուածոցն։ Նա Վ՝իրք՝ Եղուանից և
Նփնայ և Զողայ կաթուղիկոս, թողում ասել զայլ ամենայն
ոքսակէս զազրալիս՝ զմարմնոյ սևութիւնս և զնուութիւն
զլխոյ. զի յայս հա յայսմի լեցի բանն մարգարէական, եթէ
«ածից 'ի վերայ ամենայն հասակաց զքուրձ. և 'ի վերայ ամե-

նոյն զկնոց զկնատութիւն. և արարից նմա իբրև սուգ սիրելոյ»: Այս իբրև ետ Աստուած կատարել զամենայն կամս իւր, յիշեաց զնոսա իբրև զՆոյ 'ի ջուրցն հեղեղէ 'ի տապանի անդ: Նա զթացեալ ետ նոցա զխնդրուածս նոցա. առաքեաց զլիութիւն յանձինս նոցա, յագեցոյց զքաղցեալս և զկարօտեալս լի արար բարութեամբ. զի վայելեալք զայնս՝ յաւելցեն 'ի փառաբանութիւնս Աստուծոյ:

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Սովն մեծ Ատրներսեհեան. որ խնդրեաց վրէժ 'ի Թշնամեաց.

Յերկրորդ ամի Արտաշրի որդւոյ Կաւատայ Պարսից արքայի (յամի տեառն 629) մինչ դեռ եւս առնէր նա զիշխանութիւնն ըստ կամս իւր, իշխանն Հիւսիսոյ զօրանայր բռնութեամբ յամենայն հրամանս իւր. և եդ զահ և զերկիւղ իւր ընդ երեսս երկրի: Առաքեաց գործակալս 'ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան և արծաթահալութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին. նաև զմաքս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ զամենայն ձկնի պահանջէր, և զզխարքմայն ըստ սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեանն: Նա իբրև տուգեաց զամենայն բարութիւնս երկրիս՝ և հաստատեաց 'ի միտս իւր ոչինչ ծածկել 'ի նմանէ, եդ 'ի մտի իւրում 'ի ժամանակս ամառնայնի գալ յաշխարհն Հայոց և զնոսա եւս սահմանակիցսն նորա ածել 'ի հնազանդութիւն իւր: Նա ընտրեաց 'ի զօրաց իւրոց արս զօրաւորս իբրև երիս հազարս և իշխան նոցա՝ զՉորպան Թարխանն կոչեցեալ, այր ժպիրհ և արիւնարբու, առաքէր զնա յառաջագոյն քան զինքն, զի պատրաստեսցէ առաջի նորա աներկիւղ զճանապարհս նորա,

և քննեցէ վասն հպարտացեալ զօրավարին Պարսից, որ դեռ ևս ունէր զաշխարհն Պաղեստինացւոց. և ինքն տակաւ չունէր զհետ նորա ըստ կարգաւորելոյ աղխի բազմութեան զօրուն իւրոյ: Արդ իբրև եհաս իշխանն նորա առաջապահ յաշխարհն Հռայոց և լսէր զգալն ընդդէմ նորա զօրավարին Պարսից, ընկճեալ կայր իբրև օձ 'ի ճանապարհին դարանակալ և պահէր առաջի նորա զճանապարհն: Արդ լինէր ապա Շահվարազայ լուրս այս, եթէ զինչ խորհեցաւ թշնամին, կամ եթէ ուր ձգեցան աներկիւղ առաջապահքն 'ի զօրուն իւրեանց ընդդէմ նորա: Յայնժամ և նա հրապարակախօս լինէր 'ի մէջ զօրաց իւրոց և կարծիս տայր կործել զշատախիղ Աստանականին և զիւր զթագաւորին և ասէր. «Տեսէք և 'ի միտ առէք` տոհմդ Պարսից, զի ոչ ինչ էք առանց իմ, որ վանեցի զօրագլին Հռոմէից. և արդ դարձայ ընդդէմ արևելից և հրամայեմ քաջ զօրաց իմոց ընդ ոտս երիվարաց կոխել զԳոդեստանըս*) նեղեալ յերեսաց հիւսիսոյ. ոչ փրկէ զնոսա զինելեին իւրեանց, յոր յուսացեալն էին` խաղալիկ 'ի ձեռսն, և զգուշէին 'ի գիրկս որպէս զմանուկ ընդոծնի իւրեանց. այլ անկան պարտեցան առաջի սակաւուորաց, և անմարդի գոռալ զձեզ` հատանեցին 'ի սիրտս իւրեանց ժառանգել զխաւս Արեաց աշխարհիս»: Նու զայս ասացեալ հպարտութեամբ բարբառէր առ մի ոմն քաջ արանց զօրուն իւրոյ, զոր Հռնաքն կոչէին` իշխան գնդին Տաձկաձից. «Արի` ասէ, անցիր ընդ մէջ, ընտրեա դու քեզ գունդս արիս իբրև տասն հազարս և դիմեա 'ի վերայ նոցա. մի ընտրեսցես վասն նոցա տեղի պատերազմի՛, մի ճակատեսցիս ընդ նոսա և մի ձգեսցես զաւր քո 'ի պատենից իբրև վրէժխնդիր 'ի վերայ թշնամեաց իւրոց, զի մի պարծեսցեն յազգս իւրեանց, եթէ սով սատակեցին զնոսա. այլ ընդ ոտս և ընդ լանջս երիվարաց քոց կոխեսցես զնոսա, և

---

*) Գոդեստանք` Թերևս Գոթթք կամ Գոթք — Готы.

հանեցես զնոսա որպէս զփոշի առաջի հողմոյ. այլ և զայս ա-
րարցես ընդ նոսա, զի սպառեսցին զառաջինսն՝ յառաջեսցես
մխել 'ի թագաւորն և 'ի բանակս նորա, և քեզէն միայն վճա-
րեսցես զգործ պատերազմին ընդ նմա: Եւ իբրև սպառեսցես
զամենեսին առհասարակ, կոչեսցես զանուն պատերազմին Գե-
րեզմանս թշնամեաց. ահա ասացի քեզ»: Արդ իբրև լուաւ
զայս հայրապետն 'ի հրեշտակէն, պանծացեալ յանձն իւր՝ երանէր
ձախութեանց յերեսաց նորա. և հանդէս արար զօրուն՝ եհաս
ընդդէմ թշնամեացն: Իբրև իրազեկ եղեն թշնամիքն, յառաջ
քան զգալ նոցա դարան գործեալ 'ի ճանապարհին՝ կէսքն
ընդդէմ նոցա ճակատեալ կային. և բախեալք ընդ միմեանս
խոյսն 'ի փախուստ դառնային. ապա յարուցեալ աստի և ան-
տի գօտէին 'ի վերայ նոցա, և շուրջ պատեալ որպէս հուր յե-
ղեգն զեզերբ ծովուն Գեղամայ՝ ոչ թողուին 'ի նոցանէ և ոչ
մի, և ոչ ոք էր որ զուժկան լինէր այնչափ արանց: Եւ պար-
ծանք նոցա յետս ընդդէմ լինէին, զի ոչ եթէ իւրով զօրու-
թեամբ զօրանայ մարդ, այլ Տէր տկար առնէ զհակառակորդս:
Իբրև կողոպտեցին զդիակունսն և ժողովեցին զզարդս երիվա-
րաց՝ զգեղարդունս և զսուսերս ոսկեպատս, և զվահանս և
զհանդերձս պատուականս Հռոմայեցւոց՝ ծիրանաներկեալս
և յօրինեալս, բովանդակ զամենայն կուտեալս բաժանեցին
յինքեանս: Եւ ըստ սովորութեան իւրեանց զամենայն դիզե-
ցին երիվարաց հերձուածին զանջս և զշնչաւորս, կորէին և ըզ-
փարս պարանոցաց և ճակատուց, և զագիսն ընդ մորթն և
ընդ ոսկրն մինչև ցկանգուն մի, որով անշքեղացուցանէին ըզ-
տեսիլ նոցա իբրև զէշուց կահակրաց: Արդ իբրև պարտեցա-
այն ես հայրապետութիւն, գիտաց 'ի միտս իւր ամենայն պատե-
րազմող և որ կազմէր զաւր իւր յաղթել, եթէ ոչ ինչ համա-
րի առաջի նոցա իշխանութիւն թագաւորաց և զօրութիւն
զօրավարաց: Բայց անդէն դարձոյց զերեսս իւր կողմն հիւ-
սիսոյ յետս ընդդէմ որդւոցն իւրոց, սկսաւ ողորմել իւրոյն ընդ

ինքն, ցանել զեւանդն բարկութեան իւրոյ ՚ի վերայ կորեանց իւրոց եւ տուժել ընդ միոյ զհազարս եւ ընդ երկուցս զբիւրս։ Իսկ քանզի սկսայ ասել վասն ահագին եւ սոսկալի հատուցմանցն, որ հատուցաւ ՚ի գլուխ թշնամեաց մերոց. յուզեն միտք իմ զբազում ձառօք ածել օրինակ, եթէ առաւել իցեն քան զընկղմելն Փարաւոնի, կամ ամբառնալ խաչանման ձեռացն Մովսէսի ՚ի հարկանելն զԱմաղէկ, կամ մեծ քան զոր Գեդէոնն կոտորեաց, կամ հսկայաղօր քաջութիւն որդւոյն Յեսսեայ, կամ սոսկալի ահն գիշերային, որ եհաս ՚ի վերայ Ասորեստանեայց, եւ որ սոյին նմանք։ Այլ մեք ՚ի նոյն դարձցուք ՚ի կարգ բանիցն. զի մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ եւ մեք ոչ նոյեցաք։ Արդ զխմեցին նոքա ՚ի կիրճս ճանապարհաց երից աշխարհաց, Հայոց, Վրաց եւ Աղուանից. եւ անդ ընկճեալ հատանէր բօթն ահագին ՚ի հիւսիսական տաշորից ծովէն, որ է նա ինքն Ջեբու Խաքան՝ առ զիշխանն կորիւնն իւր Շաթ, «Թէ հասին ՚ի վերայ իմ հէնք եւ ոչ յաւելուս տեսանել զերեսս իմ։ եւ փոխանակ զի ոչ կացի ես յակատանի, այլ ձրդանցայ յանպատուշաճ թագաւորութիւն, որ ոչ էր ինձ անկ, վասն այն յամբարտաւանելն իմոյ եւ յայսմ բարձրութենէ անկայ։ Իսկ արդ դու մի յապաղեր սատակել զազգդ, որ ընդ քեզ են. եւ ջանա ապրել ՚ի ձեռաց դոցա, զի մի ՚ի յառաջագոյն լեալ դոցա զեղեալքս՝ փաղփաղեսցեն պատուել զքեզ. այլ ես կորեայ եւ անզաւակեցայ»։

## ԳԼՈՒԽ ԺԼ

Վասն Մեհրուժանայ փախստեան լինել ՚ի Սասանեան Խոսրովու զօրէն, եւ լինել Նախարարաց դառն Աշոտանէ։

Ի սոյդ եւ ՚ի բուն պատմագրաց այսպէս ծանեաք, եթէ Բնդոյ եւ Վստամ եղբարք՝ ազգայինք Պարսից թագաւորին,

յարեան 'ի վերայ Որմզդի արքայի հօր Խոսրովու և սպանին զնա. և ինքեանք գնացին զհետ քեռորդւոյն իւրեանց Խոսրովու որդւոյ Որմզդի, և փախստեայ եղեալք 'ի ձեռաց Վարհամայ՝ Չոբինն կոչեցելոյ, անկանին 'ի Յոյնս առ Մօրիկ թագաւորն Հոռոմոց: Եւ նորա փեսայացուցեալ զԽոսրով՝ առաքէ ընդ նմա զօրս բազումս. և նա անցանէ գայ և առնու զթագաւորութիւնն իւր: Յետ բազում ամաց լինի վրէժխնդիր արեան հօր իւրոյ Որմզդի. կոտորէ զերկոսեան քեռիսն իւր՝ զՎնդոյ և զՎստամ, և 'ի նոյն ազգէ իբրև արս վաթսուն: Ուստի լեալ փախստական Միհրանն այն ազգայինն Խոսրովու միաբանէ ընդ իւր զկողմն աշխարհացն՝ և առեալ երգրս իբրև երեսուն հազար, անցանէ 'ի կողմն Եղուանից, հասանէ Ապարի գաւառ մերձ 'ի քաղաքն մեծ Պարտաւ և կամէր մտանել 'ի Խազիրս, և յաւելուլ 'ի թշնամիսն: Իսկ արքային Խոսրովու լինէին մեղադիր պատուաւորքն իւր, թէ ընդէ՞ր ոչ է քեզ փոյթ վասն Միհրանայ ազգականին քո, որ յերկեղէ քումմէ յաւելու 'ի թշնամիս քո և յարուցանէ 'ի վերայ քո խռովութիւն: Նա իսկ և իսկ առնէ գիր խոնարհութեան զնի Միհրանայ թէ, «Եղբայր իմ և հարազատ՝ մի՛ լիցի քեզ հեռանալ յինէն թշնամութեամբ. և եթէ ոչ հաճեցար ընդ իս բնակել, ուր հրամանատարդ իմ հասանէ, երկիրդ այդ քեզ լիցի 'ի բնակութիւն, որչափ և հասանեն գնացք ոտից քոց»: Եւ 'ի գալ հրամանակին պատահի նմա 'ի սահման գաւառին Գարդմանայ. զոր առեալ ընթերցաւ և լի եղև ուրախութեամբ: Եւ տեսեալ զպարկեշտութիւն աշխարհին՝ հաճեցաւ 'ի նմա լինել բնակ. և շինեաց յիւր անուն քաղաք մի՝ կոչելով զնա Միհրաւան: Իսկ 'ի գալ գարնանային աւուրցն ելանէ 'ի վերինս Գարդմանն գաւառին, գաւռալ առինքն կոչէ 'ի գլխաւորացն այս երկոտասան, սրով բառնայ ըզնոսա և տիրէ աշխարհին: Եւ սա յետ բազում ժամանակաց խաղաղական կենօք վախճանի յաշխարհէս: Լինի սորա որդի Եր-

մայէլ, որ ծնաւ զՎարդ, Վարդ ծնաւ զքաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս. և 'ի նենգելն 'ի սիրտ իւր զնախնական ազգս Հայկազնեայց զԱռանշահիկս, զոր վերագոյն գրեցաք 'ի մատենիս՝ կոչէ որպէս 'ի ճաշ. և հաց կերակուր գործեալ տայ նոցա ուտել. և 'ի ճաշելն անդ ա-րեամբ նոցա արար զգլխատումն արանց վաթսնից. միայն Թո-ղոյր 'ի նոցանէ զփեսայեացեալն իւրում ցեղին զԱրմիրհն Ա-ռանշահիկ: Այսպէս եղև նոցայն տիրել Աղուանից: Նաև զփայլուսուն ազգն Կովկասու հնազանդեցոյց ինքեան. և սա մեռանի խաղաղութեամբ: Սորա լինի որդի Վարդ; Վարդ ծնանի զՎարազման, զՇաւշիկ տիկին և զՎարազ Գրի-գոր՝ զառաջին իշխանն Աղուանից, որ էառ զմկրտութիւն 'ի Վիրոյէ Աղուանից կաթուղիկոսէ: Վարազ Գրիգորի լինին որդիք չորք՝ Վարազ փերոժ, Ջուանշէր, Յեղուս Խոսրով և Վարազման: Այս կացցէ 'ի պատշաճիս:

## ԳԼՈՒԽ ԺԲ

Գործք և յաջողութիւն մեծի իշխանին Ջուանշէրի, երկրորդ որդւոյն Վարազ Գրիգորի, որ 'ի Պարսիկս եցոյց քաջութիւն յաջողութեան.

Յետ ամաց չորից մահուան մեծին Խոսրովու, որ Պարսիցն էր արքայ՝ Թագաւորէ որդի նորա Յազկերտ: Զօրանայ ազ-գըն Հագարու՝ միաբանեալք 'ի ցեղս տասն և երկու, խրոխտ և ահեղ յոլովութեամբ յերկրէ հեռաստանէ դիմեալ գան իբ-րև մրրիկ ընդ անապատ երկիր, անցանեն ընդ կողմանս Ասո-րեստանի և ելանեն տագնապաւ ընդդէմ Թագաւորին Պար-սից: Յայնժամ որ միանգամայն 'ի ձեռս Թագաւորութեանն Պարսից էին զօրավարք և իշխանք, տեարք և բնաշխարհիկ ազատք 'ի կողմանց կողմանց զօրաժողով լինէին կալ ընդդէմ օտարազգի Թշնամեացն: Նա և 'ի լինել այսորիկ, Վարազ Գրի-

գոր իշխանն Աղուանից ըստ սեպհականն իւր լինելոյ Առան‑
շահական տոհմի, տեսեալ զերկրորդ որդին իւր Ջուանշիր
խրոխտ և սիգաճեմ՝ չքնաղագեղ ունելով տեսիլ, որոյ դեռ
ևս կամէր ինչ ծաղկել 'ի ծնօտսն ակն մօրուաց՝ սիրեցեալ
յաչս հօրն, պատրաստ 'ի սպառազինութիւն, քաջամանոյց իբ‑
րև զարծուի, փառաց եղեալ հօրն յամենայաջողն Ջուանշիր՝
հաստատէր 'ի միտս իւր լինել նմա հնարաւոր 'ի կեանս աշ‑
խարհիս, հաւատալով զինքն 'ի մեծամեծս և կալ առաջի թա‑
գաւորաց: Վասն այսորիկ յորդւոց անտի փոխանակ իւր պատ‑
շաճ համարէր զնա առաքել 'ի դուռն արքային: Որոյ առեալ
զգունդսն 'ի հօրէն՝ նախ քան զիշխանն Սիւնեաց և զսպարա‑
պետն Հայոց յառաջէր հասանել 'ի համաշխարհականն յայն
բիւրաւոր ժողով. զոր տեսեալ զօրավարին Ռոստոմայ՝ թուե‑
ցեալ յաչս նորա իբրև եղբայր կամ որդի, այլև ամենեցուն
երևէր բղձալի: Ընդ առնոյր զօրավարն զյաղթահաղթս հե‑
ծելոց, գայր հասանէր 'ի Տիզբոն առ թագաւորն Յազկերտ
և յանդիման առնէր զմանուկն Ջուանշիր: Եւ նոյնժամայն
եդեալ արքային զձեռս 'ի գլուխ նորա գովեաց. և կոչեաց զնա
սպարապետ Աղուանից: Եւ անցեալ ընդ գետն Դկղաթ՝ ե‑
հաս 'ի Վեհկաւատ գաւառ. և պարծեալ 'ի բազում զօրս իւր
մեծամեծս՝ խրոխտայր առաւթուր հարկանել զհարաւայինն
զամենայն: Եւ յայնկոյս Մեռեալն ջրոյ բանակեցաւ ընդդէմ
նոցա: Եւ յորժամ եկանէին ասպատակք 'ի նոցանէն, ելա‑
նէր և սպարապետն Աղուանից և զյաջողութիւն իւր ցուցա‑
նէր արիաբար. յառաջնում նուագին զամենս հարկանէր և
առնել ևս սիրայօրդոր լինէր, զի գիտէր եթէ Տէր ընդ իւ է:
Եւ յետ սուղ ինչ աւուրց յամսեանն մեհեկի, որ օր ծննդեան
էր Քրիստոսի՝ երեսուն հազարք հեծելոց և տասն հազարք
հետևակաց ընդդէմ նոցա ճակատեցան: Եւ որդիքն Հազա‑
րու եկեալք 'ի Կաշանէ բազմութիւնք հեծելոց և քսան հա‑
զարք հետևակաց ապարախիտ շարժմամբք, յառաջ խաղա‑

ցեալք նախաձեռն լինէին հարկանել զզօրս Պարսից։ Իսկ սպա-
րապետն Եղուանից ընդ այս զօրութեան միջամուխ լեալ՝
զերկուսն 'ի զինուորաց հարեալ ընկենոյր և զայր եղանէր
երիս վէրս զժնդակս յանձին բերելով, և զերիվարն 'ի չորս
վայրս խոցեալ. ուստի մինչև ցդեռն հեռահալած արշաւանօք
զհետ ընթանայր թշնամին, և սա մարտուցեալ ընդ նոսա՝
զայր և զզեստն անցանէր. և արենաշանդ լեալ զզգեստս և
զզէնս շաղախէր։ Իսկ իբրև եսես զմեծամեծս և զզօրս ամե-
նայն իբրև զխոտս հնձեալս՝ ամաչարէր անդրէն 'ի դուռն
արքունի։ Իբրև պատմեցան արքայի արութեան նորա գործք
և կարեվէր խոցոտմունք՝ նոյնժամայն հրամայէր տալ նմա
ապարանս և արքունի բժշկաց կալ առ նմա, նաև յաշխար-
հէն բազում ընդունելութիւն։ Այսպ գտեալ զառողջութիւն՝
մտանէ առ արքայ. և նա դնէր զձեռն 'ի գլուխ նորա, բանս
բարեաց 'ի լուր ամենեցուն զնմանէ խօսէր, ըստ զօրավարաց
կարգի տայր նմա նշանակս և փողս [illegible], երկուս
նիզակս ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, զորս միշտ
առաջի նորա շրջեցուցանէին. և նախամեծար քան զամենե-
սին առնէր զնա՝ ընդ մէջ ածեալ գօտի ոսկի ընդելուզեալ
մարգարտով, և ուսեր ոսկետարեայ, և ապարանջանս բաղ-
կայն, և պսակ ցանկալի 'ի գլուխ նորա։ Ետուն նմա եւ զան-
գապանս մարգարտով, և գումարտակ նոյնգունակ շուրջ զպա-
րանոցաւն. ագուցին նմա արջնաթոյր մորս չորեք դրօշակօք,
և զբաւաս [illegible] մետաքսաէշս ոսկէթելեան փառաւորով։
Նա հրամայեցին նմա զխուզասամանս բնաւար ծառայու-
թեան և զեոս ձիանց։ Ընդ էր տեսանել ըստ գրեցելումն՝
վասակոց բարեաց պատուղ փառաւոր։ Այսպ առեալ զայսքան
թագաւորական մեծութիւնս և եւ յառաջադէմ լինէր։ Բան-
զի 'ի Մարս և յԱհմատան երկու զօրավարք ստորին վերջնմանք
զմիմեանս բախէին 'ի կռիւ. և հարեալ սորա զայր մի յանդի-
մանն ամենեցուն թաւալգլոր խաղացուցանէր. և ինքն որպէս

իմաստուն զնոսա 'ի խաղաղութիւն վարէր: Ուստի և զօրավարն Խոռազատ բազմամեծար յարգանօք զնա ընդ իւր ածէր:

Իսկ յուժ առնոյն Յազկերտի, եւ միւսանգամ թշնամին և պաշարեաց զօրքս 'ի Տիզբոն քաղաքի զամիս վեց: Յայնժամ զօրավարն Խոռազատ և ասպարապետն Աղուանից զիմեալ շարժէին զօրօք հանդերձ: Ընդ այն 'ի վեր եղեալ արին Ջուանշեր երեւք հազարօք նախընթաց լինէր 'ի վերայ, և հետահալած արշաւանօք տարեալ զնոսա անցուցանէր ընդ գետն և ոչ տայր նոցա թոյլ զամիս վեց անցանել ընդ Դկղաթ գետ մինչև առնուլ զթագաւորն եկանէին 'ի դաստակերտն մեծ. և անհեղ յոլովութեամբ դիզանէր թշնամին 'ի վերայ նորա: Նա անտի շարժէին զթագաւորն 'ի Ռեկզաղ. և որդիքն հագարու յոգնահազար բռնութեամբ նմանեալ ալեաց ծովու՝ զհետ շարժեալ խաղային: Նա եղեալ անդ սակաւ աւուրս՝ ոչ դադարէր ասպարապետն Աղուանից յելանելոյ առ նոսա, և զիւրոյ անձինն հրապարակաւոր ցուցանել զքաջութիւն. որ բազում անգամ առաջի թագաւորին իսկ զօտարազգի թշնամեացն բերեալ ընկենոյր զգլուխս: Յետ այսորիկ ճակատ առ ճակատ պատերազմ խմբեալ՝ եղև բեկումն չար 'ի Տեառնէ Պարսից զօրուն 'ի լման ժամանակի նոցա. և վերնաւորք հրամանն երթայր կործանէր զթագաւորութիւն նոցա: Արդ զամս եօթն 'ի պատերազմունս յայսոսիկ տաժանեալ մրցէր քաջն Ջուանշեր. և տասն և մի դժնդակ վէրս յանձն առեալ՝ գայր հրաժարեալ 'ի նոցանէ յԱտրպատական գաւառ, ուր տեսեալ զայնքան հռչակեալ անուն նորա զօրապետին Պարսկի՝ առաքէր զնա առնուլ զքոյր իւր 'ի կնութիւն. իսկ նա վասն չկամելոյ զքոյր յանօրինաց առնել կին՝ զիմեալ գայր յերկիր իւր: Վասն որոյ յոյժ խնդութիւն քաջախնամող հօրն լինէր՝ նմանեալ նահապետին Յակոբայ 'ի տեսանելն զանդրանիկն Յովսէփ, առ որ հոգին արծարծեալ փարէր նոյնպէս զորդւոյն իւրով, զգոյն երեսացն ալեծաղիկ զարդարել:

## ԳԼՈՒԽ ԺԹ

Սպարապետութիւն Ջուանշէրի Աղուանից և քրիստոնէութիւն նորա ընդ նորա ամենեքեան, և մահն Յազկերտի և անյաղթելի լինել կայսեր Յունաց։

Եկեալ մեծապանծ անուամբ ամենապայծառ այրն Ջուանշէր 'ի Պարսկաստանի մարտից՝ հանգստացուցանէր ընդ ինքեան զքաջանդակ տունն Աղուանից ըստ թագաւորական հրամանին. և առեալ զզաւրս իւր հանդերձ հարբն՝ 'ի վերկոյս Պերոզապատ քաղաքին եկանէր։ Իսկ քաջքն Պարսից շարժեալ գային 'ի վերայ աշխարհիս սակս ապստամբութեան Ջուանշէրի։ Նա մինչ դեռ առաջք թշնամեացն զառ առաբին կոյս նորին գաւառի ճեպով եկանէին, անդէն փաղանգոյն ճեպով զինեալ ինքնաձեռն հարկանէր անդ Գիլաղմն ազգի ամն հեղինակ զօրուն, որ սրահար ճարակմամբ ինքն և զօրքն իւր անկումն բազմաց առնէին. այլ և ձերբակալս 'ի նոցանէ և ձիս և ջորիս և կապուտ յոլով առեալ դառնայր, և ոչ դադարէր հետամուտ լինել զհետ Պարսից։ Լինէր միւսանգամ 'ի լեռնախայրի անդ բախումն ընդ միմեանս, և յաջողեցաւ այն օր եւս նմա 'ի Քրիստոսէ առնել յաղթութիւն։ Նա խոյս ետես դիզուր զուժի, եթէ մտին զօրքն Պարսից 'ի Պերոզ քաղաք և զհայրն հանդերձ եղբարքն գերի առեալ վարեցին։ Արդարև ասեմ, եթէ որպէս արջ որդեկորոյս զայրացեալ գազանանայր, դառնայր ճեպով 'ի հայրենի վիճակին իւր սահմանս՝ յայնկոյս գետոյն Կուրայ 'ի Կապիճանն գաւառ, և անդ գտեալ ընդ նոսա ոչ փարկպարաղե, այլ խոհականապէս դէմ առ դէմ ռազմ պատրաստի։ Նա անզանգիտող մրցմամբն իւր առնոյր վէր 'ի գլուխն. այլ բաւական առ ջոյն Քրիստոսի օգնականութեամբ սատակ և զօրեղ զինքն եցոյց, մինչև ոչ միոյ առն թողուլ՝ ի թշնամեացն որ ոչ սատա-

կեցան. ուստի և մեծապանծ անուամբ դադարէր դարձեալ առ սահմանօքն Վրաց: Եւ անդ մեծապատիւ այրն Ատըրներսեհ իշխան աշխարհին՝ որ երբեակ զահերիցութիւն 'ի Հռովմայեցւոց թագաւորութենէն ունէր, գայր առ նա և իւրովք պատէր զվէրս նորա՝ զմեծի քաջութեան նորա զյաղթութիւն խնդութիւն համարեալ: Յայնժամ խաղաղական և անքակ միաբանութիւն հաստատեալ ընդ միմեանս՝ առնոյր յօգնականութիւն զզօրս Վրաց, աճապարէր նախարշաւ յԱտրեանն գաւառ, և ուր միանգամայն գտանէր 'ի զօրացն Պարսից՝ որոյ ճարակ առնէր. զնոյն գունակ շտապ տագնապէ և 'ի վերայ ձմեռնահանգիստ քաղաքին իւր առնէր, մինչև զհատակածին և զարգանդակից մանկունս նոհանջմամբ թափէր: Յետ այսորիկ սկսան յԱտրպատականացն առաւել ես անդր հեղուլ զգունդս բազումս: Իսկ նա ոչինչ կասկածէր 'ի նոցանէ, զի բնութիւն էր 'ի նմա որ 'ի բազումս խիզախող լինէր քան 'ի սակաւս: Որ և 'ի Շակաշէն գաւառի զերկուս սպասիրազմունս հազարաւորաց քաջալերժակ խոցոտմամբ կենազրկէր: Եւ զօրս լեալ 'ի տեղիս տեղիս անթիւ սրահար ջարդմունս Պարսկաց 'ի Ձիւանշիրէ՝ անտեղի է ասել: Յայսոսիկ նայելով նախարարացն Հայոց 'ի Վրաց աշխարհին՝ խորհէին 'ի ծննդոց իւրեանց առնուլ նմա կին. իսկ նա յԱրուեծան տոհմէն առնոյր կին՝ զդուստր իշխանին Սիսական աշխարհին, ընդ որ յաւէժ ուրախ եղեն Սիւնիք: Իսկ զօրավարն Պարսից զմեծ պարտիլն 'ի նմանէ զիտացեալ և զկործանումն զօրաց՝ շրջեալ 'ի սէր խաղաղութեան գրէր թուղթ և արձակէր զմեծազահ իշխանն Սիւնեաց մեծաւ երդմամբ գալ նմա 'ի միաբանութիւն, զոր հազիւ ուրեմն հաւանեցուցանէր միջնորդն առնել զմիակամ սէր և զխաղաղութիւն: Եւ նա զայս կնքեալ խորհրդարար դառնայր. նոյնպէս և ապարապեան Եղուանից մարբն և եղբարբքըն հանդերձ դառնայր յաշխարհն իւր: Եւ ապա յիշեցեալ

զնուազին մեծ թագաւորութեան Պարսից, և զառաջնոց թագաւորաց արևելից զինքնակալութիւնս և զիւր նմանեցուցեալ արքայականն շուք, դնէր 'ի մոռ զեշխանութիւնն իւր և զսիրոյ վիճակ ոչ ումեք դնել ընդ ձեռամբ. վասն որոյ խիզախէր և առ Պարսիցն զօրավետս՝ իւրաքանչիւր կողմանց իշխողս առանձնակի. և ինքն եղբարքն հանդերձ եղանէր 'ի հայրենի գաւառն: Իսկ զօրագլուխն Պարսից՝ դաւաճանեալ կոչէր պատճառաւոր բանիւք զհայր նորա, զի 'ի հնազանդութեանն կացցէ նմա. արձակէր զունդս և կարգէր կողմնակալս Աղուանից նահանգին: Արդ զինչ արասցէ այրն այն Ջիւանշիր և անդրանիկ եղբայրն իւր, որք չյանձնառու քինախնդիր եղեալք զէն զանձամբ արկեալ՝ հեծան յերագընթաց երիվարս և զերկայն զայն ուղի կարճ բերելով՝ գային շրջագայութեամբ 'ի Պերոզքաւատ քաղաք. ուր 'ի զուարթախոհ և յանտառախիտ տեղւոջ զառաջինն քնով զօղեալ՝ ընդ ծագել արեգական ձիարձակ եղեալք՝ որպէս կորիւնք առիւծոց զքաղաքն յափշտակէին, և զօրս 'ի քաղաքին կամ յամենայն սահմանս ընդ հրամանաւ որք գտանիւր զօրավարին Պարսից՝ չարաչար սատակէին: Իսկ վառեալ զօրքն իւրեանց հարուածս մեծամեծս Պարսից հասուցանէին, մինչև ողջանդամ զհայր իւրեանց անդրէն դարձուցանէին: Իսկ 'ի քսաներորդ ամի Յազկերտի համօրէն 'ի բաց բառնայր 'ի միջոյ տէրութիւնն Պարսից. և այն երեսուն և մի ամ էր տիեզերակալութեանն Հագարացւոց և տասն ինն Ջիւանշիրի ամն և հինգ ամ: Իսկ այսպէս Տաճիկք յարձակեցան 'ի կողմանս հիւսիսոյ և արևելից: Վ.սանդէին զաւարս առհմից այլ 'ի ձեռս զանգես ապաւինութեան, և 'ի պատանդ առնուին զգաւառս և զկանայս առ չարաչարելոյ 'ի նոցանէ: Իբրև տեսանէր զդաւաճանն խառութեան հարաւայնոց Ջուանշեր՝ փոքր ինչ ժամանակ դաւաճանեալ զնոսա էանց յայնկոյս գետոյն, ուստի անապահներն իւր սիրտ վասէր բորբոքէր վիրաւին առ նոսա 'ի

պատերազմ, զի զեւր հայրն ՚ի նոցանէ եւս թափեսցէ: Եւ հայր նորա արգելեալ զնա ՚ի խորհրդոյն և գնայր կամաւորաբար առ թշնամիսն: Իսկ բազմիմաստ Գ. Խուանշեր ընդ զօրավարին Հայոց գնէր ուխտ և քաջալերէր զառնուլ ՚ի հնազանդութիւն կայսերն Հոռոմոց: Եւ եկեալ ՚ի միակամ եղբայրութիւն՝ գրէ առ թագաւորն Յունաց օրինակ զայս.

## ԳԼՈՒԽ Ի

### Թուղթ Ջուանշերի առ Կոստանդին Յունաց կայսերն.

«Ամենայաղթ տէր՝ հզօր և ողորմած թագաւոր Հոռոմոց, Օգոստոս Կոստանդին, ծառայ և ցանկալի աստուածատուր իշխան, Գ. Խուանշեր սպարապետ և իշխան Աղուանից հանդերձ արեւելեայս ծառայական աշխարհաւ նուաստաբար ողջունելով՝ երկրպագէ: Հաճոյ թուեսցի քրիստոսասէր տէրութեանդ ախորժելով ընդունել ՚ի հեռաւոր անձանց զնորընծայ հնազանդութիւնս. զի ՚ի մեծ փափկութենէ փառացդ պարգեւեսցի պատերազմին խոնարհութեանս մերում աստուածաշնորհ բարերարութիւն»:

Արդ երբեւ մատուցան հրովարտակն առաջի ամենաբարեպաշտ կայսերն, զուարճանայր զուարթանայր բազմամեծար ուրախութիւն զօրն զայն առնէր: Եւ խոկոյն հրամայէր գրել երդմունս յանձնել համամիտ խաղաղութիւն, պարգեւս մեծամեծս շնորհէր, դահոյս արծաթի քանդակակերպ թիկամբք ոսկեզօծ, հանդերձս ոսկեմանեակս և զեւրոյ անձինն մարգարտեայս պատենիւք սուսերն և առնէ զնա պատուոյն պատրիկ, և տայր տանել պատրկութեան և հիպատոսութեան և ապա հիւպատոսութեան և սպասալարութիւն հազար երկերիւր սպանց պատուի. զի որում ինքն կամեսցի՝ շնորհեսցէ և նա

զայնս։ Եւ որ 'ի կենդանւոյ խաչէն Քրիստոսի մասն՝ զոր միշտ 'ի ծոց իւր կրէր, հանեալ յիւրմէ՝ առաքէր նմա։

## ԳԼՈՒԽ ԻԸ

### Պատճէն հրովարտակին.

«Քեզ տեառն Ջևանշիրի՝ Գարդմանայ տեառն և Աղուանից իշխանի, ապուհիպատ և պատրիկի, և արևելից կուսակալի 'ի փրկական խաչէս աստուածային զօրութենէ շնորհք և ողորմութիւն, և 'ի մերմէ օգոստական թագաւորութենէս խաղաղական և մեծ սիրով ողջոյն»։

«Ընկալաք զգիր ողջունիդ, որ եցոյց մեզ զառ Աստուած բարեպաշտութեան քո զսէր, և ուրախ եղաք, փոխանակ զի առեր յանձն հանդերձ արևելից աշխարհաւդ նուաճիլ մեզ 'ի հնազանդութիւն։ Վասն որոյ մեք և որդիք մեր ընդ քեզ և ընդ ծնունդս քո մտերմաբար անքակ սիրով յազգէ յազգ մինչև ցյաւիտեան քաղցրութեամբ եղիցուք»։

Իբրև լսէր նա զբանս թղթոյն՝ հրաշալի խնդութեամբ զուարճանայր, մանաւանդ զնշանին ամենազօր գալստենէն առաւել լինէր գոհացող։ Ուստի անկեալ 'ի վերայ երեսաց առաջի փրկական խաչէն՝ փառաւոր առնէր զԱստուած, որ ամենայն բարութեանց տուողն է։ Յայնժամ կաթողիկոսն Աղուանից եպիսկոպոսօքն հանդերձ և երևելի արամբք բազմութեան առաջի եկեալ՝ ծաղկաբեր և օրհնաբանիչ լինէին մեծազարդ պատուոյն։ Եւ անդ այնուհետև ոչ լինէին գործ անկարգ խօսից, կամ արբեցութիւնք, կամ կատակերգութիւնք, այլ չափաւոր վայելմունք։ Եւ զգիշերն զայն փակեալ զենքն զուրկ 'ի քնոյ անցուցանէր՝ խորհելով զաշխարհին իւրոյ զօգուտն։ Եւ 'ի ծագել արուսեկին մեծի՝ առնոյր

զարքունական զարդս իւր և նստէր 'ի գահոյսն. դրունք բանային, և զինուորքն մնեալ ունէին զզէնս իւրեանց աստի և անտի շուրջ զնովաւ պարախմբեալք, և ըստ կարգի պատուաւորքն մտանէին ահաբեկեալք. դատաստան արդար և իրաւունք անկաշառ 'ի դրանն նորա հասարակաց լինէին շնորհեալ. ոչ զբաղմունք պաշտօնելք, այլ զօրն ողջոյն աշխարհական հոգոց պարապէր. և զօրս առ լերամբն Կովկասու փայբագատունք խմաստաբար ածէր 'ի զգայութիւն: Այսպէս 'ի սահմանացն Վրաց մինչև 'ի Դրունս Հոնաց միահեծան ձոխութեամբ եղև տէր մինչև ցգետն Երասխ:

## ԳԼՈՒԽ ԻԲ

Կայսեր Յունաց գալ 'ի Պարս և խաղալ [illegible]

Իսկ յետ և 'ի տասներորդի ամի թագաւորութեանն իւրոյ Կոստանդիանոս թոռն Հերակլեայ բազմամբոխ զօրօք և ընտիր հեծելովք և գլխաւորօքն Յունաց հանդերձեալ եկն յաշխարհն Պարսից կործանել 'ի նոցանէ զկողմանս աշխարհին, զճառագայթաւէտ զլոյս աշխարհաց ընդ իւր ունելով: Յայնժամ առաքեաց զմի ոմն 'ի գլխաւորացն առ Ջ. Խանշէր գալ նմա 'ի տեսութիւն. և փաղփաղուկ ամապարեալ հատանէր յաշխարհն Մարաց առ մեծ կայսրն. զորոյ զգալն իբրև լսէր՝ ընդ առաջ նմա ինքն ելանէր 'ի Գռունդր գետ և ողջամբ ընկալեալ զնա՝ նոյնժամայն հրամայէր փոխել 'ի նմանէն զախրական զգեստն, զոր սակս մահուան առնանոյն իւրոյ էր զգեցեալ. և ագուցին նմա զարքունական զգեստն: Ընդ որ առեալ համարձակութիւն՝ խնդրէր 'ի կայսերէ զմատն յաւխանից թագաւորին նշանի: Իսկ նորա առեալ զփրկութեան արեգակն՝ յանդիման իւր կարեաց և ետ նմա զպրէն

մեղաց ասելով. «Սա եղիցի քեզ և որդւոց քոց աշտարակ հզօր ընդդէմ թշնամեացն»։ Տեսեալ զայսպիսի երկնաւոր պարգևս առ նա եղեալ նախարարացն Հայոց և զօրավարին Հանդաստայ՝ 'ի նախանձ մեծ գրգռեցան. և նմա ոչ էր փոյթ, այլ այնուհետև խնդրէր հրամեշտ 'ի բարեաց տեառնէն։ Եւ նա ոչ կրկին զծառայ ոք, այլ կրկին զեղբայր համարեալ՝ յանդիմանն Պարսից և Ատրպատական ազատացն զնա յաղթակեաց. որոյ հիացեալ ընդ Աստուծոյ ներգործութիւնն առ նմին լեալ՝ գայր յԱյրն աշխարհ։ Զայս լուեալ զօրայն գաւառ հոգեզուարճ հայրապետին Եղուանից՝ Սխտանիսի, հանդերձ բազում ժողովով օրհնեաց զնա 'ի ձայն մեծ ասելով. «Ահա առաքեաց մեզ Տէր 'ի Սիոնէ գաւազան զօրութեան. և տիրա տիրեսցուք մերոց թշնամեաց»։ Խորհի մեծիմաստն Գ.խանչէր տեղի հանգստեան ոսկրանակաց նշանին գտանել. և 'ի բնական գաւառին Գուրգենայ բերդի հիմն արկեալ տանն Աստուծոյ մեծապէս գեղազարդէ 'ի հրձուանս և 'ի փառըս Քրիստոսի Աստուծոյ։ Եւ 'ի փոխանորդել զարմանոյին ժամուն՝ հանդերձեցաւ կազմեցաւ մեծարգի իշխանն Եղուանից միաւանդամ տեսանել զկայսրն, հանդիպեալ նմա 'ի Կ.աղարշապատ քաղաքի։ Յայնժամ հրամայի 'ի թագաւորէն, զի մեծամեծք պալատանն և վեհանձնիքն ընդ առաջ նորա ելցեն, և այնպէս ազքունաբար մտանէ 'ի կայսերական մարզարանն։ Եւ զնա տեսեալ կայսերն՝ խնդամիտ համբուրեւ 'ի յառաջագահ անդր զնորին առձեռնեալ դնէր քան զամենայն մեծամեծացն. և լինէր օրն այն յաւուրս նորա օրհնեալ պէսպէս զեղեցկազարդութեամբ ոսկւոյ և արծաթոյ. և զինչ թագաւորական պատուէր, զամէնն նմա հրամայեաց տալ, ընդ որ տրապեզիքն անդամ սակացան. և 'ի վերայ այնորիկ զքաջ հաւուն խոյս Հերակլի և զՆիկիփոռհանոյն զարքանական զօտին էած ընդ մէջ նորա և զխուրն պատմուճան և զփօշս երկուս, և զոլդիս նորա առնէր պատրիկն զօրապա-

կանս: Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Եգիպտոսից գիւղատանեայք և սահմանք լեալ էին՝ զամենայն 'ի նա ընձեռեալ յազգաց ազգս, արևելեայցս ամենեցուն արքայաբար առնել անչութիւն: Եւ ոչ էր խորհուրդ կայսերն ծածկեալ 'ի նմանէ. յորմէ և լսելով հանճարեղ խորհրդականութիւնս բազում՝ հիանայր, և ողջունեալ զնա ասէ. «Ընձն քո ընդ անձին իմոյ, և սիրտ իմ որպէս զսիրտ քո՝ եղև 'ի խաղաղութիւն»: Այսպէս գերահռչակ հրճուանօք գայր անցեալ ընդ աշխարհ իւր: Եւ վերստին առնէր հրաման ընդ որ իւրն էր աշխարհ՝ չենել անկել վայելել և կեալ 'ի խաղաղութեան: Եւ իւր չենեալ բազում ապարանս և որ ինչ մարդկան է վայելուչ. և ամենապայծառ իրք անկարօտ էր նմա 'ի փառացն Աստուծոյ, մինչև Խուրքաստանի թագաւորին խնդրէր 'ի նմանէ սէր և խաղաղութիւն և ընծայաբեր նմա լինէր երիվարս ընտիրս, ծառայս և աղախնեայս և զանազան զեանոց մարթս: Այլ և յԱսորեստանեայց և յԱրաբաստական գաւառէ, յԱյրարատեան գաւառէ և 'ի Վրաց աշխարհէն մինչև 'ի Հնդկաց եւ գային առ նա լսել և տեսանել զնորա բազմահանճար խորհրդականութիւն. և խնամարհամբ սէր նորա առ հասարակ եկեղցն լինէր հիացուցանող պատմութիւն յիւրաքանչիւր աշխարհի: Եւ ոչ ուսաք երբ այս նմա, այլ փայան կենաց. նա յայանի արար զանուն նորա ամենայն ախեղերաց, և օրհնութիւնն բարեխնամ ծնողին:

## ԳԼՈՒԽ ԻԳ

Վասն ելից Խաչրաց և յաղթահարելն 'ի զինուորէ յունաց փետոյն:

Յետ այսոցիկ լինելութեան և երկուց հովւելոց անաց՝ եղանեն Խաչրաց յաշխարհն Եգիպտոսից յառ և յաւար: Յայն-

ժամ իշխանին Եզուանից զինեալ զինքն՝ մտանէ առաջի ա-
մենայաղթ նշանին և կացեալ 'ի վերայ ծնգաց իւրոց՝ զար-
քային Իսրայէլի երգէր զերգս, «ելթէ Տէր իմ, առ զզէն և զաս-
պար քո և արգել զեկեալսն 'ի վերայ իմ»: Եւ առեալ զգունդս
իւր անց յայնկոյս գետոյն մեծի Կուրայ և ետ ընդ նոսա պա-
տերազմ և ոչ վրիպեցաւ 'ի խնդրոյն: Եւ 'ի խառնել պատե-
րազմին՝ զթեալ քաջանցց նորայն երիվար զլորեցոյց զնա,
սակայն ոչ կործանեցաւ, զի Տէր ետ ձեռն և կանգնեաց զնա·
որ 'ի յառնելն եհար զընդդիմամարտն, և զայն օր ետ արար
յաղթութիւն մեծապէս, ասելով առ բարբարոսն այն ազգ·
«Գնա մուտ ընդ Դուռն Չորայ· և մի եւս յաւելցես գալ այսր,
զի արգել Տէր զյառնելն քո»:

## ԳԼՈՒԽ ԻԴ

Կատարումն տաճարին Տեառն 'ի բերդին Գարդմանայ և նուաճեալն 'ի Ջիւանշիրէ, և օրհնութեամբ նորին, և կանգնելն 'ի նմա խաչին Բէրե-տուէ.

'Ի յաղթահարելն Ջիւանշիրի և երկուց ամաց անցելոց՝
զկնի վանելոյ զզօրս Խազրաց՝ կատարի գեղեցկայարմար շի-
նուածն տաճարին յանուն Աստուծոյ: Եւ նորա յարուցեալ
անկանի առաջի մշտնջենաւոր լուսոյն՝ կալով յաղօթս· «Այ-
ժմ արի՝ Տէր, 'ի հանգիստ քո, զոր շինեցի անուանդ քո 'ի
յարկ քոյոյ կենդանւոյ փայտիդ»: Յայնժամ առնոյր զկա-
թուղիկոսն հանդերձ եպիսկոպոսօք և ամենայն նախարարօք
իւրովք, ելանէր իբրև աւուր միոյ ճանապարհ 'ի վերկոյս Պե-
րոզապատ քաղաքի: Անկեալ աղօթէր նախ 'ի վանս մի, զոր
շինեալ էր յանշէն վայրս 'ի մէջ երկուց գաւառաց ամենայն
բարեօք 'ի հանգստի իշխանի իւրոյ և ամենայն անդր եկելոց,

Հրամանս կարգեալ 'ի վերայ, թէ մի լիցի ումեք անընդունելի 'ի ձէնջ Տեառ: Եւ անտի յարուցեալ բազմախումբ կաճառաւն մտանէ 'ի Գարդման գաւառ, որ օր տասնեւմի էր արաց ամսոյ. զխաչն լուսոյ տարեալ հանգուցանէ 'ի տանն զոր շինեաց, եւ անդ կացեալ 'ի վերայ ծնգաց իւրոց՝ թախծալից զղջմամբ եւ արտասուօք դնէր աղերս ամենահաստչին եւ ասէր.

## ԳԼՈՒԽ ԻԸ

### Աղօթք Ջուանշիրի:

«Տէր իմ Տէր՝ որովհետեւ եղեր անյիշաչար ծառայի քո բազմամեղի, եւ պարգեւեցեր ինձ զխաչն, զորմէ զքեզ լսեալ կախեցեր յերկրի, առաքեա 'ի տաճարս յայս զշնորհս Սուրբ Հոգւոյդ եւ հանգոյն Սողոմոնի տաճարին հոգեխառն ամպով փառաց քոց իբրեւ միգով զսա զարդարեալ փայլեցուցո. արա զսա տուն աղօթից եւ խնդրուածոց, որք յարեւելս ծովեզերայք իցեն: Զի որք միանգամ պատարագօք զերեսս քո պաշտեսցեն 'ի տեղւոջս յայսմիկ, լուիցես դու 'ի բարձանց եւ տացես զխնդրուածս նոցա: Եւ եթէ ամենայն աշխարհս Աղուանից միաբան գայցեն փառաւորել զանուն քո 'ի տանս յայսմիկ՝ աստուածընկալ զօրութեամբ խաչիս աղխեսցես բդդրունս թշնամեաց եւ խափանեսցես զմարտից հէնս, զօդս քաղցրաբերս հրամայեսցես հեղուլ 'ի վերայ երկրիս, զի լիապատար բերմամբ որթ եւ թզենի եւ ամենայն բոյսք անդաստանաց պտղաւէտ լիցին, եւ յղձալի երկրիս անվրդով հանգիցեն: Իսկ զՋուանշիրս, որ ծանրաբեռնեալ եմ յանցանօք եւ 'ի քո՝ Տէր, ամենազօր նշանիս օգնականութիւն՝ որպէս կարօտագոյն որ հիւանդ 'ի բժիշկ բարի, անձկացեալ ապաւինեցայ, մի դարձուցաներ ունայն եւ ամաչեցեալ: Եւ զտունս

զոր շինեցի՝ արա զսա հովանի գլխոյ իմոյ յօր մարտի. զյա-րուցեալսն 'ի վերայ իմ նեղիչս իմ արտաքս. զուստերս և զդստերս իմ աներկիւղ արտաքս 'ի չարէ և զօրաւոր յամե-նայնի: Եւ դու՝ Տէր իմ Տէր, որ պահեցեր զիս 'ի մանկու-թենէ իմմէ, 'ի շրջապատեալ փորձութեանց փրկեցեր, յա-ճախեցեր ինձ ոսկի և արծաթ, ծառայս և աղախնայս, և ետուր ինձ իշխանութեամբս իմով արքայաբար առնել տես-չութիւն, ընկալ և այժմ զծառայս քո 'ի բարի, և 'ի վերայ ծննդոց իմոց հեղ զհանճար գիտութեան՝ գնալ 'ի ճանա-պարհս քո և հնազանդ կալ առ 'ի քէն պահելոյ կայսերն Յու-նաց աներկիւղաբար: Իսկ 'ի համաշխարհական աւուրն յարու-թեան հասելոյ, յորժամ աներևոյթքն զերևելիս փոխանոր-դեն և փողոտոց հնչմունքն զննջեցեալսն կոչեն 'ի քնոյ, և հրե-ղէն ջոկքն 'ի ծագաց երկրէ առ ամենակալ թագաւորդ հա-ւաքեն, յայնժամ 'ի ձեռն կարապետի խաչի քո՝ յոր ապա-ւինեալս եմ, ողորմութեամբ այց արասցես ինձ և զուգակցի իմոյ Խոսրովանուշի, նախահարց իմոց, մանաւանդ ծաղկեալ ալեօք հօր իմոյ Վարազ Գրիգորի և մօր իմոյ Գոհարխաթունոյ և եղբարց իմոց Վարազ Պերոժի և Յեզուտ Խոսրովու և զա-ւակաց իմոց: Իսկ զիս զՋ. Խանչերս՝ որ յօրինակ Դաւթի երանելւոյ իջուցի զարտասուս, մի՛ բարկութեամբ խրատեր և մի՛ ճշգութեամբ պահանջեր. զի զի՞նչ օգուտ է քեզ յարե-նէ իմմէ յիջանել ինձ յապականութիւն: Փրկեա զիս 'ի յա-ւիտենից փորձանաց, և փոխանակ տաճարիս այսմիկ՝ զոր շի-նեցի յանուն քո յերկրի, պատրաստեա մեղուցելոյս զհոգևոր օթևանս 'ի տան Հօր քո՝ Քրիստոս: — Եւ իբրև կատա-րեաց զաղօթս, մատոյց և զայն՝ որ յաղագս նորահրաշ տօ-նին էին պատրաստք: Եւ ուխտեաց անդ ուխտ փրկութեան, եթէ սա եղիցի ինձ և որդւոց իմոց անեղծ տալոյ երախայրիս առաջի Տեառն և գտանելոյ զողորմութիւն 'ի նմանէ: Եւ յետ այնորիկ իջանէ աստուածավայելուչ աւետեօքն 'ի ձեռնահան-

զխառ քաղաքն Պերոզբաւատ. և զամն ողջոյն յրջեալ և 'ի խաղաղաւէտ անցուցանէ 'ի հանգիստ։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

### Խաղաղութիւն Ջուանշերի ընդ Հոնս, և տանել մեր Ռշտունեացն։

Մինչդեռ նոքա խաղաղացեալ 'ի գահոյս իւր ալին Ջու-անշեր, 'ի միւս ամն լինէր ձմեռնային եղանակի հասարակու-թեան. և եւ Թագաւորն Հոնաց յաղթահարող հեծելովք. և Թէպէտ յառաջագոյն զգուշանալ աշխարհին հրամայեալ էր 'ի նմանէ, սակայն տարապատկուածք Հոնաց յայսկոյս գե-տոյն Կուրայ և զեղերբք Երասխայ ոչ միայն զընաշխարհիկս, այլև որ յԱղուանից գաւառաց և 'ի Միհրանեանց աշ-խարհէն հօտք և անդեայք 'ի ձմեռնածմշակ դաշտն եկեալ էին յարօտ՝ զերի վարեալ զամենայն 'ի բանակետղն ժողո-վէին։ Արդ եղև Թագաւորին Հոնաց ցանկութիւն տեսանել զերեսս Ջուանշերի։ Եւ արձակեալ զեղբայր իւր առ նա Թա-խանձեցուցանէր զնա տեսանել զմիմեանս և 'ի մէջ իւրեանց առնել սէր եղբայրական։ Իսկ քաջ և արի այրն ոչինչ ածեալ զմտաւ զարհուրեալ, Թէ ոչ որք յայլոցն Պարսից կարաց յանդիման տեսանել զճոխութեանցն Թագաւոր, այլ ա-ներկիւղաբար անկեալ առաջի փրկչական խաչին, ասէ. «Փրկե-պէտ և գնացից 'ի մէջ սաստկութեան մահու, ոչ երկեայց 'ի չա-րէ, զի դու՝ Տէր, ընդ իս ես»։ Եւ անտի յարուցեալ երա-նէր առ նոսա արքայաշուք կազմութեամբ։ Իսկ Թագաւորն Հոնաց ընդ առաջ նմա եկեալ գայր հանդերձէր նաւով, և յայնկոյս խաղացեալ՝ դադարէր յեզր գետոյն 'ի վերայ մեղ-մաշարժ և խորասոյզ ջրոյն։ Գնեն առ միմեանս խորհուրդս խաղաղականս՝ բանալ 'ի մէջս զանմխարանութիւնս երկո-

ցունց և զրաւիլ 'ի համակամ եղբայրութիւն. որոց կնքեալ զդաւիլն՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս: Իսկ զի՞նչ քաջասիրտ տէրն իմ 'ի միւսում աւուր եցոյց:—Տասն և եօթն արամբք էանց յայնկոյս գետոյն 'ի բանակն Յունաց. անդ առնոյր զդուստր թագաւորին իւր 'ի կնութիւն և դարձուցանէր յաւարէ անտի հարիւր և քսան հազար հօտից և եօթն հազար ձիոց և արջառոց բազմութիւն. և ոչ ինչ նուազ քան զհազար և երկերիւր արանց գերելոց: Նա անտուստ դարձեալ խաղաղութեամբ գայր 'ի տեղի իւր բարգաւաճեալ սրտիւ. լայր առաջի Տեառն, կարդայր և ասէր. «Ոչ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, այլ դու, Տէր՝ փրկեցեր զիս. և պարծանք իմ 'ի քեզ՝ Տէր, են»: Յայնժամ հրամայէր, զի որ ինչ դարձուցեալ էր յաւարէն՝ արք հաւատարիմք առ իւրաքանչիւր ոք ըստ մասին բաժանեսցեն: Նա այս եղև երկու ամօք պակաս յերից տասներեկաց, յորս աշխարհական սպարապետութեամբն իւրով 'ի տիոց անտի երիտասարդականացն մինչև ցմիջակ արբունս ժամանակին զրուատայեղ համաշխարհալուր կատարեաց՝ նախ 'ի Պարսս և ապա 'ի Յոյնս զանվեհեր քաջութիւնս՝ անսխալ գոլով. մինչ զի արևելից և արևմտից, հիւսիսոյ և հարաւոյ, յԱղիս և յԱնարիս, հռչակաւոր ամենեցուն եցոյց զքաջախարթամ ծանօթութիւնս:—Արդ ձեռնարկեցից և զայն ասել, եթէ որպէս կամ զի՞նչ պատճառաւ շնորհատուն այն խաչ ծագեաց նմա 'ի խաւարէ զլոյս, կամ եւ քաղել ծաղիկ 'ի հրոյ:

## ԳԼՈՒԽ ԻԷ

Որ ինչ 'ի Բեթաւորէն հարսաց Աթարանէ արևելից էջեանն եղե՝ ա- տանօք քաղեաւ։

Լերինք միանձնաւորք և ծովք անդնդայինք ալեկոծեալք հնազանդեալ կան բանին Աստուծոյ։ Քանզի վերնաւոր հրամանն, յորժամ հայի յերկիր՝ դողացուցանէ զնա, և 'ի մերձիլն 'ի լերինս՝ ծխին։ Որպէս և այժմ ահա յերեսաց Տեառն բարձրացեալ բլուրքն հարթեալ հաւասարեցան և այլափարթամ խորոցն ջրայեղց բնութիւնք անդէն յինքեանս սազան։ Զի ահագին փառք Պարսից տէրութեանն խոնարհեցաւ, զանրաւ խրոխտ բարձրութիւնս նորա խոյք ծածկեցին. ընկլին թևաւոր արձանք խորոց 'ի հողմուոյց եւանդամանէ. և փուշք ապարանկի օդալաց թռչմամբ եկեալ տաղաւարեցան 'ի վերայ մկանանց լայնատարած ծովուն։ Զի որպէս ջուրք բազումք կոհակաշարժ բնութեամբ ծովացող առնեն զերկիր, նոյնպէս յորբեմն ժամանակի թագաւորք Յունաց ամբոխեալ զօրօք հիածածուկ զընդհանրական աշխարհիս առնէին բազմութիւնս։ Իսկ այժմ այնր աթոռոյ ամբարձեալ զօրութիւնքն այնքան 'ի վեր ցնդեալ շիջան, մինչ զի որք միանգամ ընդ ձեռամբ նորա էին մարդկային անասունք՝ գնացեալ յարեցան ընդ հովանեաւ այնր, որ Գեդէոնեան գժնկին էր պատուղէչ. զոր 'ի նոսա բարձեալ բռնաւորաց շառաւիղքն խլեալ միանգամ ոչ կարէին։ Զի իբրև հաս քօղն արևմտեան, թէ դարձոյց Տէր զօգնականութիւն 'ի սրոյ նորա և կինճ՝ն վայրենի գազանաց փշրեալ զեղջեւր նորա, առեալ զլուծն ժամանակին ըստ կանխասաց մարգարէութեանն և խոստմանն Աբրահամու. «Եթէ ձեռք Իսմայելի յամենեսին և ձեռք ամենեցուն 'ի նա». և եթէ՝ «Առաջի նորա հուր ծա-

խիչ և վերջ նորա բոց բորբոքեալ». — յայնժամ առեալ կայսերն Հոռոմոց զմնացորդսն զօրացն՝ աճապարէր ընդ ծով և ընդ ցամաք անցանել 'ի սահմանս հեռաւորս կղզեացն արևմտից: Այն վեցերորդ ամ էր Հարաւայնոցն փոխելոյ զԹագաւորութիւն իւրեանց յաշխարհն Ասորեստանի. զի Թողեալ զերկիր ազախնոյն՝ արկանէին զաթոռ տէրութեանն 'ի Դամասկոս. որոյ նստեալ անդ՝ սկսանէր շուրջ զիւրև յոյժ և յաճախ ծծել զուղեղ երկրի: Քանզի տուաւ նմա լայն և ընդդիմակաց զօրութիւն, աշխարհակալ իմաստ, երկրաւոր քաղցրութիւն և հեշտութիւն մարդկային. ուստի չորիւքս այսոքիւք չորից անկեանց աշխարհիս հաստատակայս եկաց իշխան:

Արդ տեսանելով զանհնարին տկարանալն կայսերն Հոռոմոց 'ի Թագաւորէն Հարաւայնոյ, որ երբեմն բոց ճարակեաց զբազմամարդ հրապարակս և զքաղաքս նորա հրով, բազմահոգ վասն իւրոյ իշխանութեանն լինէր մեծ իշխանն արևելից Ջուանշէր. նախազգաստ լինէր, թէ գուցէ ամբոխն Հարաւոյ ընդ սոսա առեալ զերկիր նորա կոխեսցէ: Եւ թէպէտ կալեալ էր զԹուրքաստանեայցն հանել զանթիւ զօրսն յիւր յօգնականութիւն, յանձն առնոյր նուաճիլ ընդ լծով ծառայութեան Թագաւորին Հարաւոյ: Արդ երբեմն լսէր բռնակալն Հարաւոյ սակս մերոյ իշխանին ծայրափառ բարեբաւութեանն, զոր առ կայսրն ունէր Հոռոմոց, և կամ եթէ նա էր հրամանակալ Թուրքաստանեայցն ազգաց հանել և արգելուլ զնոսա յաղագս մարմնական խնամութեանն, անդանօր անդրերկել նախանձ 'ի միտս տիեզերակալ պարծողին բորբոքէր: Ուստի 'ի ձեռն հաւատարիմ պատգամաւորաց առաքէր երդմունս մեծամեծս և զխոստմունս անչափ պարգևաց, զի առ նա երթիցէ: Իսկ նա մեծայոյս բարութեանցն, որ 'ի խաչն Քրիստոսի փառաւոր եղեալ՝ կազմէ ընծայս բազմապատիկս և հանդերձ նոքօք յողջոյն տիեզերակալին. և նախ ժամանէ 'ի տուն

Տեառն, զոր յապաւինութիւն իւր շինեալ էր 'ի բերդն Գարդ-մանն. և անդ սրտառուչ հառաչմամբ զծածկագիտին խնդրէր այցելութիւն, զոր մեծն Դաւիթ ասէ. «Արարիչ երկնից և արդարութեան՝ մի մատներ զիս 'ի ձեռն նեղչաց իմոց»։ Նա այսու միօք հրաժարեալ մեծայաղթ յուսով զինեցաւ՝ չուեալ 'ի տար աշխարհ։ Իսկ զօրավարին Հայոց ամենայն նախարարօք ընդառաջ նորա եկեալ զուարճալից խնդութեամբ ընդունող լինէր, և մեծապատիւ շքով յուղարկէ։ Իբրև իջանէր յերկիրն Ասորեստանեայց՝ տեսանէր, զի ահա պերճ թագաւորին զաւառացն այնոցիկ հրամանաւ նորա և ձոխք քաղաքացն ըստ իւրաքանչիւր սահմանս պատուիչ լինէին, երկվարք պատրաստք և օթևանք կազմք, մինչև եհաս 'ի դուռն թագաւորին մեծաւ շքով։ Յայնժամ հրամայեալ մերձակայ մեծամեծացն ընդ առաջ երթալ նմա, ածեալ զերկվարս, յորս նիքն թագաւորին հեծանէր, և այնպէս շքեղաշուք փառօք և պատուով մուծանէին 'ի բանակն յոգնահոյլ զօրա-րեց։ Վասն որոյ 'ի հոյակապ նորա անուանն խառնիճաղանճն ամենայն 'ի տես ձեպէին համախռնեալ 'ի ճանապարհսն։ Իսկ թագաւորն հարաւոյ 'ի ծագել արևուն նախ քան զամպրա-կան ժամն յարուցեալ 'ի քնոյ հրճուալից մտօք և բարի ողջու-նիւ զիշխանն արևելից տեսանէր, և յարգուարժ փառն զա-րաւան նորա լինէր։ Ուստի ամենակատար ընդունելութեամբ և ոչ ու մի որ 'ի կողմնակալաց երկրի այնպիսի եղեն փաթ-շահարար մեծարգութիւնք. մանաւանդ յորժամ զփորձ ա-նոյր զխոհական հանճարամտութեան նորա, վասնզի թէպէտ և բազում տեսլք և յոլով ազգաց հիւղինակք ընդ ձեռամբ նորա կային հնազանդեալք, այլ ոչ ումեք 'ի նոցանէ աներ-կեան խորհուրդ որպէս Տ. Իւանշերի տայր, յորոց վերոյ պար-գևս մեծամեծս շնորհէր նմա և որոց ընդ նմայն էին։ Յետ այսորիկ խնդրէր իշխանն արևելից խաղաղական ողջոյն և հրա-ժեշտ։ Իսկ արքայն հարաւոյ վասն սևոն և սէրտ սիրոյն հաս-

տասութեան երդմունս կնքեալ՝ տայր նմա և զաջ իւր, որ չէր երբէք լեալ սովորութիւն տիեզերապետ գոռոզին օտարազգեաց ումեք տանել զայս։ Այսոցիկ այսպէս եղելոց՝ մեծավայելուչ փառօք յուղարկիւր 'ի համաշխարհական մարզպանէն, և գայր հասանէր յԱյրարատական գաւառ. ուր ընդառաջ լինի նմա 'ի Մամիկոնեան տոհմէ քաջն Գրիգոր համօրէն ազատօքն և ածէ զնա 'ի գիւղաքաղաքն իւր Արուճ։ Գայր հասանէր անդր աղաւնին սուրբ և սիւնն եկեղեցւոյ՝ մեծ հայրապետն Հայոց Ներսէս. զոր տեսեալ մեծահաւատ իշխանին հոգեզուարճ բերկրանօք լցեալ, խոնարհեցուցեալ զինքն՝ օրհնեցաւ 'ի նմանէ որպէս 'ի հրեշտակէ սրբոյ. և նովին բարեզարդութեամբ գայր իջանէր 'ի գաւառն Գարդմանն, ուր խիտ և խիտ մտանէր 'ի յարկ ազատինին իւրոյ և ընկանէր զոր ինչ ազնուական նիւթեղինացն առ 'ի զարդ հրաշագեղութեան անճառելի լուսոյն ծախել. որ և գեղագեղէս 'ի գործ արկեալ նկարեաց 'ի գմբեթէն մինչև 'ի բարաւորս դրանն պատապահիւթ կերպասագործեալ. և զդուռն սենեկին՝ զլայն տիեզերաց ունողէն, արծաթապատ հրաման տայր քանդակել։ Նա յայսու ամենայնի վերայ իբրև զերեամ մի ողջոյն հաւատարիմ խորհրդովք տիրանէր առ Թագաւորն Հայոց զինքն ցուցանէր մեծավայելուչ իշխանն Ջուանշէր։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

Արքունի երթն Ջուանշէրի առ Թագաւորն Հայոց, և օգնելն նորա Յունաց կայսերաց օժանդակութեամբ, և կենակցութեան ուխտիւ առնել։

Դարձեալ Թագաւորն Հայոց կոչէ պարգևախոստ հրաւիրանաւ զհռչակեալն Ջուանշէր արևելից իշխան, զի 'ի նախկին պատիւն ևս առաւել արասցէ յաւելուած փառաց։ Զի

ճոխք քաղաքին Բիւզանդիոյ եկեալ էին յանձն առնուլ զլուծ հարկատուութեան որդւոցն Հագարու: Վասն այն զի յի-սներորդ ամի թագաւորութեանն Կոստանդնի ինքնաձեռն ելին ներքինիքն սպանանել զնա, որոց 'ի թագաւորէն լինէր հրաման Միալ մինչև եկեսցէ անդ իշխանն արևելից: Իսկ բազմագով տէրն ըստ առաջին նուագին կազմութեամբ անդր համանէր, որում 'ի վեր քան զառաջինն անհամեմատ մեծաբանք և պատիւս հանդիպէր, զի զհարազատ եղբօր իւրոյ զապարանս 'ի հանդիստ նմա յօրինել հրամայէր և յընթրիան միշտ ընդ իւր 'ի սեղանն նստել. ուստի և եկեղցն 'ի կայսերական քաղաքէն պատուական արանց՝ նմա հրամայէր առ նորա բանս խաղաղականս գնել: Ընդ որ յոյժ զարմացեալ լինէր թագաւորն յաղագս տրամախոհ խորագիտութեան նորա, որում և ոչ սակաւ լինէր շնորհակալութիւն որ 'ի թագաւորութենէն Հռովմայեցւոց անդ պատգամաւորաց: Վասնզի բազում իրք և յօգուտ նոցա զթագաւորին հնարէր հաւանեցուցանել զմիտս: Յետ այսորիկ գերահռչակ եւս պատուով ըստ թագաւորին ալքայից զարևելից իշխանն ծայրափառել հրամայեաց թագաւորն հարուց, ընծայելով նմա զայն, որ 'ի Հնդկաց աշխարհէն քաջահրահանգ և առատառուս փիղն խրոխտաձև, որով զրունք թագաւորաց ահեղագոյն և բազմաշուք զարդարին. զորմէ 'ի յաւիտենից ոք մինչև ցայսօր ոչ լուաւ թէ առ մեծարգոյութիւն ինչ կրտսերագունից հրամայեցաւ. զնմի այսորիկ և զպարկեշտն, որ պատուական է քան զամենայն թռչունս, զոր 'ի նախամեղ ժամանակի ոչ գոյր յայլում ուրեք տեսանել փայրի՝ բայց միայն 'ի Հռովմայեցւոցն թագաւորութեան. ըստ նմին և այլ եւս մեծութիւնս՝ զուսեր պողովատիկ ոսկեպատեան մարգարտահոծ գեղաշարեալ, զպատմուճանս ոսկեհուռս ըստաւրակս և զգլխակս ոսկերկոնս, զզուարձատեսիլ ծիրանիս և որ ինչ մեծագին գոյիք ըստ թուոյ միահամուռ, որ յառաջին և մ'

այժմ. և զկառն և երկու ձիս երագաքայլս, յորս նիքն Թա-գաւորն նստէր: Նաև տիկնայն իւրոյ դշխոյին հրամայէր, զի նա ևս արևելից տիկնոջն տացէ զԹագուհեաց հրաշապա-ճոյճ զեղապարդութիւնս, զմետաքսաւէշ և զօսկեհիւսակ ըզ-գեստս. և որոց զկնի եկելոցն հրամայէր իւրաքանչիւր ումեմն տալ իբրև յիշատակ արանց զխաղակս և ձեղնակս. և ընդ ձե-ռամբ նորա փակէր զՍիւնեստանեայցն իշխանութիւն: Այլ և առնոյր զնա Թագաւորն, զի տացէ յանձն և յայնկոյս գե-տոյն Եփրատականացն իշխել: Իսկ նա ոչ հաւանէր տիեզե-րական կողմանցն միահեծան իշխանութեամբ ճոխանալ. այլ Թողու զայն յաւելուած փառաց և լոկ բնական աշխարհա-շէն բարուց բնութեանն՝ լաւ համարէր զընտանին խորհել օգուտ: Նա ակնեալ այնուհետև զԹողութիւն ծանրաբեռն իւրոյ վիճակին խնդրել հարկաց, զոր ախորժելով յանձն էառ Թագաւորն հարուց, և հրամայեաց երկակիսեալ զհարկացն լուծ Թեթևացուցանել յառաջին երրեակ չափուց զմասն մի: Արդ յետ այսչափ մեծապարգև երախտեաց, որով արար մե-ծարանս քան զամենայն իշխանաց, դարձեալ տայր նմա զաջ իւր և յաւետաքանչ պատուով արձակէր զնա: Գնայր հա-սանէր յաշխարհն իւր, փութայր ժամանել 'ի տուն Տեառն, անկանէր 'ի վերայ երեսաց իւրոց, գոհանայր զանպատում պարգևացն Աստուծոյ և ասէր. «յԱստուծոյ է զօրութիւն և փառք իմ»: Անտի իջանէր յատեանն անդր, որ ցրտային ձմե-րայնոյն էր հանգիստ և յայնժամ լինէր անդ համաշխարհա-կան ժողով, ուր տեսանէաք զնա ոչ միայն ամփոփական չափով, այլ առաւել ևս բազմապատիկ արքայական շքով պճնեալ պերճացեալ. տեսանէաք ևս զարքայականն հաւ, որոյ տե-սակն ցանկալի էր, զի ընդ գեղնագոյն փետուրն փոքր ինչ կա-նաչութիւն համեմատ խառնեալ արտաքս ձգէր, և լանջացն կարմրանիւս գոյն այսր անդր արտահէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ՝ նման զարմանալին առաւօտեան

ցօղոյ կայլից յանդաստանս ամէնայն քրտնոյ մարգարտաձև 'ի վայր կախեալ բողբոջելովք: Պարծեալ և բերանովն կամնայր, յորում բողբոջանց լեզուն իբրու դանդանք ցուցեալ՝ զլաբականանդ ծառուղունն ձայնի ըստ մարդկային բնութեան խօսից առէպ առէպ հոլովէր. և սա՝ զորօրինակ յառաջնումն անդ, Ներոնի ումեմն կայսեր 'ի սենեակսն լինէր զովող, այսպէս և 'ի վերջնումն սոսս յոգնարատիկ իշխանիս մերոյ տեսաք զնա օրհնիչ. ընդ որ թէպէտ սատանայքանչ էին զարմանք, սակայն ոչ այնչափ քան զոր հանդերձեալս եմ ասել: Զի 'ի զբօսանս խաղուց տեսանէաք յեր անդ ալքայաչու կազմութեանն արտաքոյ պարպայլին 'ի Նախադրան ճանապարհէն, որպէս առ Թագաւոր յերկրպագութիւն զայր անարի անրալի կենդանեաց վեհահասակն փիղ. որոյ գերանաձև սրունքն որպէս լըլեան ինչ 'ի վեր բարձեալ ունէին զնա, և զենկարատակէ անտի ըստ չարութեան սոցնոյն նմանութեան 'ի վայր կայս կախեալ ձեռնայր պատիճ՝ն, զոր առ զնովն շրջշրջելով այսր անդր առէպ զարձուցանելով ուղղորդաձև 'ի վեր կանգնելով, մերթ յինքն ընթանելուցանելով և ուժգնակի մանչմանի զաւրեսաութիւն շնչոյն ընդ խուչափողն արտաքս հեղով, արդարև սաստ, 'ի բեհեմութ շարժելոց գլխոյն ահարկու զարհուրանօք զողունն ունէր զընութիւն մարդոյ: Տեսանէաք և զերիվարս ածեալս՝ սիզաւորք պերճազարդք ճեմօղք ճեպօղք և ճախրապայցք, որք հողմավար թեթևութեամբ զարշաւանսըն առնէին ամէսանձ թամբօք և գեղգեղեալ զենուք:

Այս արդ սասանոր զի՞նչ ասացից և զի՞նչ խօսեցայց. զի աստուածային նախախնամութեամբ 'ի ծնէ իսկ սա 'ի փառս և 'ի մեծութիւն սնեալ. և մինչև ցայսօր ժամանակի ընդարձակեալ սա Տէր լինել առ ամենեսին ամենափառ. վասն որոյ ոչինչ պակաս քան զթագաւորս զսա տեսաք ամենայն ընչիւք. ունի և արծաթ բազում յոյժ, ծիրանիք պատուականք և հանդերձք գեղեցիկք. ակունք պատուականք և լու-

սափոյլ մարգարիտք ոչ սակաւք. նաև ամենայն ինչ լի և պատարուն: Արդ այս երրեակ տաճարեակք և տարիք երկք են, զոր սկսաւ Տէր բազմամեծար զլարկյաղթ իշխանն Եզուանից սանել, 'ի չորից ազգաց Թագաւորաց աշխարհակալաց պատուեալ և մեծարեալ յոյժ, ոչինչ նուազ գոլով քան զբռնակալսն զայնոսիկ. այլ յամենայնի վեհ և մեծ գոլով: Եւս մի ոք առաջական բարուք և անխռով խորհրդով փոքր վարկանելով զարա տիրողութիւնս՝ յաղագս ոչ ունելոյն թագ և եթ 'ի գլուխն՝ ծայրայապալիչ լինիցի Թագաւորական պատւոյ և յոգնալայելուչ մեծութեան սորա: Վասն որոյ ամենանուաստ ծառայիցս ընդարձակ եղեցի՝ ոչ ընդ Օգոստի ումեծն, կամ ընդ Տիբերայ կայսեր, այլ ընդ աստուածաշնորհ բարերարութեամբ առհեղադոյն գերազանցելումն՝ ընդ երանելոյն Կոստանդիանոսի, որ յԱստուծուստ պսակօքն պատուեալ փառաւորեցաւ, այն արդարև զքեզ ինքն՝ զբազմամեծար իշխանդ արևելից, ծորդեմ: Բանզի զինչ խնդրէ 'ի քէն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ զքեզ սանեալ՝ տէր իմ Թէոդորոս՝ եթէ ոչ հրաժարել 'ի մեղաց և սիրել զԱստուած, երկնչել 'ի նմանէ և գնալ 'ի ճանապարհս նորա, զի քեզ բարի լինիցի և որդւոց քոց յազգէ յազգ մինչև յաւիտեան:

## ԳԼՈՒԽ ԻԹ.

Տեսիլ վանջնոցելոյ սան Աստուածոյ Իսրայելի 'ի վերայ Մօշտայի սրբոյ և նահատակաբնեան աշակերտացն, և փէտ սրբոյ խաչին, որ 'ի Գիւտ էր.

Զճշմարտախօս գրուածս բանից սակաւ ինչ նուազ գոլ և միայնանալոյն Կարայելի սկիզբն անյայտ իմն էր: Այլ զայս և եթ՝ որ ինչ խորհրդոյս էին իւք, բովանդակեցաք, թէ կատարեալ սա մի 'ի լերինն նշէր նա 'ի յերկրի 'ի վերայ ծնգաց

խուրց՝ և 'ի չորրորդում պահու գիշերոյն յեզակարծում
երևեալ նմա ահեղ հրաշալի զարմանազան լոյս փայլատակեալ
և ընդ նմին ծաւալեալ հոտ անուշից, որ առլցեալ պարարէր
զնորա հոտոտելիսն, և իմաստութիւն յաւելեալ 'ի նա՝ խե-
լամուտ նմա առնել զամենայն և 'ի միտ առնուլ զասացեալ-
սն, զմեծ խորհուրդ ցուցակութեանն անցեալ ժամանակաց,
զպարգևաւէտ քարոզութիւնն — թէ ի՞բր արդեօք կամ զի՞արդ
ընկալան, ո՞րպիսի պտուղք, ո՞ ուստեք էին որք արեամբ պա-
տերազմեալ՝ վկայ անուն ժառանգեցին, կամ ո՞ւր ուրեք զաս-
տուածային ծածկեցին զգանձ, և թէ քեզ զի՞նչ պարտ իցէ
առնել: Այս ամենայն ասացեալ առ նա միանգամ և երկիցս,
զարթուցեալ այրն՝ յահի լինէր իբրև ժամ մի հարուստ. ա-
պա յարուցեալ անտի զուարթանայր, և բազկատարած եղեալ
առաջի Աստուծոյ՝ գոհութեամբ զառաւօտն կատարէր զա-
ղօթս: Նա 'ի փաղեն իբրև զմտաւ ածէր զաստուածային
բանն, թէ «Վա՜յ որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ»՝
փութացեալ իջանէր 'ի լեռնէ անտի՝ առնլով ընդ ինքեան
զեւրն արքունեակ. Ձիով անցանէր յեկեղեցւոյն եպիսկո-
պոսանցն, և մնեալ մեծաւ զգուշութեամբ առնէր մանրա-
մասնաբար զերևումն ցուցակութեան խորհրդոյն եպիսկոպո-
սին ճշգրտիւ զբովանդակն: Նա ասէ. «Տէրդ իմ՝ մի հեղգա-
ցուք զհրամանս Աստուծոյ կատարել, գուցէ իբրև զլացող
դատապարտեցիք. այլ զկնի լինելով գործոյս՝ փութապէս
կատարեա, զի յայտնեսցի Աստուծոյ գանձն»: Զայս ամե-
նայն լուեալ եպիսկոպոսին Դաւթայ, որ Մեծկողմանց էր
տեսուչ, մտախոհ եղև իբրև ժամ մի, խորհեցաւ ընդ միտս
իւր առնուլ ընդ իւր արս ոմանս 'ի քորեպիսկոպոսաց անտի
պարկեշտից, և նոքօք հանդերձ պատմեալ հայրապետին Ա-
ղուանից Ուխտանիսի: Նորա լուեալ զայն՝ ուրախութեամբ
գոհանայր զՏեառնէ՝ յոյժ զարմացեալ ընդ զուարթու-
թիւն եպիսկոպոսին, որ պատմէր զանխիլ հօրն՝ եթէ զիարդ

եղև արժանի այնմ խորհրդոյ. և յաղագս նորին իւրոյ հրա-
մայէր կաթուղիկոսն ժողով մեծ լինել և կոչել նաև զմիւս
եպիսկոպոսն Արցախական կողմանն, զոր Մեծիրանք կոչեն,
զարի այրն Յովէլ. որոյ եկեալ անդէն սաստիկ բարբառով
յանդիմանէր զկաթուղիկոսն և զեպիսկոպոսն Դաւիթ, «Թէ
ընդէ՞ր բնաւ թողէք յականջս ձեր զայնպիսի դատարկաբա-
նութիւն և անսայք ցնորական տեսլեան, զոր Գիրք մեզ չհա-
ւանին ուսուցին: Զի յետ առաքելոց և աւետարանչացն քա-
րոզելոյ ոչ եւեթ այդպիսի իրք, և ոչ այժմ լինել պարտի»:
Նա ինքն լի էր հզօր գիտութեամբ և տեղեակ Աստուածա-
շունչ գրոց: Յայնժամ պատասխանեալ առ նա սրբոյ հայ-
րապետին՝ ասէ. «Ըստ Գրոց խնդրեալ է այս. բայց զի նոր իմն
և չքնաղ է պատմութիւն տեսլեանս՝ զուցէ յԱստուծոյ իցէ.
և մեք այնմ ընդդիմանալովն՝ իբրև զլացողս գտանիցուք.
և չէ պարտ հակառակել, զուցէ աստուածամարտ գտա-
նիցուք. զի ոչ է պարտ 'ի մասց ասել զերևմանս, որ յետ ա-
ռաքելոց՝ ամենայն սրբութեանց, սուրբ խաչին հանդերձ և
գանձք երկնայինք ծածկեալք 'ի վերջին ժամանակս տեսլեամբ
'ի ձեռն մարդկան 'ի տեղիս տեղիս երևեալ են, յԵրուսաղէմ
սուրբ քաղաքի և 'ի բազում յայլ քաղաքս, որովք այժմ լցեալ
են տիեզերք և պայծառացեալ եկեղեցիք: Զի աստէն իսկ յԱ-
ղուանից աշխարհիս 'ի բազում տեղիս երևեալ են նշխարք
սրբոց, և չէ ինչ այս նոր զարմանք, որ այժմս երևի. զի ոչինչ
է 'ի գանձուց Աստուծոյ, որ ծածկեսցի յերկրի: Նա չէ իսկ
պարտ զճշմարտութիւն ընդ ստութեան և խաբէութեան 'ի
բաց ընկենուլ, կամ զգործ Աստուծոյ ընդ սատանայի լկտիս
համարել, այլ ստուգիւ քննել և ճշմարտիւ 'ի վերայ հասա-
նել, որպէս սուրբ Առաքեալն ասէ. «Թէ զամենայն ինչ փոր-
ձեցէք, և զբարին ընկալարուք»: Նա դարձեալ 'ի կաթուղի-
կէն ասէ. «Թէ մի ամենայն հոգւոց հաւատայք, այլ ընտրե-
ցէք զոր յԱստուծոյ հոգին: Արդ երթայք դուք յաջորդեալ

եպիսկոպոսքդ կողմանցն այնոցիկ և երկաքանչիւրքդ ստանկա-
նաւոր 'ի վերայ հասէք քննութեանն. առաւել խնդրեսջիք
յԱստուծոյ՝ թէ աստուածային իցէ, թէ այլազգ 'ի բաժանա-
նաց, զի սատանայի փորձանք և մարդկան խաբէութիւնք յայտ-
նի են, և Աստուծոյ շնորհքն առաւել ևս յայտնի: Որդ որ-
պէս Տէր Աստուած երևեցուցանէ և յայտնէ զխորհուրդդ ձեզ
'ի տեղւոջն՝ որ բան օրէ և մեզ ուսուցջիք»: — Յայնժամ
կամաւորութեամբ յանձն առեալ զհրամանս հայրապետին ե-
պիսկոպոսացն երկոցունց՝ Գնութի և Յովսէփայ, և առեալ
ողջոյն՝ գային Հոգւոյն Սրբոյ առաջնորդելովն յԱռաստակ
գաւառն Մեծկողմանց 'ի Չղախեան հովիտն յԱպարխական
դաշտակն առ ափն Տրատակեան գետոյն, որ է 'ի վիճակին Մեծ-
կողմանց: Եւ եկեալ բնակէին 'ի նշանաւոր այրակին 'ի Խունա-
բերձ տեղւոջ 'ի սարևանդակ վայրի. և անդ կայր մնացուն
մի քարանեղէն, խեցեղէն կերպարանեալ և խաչանիշ զարդա-
յարմարեալ՝ պայծառափայլ որմովն յօրինեալ գեղեցկութեամբ:
Որդ 'ի լինել համբաւուն այնորիկ՝ վաղվաղակի ճեպով ժա-
մանեալ գումարէին այր պատուականք, քորեպիսկոպոսունք,
երիցունք, սարկաւագունք, հարիւրաւորաց գաւառապետք,
գլխաւորք և մեծամեծ գործակալք և բազմութիւն ժողովր-
դոց արանց և կանանց, զի մանաւորեսցին աւետեան տե-
սակի սքանչելեացն Աստուծոյ: Ապա հրամայեալ եպիսկոպո-
սացն քարոզ հնչեցուցին 'ի հանդիսաւոր ժողովարանին, զի
եօթնեայ պահք և աղօթք սրբութեամբ կատարեսցին. զի կայր
ոչ սակաւ 'ի նոսա երկպառակութիւն՝ ոմանք հաւանէին և
կէսք չհաւանէին: Եւ նոյն ինքն գլխաւոր եպիսկոպոսն Յո-
վէփ՝ պատրանս համարէր: Եւ 'ի լնուլ կիրի եօթնեայ պա-
հոցն՝ Արատուն Խարայելի առեալ բահ 'ի ձեռն և եղեալ ծու-
նրը համօրէն ամենեցուն՝ զինէր ուղղորդապար 'ի նկատեալ
տեղին և հրամայէր անվեհեր բրել. ուր 'ի նմին գործ դատա-
հոյլ մարդկան բազմութիւնն զհողն զգեստիւք իւրեանց 'ի բաց

պեղէին։ Եւ մեծ ջանիւ վաստակաբեկ եղեալ՝ ոչ կարէին զանկշռելի գանձն գտանել։ Այս այնուհետև յարևելից կողմանէ զփայտաշար յարկն քակէին, ուր կանգնեալ էր սեղանն մեղսաքաւիչ պատարագի Տեառն. անդ անկեալ 'ի խոյզ և 'ի խնդիր՝ իբր կանգուն երիս փորեցին 'ի ներքոյ սեղանոյն. և ահա յանկարծակի բուրեալ 'ի տեղւոջէ անոյշ հոտ անուշից սատարիկ համեղութեան, առլցեալ համազարդ սպասաւորութեամբ յաւէտարար զյոլովիցն քաղցրացուցանէր զճաշակս. որպէս թէ ծծգրեալ նմանէր աղբուակին հասն բուրոց խընկոց և ծաղկանց զանազանից՝ մինչև զարմանալ ամենեցուն առհասարակ։ Եւ իբրև փորեցին թիզս տասն՝ գտին կողովս երկուս արծաթեղէնս՝ կապարի կնիք 'ի վերայ եղեալ. յոր տախտակ մի ոսկէձոյլ հաստահեղոյս բևեռեալ, և 'ի նմա գրեեալ տաճկերէն և հայերէն գրով։ Եւ քանզի 'ի մէջ բազմամբոխ հրապարակին այնպիսի հրաշագործութեան Աստուծոյ լինէր երևումն, այր առ այր և մարդ առ մարդ զարմացումն յոյժ յաձախէր. և զխմբեալիք կուտակեալ զեղուլին փութային զօրութեանցն առնուլ զտապանակս. զի համարեալ էին փառեալ 'ի սէր սրբոցն։ Անդ այնուհետև լինէր սրտալիր ուրախութիւն և անհամարելոյ տեսիլ հայեցելոցն. նոյնպէս և սրբոց արանց և քրիստոսասէր եպիսկոպոսաց յոլովիւք սխրացեալ յոյժ վասն զքանչելեացն Աստուծոյ՝ օրհնութեամբ մեծաւ գոհանային զանպատում պարգևաց նորա։

Եւ այրն այն Խորայէլ մեծարու եղեալ յոյժ առաջի եպիսկոպոսացն և յաչս ժողովրդոց՝ պատուէին զնա ըստ արժանի իւրում սրբութեանն։ Այս առանձնացեալ եպիսկոպոսացն Խորայէլի հանդերձ և պատուաւոր քահանայիւք, և բացեալ զկնիքս մատանւոյն 'ի սրբութեան տապանակացն՝ գտանէին զփրկագործ խաչին մասն. ընթերցեալ զգիր ոսկէձոյլ տախտակին, նորին իսկ սրբազնական քորեպիսկոպոսին, և էր գիրն այս, եթէ «Երուսաղեմեան մատնաւորեալ 'նշխարք սրբոց են»։ Իսկ

զայն աստուածային նշանն իբրեւ տեսանէր Մեծիրանց հօ-
վուապետն Յովէլ՝ բազմարեղուն ծաղկէր իւրով սաղարթա-
ծաւալ գիտութեամբն, եւ'ի բոլոր սրտէ գոհացող լինէր զԱս-
տուծոյ: Իսկ հաստատեալ ճշմարտութեամբ զանխլ Աբա-
սուն՝ հաշակեցուցանէր յականջս ամենեցուն շինող այնմ լի-
նելով, զոր երբեմն խօսեէր. նմին իրի եւ վասն առաջին գի-
մամարան լինելոյն յանցաւոր եւ դատապարտ զինքն վարկանէր
զոլ: Իսկ վասն զի յիւր նահանգին էր նախամեծարեալ վայրն,
ուր կենսատու լոյսն էր ծագեալ, վասն այն ոչ որպէս առա-
ջեկան ոք կամ անցաւոր շնորհել ումեք անդր, այլ ինքն
լինէր 'ի վերայ իւրոց գանձուց հրամանատարութեան մատա-
կարար: Իսկ զմի'ի տապանակացն առեալ՝'ի պատիւ յինքեանն
տանէր եպիսկոպոսանոց: Իսկ ընդ այն թէպէտ կարի յոյժ դըժ-
կամակ այրն Աստուծոյ լինէր, զի որ ինչ նմայն հաւատացա-
յԱստուծոյ եւ որում ինքն եղեալ էր զտակ'ի դէպ էր եւ ընդ
նորին ձեռն մատակարարել սրբութեանն Աստուծոյ, սակայն
նորա թոյլ տուեալ ըստ իւրում հեզութեանն՝ չլինէր զու-
մեքէ ամբաստան. այլ առնոյր զմնացեալ տապանակն կամակ-
ցութեամբ եպիսկոպոսին Գաւթի, եւ հանդերձ քորեպիսկո-
պոսաջօք եւ երիցախումբ պաշտօնէիւք Տեառն եւ ամենայն ժո-
ղովրդովք տանէր 'ի տեղի բնակութեան իւրոյ՝ սաղմոսիւք եւ
օրհնութեամբ յուղարկեալ հանդուցանէր զսրբութիւնն Տեա-
ռըն՝ լապտերօք լուցելովք եւ մոմեղինօք վառելովք 'ի Գըլխոյ
Վանաց սուրբ եկեղեցւոյն: Իսկ 'ի միմեանց հոգեւոր ողջու-
նիւ համբուրեալ՝ գնացեալն յիւրաքանչիւր տեղիս:

## ԳԼՈՒԽ Լ.

Պատճէն թղթոյն, որ գրեցաւ յեպիսկոպոսացն 'ի Գաղղիէ և 'ի Յուլիոյ և 'ի մեծ ժողովարանէն, թէ որպէս եղեւ Աստուած ընծ տեսանելեան.

«Ուղղաձեմ հոգեճաշակ համբուրիւ առլցեալ և 'ի շնորհաց Հոգւոյն ընկալեալ պարգև, ով աստուածային արևելից արքեպիսկոպոս Ուխտանէս, և բարեխնամող քաջազնեայ, յաւետարարգաւած զօրաւոր ապաւէնի պատրիկ տէր Ջուանշէր՝ Աղուանից իշխան, ամենայն նախարարք համանգամայն ընդ ձեզ Գաւիթ և Յովէլ՝ նուաստ եպիսկոպոսունք 'ի Տէր խնդալ:

«Աւետաբեր հնչմամբ հանդիսացուցանել ձեզ պարտիմք 'ի ձեռն հրովարտակ պատճենիս զհրաշափառ ծածկելոցն երևումն և զգլուխ սրբոյ խաչին, որ առաւել քան զառաւել յաճախեաց զյորդնայեաց զարմացումն 'ի մեր միտս: Զի որ երբեմն անհաւան և անհաւատ մնաք ձեռել իսկ վասն իրայն չառնուաք յանձն, այժմ ահա տեսող եղեաք յաւէտաքանչ ցուցակութեան խաչիս և պիտառապէս վկայեմք ճշմարտութեամբ, թէ սա է պարծանք պարծանաց: Եւ զեմող զայս տալ լռութեան մարթ էր կամ զարփիափայլ պատկերն դնել ընդ գրուանաւ, այլ յայտ է թէ 'ի վերայ կարգաց լուսեղէն աշտանակի, այսինքն՝ 'ի սրբում կոչարանի լուսատու յԱմեբառումն լինել զսա: Արդ այսուհետև մարտ է մեզ զատողագոյն հրապարակել զաւիթն զգալի մերոյ փրկութեան, զգեղեշ յարավայելուչ չորեքկերպեան զաւխկանն յաղագս մեր ընդունելով յինքեան զանհամեմատ նախակրութիւն: Զի արդարև սա իսկ է քրիստոնէից յոյս, մեռելոց յարութիւն և կուրաց առաջնորդ: Զի որ երբեմն դատապարտութեան էր անուն խաչին, այժմ հաւատացելոցս իրք եղեն փրկութեան,

որով և 'ի ձեռն սորա 'ի ներքոյ արքայականին գտաք յաւա-գաւառի, և չերկնչիմք այսուհետև 'ի բոցեղէն նետից, զի զթա-գաւորական նշանն յանձինս մեր բարձեալ բերեմք։ Ունկնդիր լերուք մտադիւրութեամբ բանիս, զոր լսէք. թէպէտ ոչ կա-մաւ յօժարեցաք հնազանդել այսմ գործոյ, այլ իբրև ոչ մար-թացաք գտանել ընդդէմ ձերոց հրամանաց, և մանաւանդ զի երկբայելի մեզ խաբէութիւն զերան կարծեցաք. սակայն ճշգիւ քննեալ շնորհիւն Աստուծոյ՝ գտաք զճշմարտութիւնն 'ի գալն մեր 'ի հովիտ մի Արցախայ՝ յեզր գետոյն 'ի տեղի մի Զգախ անուն կոչեցեալ, ուր կայր մատուռն մի։ Եւ ահա համ-բաւն հռչակէր երթալոյն մերոյ, և բազմութիւն շրջակայիցն յոյժ շեղջակուտեալ անդր հաւանէին՝ քահանայական դասք և այլք 'ի պատուական արանց, յորս ոչ սակաւ կայր հակաճա-ռութիւն զմնամարտելոց։ Բայց տեսա պահս պնդեալ եդաք երե-քօրեայ ընդ սահմանաց և յաւէժ խնդրուածոցն ի բարեն-չերոց. և սկսանէաք փորուածն առնել մերձ առ սեղանովն, ուստի յանկարծակի հոտ անոյշ բուրեաց և յաճախագոյն զմեր լցոյց հոտոտելիս, որով և յետ սուղ ինչ փորելոյ գտաք զփափագելին 'ի ձեռն շնորհաց Բարձրելոյն և յաղօթից սրբ-բոյ հօրն Խորայելի՝ կողովս երկուս արծաթեղէնս կապարեալ կնքով պնդեալ հաստափակ, յորս էր տախտակ մի ձոյլ ոսկի հաստատելոյս բևեռեալ և 'ի նմա գիր ասորի և հայ. և ըստ գրոյն բացեալ մեր առաջի սրբազան քահանայից՝ գտաք զա-մենակեցոյց խաչին մասն և այլ բազում սրբութեանց, զորոց գիրն ասաց, թէ «Երուսաղեմեան են մասունք սրբութեանց Տեառն»։ Ընդ որս և իսկ Յովէլ Նուաստ եպիսկոպոս Մեծա-պէս գոհացեալ զԲոլորից պարգևատուէն՝ զամենայն երկբա-յութիւն 'ի բաց ընկեցեալ յինէն մտացս, և հաւատով ընկա-լեալ զանխիլ Աստուն, վասն լինելոյ զիւտիս այսորիկ յիմում վիճակիս, մեծաւ ցանկութեամբ զմի 'ի տապանակացս յիմ սեփհական եկեղեցին առեալ տարայ, և զայլ սրբութիւնն

յուղարկեցաք 'ի ձեռն քորեպիսկոպոսաց և քահանայից և գաւառաց պաշտօնէից մեր՝ Գաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք, 'ի տեղի մենաստանեայց Արտազու, շնորհօք Աստուծոյ ցնծալից ուրախութեամբ և հոգևորական երգովք։

«Նոյն Տէր Աստուած զօրութեամբ և փառօք զձեզ պահպանեսցուսցէ 'ի շնորհս աստուածընկալ խաչիս երևման և բազմաւորք կենօք խաղաղականօք 'ի ցօղոյ երկնից և 'ի պարարտութենէ երկրի տացէ զանհատնեմա վայելումն երկաքանչիւրոցդ՝ հոգեծաղիկ տնօղեդ և թագաւորդ ժառանգօք մեծապահ հեղինակիդ Գ. իւանչերի։ Ողջ լերուք 'ի Տէր»։

## ԳԼՈՒԽ ԼԱ

Առ այս պատասխանի եպիսկոպոսացն՝ 'ի հայրապետէն և յիշխանէն.

«Յառաջարկեալ պատճէն հրովարտակիս, զոր շարադրեալ և կարգեալ էր՝ տեսաք, յորմէ մեծապէս զանդրջականէն գոհացաք զԱստուծոյ, որ իւրով ողորմութեամբն օր ըստ օրէ հրաշագործէ յարարածս իւր, առաւել և 'ի մեզ՝ զշնորհս ձերոյ սրբութեանդ, Գաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք—Ոսկետանէս Նուաստ կաթողիկոս և Գ. իւանչեր Աղուանից զօրավար և իշխան, 'ի Տէր խնդալ։

«Ա՛յս կենդանութ փրկութեանդ, համեցոյ մեզ յԱստուծոյ՝ յաւետապէս գոհացաք զԱստուծոյ պարգևացն և վասն խաչիդ, որ 'ի միջի մերում երևեցաւ և ծագեաց, երաց և լուսաւորեաց զաչս մեր՝ վասն այգորիկ անդադար բերանով և անհանգիստ լեզուաւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս զբարերարն, զքանչելագործն և զպարգևաբաշխն օրհնեցաք, որ շնորհեաց մեզ անապական պարգևս 'ի Սուրբ Հոգւոյն. և մեք՝ թէպէտ հեռ ի եմք մարմնով, մերձ համարեալ հոգւով

յիշեսջիք առաջի նորագիւտ խաչին։ Եւ դուք զառաքինա-
զգեստ և զպարանեալդ Խորայէլ, և զգանձդ շնորհաց հանդերձ
որոց նշանիւդ առեալ՝ այսր առ մեզ հասուցէք մեծաւ զգու-
շութեամբ, զի և մեք երկրպագեսցուք երանաւէտ համբուրիւ
հանդերձ ամենայնական ժողովովս։ Ողջ լերուք Տերամբ։

Եւ նմանապէս իսկ երջանիկ վերադիտող և սուրբ եպիս-
կոպոսն տեառն զգլխաւոր նամակին արևելից զօրավարին և
որոց կաթողիկոսին, այնուհետև չեշտակի ճեպով առեալ
զգաւեալ զանձն սրբութեանց՝ եպիսկոպոսքն հանդերձ Խորայե-
լիւ անդադար ժամանէին 'ի մեծ քաղաքն Գերմանիա. վասն
զի արևելից մեծ իշխանն Ջուանշեր և եպիսկոպոսական
Աղուանից առն նատէին ամենայն նախարարօք։ Որոց ընկա-
լեալ զլուսապայծառ շնորհն հաշտարար հանդերձ յերկա-
րէին զերկրպագութիւնն 'ի բազմախումբ հոլովմամբն. և նորա-
սամանոյց ընծայիւք և պատարագօք կատարէր իշխանն ա-
ռաջի սուրբ խաչին սեղանոյն զնուէրս իւր. և նկարեալ զՆա-
բամն՝ մեծարէր զնա կաթողիկոսաւն և ամենայն աշխարհա-
կոյտ ամբոխիւն։ Եւս հրաման տայր յուղարկել զնա խա-
չարայծառ առաքինական անդրէն 'ի վերնակողմ գաւառն
Մեծկուենից՝ 'ի բարձրաւանդակ լեառն, 'ի տեղի մենա-
տանի նորա 'ի Գիլոյ վանս։ Եւ ողջոյն առեալ հոգևոր համ-
բուրիւ երանելւոյն՝ խնդամիտ յիւրաքանչիւր գառնային նա-
ւահանգիստ։

## ԳԼՈՒԽ ԼԲ

Խնամարկէն Նախարարացն Աղուանից ցուցանէ, և անէծանէ։

Ընդ այսոցիկ յայսմ ժամանակս ասորէն խառնակու-
թեամբ զլխաւորք Եղուանից ազգաշղակս աղծացիծք ե-
զին։ Նախ՝ Թագաւորաղն Կողմայ տեառն առնն. ապա

յԱրշակաշէն գաւառին երեք տունք՝ Գաստակերայն, Ճնշմիայն և Մամհեղուն. և Կուր գետոյն յայնկոյս տունն Ջևջերւոյ, և յՈւտի գաւառի 'ի Գխն Վարազվիրոժի տունն, որ Գաքնար ունէր պատիւ. և Վարաժնու տատատունն, որ յԱրամեանն նստէր. և Ցուերակու տունն: Զսոցա անօրէն ամուսնութիւնն երանելի Հայրապետն Ներսէս անիծիւք փակեաց. և անդարձ լեալ 'ի գործեալ չարեացն՝ ամենեքին առհասարակ բնաջինջ եղեալ սատակեցան յերկրէ: Որ և յետոյ փոխի 'ի Քրիստոս սուրբ Հայրապետն և յաջորդէ զաթոռ նորին Եղիազար՝ այր բարի և աստուածային: Սա էր եպիսկոպոս Շաքւոյ, որ 'ի վախճանին Ներսիսի 'ի ժողովն անդ գտեալ բառ կոչմանն՝ ընդ այլ եպիսկոպոսունսն, զոր չարափառք ոմանք 'ի գալն նորա 'ի ժողովն սպառնացէին. և զնէի ցայգապաշտամանն ընտրեալ զայր ոմն փանակին՝ ժողովեալ առաջնորդ 'ի Պերոզապատ քաղաքի՝ կամեցան առնել կաթուղիկոս, և յայնժամ զգեստեաց զնա այսն պխդծ. 'ի տեսիլ ամենեցուն զամբաստանութեանն կուռն 'ի մէջ բերելով և անդէն վճռակայրեալ որպէս զՄատթիայն պարկեշտ այն Եղիազար՝ 'ի նոյն ժողովոյ առնու զառաքելական պատիւն, մինչդեռ բարեպատիկն Զուանշեր զաշխարհական տէրութիւնն վարէր՝ յանհատառնելի կենցաղումն 'ի կամս Աստուծոյ:

## ԳԼՈՒԽ ԼԳ

Յաղագս որբացեալ տան Խոսրովեան թագաւորականացն, և քեռոյ որբոյ Խաչէն Վերդանանեան պարագայորդեայ.

Այլ քանզի աղբիւր ողորմածեալ իշխանք էր այրն երջանիկ, և 'ի յորդահոս քաղցր փառաց իւրոց յոգունց արբուցանէր, սատակեցեալ ունելով մինչ պատերազմ ընդդէմ խարերայ

թշնամւոյն, որով սովոր են առաքինազունքն ախոյեան քաջ և ընտիր ընդդէմ նորա գտանիլ. նոյն օրինակ և սա դեղեցկազարդ արդարութեամբ էր փայլեցեալ և անուանեալ յաշխարհիս. բղխեաց արձակեաց յեղակարծ 'ի յոլովից ճաշակելիս զհամ անուշից սրբութեանց սրբոց: Յեսուսա ուրեմն 'ի յանկարծակի Հոգւոյն սրբոյ 'ի սիրտ վերակատարողին Պաւլի` տանելովն նմա զմեծն քահանայապետութիւն, ձեռնադրէ ըզնա զի կալցի իշխանութիւն շահելոյ զոգիս կորուսելոցն` որպէս մեծն Պետրոս, և զանդրանն մատուցանելոյ պատարագ` որպէս զԱհարոն: Եւ մերձաւորք և հեռաւորք խրախճանակեցք լինելով 'ի սրբական աջոյ նորա առցեն զօրհնութիւն: Բայց ահա մեծ զարմանք այն էին սքանչելեաց, զի որ յոլովից անհաւատ իւն թուէր` այն ըստ կարգի կատարէր առ նա օր ըստ օրէ ըստ առաջին խորհրդոյ վերին ցուցակութեանն. ասեմ որոյ 'ի դէպ էր առ նա առաքելական ձայնն. «Թէ զնախահրաւէր կոչեցեալն արդարացոյց Աստուած, և զարդարեալն փառաւորս արար»: Արդ յետ անցանելոյ ամ մի 'ի վերայ այնորիկ, ասեմ նախադուշակ հրամանին, որ 'ի վերուստ եղև նմա` զաղդումն ցանկութեան յայտ ունէր սուրբ երէցն խնդրել զփոխադրել խաչին` զծածկեալն սրբոյն Մաշտոցի 'ի Գիս անուանեալ գիւղն, որ յՈւտի գաւառի: Եւ վասն զի ինքն առաջին 'ի բարի եղբարց զփրկչոյն ունէր զպատուիրան խորհելով առ ամենեսեան և զգեցեալ զճշմարտութիւն Աստուծոյ 'ի ծածուկ, վասն այն բարեխնամաբար հոգացեալ ըզբոլորեցն օգուտ ոչ հոչակէր զծածուկ խորհուրդն 'ի հանդէս ամբոխից և խուսափել ջանայր 'ի մարդկան գովեստից` փախչելով 'ի փառամոլ և 'ի մնապարծիկ ախտից: Վասն այնորիկ զմի ումն 'ի սրբասիրացն քահանայից 'ի նախամեծար պաշտուաւորաց հեռեաւ իւրումն գիւտին առնէ. և ոչ ժողովել կամէր զերթն, այլ նովաւ հանդերձ հասանէր 'ի նախատացեալ վայրն` 'ի Հին եկեղեցին: Եւ ոչ զինելով ստուգել և

նշմարել զաւելին՝ նոյնժամայն նշան զարմանալի լինէր 'ի վե-րայ սաղարթաւոր ծառոյն նոճից, որք երկաքանչիւր աստի և անտի միջաւորեալ ունէին յինքեան զկոչարանն սուրբ, յոր իբր թէ ծագումն ինչ լուսոյ երեւեալ բացաձաձանց կամարա-ձեւ միացեալ ընդ գմբեթին և բոլորակ սահեալ ձառագայ-թէր 'ի ծայրս ծառոց նոճից և նման աղեղանց, որ յամպս ե-րեւի՝ փայլակնաւոր ցայտէր 'ի սարադրեալ քարատաղ և ա-ղեւաշար սպուրակն, ուր կայր դադարեալ խաչն Քրիստոսի։ Գիտացեալ այնուհետեւ սրբոյ առն, եթէ յայնմ տեղւոջ է զանձն անկապուտ, առնոյր 'ի ձեռն բրիչ՝ պարեգօտեալ իբ-րեւ զայրն Աբրահամ, սկսանէր բրել զնկատեալ տեղին իւրով համահաւանեալ արամբն։ Եւ իբրեւ փորփորէր հինգ քիլ կամ թէ աւելի ինչ՝ յանկարծակի երեւէր առաջի մի արծա-թի ժանգատագոյն հնացեալ, որ ունէր առհասարակ հայ, հռոմ և ասորի գիր և ցուցանէր 'ի նմա գոլ զնման կենդա-նարար փայտին. և կայր անդ նշանն Քրիստոսի արծաթա-ձոյլ գեղապանեալ ոսկիազօծ տնակաւ, որ յաւէտ է 'ի խա-չէն Քրիստոսի։ Ապա այնուհետեւ հրճուալից եղեւ յոլովակի խնկարկութեամբ այրն Աստուծոյ և զուարթանայր հոգեծա-ղիկ պայծառութեամբ, և յարակից լեալ մարմնաքնար Դաւ-թի երգոյն, յօրինէր նուագս երաժշտականս. «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ» և որ 'ի կարգին է՝ վասն շնորհելոյ եր-կիւղածաց իւրոց զնշանն, որ միշտ ապրեցուցանէ 'ի թշնամ-ւոյն. և զանխլաբար ընկալեալ զայն նշան փրկութեան՝ յիւրն բերէ յեկեղեցի։

Յաւուրն յայնմիկ յերեւել նշանին և 'ի գալ հասանել 'ի հանգստարանն՝ մեծ և հրաշալի զարմացումն լինէր, զի լռել անհնարին էր զահեղ մեծ փառացն Աստուծոյ։ Զի որպէս Կիւրեղ, որ յԵրուսաղէմ էր հայրապետ՝ գրութեամբ առ Կոստանդիանոս վասն երեւման խաչին ասէր, թէ ցայտք լու-սոյ մինչեւ 'ի Ձիթաստանեացն լեառն ոչ միում կամ երկրոր-

գումն երեւալ, այլ ամենայն բազմութեան քաղաքին ան- յայտնի ցուցեալ երեւէր՝ նոյնգունակ եղեւ արեւելից աշխար- հիս լուսոյ խաչիս երեւումն։ Զի հարթ հասարակ ամենեքին ուսանէին զաստուածութիւն լուսոյն բոցանմանից փայլմանն ե- կեալ ընդ ամպս երկնից՝ սլացեալ յայտ յանդիման ամենե- ցուն եկեղեցւոյ չորհայցն 'ի վերայ ամենասուրբ խաչին՝ երբեմն 'ի նմանութիւն հրոյ, երբեմն 'ի նմանութիւն լուսոյ, և եր- բեմն 'ի նմանութիւն աստեղն, որ ծագէ յառաւօտուն, զոր ոչ մեք, այլ աշխարհ ամենայն եղեն տեսողք մեծապայծառ ճա- ռագայթիցն։ Զի մինչ ընդ երկինս ցոլացեալ էր մերձ առ տեղեաւն տաճարին Տեառն, ոչ միայն բնակչաց քաղաքին, այլ և շրջակայ համափիւռ ամենայն գիւղից և քաղաքաց, արանց և կանանց, հովուաց 'ի լերինս և անդորդաց 'ի փոս ճարակողաց և արդիւնաւորաց 'ի դաշտս, որք աշխարհականք զպտուղան կապանէին, և բազում ճանապարհորդաց բացօթե- ից, 'ի հինգերորդում պահու գիշերոյն այդոքիկ ամենեքեան տեսանէին զարփիահրաշ զքանչելիսն։ Իսկ եկեալ բազում ճե- պով ընդ այլ բազում տեսողսն՝ ահիւ քաջալեր քայլափա- նաց խառնիխուռն խմբելոցն հոյլք հոյլք 'ի հանդիպի բացար- ձակ տեսարանին ընուին զցանկութիւն փափագանացն, համ- բուրելով զսուրբ խաչն Քրիստոսի։ Իսկ ընկալեալ զշնորհս և և զօրութիւն 'ի նոյն բիքն 'ի անճառելի զինէն՝ զհանդեր- ձեալ փայլուն յաղթութեանն առեալ ընդունէին զպարգեւս։ Իսկ զի բազումք 'ի գլխաւորաց աշխարհիս 'ի կողմանց կող- մանց եկեալ էին 'ի տօնն տէրունական նշանին, վասն սորին և ահեղ նշանացն, որք երեւէին 'ի վերայ խաչին, ոչ իշխէին զգիշերն յարկսն յայն մտանել կամ 'ի դաւթին օթել. այլ ե- լանէին արտաքս 'ի սարեւանդակ վայրս և զգիշերն ամենայն անդ արօթէին մինչեւ ցառաւօտն։ Իսկ 'ի ծագել արեգական մտանէին 'ի դաւիթ եկեղեցւոյն առաջի խաչին ահիւ և երկիւ- ղիւ, և խիղճն յարեալ 'ի հսկումն խաչապայծառ տօնին՝ կա-

տարէն զգոհացողական պատարագն 'ի վերայ սեղանոյն: Ապա յետ երեւելոյ հրաշիցս այսոցիկ վերստին ընձիւղեալ վերածաղկէր հզօրեղ աստուածընկալ խաչն աշտարակին մեծի, յոր դաւանիլ հաւատալ արժանաւորեցաք յԱստուծոյ, որ միշտ ըղձեօք պահպանութեամբ պարունակեալ զիւրոյ արարչութեան գործ ձեռաց անվթար տայ մեզ նշանակ զփրկական կայմն, զպարզողն 'ի մեզ զաստուածգիտութեան առագաստ. ուր դիտութեանց գալլացն ջուրք և ուխտի մանկանց դասք արտաքս մնային, զի 'ի նոցանէ էր ծածկեալ խորհուրդն: Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին այնորիկ, որ էր 'ի հին եկեղեւոջն, զծագումն խաչին, քաջայօժար կամաւ երթայր 'ի Մեծկուենիցն գաւառն 'ի Գոլկայ վանաց եկեղեցին, և անդ զաւրրըն տեսեալ հեղինակ, Խորայէլ անուն՝ անկեալ առ ոտս նորա՝ պատմէր զանխիլ իւր յանուրջս և մաղթէր յայտնել նմա զերազն հանգամանս: Իսկ նա ոչ առնոյր յանձն յայտնել նմա զխորհուրդն, որով դառնայր նա 'ի տեղի իւր: Եւ 'ի վաղիւն առ նոյն այր երկրորդէր նոյն տեսիլն՝ ունելով և ձեռագիր նշան, զոր բերեալ տայր առն Աստուծոյ. որոյ զայն տեսեալ և հմտաւորեալ, թէ 'ի վերուստ է ազդեցութիւնն, յայտնէր նմա զխորհուրդն՝ զնոյն ինքն զկենսատու խաչն ցուցանէր, և երդումնապատիժ սահմանադրութեամբ պատուէր տայր նմա՝ մի ումեք պատմել: Բայց նա թէպէտև բազմադաշն լեալ էր երդմամբ չպատմել ումեք, սակայն յետ սակաւ աւուրց դըրժողաբար ուխտադանցեալ երթայր առաջի կաթողիկոսին և այլոց ամենեցուն հռչակէր զերազն, զի չէր պարտ պարածածկել ճշմարտութեանն. ընդ որ հայրապետն Եղիազար հիանայր վասն պարգևական աւետեացն: Եւ նոյնժամայն կամաւ իշխանին Ջիւանշիրի գիր հրամանական առ Խորայէլ առաքէ՝ փութանակի զչքնաղագիւտ խաչն Փրկատուի առ նա հասուցանել: Իսկ նորա հնազանդեալ հայրապետական հրամանին՝ փութով հասանէր 'ի սուրբ եկեղեցին և ինքնին մեծ

իշխանն՝ և սուրբ Հայրապետն ամենայն մեծամեծօքն անդ
հասանէին, և ակն յայտնի զնորոգափայլ խաչն Քրիստոսի տե-
սանէին, որ որպէս Մաշտոցի իւր եւս ձեռացն լեալ էր, որով
դարձուցանէր զաշխարհս Աղուանից 'ի կռոցն մոլորութենէ
լուսածնութեամբ աւազանին շնորհաց: Եւ երկրպագեալք
որպէս նշանին՝ զաւանդելին յարազուարձ բերկրանօք՝ զանձա-
լի պարգևաց տուողն բարերարելով:

Յայնմ հետէ մեծարու եղեալ քահանայն Աստուծոյ Խա-
չիկ առաջի կաթուղիկոսին և իշխանին և յայս մեծամե-
ծացն՝ առնոյր հրաման 'ի նոցանէ գործել զամենայն համար-
ձակապէս. և յետ սուղ ինչ աւուրց վասն առաւել հրաշիցն
և մեծամեծ սքանչելեացն, որ բազում անգամ եղեալ էին 'ի
վերայ ծառոյն նոճից, կամեցաւ զի 'ի նուէր նշանի ձօնեսցէ
զնոսա 'ի պատկեր տնտեսնանման խաչին: Եւ առժամայն կոչե-
ցեալ զվարձաւորս արս ճարտարս հիւսանց պատշաճաբար յօ-
րինել տայր զնշան խաչի՝ քանդակակերպ զարդուք դրուա-
գելով, պատրաստութեամբ զամենայն լաւ գործոյ Տեառն:
Զայնուիկ լուեալ եպիսկոպոսապետին և Ջուանշերի՝ գրեն
առ այրն Աստուծոյ Խաչիկ, զի և նոքա հաղորդեսցին հա-
սանել 'ի ժամադրութիւն նուակատեաց նշանին և յօծումն
որպէս խաչին, որում մեծաւ լըջմտութեամբ քաջահաւան ե-
ղեալ քահանային Տեառն՝ պատրաստական յօրինէր զպէտս
կազմութեանն նուիրական տանն լաւ օրինակի խաչագարդ պայ-
ծառութեանն: Այլ նոքա հեզգական ծուլութեամբ չժամա-
նէին հասանել յանդրու գործոյն. և յայնժամ տեսիլ Ա-
տուծոյ երևէր 'ի վերայ պատրիարգին Եղիազարու, զի մի
պղերգասցի երթալ օծանել զխաչն Քրիստոսի. որոյ պարա-
ռաբար յարուցեալ յառաւօտուն փութապէս հասանէր 'ի
կարգեալ եկեղեցին 'ի վիճակին Գիս անուամբ նուհանգին: Եւ
յայնժամ իշխանն մեծ չուեալ էր 'ի կողմանս հարաւոյ 'ի
Արտականացն գաւառ: Եւ վասն զի նմանակիր առաքելոյն էր

բանիւք և գործովք՝ զպատրանաց ցնորս վրէժխնդրութեամբ վանէր, զորինչ զճշմարտութիւն ծաղկէր՝ պսակ պարծանաց վարկանէր. ծանուցանէր, թէ աստուածպաշտութեանն է խորհուրդ զարմանագործ տեսլեանն, որ երբեմն առ Իսրայէլ քահանայ, և ընդունէր զնա իբր զԱստուծոյ պատուէր: Եւ հանեալ մասն 'ի սրբոյ խաչէն Մաշտոցի դնէր 'ի փայտակերտ նորոգաշէն նշանն. օծանէր զնա իւղովն օրհնութեան և կանգնեալ 'ի մէջ եկեղեցւոյն՝ առնէր նաւակատիս մեծապէս խընճովք, հռչակաւոր հանդիսիւք եկեղեցական ուխտիւ և հաւատացելոց դասուք:

## ԳԼՈՒԽ ԼԳ

### Մահ օրհնաւորին Ջուանշէրի Մեծի իշխանին:

Եւ եղև 'ի ժամանակին յայնմիկ խաղաղ գնալ մեծի իշխանին Ջուանշէրի 'ի կողմանս լեռնականաց 'ի զբօսանս բոլոր տարեկան աւուրցն՝ հրճուական երկայնակեցութեամբ, և յոգնայարդար զուսանօք, ուր և խոհականութեամբ նուաճէր զամենեսեան ընդ իւրով իշխանութեամբ և բոլորովին բարեբաստիկ եղեալ գերազանցութեամբ իմն և խրոխտաբար զամենայն ինչ յօրինէր իմաստակիր քաջութեամբ: Բայց ապա ըղձալի հռչակաւորն այն, զի 'ի ձեռն խարդաւանող ախոյին ընդդէմ Աստուծոյ երկամտէր պատուիրանին, թափուր և ունայն 'ի նորայն փառաց եղեւր. և ամենայն ինչ սարգի ունայն եղեալ փոփոխակի չքնաղն այն քաղցր փայլչութիւն:

Զի 'ի ժամ տապակէզ աւուրցն առեալ գերահրաշ պետականին զազատազարմ տոհմն հանդերձ նամեստական գընդիւն 'ի հովիտս բարձրաբերձ լերանցն՝ բերկրէր, և ծաղկատեսակ հանդատեամբ 'ի գեղեցիկ մարգս յոլովէր զուարս բարեկեցիկ յղփութեամբ: Իսկ իբրև անցանէին աւուրք խորշա-

կայեղց տօթոյն 'ի ժամանել բարձրութեան տանի Նաւակա-
տեաց խաչին, համբարձեալ 'ի կողմանցն յայնցանէ՝ դայր ան-
ցանէր յՍեամի գաւառ 'ի Պարսս. քաղաք յիւրական դեղա-
գարդեալ տաճարն. և անդ պարգևածիր մեծարանօք 'ի հան-
գիստ ւոր տանին Աստուծոյ մատուցանէր երկրպագութիւն։
Իսկ մինչդեռ հանգուցեալ էր մեծաւ ուրախութեամբ մեծա-
հաչակն Ջ-խանչեր, այր ամն տարօրէն և փառանշան 'ի կա-
յենեանն ընկղմեալ անտ՝ 'ի հրապոյրս խարդախութեան զըն-
կերս իւր համահաւանս արարեալ, — որ ոչ զսէր նորա և ոչ
զպատիւ տան հօրն իւրոյ, զոր դնեալ էր 'ի նմանէ մեծա-
պարգևօք՝ յիշէր ինչ — մահ խորհեցաւ 'ի վերայ նորա՝ խոր-
հուրդ փառ արկեալ 'ի միտս իւր. և հրապուրեալ զնա 'ի
պատճառս բղջախոհութեան՝ փառատարառիր բանիւք հա-
ւանեցուցանէր զնա եղանել 'ի զբօսանս խոհերականս։ Իսկ մինչ
'ի տաճարէ անտի ելանէր իշխանն ընդ ճանապարհ պարտիզա-
յար ծաղկոցացն, 'ի գիշերի յառաջին պահուն անխահան և
թուր միայն ունելով, ուր սպառազինեալ սուրհանդակ պա-
հապանացն ջոկք՝ անհոգ և անխեհեր 'ի դրունս պալատանն
անկեալ կային ընդ քնով, առեալ չարաբարոյ Ենիկոյ դա-
ւաճանողին փարազայի զփողըն արքունական՝ զաւսերն պոռ-
փառիկ և զխահանն ուկեխնձոր, դաւով յառաջապահ լի-
նէր 'ի պատճառս և բառ օրինակի ղէնակրութեան. և ինքն
անօրէն նենգաւորն 'ի ծածուկ փակեալ ագեալ էր զնահս 'ի
ներքոյ պատմուճանին իւրոյ։ Այա իբրև հասանէին 'ի միջ-
նափայր անդր բուրաստանին և մերձ էին 'ի պարսկ որմոյ,
որ պարունակեալ էր զպյնատարած արքունական բանն, որ-
պէս այլով ամենայնիւ խմատոյեղց էր անմխանդն Ջ-խանչեր,
այժմ ևս զխաոց զննդութիւն պանողին պխառկահոյլ դա-
ւոյն. և 'ի հնչիւն ձայնի փառելոյ զըահին պակուցեալ սրտաբեկ
լինէր՝ համարելով, թէ աշխարհախումբ խորհուրդ է փառն
իւրոյ սպանմանն, և լռելեայն 'ի տաճարն կամէր դառնալ։

Իսկ անօրէն ապստամբն զաւակն Թերաքամեալ ուռելով՝ յանկարծակի յետուստ կողմանէ հարկանէր զեշխանն արի ստատիկս վիրաւորեալ, զի մերկ էր 'ի զրահից, այլ չկարէր սակայ զնա յաղթահարել. որով և ամաչարէր նա որպէս առիւծ մանչող ձեռն 'ի գործ արկանել սուսերան: Բայց զի զօրութիւն բարձրելոյն հեռացեալ էր 'ի նմանէ՝ մատնելով զնա 'ի ձեռս ձեռնասուն սիրելոյն նորա, յառաջնում նուազին իրրև 'ի վերայ նորա յարձակէր սուսերան՝ նորա յապարն առեալ ընդդիմամարտեալ արձանանայր. և խրեալ զգէնն 'ի սկրա փահանն՝ ոչ կարէր հանել զսուրն և անդրէն առնուլ ամենևին: Իսկ նա լցեալ վիրագայլն զազանութեամբ զայրագնեալ վիրաւորէր զամենայն մարմինն նորա, և իբրև զթիւնաւոր օձ խածանող սատանութեամբ նշանակաւոր և փաղակաւոր խոցոտմամբ՝ անխնայաբար յերկիր ընկենոյր զիւր տէրն. և յորում 'ի ծոյն թափիլ՝ փարկանելով տիրասպանին կիսամահ զնա արարեալ՝ զանխլաբար արտաքս ելանէր՝ յիւրն երթալով տուն, կեղծաւորեալ ոչ տալ կարծիս, որպէս թէ յանդէտս 'ի տան ննջեցէ: Իսկ ահա անդուստ ուրեմն իրազգած լեալ իրացն եղելոց՝ գոյժ աղմկի խռովութեան հնչէր և կանչառ ամբոխին բազմանայր. յորոց մի ոմն յեղբայրական հարազատաց փոխմայրութին՝ զեկուցեալ նմա զանցս իրացն զոր գործեալ էր, անդէն փութապէս հեծեալ նա յերիվար փախստական լինէր: Յայնժամ պատրիկ ոմն քեռորդի իշխանին՝ առեալ զիւր ամենահական լեգէոն զնդի յիւրեանն զհետ ելանէր մահապարտին, բայց ոչ զգացեալ հասանել նմա վասն նախափախուստ լինելոյն, 'ի վերնակողմն երթայն յԱրցախունեաց գաւառն նմին իւրոց քենախնդիր. և զտուն հօր նորա աւարեալ քանդէին հրդեհարաց կիզմամբ, և զնստաքսանէչ և զկերպասանիւթ զդիպակս, և զգոյնազոյն կազմերս, զոսկի և զարծաթ և զինչս ընտիրս կահուց և սպասուց աւար առեալ. և ինքեանք ապրմոդոչ տրտմաւոք անդրէն դառ-

նոյին, լոյսն զիշխանն և աշխարհին։ Նմա զի դեռ շունչ նորա 'ի նմա կայր, սուղ ինչ աւուրս անէր կենդանի. և որդւոց իւրոց իւրաքանչիւրումն զգանձս և զպատիւս յայտ առնելով՝ կարգէր զնոսա 'ի բաժինս նոցին. և 'ի դժնդակ վիրացն պակասեալ վախճանէր։

Յայնմ ժամանակի ոչ սակաւ խռովութիւն լինէր աշխարհիս. զի կուսեալ զենեալ խուռն կանանցն, և մեծամեծ նախարարացն ժողովեալ, և ամենայն երկիրն առհասարակ վայիւք լի եղեալ՝ ողբային զիշխանն կականաւոր և դժնդակ գոչմամբ. որ այնպէս անտանելի սուգ և անհնարին բեկումըն աշխարհիս հասոյց։ Յայնժամ ճարտասան ոմն 'ի մէջ անցեալ, տեղեակ արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ՝ հնարագիւտական վարժիւքն յաջողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ, յառատաբեր բանից պաճուճանացն ճարտարութեամբ և քաջապէս հրատարակող, լեզու ունելով նման երագագիր գրչի, առ յոլով աւուրբք յառաջ ժամանէր 'ի դրան արքունի։ Նա իբրև հասանէր որհասական շշուկն 'ի վերայ արևելեց աշխարհիս սակս յանկարծահաս սպանման մեծի զօրավարին, յայնժամ սկսեալ նա երգել ըստ ալփափետաց գլխակարգութեանց զողբս զայս 'ի վերայ բարեացապարտին Ջուանշէրի, և ասէր այսպէս.

## ԳԼՈՒԽ ԼԵ

### ՈՂԲՔ

'Ի ՄԱՀՆ ՋՈՒԱՆՇԷՐԻ' ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ.

Աստուածային բանին արուեստաւոր հոգի,
Յօրինեա իմաստս 'ի տխրական երգմունս,
Զի ողբալի ձայնիւ անդադար ողբասցուք
Ի վերայ դժնդակ կորստեան մերում:

Բեկումն մեծ որ եղև արևելից աշխարհիս
Ի՛աղաղակ կործանման հնչեաց ընդ երկիր
Ազգ ւ'ազինք լուիցեն զբարբառս իմ,
Երկրածինք ամենայն ողբասցեն ընդ իս:

Գլորեցաւ վէմն կենդանի և հզօր
Եւ պարիսպն ամրութեան խորտա՟կեցաւ,
Աշտարակն բանաւոր տապա՟լեցաւ,
Եւ ցանկն շինութեան խրամատեալ քակեցաւ:

Դարձաւ 'ի դառնութիւն խաղաղութիւն մեր
Եւ գլուխք հինից անդացին 'ի մեզ,
Զի մեծաքանչ տէրութիւնն կործա՟նեցաւ
Հրաշալի պետութեան շիջաւ ճառագայթ:

Եկին հասին 'ի վերայ մեր անէծք,
Զոր կանխագոյն սպառնայր մարգարէն Եսայի,
Զի զաւուրս տօնի տէրունեան նշանին
Դարձուցին մեզ 'ի սուգ, 'ի լալիւն դառնութեան:

Զանգիտ կորստեան փորեցին խորխորատ
Զի զհովիւն բարի ընկլուզեցին 'ի նմա.
Հոգի մոլորութեան շնչեաց 'ի նոսա,
Ի նմին թագուցին զորոգայթն մահու:

Ուր նստեալ որպէս առիւծ 'ի մորւոջ
Եւ լռեալ 'ի նմանէ սարսէին թշնամիք
Տէրք տոհմից և իշխանք ամենայն
Երկիւղիւ և սիրով հնազանդէին նմա։
Ընդ ամենայն երկիր ել համբաւ նորա
Ի ծագս աշխարհի ծաւալեցաւ անուն նորա
Զի զհնարիմաց զօրութիւն և զհանճարեղ իմաստն
Քանղխաւոր հնչմամբ գովեցին տիեզերք։
Թագաւորն Յունաց և աշխարհն հարաւոյ
Տենչանօք խնդրէին տեսանել զդէմն
Յոգնամեծար ողջունիւ ընդունէին
Եւ փառօք պսակեալ պատուէին մեծապէս։
Վամանեցին առժամայն չարիքն մեր
Եւ անզեղջ մոլորութիւն յանդիմանեաց
Բարեկացուցաք զԱրքային գործովք մերովք
Եւ մատնեաց 'ի կորուստ զնախագահ տէրութիւնն։
Ի բաց մեկնեցան պահապանք (նորա),
Օգնութիւնք վերնայինք հրաժարեցան 'ի նմանէ,
Զի Տէր հեռացաւ յաւուր չարի
Եւ եթող զնա կոխա՛ն ժանտից։
Լարեաց աղեղն իւր բանսարկու թշնամին
Եւ սրեաց որպէս սուր զնենգիչ սիրոյն
Զարաչար խոցոտմամբ հասոյց 'ի վերայ
Որպէս յազգին Մովարու 'ի գիշերին սատակումն։
Խարդաւանող խորհրդով սարեալ մեկուսի
Անողորմ խոցոտմամբ վիրաւորեաց զվեհանձն....*)
Ծնունդ չար որ մեղաւ նմա,
Որդի անօրէնութեան, որ չարչարեաց զնա,

*) Ցերկարին օրինակս մեր պակասին ստանաւոր երկու հետագայ տողքս։

Անիծիւք պարուրեալ գնասցէ ընդ երկիր
Եւ Կայենի երկրմամբ վարանեալ շրջեսցի։
Կապեսցին շաւիղք փախստեան նորա
Եւ Թռչունք երկնից ճախրեսցեն 'ի վերայ նորա
Ագռաւք ձորոց պատեսցին 'ի նմա
Եւ գազանք վայրենի պատառեսցեն նմա։
Քուրն Քերովբէի առաքեսցի նմա
Եւ ծնցին 'ի նմա որդունք և մլունք
Աղեկէզ տոչորմունք բորբոքեալ 'ի նմա
Կերիցեն առժամայն զոխրատական մարմին նորա։
Ձեռն որ ձգեցաւ 'ի սպանանել զաբէլն,
Աչք որ կոխեցին զհրաշալի պատկերն
Ուրկածին ախտիւ եռացմամբ գոսացեալ՝
Յարեսցին 'ի նա ցեցք չարակեղ խոցոտմամբ։
Դողեալ համդիցէ ընդ հովանեաւ դժնկի
Եւ կորիւնք իժից մեղիցեն նմա
Թոյնք քարբից հեղցին զնովաւ
Սատակագոյն ուռուցմամբ հերձցեն զնա։
Արագ ճշմարիտ խաղաղութեան էր նա մեր,
Նաւապետ ցածուցիչ խռովութեան ալեաց
Ընձն քաջին Զ.խանչերի,
Որ զամենայն գերչաց փարատէր դժուարմանս *)։

*) Որպէս ընթերցողն ինքնին կարէ նկատել, «[illegible]» 'ի Դաւթակ քերթողէն թերի է. յերկոսին օրինակս մեր մինչև 'ի Մ գիրն հասուցանէ գրիչն զայս ողբ. 'ի ձեռագրին խանձիւռն իբրև բան սրձակ եղեալ տեսանէր այն, զոր մեք ուշի ուշով ընթերցեալ՝ գտաք 'ի նմա չափ և քանակութիւն, յայս սակս և բաժանեալ որոշեցաք զիւրաքանչիւր չար բանից տառանձինն, որպէս տեսանել ունի ընթերցողն 'ի վեր անդր։

## ԳԼՈՒԽ ԼԶ.

Վասն Վարազ Տրդատայ լինել իշխան յաթոռն Ջուանշէրի, և Հոնաց վերծննդութեան նորին մահուան, և այլս առ նման անել եղանակութեան.

Եղև յետ այնորիկ իբրև մեկնէր ազատութիւնն, փառաւէր սուգն և փոքր մի մարտակուտական աղետիցն լինէր մոռացումն, յայնժամ անապք առհմից, կուսակալք, մեծամեծք, նախարարք և ամենայն իշխանք աշխարհացն այնոցիկ ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսն Եղիազար՝ խորհուրդս բարեաց վասն խաղաղութեան խորհէին և շինութեան աշխարհիս Աղուանից՝ և մտադիր մտածութեամբ հոգացեալ ասկոս իշխանութեան՝ համեցան առժամայն ընտրել համախութեամբ զնախարար մի, որ մեծարեալ էր կայսերականօք պատուով զավեհի պատրկութեան առացեալ պատիւ, որոյ անուն Վարազ Տրդատ, որդի Վարազ Պերոժի՝ եղբօրն Ջուանշէրի: Եւ սորայօժար կամակցութեամբ իշխանք աշխարհին և կաթողիկոսն Ճեպեցին մեծաւ փութով համանել ՚ի կատարումն գործոյն. և ամրքէն ամենայն մեծամեծքն առհասարակ գնչան կենդանատանակ գրոշեցն վառեալ ՚ի ձայն փողոյ հռչակեալ, առեալ կացուցանէին զնա ՚ի վերայ ամեհանգոյց փոհանն և երկիցս վերաբերելով՝ ներբողական հնչէին բարբառս: Եւ այսպէս մեծաւ ուրախութեամբ ամենեալ նմա զպատիւ նախագահ իշխանութեանն հայրենական գահոյին՝ օժտարեր և ընծայաբեր լինէին նորոգ նորա անքութեանն, որ նախ յառաջ քան զայս արք այրն Վարազ Տրդատ հզօրմամբ հանձարով գերադոյն յոյժ ցուցանելով անձեցուն զաէր խնամակալ բարեկամութեան, իբրև յայն խնկ համանէր իշխանութեան գահ, թէպէտև անբեղոյ միոս ունէին ընդ նմա անեք ՚ի մախաղորդոր առհմանկցացն, բայց նա ՚ի ձեռն խնամակիր և քաղցրահամբոյր խօսից նուաճէր և

յինքն յանկուցանէր զամենայն սիրտ, և երկայնամիտ հեզութեամբն հնազանդեցուցանէր զաշխարհն ընդ ստորական իւրոյ տէրութեանն. և 'ի նոյն ամապարեալ՝ ունէր զհաւակուոր մայրաքաղաքն Պարտաւ: Յայնմ ժամանակի զօրավարին և մեծ իշխանին Հոնաց Աշփիւղէ Թուերոյ առեալ ըզբազմութիւն զօրաց իւրոց, և որք ուստեք ուստեք եկեալ էին առ նա աշխոյժ ադինեայք յաշխարհէն Գուգգայ՝ 'ի գէն և 'ի զարդ վառելոց զօրապետաց՝ դրօշիւք և գնդիւք մնդակապգեաս աղեղնաւորաց, և սպառազէն հեծելոց զրահեալք և սաղաւարտեալք՝ իբրև թէ վրէժխնդիրք արեանն Ջւանշէրի. ասպատակ սփռեալք յաշխարհն Աղուանից և առ ստորոտով մեծ լերինն Կովկասու և յաւանս Կաղանկատայ գաւառին, ենքըն իւրովի յոգնական գնդիւն ընդ հովիտս դաշտացն ձախոյ առեալ՝ անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր: Եւ ահա աստիկս ամփոփեալ զմարդ և զանասուն աշխարհին, աւար առեալ գերէին զամենայն. և ինքեանք անդրէն դարձեալ բնակէին 'ի կողմանս դաշտին առ սահմանօքն Լփնաց: Իսկ իբրև ետես իշխանն Աղուանից Վարազ Տրդատ զայն ամբոխ բազմութեան գնդին՝ զի ասպատակ սփռեալ գերէին, քանդէին զամենայն, նեղեցաւ յոյժ և տարակուսեցաւ: Ապա առաքէր պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ եպիսկոպոսապետն Իսրայէլ՝ ցուցանելով 'ի ձեռն նորա զիւր միամիտ հաւատարմութիւն և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրու եղբօր սիրելւոյ, և թէ չեղաք մեք հաղորդ սպանմանն Ջւանշէրի, այլ 'ի ձեռն փառամոլին առն միոյ նուաղադունի եղեն ոճիրքն անհնարինն չարեաց: Զայս ամենայն խօսեցաւ կաթուղիկոսն Աղուանից առաջի հիւղականին Հոնաց, որոյ յաւելեալ և զայլ բանս աստուածայինս զանգիտականս՝ մերձեցուցանէր զնա յերկիւղ և 'ի սէրն Աստուծոյ, և նուաճէր զմիտս նորա 'ի հաշտութիւն և 'ի սէր անքակտելի. և ապա հաւանական մըտօք զիշխանն Հոնաց օգնական և թիկունք նորա իշխանու-

թեանն առնէր: Եւ ինքն չուեալ անտի՝ անցանէր գնայր յաշ-խարհն իւր:

## ԳԼՈՒԽ ԻԷ

Վասն յաջորդելութեան Վարազ Տրդատայ, և ընդունել զնա և գո-վել 'ի նոցանէ, և վախճանի Դաւթի Մեծկուենից եպիսկոպոսի և Իսրայելի ձեռնադրել զնորա նորին, որ եղև առաջնորդ Բագրեւանդ յետոյ կոչմանն.

Այնուհետև աստուածարեալ իշխանն Վարազ Տրդատ օր ըստ օրէ յառաջանայր 'ի պետութեան իւրում, և ընդունէր զգերագոյն գահն 'ի հզօր և յաղթայակիրոյ իշխա-նէն Տաճկաց՝ սահմանակալ լինել կողմանն արևելից, իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Վրացւոց գա-ւառին և նուաճել ընդ ինքեամբ զամենեսեան, յարազուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով 'ի վերայ սահմանաց իւրոց:

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ և երջանիկ հայրապետն Մեծկուենից՝ Դաւիթ, յաւելու առ հայրս իւր, որոյ զբար-ւոքն պատերազմեալ՝ յաստեացս բարի անուանեցաւ, և 'ի հանդերձեալսն հրանիւթիցն գտաւ հանդիսակից: Բայց ա-պա անհովիւ հօտն գոլով՝ եկեղեցին մնացեալ էր որբ: Յայնժամ խորհուրդ 'ի միա առեալ բարեպաշտ իշխանին Աղ-ուանից ընդ հարազատ զօրավարին և ընդ կաթուղիկոսին ա-մենայն եպիսկոպոսօք և նախարարօք հանդերձ՝ փութով հա-սանել 'ի կատարումն աստուածային խորհրդոյն. «Եկայք՝ ասէ, զընտրեալս զայս յԱստուծոյ Իսրայէլ՝ առաքինազգեաց այր՝ յաթոռ աստուածային վերակացողութեան գաւառին Մեծկողմանց կարգեսցուք տեսուչ. զի լուսաւորեսցէ զնոսա օրինաւորաց խոհականութեամբ 'ի հրամանս Արարչին»: Իսկ նա թէպէտև առ մի նուագ ոչ առնոյր յանձն, բայց իշխա-նատուր հրամանաւ ստիպելին զնա ոչ յամառել մնալ, զա-

ուքեղականն յիշելով զբան. «Եթէ որ եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ», կամ զվաղնջուցն յիշատակել ՚ի միտս նորա զհամբաւական ախոյ զանեխին ցուցակութեան նմա ՚ի սուրբ եկեղեցւոջն ՚ի Վաղարշապատ քաղաքի. վասն որոյ ձայն արկեալ ասէր. «Կամք Աստուծոյ կատարեսցին»: Այս յայնժամ շնչաւէր ձեռօք յղեալ զնմանէ արս աւագս իշխանս ՚ի նախարարաց, զի փութով առ նա հասուսցեն: Արդ եկեալ հասեալ նոքա ՚ի մէջ Արցախին գաւառի, գտանէին զնա ՚ի Գեղոյ վանս յիւրում մենաստանին. ուրանօր եղեւ ժողով վիճակաց քահանայից. և յուղարկեալ զնոսա անտի՝ պատուականն հրովարտակօք հասանէին առ կաթուղիկոսն և առ իշխանն Եղուանից և յանդիման անէին նոցա զարքայական Խոսրովէ՝ կրօնաւորազգեաց կարգաւ. որոց առեալ զգիր գովութեանն՝ մուրհակ կնքէին նմա յիւրաքանչիւր կողմանց՝ զօրավարին նախարարօք հանդերձ: Եւ պատուեալ զնա կաթուղիկոսին ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն գաւառին Մեծկողմանց՝ մեծաւ ժողովով և ընծայական թըղթով յուղարկեալ զնա յիւր գաւառն: Եւ նորա եկեալ ՚ի նախնական հասանէ յեպիսկոպոսանոց, որում Ցաղձանան անուանէին. և մեծաշուք մեծարանօք յաթոռակցաց և ՚ի գըլխաւորաց և ՚ի ժողովրդականաց՝ առաւել քան զամենայն լաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն, առեալ զնշան խաչին յանձն իւր՝ բաղկատարած պաղատանս առ Աստուած մատուցանէր վասն իւրոյ աշխարհին, և զգաստացեալ կրօնաւոր վարուք յառաջադէմ լինէր, շրջէր ընդ ամենայն գաւառըս վիճակացն իւրոց և հաստատէր զնոսա վարդապետական շնորհօք յուղղափառ հաւատս պատուիրանին ճշմարտութեան: Այսպէս և այսու օրինակաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն և պայծառանայր սիրովն Քրիստոսի:

## ԳԼՈՒԽ ԼԲ

Յաղագս ժողովոյ եպիսկոպոսաց յԱյրարատեան գաւառն 'ի մէջ իշխանին Վարազ Տրդատայ առ մէջ հայրապետին Հայոց Սահակ՝ և առ բարեպաշտ իշխանն կոյն ներսեհ։

Ընդ այն ժամանակս լինէր խորհուրդ բարեպաշտ իշխանին Վարազ Տրդատայ 'ի գործ ինչ խորհրդական և 'ի սէր՝ արձակել զեպիսկոպոսն Խորայէլ առ մեծ կաթուղիկոսն Հայոց և առ բարեպաշտ իշխանն Այրարատեան գաւառին. որոց մեծաւ սիրով պատուեալ ընդ յառաջ ելանէին նմա, և տուեալ նմա հանգիստ՝ շնորհէին նմա յամել ժամանակս ինչ 'ի տիեզերական աշխարհին: 'Ի ժամանակին յայնմիկ բերեալ էր իշխանն և մեծ զօրավարն Հայոց 'ի Թորդանայ 'ի Դարանաղեաց գաւառէն զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ յաշխարհն Հայոց յԱյրարատեան գաւառն 'ի Վաղարշապատ քաղաք և հանգուցեալ 'ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին Ներսեսի շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի: Ապա մեծաւ աղաչանօք անկեալ եպիսկոպոսն Խորայէլ առաջի կաթուղիկոսին և զօրավարին Հայոց՝ մաղթէր, եթէ հնար ինչ իցէ լինել ըղկարօտ սրտին և զխնդրուածս նորա. «Տուք, ասէ՝ 'ի նշխարաց սրբոյն Գրիգորի». իսկ նոքա ոչ առնուին յանձն. «Զիթէ ոչ ուրեք երբէք բաշխեալ են նշխարք սրբոյն Գրիգորի, և ոչ ումեք ունիմք իշխանութիւն հանել մասն 'ի նմանէ և տալ քեզ»: Յայնժամ կալեալ նորա օգնական զգշխոյն Հեղինէ՝ զտիկնին Հայոց Մեծաց, որ յԱգուանից նահանգէն էր և սակըս այնորիկ եղև ձեռնտու նմա. որ պարտաւորապէս յարուցեալ գայր առ կաթուղիկոսն և աղաչէր կատարել զխնդիրն վասն նշխարացն: Նոյնպէս և զօրավարն Հայոց զեւր տէրն հաւանեցուցանէր, «Թէ տուք զաւժէն իմոյ աշխարհին և տան

հօր իմոյ 'ի մեծէն Գրիգորէ. և կատարեցէք զխնդրուածս եպիսկոպոսին, որ առաքեցաւ յիմոյ աշխարհէն. զի լցեալ նորա զփափագն՝ զուարթամիտ հրաժարեալ յուղարկեսցի 'ի մէնջ»: Եւ մարդասէրն Աստուծոյ արկեալ 'ի սիրտ նոցա միաբանութեամբ տալ մասն յօրէնսուայց ծնողէն խոստովանողէն մեծին Գրիգորի և պարգևել նմա զփափագելի գանձըն. որոյ մեծարեալ մեծապատիւ շքեղութեամբ՝ յարքունեաց ընկալեալ ողջոյն և յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ. գայր հասանէր լուսաշուք փառօք յաշխարհն իւր. և բղխեալ սրբութիւնն հանգուցանէր յիւրում մենաստանին 'ի Գողթոյ վանս:

## ԳԼՈՒԽ ԼԹ

ՎԱՍՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՎԱՐԱԶ ՏՐԴԱՏԱՅ ԸՆԴ ԻՒՐ ՆԱԽԱՐԱՐՍ ԱՌԱՔԵԼ ԶԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻՍՐԱՅԵԼ ՅԵՐԿԻՐՆ ՀՈՆԱՑ ԱՌՆԵԼ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ:

Այս 'ի վաթսներորդ երկրորդ ամի հայրասիրոյ իշխանութեան զաւողին Մահմետայ խորհուրդ լինէր հաւանութեամբ Վարազ Տրդատայ Աղուանից իշխանի ընդ ազգակից նախարարս իւր և ընդ կաթուղիկոսին Եղիազարու և ասէ. «Ահա հարկք, որք եդան 'ի վերայ մեր 'ի գժնդակ ազգէն Տաճկաստանեայց՝ յոյժ վտանգեալ տարակուսէ զմեզ՝ և երկրորդ անգամ անհնարին աղէտք այն են մեզ՝ ամի ամի ապատակել յաշխարհս մեր զօրացն Հոնաց, և յիւրաքանչիւր կողմանցն բռնութենէ թշնամեաց աւերեալ պակասեցաւ երկիրս: Եկայք՝ մերձաւորք իմ և սիրելիք, զի ընտրեսցուք զեպիսկոպոս մի 'ի միջէ աշխարհիս վասն մերոյ խաղաղութեանն, զի երթեալ հաճեսցէ շնորհիւն Աստուծոյ զմիտս երկուց աշխարհակալաց 'ի հաշտութիւն և յանքակտելի սէր. զի մի լիցի մեզ յայսմհետէ խէթ ունել 'ի միտս մեր և թշնամութեան խորհուրդ»: Եւ զայս իբրև մեծամեծին իշխանք և նախարարք՝ ա-

ժամույն ընտրեցին և արձակեցին մեծաւ աղաչանօք զիմաստուն և զպարկեշտ եպիսկոպոս գաւառին Մեծկողմանց, որում Խորայէլ կոչէր. վասն զի ողջախոհ վարուք բացափայլեալ առաջի ամենեցուն ճշգրտապէս հրաշանայր. շահեալ զեւր հոգին հնազանդութեամբ և զսիրոյն կատարէր պատուիրան. յանձն առնոյր փաղփաղակի և ճանապարհորդէր գընալ 'ի հեռաւորնակ աշխարհն Հոնաց: Յայնժամ պատրաստեցին հանդերձեցին զընծայս և զպատարագս, նոյնօրինակ և վասն հեռաւոր ճանապարհին թոշակս նմա և որք ընդ նմայն էին: Նա յառաջէին անտի յամսեանն մեհեկի, որ օր տասն և ութ էր ամսոյն. և յուղարկեալ խաղաղութեամբ 'ի Պերոզապատ քաղաքէ՝ փութեալ անցանէին ընդ գետն մեծ Կուր: Հատեալ անցանէին ընդ սահմանս Աղուանից և մինչև յերկոտասան օր գային հասանէին 'ի քաղաքն Լփնաց. ուր ընդ առաջ ելեալ նմա ամենայն քաղաքացիքն՝ ընդունէին զնա խնդութեամբ ըստ կարգի եպիսկոպոսաց, մանաւանդ զի մերձեալ էր տէրունական տօնն աստուածայայտնութեանն. և մնացեալ 'ի քաղաքս երեկօթս արարեալ անդէն կատարէին. և անտի գնացեալ անցանէին յաշխարհն Ճղբաց առ ստորոտով լերինն մեծի: Յայնժամ ձմեռնային հողմոյն հիւսիսային բաղխմունքն ձիւնասոյղ անհնարին փոթորիկս յարուցին մերձ 'ի սարաւանդակ լերինն Կովկասու: Նա յայնմ տեղւոջ եօրեայ արգելեալ՝ ոչ կարէին զաչս ամբառնալ կամ նշմարել զանցս ճանապարհին. վասն զի սաժանեալ յոյժ լցան տարակուսանօք յաղագս սատանայական պատերազմին. արհաւիրք և բամբիւնք զարթուցեալք ոչ կարէին զայն Աստուծոյ զարհուրեցուցանել, զի զնշան խաչին առեալ 'ի ձեռն՝ հրամայէր ծունր դնել ամենեցուն. և ինքն հանդերձ ելեալ 'ի լեառն, որում Սարդէգրուակ անուանէր, զօրութեամբ աստուածային նշանի խաչին և աղօթիւք մեծ եպիսկոպոսին լինէր խաղաղութիւն հողմոց, և հանդարտէր բռնութիւնն:

Եւ այնպէս անցանէին աներկիւղ ընդ կատարն Հոկայածիր և գլուցաղանց: Յետ այնորիկ ոչ արև և ոչ աստեղք 'ի բաղում աւուրս երևէին. և դառնաշունչ օդն ոչ սակաւ կայր 'ի վերայ, դէմ եղեալ ախտից տարապէմ գնացեալ, լքեալք և աշխատեալք 'ի բաղում աւուրս, երթեալ 'ի վաղնջուց 'ի Թագաւորանիստ Հասանէին կայեանն՝ յայն տեղի, ուր մկայեաց սուրբն Գրիգորիս կաթուղիկոս Աղուանից: Անտի յետ աւուրց ինչ Հասանէին 'ի դուռն Չօղայ, որ է մերձ 'ի Դարբանդ: Իսկ անդ նպաստամատոյց մեծարանս գտեալ 'ի քաղաքացեաց, և բազմապատիկ ճանապարհս արարեալ գային Հասանէին 'ի Հոյակապ քաղաքն Վաղարշան 'ի մուտս քառասնորդացն: Զորոց զգալուստն լուեալ մեծ իշխանին Խոնաց, ընդառաջ ընթացեալ և ողջունիւ ընկալեալ զնա մեծաւ ուրախութեամբ՝ խոնարհեցուցանէր զենքն առաջի նորա. պատուէր և պատիւ Հայրապետական սրբութեանն առնէր: Իսկ եղև իբրև պայծառապէս ծագեցան աւուրք քառասնորդացն սրբոց՝ մեծաւ սիրով ընկալեալ զնա քաղաքացեացն, զուարճացեալ և պատուեալ լինէր յամենեցունց, մանաւանդ առաւել 'ի բարեխնամ իշխանէն և յազնուական մեծամեծացն: Զայն պայծառութիւն ընդունելութեան և զհամբոյր սրբութեան սիրոյն իբրև տեսանէր եպիսկոպոսն՝ խնդամիտ յոյժ լինէր և մեծապէս գոհանայր զանպատում պարգևացն Քրիստոսի: Իսկ այնպէս բազմօրեայ Հանգուցեալ 'ի վաստակաբեկ աշխատութեանցն՝ լսէր և տեսանէր անդ զմարդասիրութիւն և ըղկրօնս մարդահաճոյ ազգին Թշուառացելոյ. ողբայր և ողբամէր վասն անհնարին չարեացն և երկմիտ Հաւատոց նոցա, որք զանձինս իւրեանց աստուածապաշտ անուանէին՝ և էին 'ի զօրութենէ անտի ուրացեալք և օտարք:

## ԳԼՈՒԽ Ի

Հաստատեն 'ի հաւատս շնորհատուութեան եպիսկոպոսին Խուրայէլէ վարդապետական ընդհէ–, և նոյա տաշղորամեալք 'ի յետս առաքելոցն ընդ։

Քանզի աստուածայնութ ծառայ զօթի մոլորութեանն ազձաւեալ ազգն այն՝ ըստ հիւսիսական ցրտամիտ մոլորութեանն առասպելոյօք և սուտածոյծ կրօնս դհեթանոսական պղտոր պաշտամանն մեծ գոլ կարծէին. և զորորընդոտ հրաժարակ շանթիցն ցայտմանս և զեթերաւեզ պերցմանս՝ թէ մարդոյ զիւրեցի և թէ այլ ինչ նիւթեղինաց, ձեռնաւ զնա և նուիրեալ քուռ Աստուծոյ համարէին առնել։ Նոյնպէս հեկայի ումեմն վայրագի անձանուէոյ ձիախոտով զոհիւք պաշտօն մատուցանէին՝ կարդալով զնա Բանքէլ Խան աստուած, զոր Պարսիկք Արամազդ կոչեն. բնաւին անթագաւոր միա ունելոյ զնի ամենայն մոլորութեանց. թմբուկք և սրինք 'ի վերայ գլուխանաց, և նրանակատար զմնակացեն զայտիւք և զանգամովք արինահոս դծմանք. մերկանդամ պարտործութիւնք դժողոց տեսարան, որ առ գերեզմանօք յածին, այլ առ այլ և ջոկ առ ջոկ մարտատեսիկ հողոտանին. և յոգնալեզք կաձառացն ջախջախմանս եղեալ առ մեղմանս զեղխութեանն կատարէին զընթացս ձիարձակ արշաւանօք այսր անդրը ձախրելով. ոմանց սուգ և կոծ և ոմանց խաղ՝ ըստ այսամիտ սոփորութեանն զխաղան խաղոյն և զկաքաւն յորդորէին՝ զազիր գործովք ընկղմեալք 'ի խոհերս խաւարային՝ կուրացեալք 'ի լուսոյ Արարչին։ Քանզի կրակաց և ջրոց զոհէին, և ճանապարհաց աստուածոց ոմանց երկրպագանէին՝ լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յաչս նոցա զարմանալի։ Նոյնօրինակ և ավրողխական ցանկութեամբն զեղխեալք ըստ հեթանոսական վայրենամիտ բարուցն՝ զհօրականն առնելով կանայս և զմի կին ունելով երկուց եղբարց. և պէս-

պէս կանայս տանէին, բաղում անկրձն կարգս ունելով և անկանոն խորհուրդս, ոչ կարացեալ նկատել խնամալ զարեգակն արդարութեան: Զօրս իբրև լսէր և տեսանէր զայնպիսի չարեաց պաշտամունսն և զկռապարծան սովորութիւնն՝ զցայգ և զցերեկ խնդրէր յԱստուծոյ վասն աշխարհին փրկութեան, թերևս դարձի հնար գտանել մարթասցի: Ապա ժամ 'ի հրամանէ նորա լինէր աստուածարեալ իրին, և ամենայն ազատակցաց նախարարացն և ռամկաց Քրիստոնեայց՝ գոլ յերկրպագութիւն պաշտաման սրբոյ եկեղեցւոյ և լսել զպատգամս աստուածայինս. որոց անդէն ժողովեալք այնուհետև 'ի տէրունական տունն՝ իշխանն և աշխարհախումբ բանակն խնդրէին լսել զբանս յեպիսկոպոսէն և ասէին ցմիմեանս. «Եկայք լուիցուք 'ի սմանէ բանս մխիթարութեան. զի սա է առաջնորդ սուրբ հաւատոյ քրիստոնէից, որ աւանդէ աշխարհի զպատգամս Հոգւոյն Սրբոյ»: Ապա իբրև տեսանէր զյօժարամտութիւն նոցա և զմտադիւր ունկնդրութիւնն, սկսաւ ճառել նոցա զվարդապետական գիտութենէն և ասէր. «Սիրելիք՝ դարձարուք և ծանիրուք զՏէր Աստուած, զի ողորմեսցի և կեցուսցէ զձեզ, զի նա միայն է Տէր և Արարիչ ամենայնի. 'ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ. մի մատուցանէք երկրպագութիւն արարածոց, զի սատանայական է այդ և կորուսիչ հոգւոց. զի ոչ որ կարէ երկուց տերանց ծառայել և ոչ որ կարէ զբաժակ Տեառն ըմպել և զբաժակ դիւաց. և չէք հնար 'ի սեղանոյ Տեառն վայելել և 'ի սեղանոյ դիւաց. այլ զգիտութեան և զանգիտութեան մեղս ձեր մի յիշեսցէ Աստուած. այլ արկցէ զձեզ 'ի բուխ գիտութեան և 'ի խորան արդարութեան, որ լուսաւորեաց զամենայն տիեզերս աստուածընկալ աւազանաւն, և մերժեալ զմեզ և զմտաւախուղ 'ի խաւարչական ազգացն հեթանոսաց՝ ծագեաց 'ի նոսա զհաւատոյ ճշմարտութեանն լոյս. նոյնպէս և զձեզ լուսաւորեսցէ ի բանք ճառագայթարձակ շը-

նորհօքն. միայն թէ զանձինս ձեր մատուսջիք առաջի աստուածութեանն աներկեան մօրք, սիրով արմատացեալք և հաստատեալք ՚ի փառս աստուածորդւոյն. խոստովանութեամբ սրբոյ Երրորդութեանն հաւատացէք. զի և անմարմին զինուորութիւնքն սրբասաց երրորդական ձայնիւ աղաղակեն ասելով. «սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց՝ լի են ամենայն երկիր փառօք նորա». տեսանես զերից անձնաւորութեան և զմի Աստուածութեան զօրութիւն. որպէս և յառաջընծայ աւանդեցին մեզ աստուածազան առաքեալքն և խոստովանողըն Գրիգորիոս. թէ Հայր յանձնէ, Որդի ՚ի Հօրէ, Հոգին սուրբ ՚ի նոցունց յէութենէ. և լի է ամենայն երկիր փառօք նորա, այսինքն է՝ քարոզութեամբ առաքելոյն ըստ փրկչական բանին ՚ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, որ ելից տարածեցաւ ընդ տիեզերս՝ ըստ սաղմոսի ձայնին. «Ելէ ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա». և միւս մարգարէն ասէ. «Լցաւ երկիր գիտութեամբ Տեառն՝ որպէս զջուրս բազումս, որք ծածկեն զծովս»: Ահաւասիկ տեսանեմք այսօր, զի ՚ի ձեզ ընծայեալ տպաւորի աստուածային բանն վարդապետութեան և ծաւալեալ արդիւնանայ յանդաստան սրտից ձերոց, ուր բազմարեղուն խայրի ընծայելով ՚ի ձեռն ճարտարապետ մշակաց՝ զհարիւրաւոր, զվաթսունաւոր և զերեսնաւոր: Արդ այդչափ քաջապտղութիւն ՚ի ձեզ լինելով՝ զի՞ հարկաւորիք մահացու թունոյն մաւու առնել յողջախոհ և ՚ի ծաղկազարդ մտաց ձերոց անդաստան. ո՞չ գիտէք եթէ նախահայրն մեր Ադամ սակս սորա եկեալ ՚ի դրախտէն՝ զփշաբեր և զտատասկածին ժառանգէր զերկիր, զորմէ և առաքեալն ամբաստանէ. թէ անօրէն իշխանն յորժամ աստուածանալ կամեցաւ՝ ձեռն արկանէր և զամենայն մարդիկ մեղօք կապէր, որ և նախանձաբեկ եղեալ առ ՚ի պատիւ նախաստեղծին, ՚ի ներհակայինս յորդորել տխուր՝ ածել ՚ի հրապոյրս խարդախութեան, ապա-

նութեան և ամենայն ախտից, երերմանց և նզովից սերմանց լինէր հայր ինքն և ամենայն ազգ իւր թշուառական. որպէս և ասէ իսկ Ծննդոց պատմութիւնն, թէ էառ իւր Ղամէք երկուս կանայս, թէև Յուբաղ որդին Ղամեքայ եհան զերգոց քնարս, մանաւանդ թէ զփողս և զսաւիղս, և զթմբուկս՝ և զամենայն ձայն արուեստական, որք են յօրինիչ կապաշտութեան և յորդորիչ խղամոլ ախտից, զոր և Նաբուգոդոնոսոր յայն հրաւիրելով ձայնս՝ խնկարկել կոչէր ՚ի կռապաշտութիւն անարի ոսկեստեղծ անդրւոյն զոհարան. ձօնէր նմա, նուիրական տօն լինէր նմա. տեսարանին տեսանել զանսպառ չարութիւնն դիւամոլ ազգին Կայենի. զի որպէս սպանումն ՚ի սատանայէ էր, նոյնպէս և երկու կանայս առնուլ և գաշնակաւոր նուագս յօրինել ՚ի նոյն բանսարկուէն լինէր առ ումանս, որք անդէն իսկ ընկղմեալք ՚ի շնութիւնս և յայլանդակ մեղս, Սեթեան ազգին խառնակեցան ընդ դստերըս նզովից. և փոխանակ բարւոյ խոստմանցն ածէ ՚ի վերայ նոցա Աստուած զանձրևասաստ պատիժն և զհամաշխարհական կատարածն: Իսկ Նոյ՝ քանզի յարդարացեալ տոհմէն արդար գտաւ յազգին յայնմիկ ՚ի ձեռն հաւատարիմ մաքրութեանն իւրոյ, հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ՚ի ջրահեղձ պատուհասէն: Այլպէս արդոյ և պատուական են հաւատք և սրբութիւնք: Ահա և Քանան անիծաւ յաղագս ծաղրական ժպրհութեանն Քամայ՝ ըստ բանի պատմութեանն, եթէ անիծեալ լինի Քանան մանուկ, և եղիցի ծառայ եղբարց իւրոյ: Տեսանեմք, զի յազգէ նորա եկեալ Նեբրովթ հսկայ, որ զիւցազնէին կախարդութեամբ զբոլորս հրապուրէր ազինս աշտարակաշէն առնել քարակոյտ. և ինքն ամբարհաւաճեալ յաղագս յաղթանդամ տեսակին և հսկայազօր մեծութեանն՝ թագաւորէր ՚ի վերայ ամենեցուն. որպէս և գրեալ է, եթէ եղև սկիզբն նորա թագաւորութեան ՚ի Բաբելոն: Նաև յետ կործանման աշտարա-

կլին և խառնամիտ ընդունայն լուսք մեք 'ի ժամանակաւոր պատմութենէ սոցա, եթէ աստուածոց նմանեցուցեալ զեն-քըն 'Ներոնիդայ' ամբարտաւանեալ հպարտանայր, մինչև ըղ-պատկերն իւր անդրիագործ ճարտարաց ոսկեպատճեալ նկա-րեւք քանդակել հրամայէր յարծաթս և 'ի պղինձս, անուն կոչելով ինքեան նկարագրին, որոց բազում ազգս մոլորեալս ունկրական ձօնիւք զոհ մատուցանէին առաջի այնր պատկե-րի: Որպէս և այժմ իսկ ահա տեսանեմք զձեզ, զի յողդող-դեալք և առասպելաբան մրցանօք յածիք այսր անդր՝ յանկոխ ճանապարհս խարէութեամբ կախարդասար վհկաց և գետնա-կոչ քրմից. և Արամազդայ ուժեմն փայլ հեկալին ձիովք այրեցելովք զոհ մատուցանէք. և զայն ոչ իմանայք, թէ ան-մաքրոցն սիրող զիա՞րդ լինիցի սուրբ. զի որպէս զոհարանքն անմաքուր և պիղծ են, նոյնպէս զարշելի և պիղծ են առաջի Աստուծոյ ամենեքեան, որք Արամազդայ մատուցանեն նուէ-րըս, ըստ գրեցելումն, «Եթէ պիղծ է առաջի Տեառն ամե-նայն անօրէն և ընդ արդարն ոչ ունի հաղորդութիւն»: Նոյն-պէս և եթերաց զեա կայծականց, որ 'ի ձայնէ որոտմանց փայ-լատակէ, Աստուած կարգացեալ փրկիչ անուանէք. և զիա՞րդ ոչ իմանայք՝ ով անզգայ մարդիկ, եթէ փչանելոյ ժամա-նակու, յորժամ ձմեռնայինք յուզէին ցրտոց բռնութիւնք, ո՞ւր ուրեք եղեալ զադարեսցին ամպոց փայլատակմունքդ և ձայնք որոտմանց. ո՞չ ապաքէն յանկարծել արարչին մե-րոյ Աստուծոյ զփայլատակելն փայլատակեն, 'ի հրամանէ նո-րա դադարեն և ոչ իշխեն երևել 'ի ձմեռնային ժամանակի, որով յայտ իսկ է, եթէ ոչ են աստուածք, այլ արարածք ա-րարչին Աստուծոյ մերոյ: Եւ դուք յոյժ մոլորեալ էք, ոչ ընելով զբանն զայն, եթէ աստուածք, որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերկրէ. այլ դուք ծանիրուք և տեսէք, ե-թէ Տէր Աստուած նա է, որ միայն է ինքնութեամբ, և յա-ռաջ քան զնա չէր որ, ինքն է արարիչ ամենայնի, որ երև-

ւէին և որ ոչն երևէին. և Որդին միածին Աստուած, որ 'ի Հօրէ ծնեալ, և Հոգին Սուրբ որ 'ի նոցունց յէութենէ, որով և աշխարհ եղև: Մերկացարուք այսուհետև զհին մոլորութիւնն և նորոգեցարուք 'ի նորոգումն սրտից ձերոց առ 'ի ընտրել ձեզ զլաւն. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհս փըրկել զմեղաւորս: Եկայք դարձարուք առ նա 'ի ձեռն ապաշխարութեան. մի երկրպագանէք արեգական և լուսնի, այլ Աստուծոյ, որ զարեգակն և զլուսինն արարեալ է, և զերկինս և զերկիր և զծով և զամենայն որ 'ի նոսա. զի որք արեգական և լուսնի երկրպագանեն՝ բաժին է նոցա հուրն անշէջ. Իսկ որք ջրոց զոհեն, իջցեն որպէս զմէն 'ի ջուրս բազումս. Իսկ որք ձօնեն փայտեայ ծառոց նուէրս մատուցանելով, այսպէս ասէ վասն նոցա աստուածային Գիրն. «Եթէ հուր վառեսցի 'ի վերայ ամենայն փայտի ագարակի, կերիցէ զամենայն ամբարիշտս և մի շիջցէ»: Իսկ որ կապեալ ունին յանձին ըղպատկերս վիշապ օձին ոսկեղէն կամ արծաթեղէն, վասն նոցա ասէ Գիր. «Արծաթ նոցա և ոսկի մի կարասցէ փրկել զնոսա յաւուր բարկութեան Տեառն, որ կարօղն է բառնալ զբեռինս ծանունս զտանջանաց գեհենին յաւիտենից դիմադարձացն մեղաւորաց, որք իբրև զհեթանոսս իցեն ամբարիշտք»: — Զայս և աւելի քան զայն խօսեցաւ մեծ քահանայապետն Խորայէլ:

## ԳԼՈՒԽ ԽԸ

Հաստատումն հաւատոյ 'ի Քրիստոս 'ի ձեռն եպիսկոպոսին Խորայէլէ և խոր- ծանուցումն ընծայարանոց և յանձնել եկեղն Քրիստոսի:

Քանզի յորդորեալ էին յայժ յունկնդրութիւն բանից առնըն Աստուծոյ բարեմիտ իշխանն մեծազահ Եզիկութեան հանդերձ բանակօքն, որոց ախորժաբար լուեալ զծաղկազարդ

նորա վարդապետութիւնն և զքաղցրուսոյց խրատն՝ փառաւոր առնէին զԱստուած և ասէին. «Երգ հաւատամք ճշմարտութեամբ, եթէ առաքեաց Տէր 'ի ձեռն սորա զմխիթարութիւն շնորհաց իւրոց առ մեզ, զի ապրեցուսցէ զմեզ 'ի խաւարային գործոց և յամենայն սատանայական գնացից»: Եւ սա յանուահետև մխիթարութեամբ հնազանդեցուցեալ զանձինս լծոյ քաղցրութեանն Քրիստոսի, սրբութեամբ և պարկեշտութեամբ զարդարէին զպահս քառասնորդականս, պահօք և աղօթիւք զցայգ և զցերեկ հոգւոր նախանձու այր քան զայր փութային յերկրպագութիւն սրբոյ եկեղեցւոյն՝ մոռանալով զառաջին որկորստութեան մոլորութիւն, և այն՝ շնորհօք լուսատու խրատուց սրբոյ եպիսկոպոսին, որոյ հրամանին հնազանդելով յանձն առնոյր աստուածասէր իշխանն՝ իւրով մտաւորաց սուրհանդակաւն զեօթանասնին եօթներորդն*) ամի ամի սրբութեամբ կատարել. զի մինչ էր բարեմիտ այր յոյժ, և նոյնժամայն հրամանատար լինէր աստուածային պատուիրանին, հալածական առնէր զորդին խաւարի, հաստատեալ լուսափայլ վարդապետութեան օր ըստ օրէ պայծառանայր սիրովն Քրիստոսի, ատենական ցանկալի սուրբ հաւատոյն լինելով, աշխարհածնունդ հայրենեացն որդի զըտանէր շնորհօքն Աստուծոյ. այլ և ուժով մեծութեամբ հարստութեամբ քաջ և անուանի եղեալ էր 'ի մարտս պատերազմաց, որպէս զոլեմի ազգն Յունաց հզօր երևեալ առ ամենեսեան՝ զհզօրակապ քաջութեան անուն ժառանգէր: Զի բազում գործս արութեան ցուցեալ 'ի Թուրքաստանի առ Խազրիականն և 'ի սէր իւր գրաւեալ զնա տալ զդուստր իւր նմա կնութեան. և մինչ 'ի ծերութեանն բերելով պատիւ՝ փառաւորեալ լինէր 'ի մէջ երից աշխարհացն. իբրև զպսակ պարծանաց ընդունէր խրատն լուսաւոր վարդապետութեան

*) Այսինքն՝ զքառասնորդական պահն:

եպիսկոպոսին. առ սակաւ սակաւ ջանայր խափանել 'ի վե-րայ մեռելոցն զմոլեկան լալիւն և զդիւական սգակրութիւնն՝ գարշելի և պիղծ համարելով զհայրենի պաշտամունսն, և զայլոց աստուածոց խափանէր զնուէրս՝ 'ի պաշտել զԱստուած կենդանի՝ զարարիչն երկնի և երկրի, և զՔրիստոս միածին և ըզ-✝ոգին համագոր. զամենայն յաւելուածս չարեաց 'ի բաց հերքելով 'ի մտաց՝ իբրև զարդի ծնեալ մանուկ անխարդախ կաթինն փափագէր. շինէր 'ի տեղիս տեղիս զեկեղեցիս և մեծացուցանէր զպատիւ քահանայիցն Աստուծոյ: Նա և քանզի 'ի վաղուց ծառոց կաղնեաց բարձրագունից, զորս ձօնեալ էին Աստանդխառայ գարշելեաց առ 'ի զոհս մատուցանելոյ նոցա ձիովք, զորոց զարիւնն հեղուլին զծառովք, և զգլուխն և զկաշին արկանէին զստովք ծառոցն, հրամայէր եպիսկոպոսն հատանել զմին, որ գլուխ և մայր էր այլ ամենայն ծառոց, և համարէին զնա աստուածոցն փրկիչ և կեցուցիչ և տուող ամենայն բարեաց: Իբրև լսէին, թէ հրամայէր հատանել զհսկայաձիր դիւցազանց ծառն, որով զայթակղեալ էին 'ի կործանումն ամենեցուն, ձիչ բարձեալ և զօձիս հարեալ՝ 'ի ձայն բարձր աղաղակէին կախարդքն և քուրմք և վհուկք քրմապետօքըն հանդերձ առ իշխանն ✝ոնաց և առ մեծամեծս աշխարհին, և ասէին. «Եթէ զիա՞րդ մարթիք և խնայէք և զխաէք առնել զայդ, զոր հակառակորդդ մեր և թշնամին աստուածոց մերոց ասէ ձեզ, հատանել զծառն զայն. և ընդէ՞ր իսկ բնաւ անսայք նմա և լսէք՝ քանդել աւերել կործանել զբագինս մեհենաց մերոց, զոր հարքն մեր կանգնեցին, և թագաւորք և իշխանք և աշխարհս մեր բոլորովին պաշտեցին մինչև ցայժմ, և գտին զպարգևս բարեաց 'ի նոյն իսկ 'ի դիցն մեհենաց և 'ի ծառոց ձօնելոց, զմարդաշատութիւն աշխարհիս, և զօրաւոր և յաղթող լինել ձեզ 'ի պատերազմունս թշնամեաց ձերոց: Արդ դուք համարիք ինչ զդա և լսէք բանի դորա և տայք զմա զիշխանութիւնդ զայդ՝ հանել աւերել քակ-

տել զմեհեանս աստուածոց ձերոց. ոչ ապաքէն յորժամ պաշտէիք և մատուցանէիք զզոհս և զնուէրս առաջի ծառոյն յանուն հսկայազօր քաջին Սպանդիատայ, զոր ինչ խնդրէիք առնուիք և գտանէիք զբարիս. զհիւանդս ձեր առողջացուցանէր, յարեգակնակէզ երաշտից և 'ի տօթախառն ջերմութեանց անձրևս ածեալ ձեզ նորա զօրութեամբն, որք զտապ խորշակին զովացուցանէին. զբոյս և զտունկս դալարեցուցանէին և զպտուղս պարարէին 'ի վայելումն և 'ի կերակուր ձեզ: Նոյնպէս և 'ի սաստիկ անձրևաց և յամպոց եթերական փայլատակնացայտ օդոց յորդորնդոստ խռովութեանց՝ խաղաղութիւն առնէր ձեզ: Բայց արդ թէ այլ մոլորական բանից դորա հաւատայք և պաշտէք զԱստուածն՝ զոր դայն քարոզէ ձեզ. սակայն զբնական աստուածսն ձեր, զորս նախնիք ձեր և դուք պաշտեցիք, ոչ է պարտ ձեզ թողուլ և ուրանալ և 'ի բաց ընկենուլ և մտանել 'ի ձեռս դորա, որ ընդ սուն արկեալ մանրեսցէ զնոսա. զի մի սրտմտեալ բարկասցին և յանդիմանեսցեն զաշխարհս մեր չարաչար հարուածովք: Այլ և ո՞վ խել իշխեսցէ մօտել հպել և մերձենալ 'ի վայրն յայն, ուր հսկայազօրին Սպանդիատայ մեհեանքն և բագինքն շինեալ և հաստատեալ են, կամ 'ի ծառն գեղեցկադրոյս, որ պահիչ և կեցուցիչ է աշխարհիս այսորիկ. ապաքէն ոք անգիտութեամբ 'ի ծառոյն յայնմանէ յանկելոց տերևոց, կամ 'ի փայտից ինչ, որ 'ի նմանէ առնուին 'ի պէտս իւրեանց, չարաչար կեղօք և պատահարութեամբ, այլև մահուամբ իսկ յանդիմանէր զնոսա, և զտուն և զազգն հատանէր. և արդ դա կարէ՞ հպել մօտել և կարել զնա, կամ աւերել զմեհեանս աստուածոց մերոց: Արդ գիտեմք զայս, զի եթէ յամառեալ պնդի և մերձի առ նա՝ յանդիմանի չարաչար ցաւովք, այլ և 'ի կենաց իսկ հանէ զդա»:

Յայնժամ պատասխանեալ իշխանն Քռնաց առ քաղդեայն և առ կախարդսն, առ վհուկս և առ պաշտօնեայս բագնեաց և ծառոց և ասէ. «Մեք հաւանեալ հաւատացաք առնս այսմիկ

և պաշտեմք և երկրպագանեմք Աստուծոյն, զոր դա քարոզէ մեզ. և ոչ արգելումք զդա յաւերելոյ և 'ի քանդելոյ զմեհեանս, և 'ի խլելոյ և կորելոյ զծառն և յայրելոյ 'ի հուր: Արդ եթէ դուք կարող ինչ էք բագնեօք և մեհենօք և ծառովք ձօնելովք զարհուրեցուցանել ինչ զդա, կամ 'ի ցաւս ծանրութեան ախտի ինչ արկանել, և կամ մահ իսկ հասուցանել դմա, հաւատամք 'ի ձեզ և հաստատեմք անդրէն շինել և պաշտել զմեհեանս և զբագինս և զանդրիադրած պատկերս. երկրպագեմք ծառոց և մատուցանեմք զոհս և նուէրս որպէս մինչև ցայժմ: Ապա եթէ դուք ոչ կարէք յանդիմանել զդա և զարհուրեցուցանել ինչ, և դա աւերեալ քակէ զբագինս և զմեհեանս, հատանէ զծառս և 'ի հուր այրէ, և ոչ ցաւք ինչ հասանեն դմա և ոչ մահ՝ մեք նոյնպէս հաւանեալ հաւատամք 'ի դա, եթէ յԱստուծոյ առաքեցաւ դա մեզ. և երկիրպագանեմք միայն Աստուծոյ, որ արար զերկինս և զերկիր և զարեգակն և զլուսին և զաստեղս, և զձեզ կապեալ ոտիւք և ձեռօք մատնեցից 'ի ձեռս դորա, որ ընդ նոյն ծառովք և մեհենօք զձեզ այրեսցէ»:

Յայնժամ քաղդեայքն և կախարդք և վհուկք Ափրոդիտեայ մոլեկան կախարդութեամբ սկսան դիւթութիւնս առնել ստապաճոյճ դեւանակոչութեամբք, ուռոյցս և բարբանջմունս իմն յօրինէին, և ոչ ինչ կարէին գործել 'ի սուտ և 'ի մոլար արուեստից իւրեանց. զի երբեմն յառաջ քան զայս կապէին զմարդիկ անյայտ կապանօք, և զոր կամէին՝ 'ի ծանր ցաւս արկանէին՝ այսս առաքելով 'ի նոսա, և ապա քարոզէին նոցա փաստապատիր բանիւք, եթէ պարտ էր ձեզ զոհս և նուէրս մատուցանել մեհենաց և ծառոց և ոչ մատուցէք, փոխանակ այնորիկ եղև այդ առ ձեզ յանդիմանութիւն 'ի մեծէ աստուծոյն մերմէ: Բայց արդ տուէք զոհս և նուէրս և մատուցէք առաջի ծառոց և մեհենաց. ապա ապրիք 'ի ցաւոց և 'ի հարուածոց այդի: Իսկ որպէս ասէին՝ նոյնպէս առ-

նէր և կատարէր սատանայ։ Այլ և երբեմն առ աչօք և ցնո-
րիւք անձրևս սատանիս երևեցուցանէին. և երբեմն երաշտիւք
ցամաքեցուցանէին զիւաւկործան և սատանայական մոլորու-
թեամբք. և այնու ամենայնիւ գայթակղեցուցանէին և կոր-
ծանէին զաշխարհն նոցա, զի մոլորեալ էին և մոլորեցուցա-
նէին զյողդողդամիտս։ Ապա յայնժամ ոչ կարացեալ յայն-
ցանէ ինչ մի 'ի գործ և 'ի կիր արկանել կամ զարհուրեցու-
ցանել զայրն Աստուծոյ և յաղթել նմա, հալեցան և փախե-
ցան 'ի նշանէ սրբոյ խաչին ամենայն զօրութիւնք նոցա։ Ապա
սկսաւ խօսել եպիսկոպոսն սուրբ և օրհնութեամբն առ իշխանն
Հոնաց և առ մեծամեծս, «Եթէ ոչինչ զարհուրիմ և երկն-
չիմ, կամ զմտաւ ինչ ածեմ վասն դոցա չարախօսութեանցդ.
զի են իսկ դոքա անզօրք 'ի ձշմարիտ կենացն Աստուծոյ, որք
կամին զիւցապաշտ կախարդութեամբ զարհուրեցուցանել
զիս՝ որպէս և զայլս 'ի մարդկանէ մոլորամիտս. և ոչ 'ի ծա-
ռոցդ բարձրագունից մեհենաց զմտաւ ինչ ածեալ զանգի-
տեմ կերպ 'ի կերպս լինելով առաջի իմ, այլ ես յայս յան-
դիման ամենեցուն ձեր գործեմ աներկիւղաբար յուսալով 'ի
շնորհս սուրբ խաչին Քրիստոսի և բառնամ զկործիսդ 'ի սր-
տից ձերոց և զծառայողի մոլորութիւնդ, որ ոչինչ իսկ են և
ոչ չար ինչ կամ բարի առնել կարեն, և ոչ անարգել զօրեն
զթշնամանցիս իւրեանց, զոր այժմ դուք աչօք ձերովք տե-
սանէք առ կուռս համերս, թէ որպէս փշրեցին 'ի ձեռաց
իմոց, և ընդ ոտս անկեալ կոխեցին 'ի փնացս աշխարհի»։

Յայնժամ հրամայէր եպիսկոպոսն քահանայից առնուլ
փայտս 'ի ձեռն, զնել ծունր և աղօթել՝ կարդալով առ
Աստուած զսաղմոս զայս. «Յարիցէ Աստուած և ցրուե-
ցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք յերեսաց նո-
րա». և ապա արարեալ զնշան խաչին 'ի վերայ ծառոցն բարձ-
րագունից, զորս ձօնեալ էր յանուն Ասպանդիատայ դար-
շևւոյ. և զնմեալ 'ի ներքս քահանայիցն առ հասարակ կո-

րեցին զծառսն. և նոյնժամայն հրամայէր բերել 'ի քաղաքն Վաղարշան: Իսկ կոչեալ առ ինքն 'ի ճարտարագործ հիւսանց քաղաքին, հրամայէր առնել զնա խաչ պայծառակերպ բոլո-րագուռ յօրինուածովք նկարակերպ, և պէսպէս կենդանագի-րօք հաստատէր սանձեալս 'ի վերայ բոլորովին, գեղեցիկ պատ-կերագործ նմանութեամբ ծծղրտեալ 'ի ծայրից մինչև 'ի խո-նարհ համանման գեղովք պաճուճեալ: Նոյն օրինակ և յա-ջոյ կողմանէ գեղեցկագոյն իմն լուսեղէն խաչս մի զմիոյ կնի 'ի վերուստ 'ի վայր տողեալս պնդէր հաստահեղոյս բևեռօք, և առ 'ի ստորին դռնակ մի երկրացիկ քանդակագործ շուշա-նաձև չորեքկուսի, յորում կայր խաչ մի արծաթեղէն մա-նուորեալ 'ի ակրունական խաչէն: Այսպիսի օրինակաւ կար-գեալ և յարմարեալ զանազան հրաշալի գեղեցկութեամբ կան-գնէր զնա յՄեխանի և 'ի խնդրուածոց անուն յաղթունական զրանն ընդ արևելս, և ասէր. «Առաջի այսր ամենակեցոյց նշանիս երկրպագեցէք Տեառն արարչին ձերոյ, զի որ սովորն էիք երկրպագել ծառոյդ այդմիկ մոլեկան մտածութեամբ և սովորական ընդելութեամբ, երկրպագէք խաչիդ և անտեսա-նելւոյ պատկերի աստուածութեանն: Քանզի ուտէիք և ըմ-պէիք զմիս և զարիւն զոհիցն անասնոց, զոր դիւաց առաջի ծառոյն մատուցանէիք, վասն այնորիկ փոխանակ նուիրեալ ծառոյն զխաչն իւր կանգնեաց 'ի մէջ տնկերաց, և փոխա-նակ արեանցն զոհից զարիւն իւր ետ 'ի քաւութիւն մեզ ա-մենեցուն: Իսկ ես գիտեմ, որ անգիտութեամբ արարիք, զոր ինչ արարիքն: Բայց արդ այսուհետև մատուցէք զանձինս ձեր առաջի աթոռոյ շնորհացն Աստուծոյ, թօթափելով 'ի բաց զամենայն ախտս չարեաց անօրէնութեան ձերոյ և ըզ-փառացն լուսոյ պատմուճան արժանի լիջիք զգենուլ յան-ձինս ձեր»: Իսկ բարեպաշտ իշխանն Հոնաց Իլութուեր *)

*) Այլ օր. Ալութուեր:

իբրև լսէր զայն, մեծամեծօք հանդերձ յորդորեալ 'ի սէր և յերկիւղն Աստուծոյ, և զայն ես տեսանէր թէ ոչ յայնցանէ զոր քաղդեայքն առէին յանդիմանել ինչ նմա 'ի ծառացըն մեհենից և անկանել 'ի ցաւս և հասանել 'ի մահ, ոչ ինչ զխրկեալ նմա յայսցանէ չար, այլ ես տեսել քան զես պայծառացեալ զուարթանայր և զօրանայր 'ի գործ մշակութեանն Քրիստոսի, տեսել ես հաստատէին 'ի հաւատս և յաւէին ըղբան փարգապետութեան նորա: Եւս յայնժամ մեծապատ իշխանութեամբ հրամանաւ այր զաստանդեայակուր և զգիւամոլ ազգ կախարդացն և քաղդեայց գլխաւոր քրմապետօքն հանդերձ ունել, և կապեալ ոտիւք և ձեռօք ածել առաջի առնն Աստուծոյ և տալ 'ի ձեռս նորա: Իսկ նա հրամայէր զոմանս 'ի հուր ընկենուլ 'ի յանցս ճանապարհաց, յել և 'ի մուտս փողոցաց առ 'ի զերծուլ զաշխարհն ամենայն յունայնակրօն պաշտամանց և հնազանդել ամենահեշտ լծոյ ծառայութեանն Քրիստոսի: Եւ զոմանց, որոց կապեալ ունէին յանձինս իւրեանց զոսկեղէն հեթանոսական ձուլածոյն հրամայէր զերծուլ և հանել 'ի նոցանէ, և ինքն իւրովք ձեռօք խորտակէր յանդիման ամենեցուն՝ առնելով և զայնս նշան տէրունական խաչի: Այսպէս և այսու օրինակաւ ցուցանէր առ ամենեսեան զիւրն աստուածպաշտութիւն: Եւ կարգեցաւ այս ամենայն կարգաւորութիւնս 'ի սուրբ քառասնօրորդն 'ի բիւրաւոր արքունական Հանապատենայցն բանակի. կազմեցաւ և պատրաստեցաւ կամօք Տեառն Աստուծոյ 'ի ձեռն եպիսկոպոսին և ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ. որով ծաւալէր շնորհք պարգևաց անպատում փառացն Քրիստոսի:

Իսկ ծագումն արփիափայլ լուսոյ պատկերին սրբոյ իբրև հասանէր՝ բազումք 'ի քրմապետացն և 'ի գլխաւոր կախարդասար քաղդէիցն գնաէս 'ի դժնդակ կապանս անկեալ դնէին: Եւ ապա հաւանութեամբ իշխանին Իսութուկրոյ ժողովեալ բոլոր քաղաքայնոցն հրաման լինէր առնան դնել

և հրապարակ յօրինել և տալ ցեղից երկաքանչիւրոց պայ-
քար՝ յանդիման կաճառախօս բազմութեանն։ Յայնժամ
սկսաւ եպիսկոպոսն յաստուածային Գրոց ձեռն 'ի գործ ար-
կանել վարդապետութեան. ստորագրեալ յանդիմանէր զնոսա
և 'ի նախատինս դարովանաց արկանէր. և կոտորէր թշուա-
ռական զուրկն յանօթ եղեալ 'ի ակրոնական խաչէն, զոր
միշտ 'ի ձեռին ունէր եպիսկոպոսն, պակուցեալ սրտարեկ լի-
նէին և ինքեանք իսկ զանձինս դարովէին։ Իբրև խոստովանեալ
զեւրեանց մեղս՝ դարձան 'ի հաւատս ճշմարիտս. զորոց ըղ-
ձաւէս կորուսիչս հմայից 'ի ձեռն առեալ եպիսկոպոսին 'ի
նիւթ հրոյ ծախէր, և արժանի առնէր զնոսա վերստին ծնըն-
դեանն 'ի ձեռն սրբոյ աւազանին։ Իսկ իբրև եռես զայն իշ-
խանն Հոնաց ամենայն բազմութեամբն հանդերձ, առաւել
ևս հաստատեցան 'ի սէր հաւատոցն Քրիստոսի՝ հեռացեալ
'ի մոլորագործ պղծութենէ պաշտամանցն։ Իսկ յաւուր նա-
ւակատեաց նորոգապարդ նշանի խաչէն, զոր կանգնեալ էր ե-
պիսկոպոսին յարքունական դրանն, արարեալ իշխանին և ա-
մենայն մեծամեծացն զենմունս պատարագաց, մինչդեռ զոհ-
նութիւնս կամէին երգել քահանայքն 'ի վերայ ընծայիցն
առաջի խաչէն, ասէ եպիսկոպոսն ցիշխանն. «Ահա զխոստ-
մունս սրտի քո, զոր ունիս առ Աստուած՝ այսօր հատ
Տեառն հաշտեցուցանել զնա ընդ ձեզ՝ 'ի բաց բառնալով զա-
նօրէնութիւնս 'ի ձէնջ, զի յայտնեալ մի լիցի խէթ և խութ
ընդ ռմն. մանաւանդ զայդ զօրավիկ քրմապետդ յայտնի նուագի
փորձէ Հոգին Սուրբ, որով դուք եղերուք կատարեալ որպէս
Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։ Արդ հաւանեցարուք այսմ
բանի, զի որոտընդոստ չախալից չերխք՝ Դադրեանքդ կո-
չեցեալ՝ նախ նա այրեսցի յայսմ աւուր 'ի ձեռն խոստովա-
նող քրմապետացդ այդոցիկ, որոց երթեալ նզովելով նզովես-
ցեն և այրեսցեն և տապ ճաշակեսցեն կերակուր»։ Իբրև լուա-
զայս բարեպաշտ իշխանն Հոնաց՝ փութով տայր 'ի ձեռս նո-

լա քանդել զմեհեանն։ Նոյն յայնժամ առաքեաց եպիսկոպոսն զՄովսէս՝ զայր հմուտ արուեստական շնորհի՝ հանդերձ այլովք քահանայիւք քանդել և այրել զմեհեանն. որք գործակցելով քրմապետացն դաւուց զգլուցանելոյ զպղծանոցսն բոցակէզ սպառէին առհասարակ։ Նոյն ինքնին եպիսկոպոսն ելեալ 'ի բարձրաւանդակ տեղի հանդէպ կոցն՝ եդեալ ծունր և արարեալ զնշան խաչին տէրունական՝ հողմն ուժգին սաստկապէս հասեալ փոշէր զայրեցումն բարձու մեհենին և զչափայն զազէր մորթովք հանդերձ։ Նոյն 'ի զոհարանաց անտի դարձեալ մեծաւ ուրախութեամբ 'ի քաղաքն՝ լուսազգեստ մկրտութեամբն լինէին. և զօրն զայն տօնից տօն և ժողովոց ժողով առնէին իշխանն և մեծամեծքն։

## ԳԼՈՒԽ ԽԲ

Խորհուրդ մեծ իշխանին Հայոց Իւսեփեայ ընդ նախարարս իւր, և եպիսկոպոսն Իսրայէլ առ Նասր Ամիրայ 'ի հաստատել անդ զնոսա հայրապետութեան։

Ասանէ մեծ իշխանն Հայոց ընդ ամենայն մեծամեծս և նախարարս իւրոյ տէրութեան 'ի խորհուրդ բարի և ասէ. «Խաւար ուրեմն ազխատական մթացուցիչ հոգւոյ զմեզ պարփակեալ ունէր 'ի վաղնջուց, որով նկատել ոչ կարէաք զարդարութեան զլոյսն բոլոր տիեզերաց։ Արդ Տէր մեր Յիսուս Քրիստոս առաքեաց առ մեզ քաղցրութեամբ իւրով առաջնորդ կենաց զայս եպիսկոպոս, որ բանիւք և գործովք կշտամբեալ յանդիմանեաց զանօրէնութիւնս մեր և ետ մեզ ճանաչել զամենաստեղծն Աստուած և զքանչելահրաշ նորա զօրութիւնն, որում ամենեքին խոկ միտք իմ ճշմարիտ հաւատացեալ վկայեաց. և ահա հաւատացաք 'ի մի Աստուած՝ արարիչ երկնի և երկրի։ Օրհնեալ բերցուք մեզ զամենայն

աշխարհս, հաւանեալս այսմ հաւատոյ և զմեծ թագաւորութիւնն Հռովմայեցւոց: Քանզի թագաւոր ոմն եղեալ անուն՝ անուն Կոստանդիանոս, որ զԿոստանդինուպոլիս շինեաց. առաջին նա ասեն լեալ քրիստոնեայ թագաւորութեանն այնմիկ և այնչափ հաւատարիմ եղեալ այր, որ հրեշտակ Աստուծոյ կայր 'ի սպասու նմա. և այսու հաւատով հզօր յաղթութեամբ զամենայն թշնամիս իւր կործանեաց: Արդ եթէ 'ի ձեռն քրիստոնէական հաւատոյն այնպէս փառաւոր և յաղթող մարթ է մեզ լինել՝ մեք զի՞ յեղգանայցուք հաւատալ յԱստուած կենդանի: Ահա ուսուցիչ պատգամացն Աստուծոյ այս այս Իսրայէլ եպիսկոպոս. եկայք աղաչեսցուք զսա, զի կացցէ յաշխարհիս մերում և լուսաւորեսցէ զմեզ»: Զայսպիսի միաբանութեամբ խորհեալ՝ յղէ նա առ եպիսկոպոսն Իսրայէլ զաւագ ոմն իշխան՝ անուն Աւչի, այր զօրաւոր, որ թարխանութեան ունէր զպատիւ և զանձնակալեան Զաթկասար. և նոքա 'ի գալն առ նա պատմեն զխորհրդոյն զօրութիւն, եթէ ասաց մեծ իշխանն Հոնաց և ամենայն մեծամեծքն. «Հայր մեր՝ ծանեաք զարարիչն մեր 'ի ձեռն քո և հաւատացեալ երկրպագեմք միշտ սրբոյ Երրորդութեանն. աղաչեմք զքո սըրբութիւնդ, զի հաւանեսցիս լինել մեզ առաջ և վարդապետ՝ կանգնելով 'ի Վարաչան քաղաքիս մերում զաթոռ հայրապետական. և յուխտ Տեառն մերոյ ես Իլիթուէր ընդ քեզ. զամենայն հեթանոսական պաշտամունս բնաջինջ խլեցից յերեսաց Հոնաց երկրիս. զկախարդաւար քաղդեայս, որ ոչ գան 'ի հաւատս՝ հրով այրեցից. և անձն, որ հեթանոսաբար շըրջեսցի յաշխարհիս իմում կամ գաղտ կռոց զոհեսցէ, սատակեցից զնա սրով: Եւ յառաջ եղիցի նոյն ինքն աստուածպաշտութիւնն, և քարոզեսցին անպատում պարգևքն Քրիստոսի»: Եւ պատասխանեալ ասէ ցնոսա. «Ոչ է իմ այդ կարողութիւն առնել անձամբ առանց մեծի հայրապետին Աղուանից սրբոյն Եղիազարու. զի նորա է այդ իշխանութիւնդ և

ես վիճակ ունիմ բարեկարգ, զիա՞րդ մարթացայց թողուլ ըզհօտ իմ, զոր Աստուած շնորհեաց ինձ հովուել. այլ Տէր Յիսուս ըստ մարդասիրութեանն իւրոյ զձեզ հոգասցէ, աճեցուցէ եւ օրհնեսցէ, եւ տացէ ձեզ ըստ հաւատոց ձերոց հովիւ 'ի տեսաւորել աւետարանաւն Քրիստոսի»։ Իսկ երկրորդեալ եւ երրորդեալ պատգամացն՝ զնոյնն ասէին բանս։ Իսկ եպիսկոպոսն ասէ. «Թոյլ տուք այժմ մինչեւ շնորհեսցէ ինձ Աստուած երթալ յաշխարհն իմ առ բարեպաշտ որդեակն իմ Վարազ Տրդատ՝ իշխանն Աղուանից, եւ առ սուրբ կաթողիկոսն. եթէ Աստուծոյ եւ նոցա հաճոյ թուեսցի՝ կատարեսցէ Աստուած զբանդ զայդ, ոչ է վասն իմ պատիւդ այդ, զոր խոստանայք. այլ եթէ չարահնար տանջանօք 'ի ձէնջ տանջիմ, փառս եւ պատիւ ինձ զայն համարիմ՝ վասն Տեառն խնդամիտ յոյժ լինելով. բայց պարտ է ձեզ զայդ խորհուրդ մտածութեան գրով ծանուցանել առ համօրէն աշխարհն Աղուանից եւ առ հայրապետն Իսրայէլ, որ 'ի սրբոյն Եղիշէէ մինչեւ ցայսօր արեւելից հիւսիսականաց միայն վիճակեալ է յառաքելական աթոռ՝ յաստուածարնակ քաղաքէն Երուսաղէմէ եւ 'ի սրբոյն Յակոբայ յեղբօրէ Տեառն ընկալեալ զձեռնադրութիւն. եւ դուք սահման էք այնր վիճակի. առանց կամաց խորհրդակցութեան բոլորեցունց հարց եւ եղբարց աթոռակցաց իմոց՝ այդ զիա՞րդ լինիցի. զի՞նչ է գործս եւ կարեւոր խորհուրդս»։

Լուեալ զայս ամենայն յեպիսկոպոսէն՝ կատարեցին զհրամանն եւ արձակեցին զնա պատուով յաշխարհն իւր։

## ԳԼՈՒԽ ԽԳ

Գալուստ Իսրայէլի Մեծկողմանց եպիսկոպոսի 'ի Հոնաց. և երկու թղ-թատարաց ընդ նմա եկեալ 'ի խնդրել զնա յառաջնորդութիւն իւրեանց.

Մեծ և բարեպաշտ իշխանն Հոնաց՝ Իլիթուէր, հան-դերձեալ կազմէր 'ի գլխաւորաց աշխարհին իւրոյ զԻլիթգինն Իուրսանց և զՉաթն Իազր՝ զնին սրբոյն Իսրայէլի պատ-գամաւորս սիրոյ: Եւ պատճէն հրովարտակին էր այս.

«Իմանալի աչաց տեսութեամբ ընկալաք զառաքեալդ 'ի ձէնջ զայրդ Աստուծոյ Իսրայէլ եպիսկոպոս, և ընդ դորա ձեռն ողջունեմք զձեզ՝ տէր սուրբ Եղիազար Աղուանից մեծ հայրապետ, և սիրելի եղբայր մեր Վարազ Տրդատ աշխար-հակալ իշխան Աղուանից: Վասն զի խնդրէիք խաղաղու-թիւն 'ի մէնջ, և մեք հոգւոր ողջունիւ տեսաք զդա որպէս զպատկեր Աստուծոյ. և 'ի ձեռն դորա սրբական վարուցն և նորահրաշ սքանչելեացն, զոր եցոյց Բարձրեալն՝ ծանեաք զա-րարիչն մեր և ստացաք խաղաղութիւն հոգւոց մերոց: Եւ արդ խնդրեմք 'ի ձէնջ՝ զդա ինքն զԻսրայէլդ տեսուչ և ա-ռաջնորդ մեզ շնորհեցէք, յորոյ ձեռն գտաք զփրկութիւն յաւիտենից. զի և մեք ընդ ձեզ անքակ սէր հաստատեսցուք: Ողջ լերուք 'ի Տէր»:

## ԳԼՈՒԽ ԽԳ

Թուղթ իշխանին Հոնաց 'ի նոյն խորհուրդ յաշխարհն Հայոց.

«Առ սուրբ եպիսկոպոսապետդ Հայոց Մեծաց՝ Սահակ, և մեծազօր իշխանդ՝ Գրիգոր Հայոց զօրավար, ողջոյն շատ:

«Յսկզբանէ լինելութեան երկրի անգիտութեամբ խաւա-րեալ մառախլապատ միգով հարքն մեր ննջեցին 'ի դժոխս.

խակ զեկեալն փրկութիւն աշխարհի զմերինն Աստուած յեր-կիր եկեալ զՔրիստոս՝ 'ի լուր ականջաց լուաք իբրև ընդ ա-ղօտ և յարշաւանաց մերոց յաշխարհդ յայդ և որ մօտ առ մեզ տունդ Եգուանից, զմի հաւատս ունողք այժմ դուք և ամենայն տիեզերք, նախանձ բարի և 'ի մեր անկեցաւ 'ի սըր-տի, և բանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ լցեալ կատարեցաւ՝ և 'ի ծագս հիւսիսայնոցս քարոզել զաւետարանն նորա, զոր բովանդակապէս ուսաք 'ի լաւագոյն առնէ միջէ Իսրայէլէ՝ Մեծկողմանց եղելոյ եպիսկոպոսի։ Եւ այժմ զեղեալ առ մեզ զքանչելիս յեկեղեցդ լուեալ ձեր՝ և զհայցումն մեր կատարել ախորժեսջիք, զնոյն տալով մեզ տեսուչ. և 'ի սորոյ հայ-րապետէն Եղիազարէ խնդրեալ է մեր. և զձեզ գործակից և հաւատակից 'նմա գիտելով՝ աղերսեմք յերկաքանչիւրոցդ կա-տարել զմեր հոգևոր խնդիրս։ Զի սակս նորա լինելոյ առ ձեզ արշաւանք զօրացս խուժադուժ ազգաց յաշխարհդ ձեր ար-գելեալ փակեալ լինիցի՝ մեր մի հաւատ լինելով։ Ողջ լերուք»։

Արդ իբրև եկին հասին նոքա յաշխարհն Եգուանից և Հա-յոց և տուեալ ողջոյն պատմելով զամենայն զոր ինչ արար Աս-տուած 'ի ձեռն նորա աշխարհին Հոնաց, մատուցին զթուղթ-սըն մեծի իշխանին Հոնաց՝ և մեծաւ խնդութեամբ ընկալեալ նոցա և ամենայն աշխարհին՝ առնեն պատասխանի զայս.

## ԳԼՈՒԽ ԽԵ

### Պատասխանի թղթոյն Հոնաց։

«Ի Սահակայ Հայոց կաթուղիկոսէ և յամենայն քահա-նայական ուխտէ և 'ի Գրիգորէ Հայոց իշխանէ և 'ի համօ-րէն եկեղեցեացս ժողովրդականաց 'ի Տէր խնդալ։

«Վասն կենդանատու փրկութեան հասելոյ 'ի ձեզ յԱստու-ծոյ՝ որպէս մեզ պատմեցաւ, անպայման ուրախութեամբ գո-

հացաք զանդդջական պարգևացն Քրիստոսի. և զթուղթն՝ զոր նորընծայ ծառայիցդ Աստուծոյ գրեալ առ մեզ, տեսաք. յորմէ իմացաք զբարերարութեան արարչի, որ ծագեաց յաշխարհդ ձեր զլոյս աստուածանօթութեան՝ որպէս և յամենայն աշխարհս. փառաւորեցաք զմարդասէրն Աստուած, որ ոչ եթող զձեզ յընդունայն պաշտամունս հարցն ձերոց առաջնոց, այլ ծանոյց ձեզ զանուն իւր սուրբ. և եղէք ճշմարիտ երկրպագուք արարչին ձերոյ Աստուծոյ: Ահա գիտացաք եթէ անուն նորա տարածեալ եղեւ զտիեզերս՝ որպէս 'ի ձերոցդ գրեցելոց և 'ի պատգամաւորաց լուաք. եթէ որպէս դարձայք բոլորով սրտիւ 'ի ձեռն Իսրայէլի եպիսկոպոսի: Եւարդ մեք և աշխարհս մեր՝ թէպէտ և մարմնով հեռի եմք, սակայն սրտի սիրով մերով համարիմք, թէ յանդիման տեսաք զձեզ: Այլ զոր խնդրեցէքդ 'ի մէնջ զեպիսկոպոսդ Իսրայէլ՝ մեծ է այդ խորհուրդ ձեր, զի չէ մարթ հօտի առանց հովուի լինել. արդ ծանր և դժուարին է մեզ չկատարել զհայցումն ձեր, սակայն պատճառք կան, զի ոչ է վիճակեալ նա մերոյ աթոռոյս, այլ տանն Աղուանից. մեր կամ է և մեծ յօժարութիւն լինել նմա առ ձեզ հանապազ. այլ այդ հրաման և իշխանութիւն աթոռակցին մերոյ է՝ Եղիազարու հայրապետին Աղուանից. նորայ է գործդ այդ....*) Արդ դուք ծանե-րուք զԱստուած կենդանի, որ տայ կեանս մարդկան, մեռուցանէ և կեցուցանէ. և նոյն շնորհք Հոգւոյն Սրբոյ հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ և 'ի պահպանութիւն պատուիրանաց նորա. և մեք կարօտութեամբ սրտի անմոռաց յիշեսցուք զձեզ 'ի մեր եկեղեցիս. ողջ լերուք»:

Իբրև դարձան 'ի Հայոց Ծիլթգինն Խուրան և Չալթն Խաղր, և կացին առաջի կաթուղիկոսին Եղիազարու և իշխանին Վարազ Տրդատայ 'ի մայրաքաղաքն Պարտաւ՝ խընդ-

*) Բառք ինչ պակասին յերկոսին օրինակս մեր:

րէին հրաժեշտ 'ի նոցանէ և տալ զեպիսկոպոսն: Յայնժամ ոչ կամեցան տալ նոցա զԽորայէլ յառաջնորդութիւն՝ ասեն. «Ոչ է պարտ զմեզ զհաւատացեալ զմեզ յԱստուծոյ զհօտն իւր թողուլ միանգամայն և լինել ընդ ձեզ. այլ երթալ և գալ զմեզ ըստ կարի իւրում հրամայեմք 'ի հաստատել զձեզ 'ի հաւատս Քրիստոսի, և ողջ պահել զանխախտելի սէր մեր որ առ միմեանս. այլ մեք կամակից եմք, զի լինելով դորա միջնորդ ընդ ձեզ՝ բարձցի թշնամութիւն 'ի միջոյ մերմէ և անկեսցի սէր և խաղաղութիւն»: Զայս ամենայն լուեալ իշխանացն և խառնամխոն ընդ իրեանս եղեալ՝ զարհուրեցին. և անյօժար կամաւորութեամբ հաւանեալ ասեն. «'Ի գալ և յերթալ առ մեզ մի յապաղեսցէ, և զեղեալ հիմն հաւատոյ անդրէն մի քակտեսցէ և մի թողցէ զմեզ որբս. զի այլում վարդապետի ոչ անսամք և ոչ հնազանդիմք»: Իսկ երանելի եպիսկոպոսն ըստ քաղցր բարուցն առնէր շինութիւն երկոցունց կողմանց, յանձրն առնոյր զերթալն 'ի Հոնս քաջայօժար կամաւորութեամբ և յանձանձել զնորընծայ հաւատն Քրիստոսի և ունել հաստատուն զուխտ և զպայման դաշնաւորութեան նոցա: Այսմ հաւանեալ բանի մեծաշնորհ եպիսկոպոսին՝ ընկալին ուրախութեամբ և դառնային խաղաղութեամբ 'ի տեղի իւրեանց, փառաւոր առնելով զամենատուրն Երրորդութիւն:

## ԳԼՈՒԽ ԽԶ

Դարձ Մեծկողմանց եպիսկոպոսի վասն պատճէրոյ և նկարագրութեանց հայցուած 'ի Ցախնանէ Մայրաքաղաքէ:

Ընդ այն ժամանակս, յոր դեռևս վարէր զհայրապետութիւնն Աղուանից տէր Ուխտանէս և զկնի նորա Եղիազար, խռովութիւնք և հերձուածք բազումք 'ի կողմանս կողմանս

գիտնաւորաց և ազնուաց լինէին, մարտ և մրցումն Յունաց և Հայոց. և աշխարհն Աղուանից անվրդով մնայր յայն-ցանէ: — Եւ հաս ժամու իմն առ նոսա, եթէ ոմանք պատ-կերս ոչ ընդունէին, ոմանք մկրտութիւն ոչ առնէին, ոչ աղ օրհնէին և ոչ պսակ գնէին հարսանեաց. յայս պատճառս, թէ քահանայութիւն բարձեալ է յերկրէ: Վասն որոյ Դաւիթ եպիսկոպոս Մեծկողմանց խնդրեաց գրով 'ի Յովհաննէ վար-դապետէ Հայոց զպատճառս իրացն. և նա արար հմուտ այնմ ճշմարտապէս՝ այսպէս ասացեալ. «եթէ աղանդք այդ յետ ա-ռաքելոցն երևեցան, և պատկերամարտութիւն նախ 'ի Հո-ռոմ երևեցաւ, վասն որոյ ժողով մեծ եղև 'ի Կեսարիա. հրա-մայեցին նկարել զպատկերս 'ի տանն Աստուծոյ: Բայց բարձ-րաձայնեալ նկարչաց՝ զենքեանս գերագոյն կամէին լինել քան զամենայն արուեստաւորս եկեղեցականս և ասէին. «մեր արու-եստս լոյս է, զի ծերք և տղայք առհասարակ վերծանեն. իսկ զԳիրս սուրբս սակաւք ընթեռնուն»: Ասանօր ազդեցեալ կրօ-նին լինի ժողով. և քննեալ արդարացուցին զգրիչս և զվերծա-նողս և զմեկնիչս և եդին յառաջ քան զնկարիչս: Եւ անտի մինչև ցՄովսէս Հայոց կաթուղիկոսն այն աղանդ հերձուած ինչ էր յայտնեալ. ապա ընդ երկուանայն հայրապետութեան Հայոց՝ էր մեծ մարտ ընդ Մովսէս և ընդ Թէոդորոս Կարնոյ եպիսկոպոս, զոր փիլիսոփայապետն կոչէին. և ուղղափառքն աղարտէին զՀոռոմոց զամենայն կրօնսն: Եւ առնէր ժողով Մովսէս իւր կողման վարդապետացն և հրամայէր ամենեցուն ոչ հաղորդել ընդ Հոռոմ՝ հնազանդեալս քաղկեդոնական ժողովոյն. . . . մի գիրս, մի պատկերս և մի նշխարս 'ի նոցանէ ընդունել: Յայնժամ Թէոդորոս ետ հրաման ժողովել եպիս-կոպոսացն Հայոց, որ 'ի նորայն կողմանն, 'ի Կարնոյ քաղաք և ասէ. «պարտ է մեզ առնել կաթուղիկոս». և ածին զՅով-հան ոմն Աւանական, ձեռնադրեցին և հնազանդեցան քաղ-կեդոնական կրօնիցն. և ոչ ոք 'ի նոցանէ եղև խնդրող ուղ-

զուխտս հաւատոյ՝ բաց յԱնտոնեայ երանելւոյ, որ գնաց 'ի նոցանէ և եկն առ Մովսէս կաթուղիկոս, զոր ուրախութեամբ ընկալան: Մովսէս նստէր 'ի Դուին կաթուղիկոս. պատշաճեցին և Քոմինեցիքն Յովհաննու զկաթուղիկոսարան յԱւանի՝ մօտ առ միմեանս. և էր խռովութիւն 'ի միջի նոցա՝ չընդունելով զՅովհաննու ձեռնադրեալսն: Ապա Յեսու անուն քահանայ և Թադէոս և Գրիգոր, որք 'ի Մովսէսի կողմանէն էին, գնացին 'ի Դունայ և եկին 'ի Սոթից գաւառն բնակելով յանապատս, զի կրօնաւորք էին. և սկսան ուսուցանել, եթէ զպատկերս, որ յեկեղեցիսն են նկարեալ 'ի բաց ջնջեցէք և ընդ աշխարհական քահանայս մի հաղորդիք: Եղև խռովութիւն 'ի գաւառին. և համբաւն եհաս առ Մովսէս հայրապետն, որ խնդրեն զնոսա, թէ փութով այսրէն եկայք: Եւ նոքա ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակեցան 'ի ձերում Արցախական գաւառի: Եւ հարցեալ հայրապետին զգլխաւորս իւր, եթէ զիարդ են այնց մարդկան գործք, նոքա զոր վասն հոմինայականին էր թիւրութիւն՝ ետուն պատճառս. ապա գրեցին նմանի, թէ մի ոք իշխեսցէ խօսել զնկարս որ յեկեղեցիս են: Եւ 'ի վախճանել հայրապետին Մովսէսի և 'ի տիրելն Խոսրովու Հայոց՝ միաւորեցաւ եկեղեցին. և նստուցին հայրապետ զԱբրահամ Ճղմուրիւ և ընտիր այր, որ զժողովն Քաղկեդոնի նախ երարձ նզովիւք, և ապա ձեռնադրեցաւ: Իսկ պատկերամարտքն, որ էին յԱղուանս՝ պղտորեցին զերկիրդ ձեր: Ապա Գարդմանայ տէրն կալեալ զերեսին սոցա, որոց անուանքն 'ի Թղթիդ են, եւ կապանօք ածել 'ի Հայս. և եղեալ նոցա յանդիման մեզ՝ հարցաք. «թէ յոր պատճառս չընդունիք զմարմնացելոյ Աստուծոյ զպատկերն». ետուն պատասխանի՝ «թէ արտաքոյ է պատուիրանաց և եթէ կռապաշտից է գործդ այդ, որոց զամենայն արարածս 'ի պաշտօն էր առեալ. մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման 'ի Գրոց»: Ապա մեք

յայտ արարեալ զՄովսիսականն 'ի խորանին նկարակերտու-թիւն և զՍողոմոնեան տաճարին զանազան քանդակագործու-թիւնս՝ զնոյն նկարագրեալ և 'ի մեր եկեղեցիս։ Զայս և զայլն նմանս ասացեալ՝ զթիւրութիւն նոցա ուղղեցաք։

## ԳԼՈՒԽ ԽԷ

Խորհրդածութիւն ինչ որով ժամանակաւ անիծաւ ծագմն քաղկեդոնի և Աղուանից անկեան մալ 'ի նմանէ. յամ ինքնանայ Վրաց 'ի Հայոց. և չէ ինչ Աբրահամու խորհրդակցեալ վասն Աղուանից.

Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայք 'ի հաւատս. և Աղուանից լու-սաւորութիւնն երկու հարիւր և եօթանասուն ամ յառաջ էր. իսկ յետ հարիւր և ութսուն ամ լինելոյ հաւատալոյն Հայոց՝ յաղագս ժողովոյն Քաղկեդոնի եղև հանդէս ժո-ղովոց 'ի ժամանակս Բաբկենի Հայոց կաթողիկոսի։ Յոյնք և ամենայն Իտալիա, Հայք և Աղուանք և Վիրք միաբանեալ նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի հռոմեա-բարեպաշտ թագաւորացն Հոռոմոց՝ Զենոնի և Անաստա-սայ։ Իսկ յետ ութսուն և եօթն ամաց անցելոց 'ի ժամանակս Աբրահամու Հայոց կաթողիկոսի բաժանեցան Վիրք 'ի Հա-յոց միաբանութենէ 'ի ձեռն Կիւրիոնի, այլ և Յոյնք և Իտալիա ընդ նոսա։ Իսկ Աղուանք ոչ քակեցան յուղղափառութենէ և 'ի միաբանութենէ Հայոց. որոց շրջաբերական թղթով վասն Կիւրիոնի դիմադարձութեանն Աբրահամ՝ և յաղագս ամենեւին 'ի բաց կորելոյն զնա սրով Հոգւոյն, ազդէ նախ յԱղուանս, տայ գիտութիւն և գրէ այսպէս 'ի թղթին, «Դէթէ յառաջագոյն քան զՀայոց աթոռակալութիւնն կացեալ ա-թոռակալութեանն Աղուանից, և ընդ մեզ համաձայն գոլով.

նոցա կամակցութեամբ նզովեցաք և ընկեցաք զՆեստորիոս ընդ հրամանի հարցն՝ մեք և Աղուանք. և զնոյնն 'ի վերայ Վրաց հրամայեցաք՝ ամենեքին մի հաղորդել ընդ նոսա՝ մի յաղօթս, մի 'ի կերակուրս, մի յըմպելիս, մի 'ի բարեկամութիւնս, մի 'ի դայեկութիւնս, մի յաղօթս երթալ 'ի խաչն, որ Մցխիթայի անդէօքն համբաւի, մի 'ի Մանգլեաց խաչն, մի 'ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենեքին հեռանալ, միայն գնել ինչ, կամ գնոց տալ՝ որպէս Հրէից: Արդ որ ոք անխտրաբար հաղորդեսցի՝ կամակից լինելով անհաւատութեան նոցա, նզովեսցի հոգւով և մարմնով, և ամենայն կենցաղով իւրով որոշեսցի յեկեղեցւոյն Աստուծոյ. և եղիցին խաւարային և յաւիտենից հրոյն կերակուր, որ զհրամանս զայս արհամարհեսցեն»:

## ԳԼՈՒԽ ԽԲ

Յաղագս Յունաց որ Հայս կամէին ուսանել զինն դասս եկեղեցական կարգաւորութեան, և Հայոց կամք՝ Աղուանից լինել ընդ նոսա արարողութեամբ, որպէս և հաւանել Աղուանից. և դառնալն Սիւնեաց 'ի Հայոց յԱղուանս և շինութիւն և շէնք:

'Ի թագաւորելն Մարկիանոսի Հռովմայեցւոց՝ անդէն հրապուրեալ 'ի Պօղքերիայ կնոջէն և 'ի կարգընկէց նեստորականէ, պատառեալ եղծ զսահման ուղղափառ հաւատոյ քաղկեդոնական հաւաքմամբն: Յետ որոյ նոցին հաւանեալքն բազում անգամ մերձեցան վասն Հայոց 'ի հաւատալ ընդ նոսա, էր որ թղթով, և բազում անգամ դէմ յանդիման ժողովովք. կոչեցին միանգամ 'ի Կոստանդնուպօլիս, և երկիցս 'ի Թէոդոսուպօլիս, և ջանային իբրև զվրիպեալս շահել զնոսա: Այլ թէպէտ թագաւորական հրամանաւ յարակիրթ

ճարտարքն Յունաց փաստահանայքն 'ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբ յաղթող լինել, սակայն ընդ նմին և զպատասխանիս լսէին. քանզի նորոգեալ էին 'ի Հայաստան եկեղեցիս ուսմունք, և էին յոյն լեզուին տեղեկագոյնք: Այլ Հայք համբաւէին զՅովհաննէ Մայրագոմեցւոյ, եթէ 'ի կողմն Յունաց լեալ՝ հակառակ բարի. որոյ զրպարտութեան պատճառ էր Սողոմոն ոմն միանձնեայ, որ յետոյ Հայոց եղև կաթողիկոս. և նորա հարցեալ զվարդապետն իւր զՍողոմոն, որ Մաքենացւոյն էր հայր՝ նա դրով ուսոյց զայս, «եթէ ոչ պարտեցան Հայք 'ի հաւատոյ մասին. այլ պատուիկ յոյժ եղեն պարտեալ, զի տեսցեն Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի իւր դասուք, որպէս 'ի վեր անդր երկնայինքն՝ նոյնպէս գահակալեցան և 'ի ներքին խորանիս: Պատրիարգ, որ է հայրապետ, և արքեպիսկոպոս, որ կոչի եպիսկոպոսապետ և կաթուղիկոս, մետրապոլիտ, և եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէսսարկաւագ, ընթերցող, և փաղք. այսք ամենայն միաբանեալ ապա կարեն ձեռնադրել զհայրապետն, և հայրապետն զամենեսեան: Արդ եթէ ողջմտութեամբ հաւատայք, խոստովան լերուք, եթէ ով է պատրիարգն ձեր. զի չորք միայն կային 'ի վերայ երկրի՝ Աղեքսանդրիոյ Մարկոսի աթոռն, Անտիոքայ՝ Մատթէոսին, Հռովմայ՝ Ղուկասուն, և Եփեսոսի՝ Յովհաննուն, ըստ չորեքանկիւն տիեզերաց, ըստ քառավտակ գետոյն Եդենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն և ըստ չորից մովսիսական օրինաց. զի երկրորդումն օրինաց որոշ համարի: Արդ մեք ամենեցուն հնազանդիմք, հնազանդեցարուք և դուք միում 'ի նոցանէ կամ ամենեցուն, որ մի հաւատ լինիմք: Քանզի ձեր սուրբն Գրիգոր 'ի Կեսարիա եպիսկոպոսապետ միայն ձեռնադրեցաւ և յետ նորա մինչև ցայսօր. ապա եթէ այլոյ եկեղեցւոյ ուղղափառ էք՝ զատ յայցանէ, ցուցէք զպատրիարգն, ընդ որով դասի արքեպիսկոպոսն ձեր,

որ մինչև ցայսօր ընդ մեզ էր. ապա եթէ պատրիարգ ոչ ունիք և ոչ զայլ կղերիկոս եկեղեցւոյ բովանդակ, յայնմի խոտորեալ հերձող էք ընդ Արիոսս և ընդ այլ խուժադուժս և չարափառս: Այսուիկ անպատսպարանի լինէին Հայք, զի այնպիսի դրութեամբ վարէր եկեղեցի նոցա»:

Իսկ 'ի թագաւորելն Յուստինիանոսի փոխեաց զնշխարս սըրբոյն Յովհաննու աւետարանչին 'ի Կոստանդնուպօլիս, և հաստատեաց անդ զաթոռն հայրապետական և բուն աթոռն մնաց անդէն յԵփեսոս. նոյնպէս և զՄատթէոսին փոխեաց յԱնտիոքայ յԵրուսաղէմ, ասէ՝ զի քաղաք է մեծի արքային. և բուն մնաց յԱնտիոք: Յայնժամ շարժեցան ամենայն մեծամիտք, և ուր առաքեալ էր փախճանեալ՝ զամենեցուն աթոռոցն պատրիարգ խոստովանեցան: Ընդանօր ապա և մերոյս բերան բան 'ի բերան յետ քան զկարգն նոցա դնելոյ: Եւ զՀայս Պարսիկք և Յոյնք բաժանեալ էին, և ուր Մովսէս էր յաթոռն սրբոյն Գրիգորի 'ի Դուին. և կողմանք Յունաց հակառակ նմա նստուցին զՅովհան ոմն մերձ առ նա: Իսկ զերկուանայն հայրապետութեան խռովեցին անարքն Սիւնեաց, և ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն՝ հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինւոյն Պետրոսի, որ հասեալ 'ի վախճան՝ պատուէր ետ վերջնոյն իւրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանից և զնորին օրհնութիւն՝ մինչև միասցի աթոռն սըրբոյն Գրիգորի: Վասն այսորիկ ձեռնադրեցաւ Վրթանէս յեպիսկոպոսութիւն Սիւնեաց 'ի Զաքարիայ հայրապետէն Աղուանից. ընդ նմին և զեւղն օրհնութեան առ յանձն առնուին Սիւնիք յԱղուանից, մինչև բարձաւ հակառակութիւնն և միաբանեաց Աբրահամ զհայրապետական աթոռն:

Եւ 'ի սակս իմն դառնակարգութեան՝ զգլխաւոր եկեղեցականք անձնահաճ կամաւ բռնակալս բարուց Հայաստանեայց, կարգեն զԱբրահամ պատրիարգ, և զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զՎրացն՝ մետրապոլիտ: Խզեցաւ Վրացն, որ-

ում Կիւրիոն կոչէին՝ և հակառակութեան բերէր վճիռ. իսկ սուրբ Հայրապետն Աբրահամ ասէր, լինել յառաջահաստատ քան զՎիրս՝ զԱղուանս, և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն: Յայսմ մաքառմանէ և 'ի խնդիր ուղղափառ հաւատոյ՝ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիք: Իսկ 'ի յունական զօրավարացն գրգռեալ Հայք խնդրել զգահերէցութիւն 'ի վերայ Աղուանից, որում ոչ հաւանեալ Աղուանք՝ զայլ ոմն երևեցուցին կանխաւ ասացեալ եկեալ յաշխարհն Աղուանից՝ Ներսէս անուն, յաշակերտաց Տեառն՝ ձեռնադրեալ 'ի ձեռանէ Յակոբու եղբօր Տեառն, քարոզեալ անդ և եկեղեցի շինեալ նախկին քան 'ի Հայս, առաջին մայր եկեղեցեացն արևելից՝ զԳիսոյ եկեղեցին նորին հիմնադրեալ և զինքեանս նմա աշակերտեալ՝ դարձան 'ի Հայոց առ ինքեանս՝ չլինելով ընդ ումեք իշխանութեամբ: Արդ Հայք վասն մեծարանութեան Յունաց, որ փոքրիկացուցանել ջանային զհայս հանդերձ Թադէոսի առաքելոյ՝ չունել եպիսկոպոսապետ և մետրապոլիտ, խորհեցան ունել մետրապոլիտ զմարդպետական եպիսկոպոսն՝ տալ նմա խաչ և պատիւ միայն և ոչ ունել ձեռնադրութիւն եպիսկոպոսի. նոքա խնդրեալ եպիսկոպոսս երկուս կամ երիս լինել ընդ իւր. որում ոչ հաւանեալ գլխաւորացն՝ երկուցեալ մի գուցէ արդեօք այլ իմն գունակ բաժանումն լինել միաբանեալ աթոռոյն: Արդ տեսանելով միշտ աստուածերկիւղ և հլու և հաւան պատուիրանաց զանեարն Աղուանից, և զկղերս եկեղեցեացն քաջուսմունս և ուղղափառս յամենայնի՝ նոցա ետուն զպատիւն լինելոյ մետրապոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք և ոչ ժտել իւրս ինչ ունելի և ոչ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն. իսկ զայլ առաջին ազատութիւնս նոցա թողին, զի մի ամբոխ ինչ լինիցի: Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Աղուանից և ոչ գրեն 'ի պատասխանիս Հայոց եպիսկոպոսապետ. զի թէ քարոզելի էր, ապա և գրելի: Բայց ոչ քարոզելն մեծութիւն է և ոչ

գրեալ. և զխաչն առաջի ունել՝ 'ի փառս տէրունեան է. և անունն լոկ խաչին և քարոզն բնաւորեալ է յիշատակ ոչ ուրուք ընդ նովաւ լինելոյ:

Այսպէս զնանդեցին զենն դասս: Նոյն տէրունիքս 'ի Սիւնիս՝ հնգեւոր տէր գրեն, և նոքա 'ի ծոցոյն: Այսպ վասն տեսան Նոզխայի խափանարարութեան Յհրկեցոյ վանս, յորժամ Յուդուանս երէայր՝ սակս այնր ոչ գրեցին 'ի ծոցոյն, արգելին և նոքա հնգեւոր տէրն: Այդպէս է ստուգութիւն իրացդ:

## ԳԼՈՒԽ ԽԹ.

### Պատասխանի Եղբօրն Մխիթարայ Ամբերդոյ եպիսկոպոսի 'ի Հայոց.

«Պատուական գանձոցդ և մեծ հոչակելոցդ, որք զնկարութիւնն բերեալ յօժարութեամբ յաւարկութեան, զմանեղես բացատրդք, նմանող թուեցեալք՝ 'ի դէպ ինձ առել՝ կամօք հաւատար ընդ ջանի հայցն Եթենականաց, նորագունից լուդք և պատմողք յարդեան ժամանակիս, 'ի մէջ հիւսիսականմանց տարածարողք զլոլոր լուղս տարաբերմամբ, մանաւանդ 'ի սակս ջամբելոյ զհոտհրդոյն սեռաութիւն, տէր Մխիթար Ըմարտայ եպիսկոպոս, Սիմէոն Մեծիրանց եպիսկոպոս և եթէ այլ եպիսկոպոսք նոցին համախոհք սրբոյ եկեղեցւոյ, և ազատ մարդիկ և այլք 'ի ժողովրդականաց Եղուանից՝

«Յաբրահամէ Հայոց կաթողիկոսէ, 'ի Թէոդորոսէ Մարդպետական եպիսկոպոսէ, 'ի Սահիմաննոսէ Բագրևանդայ եպիսկոպոսէ, 'ի Դաւթայ Սիւնեաց եպիսկոպոսէ, 'ի Մովսէսէ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, 'ի Քրիստափորէ Ապահունեաց եպիսկոպոսէ, և յայլոց եպիսկոպոսաց և յուխտէ եկեղեցւոյ և յազատ մարդկանէ, ընծայք աղօթալից և ուժ-

գին խնդրուածովք սրտի զմերունեան հոգևորոն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել:

«Քանզի գրելով ձեր առ մեզ պատմեցիք զձեր աստուածպաշտութեան կամս, թէ անհակառակս արդեօք և թէ սահծեալ զհակառակութիւնս, զոր ընկալաք 'ի նախարարէ միոյ Աւնեցւոյ՝ Գրիգոր անուն: Քանզի և զորբանեկէն ձեր առաց 'ի կերպողէն հրաժարեալ, բայց մեզ բարեպաշտութեան խնդրի զուշակեցաւ և կամից շարժութիւն 'ի կատարեալ խոստովանութիւնն երանելի նախնեացն. և թէպէտ 'ի նմանէ լուրս զանազանս ունէկացաք, այլ նախնեացն ձերոց հարազատ եղբայրութեան զուժ բռնաձգեալ էած զմեզ յայս, զի զգրեալն ձեր համառօտ խոստովանութիւն հաւատոյ կամեցաք յիշատակել, և առ նմին զՀոգւոյն Սրբոյ վարդապետութիւնն զնել մերձ ըստ մասին՝ 'ի Ճշմարտութենէ հեռանալ կամ մերանիլ. որոց յետ ծանօթանալոյ տուր ինձ զքո միտդ յէանալ յուղիղն և մի՛ զասիր 'ի հակառակող կամս, զի եկեղեցւոյ Աստուծոյ ոչ է այդ սովորութիւն: Քանզի 'ի ձէնջ գիրն ծանոյց մեզ՝ յետ զուգմաքեալ զմէնջ զոհութեանն, ամբաստանութեան ձառ զմարդոյ ոկարագունի նշանակեալ, և զմեր նմա հաւատայն իբրև անխմաստ անուղղի իմն համբաւեալ. և թէ ոչ թերի, այլ լի նման ձեզ եմք 'ի հաւատս, զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս աւետարանեցին: Սոյս յետ սակաւ ինչ բանից՝ զբրոյ Երրորդութեան յառաջ քան զյաւիտեանս զէութենէն էր աստուածաբանեալ ձեր տարարերմամբ. և յետ յօրմէց՝ ըղմարմնաւորութիւնն բանին մեզ պատմեցիք զանազանեալ մօք. զոյակի վարդապետութեան միոս եկեղեցի Քրիստոսի չէ առեալ յառաքելոց, և ոչ 'ի բանից գրոց 'ի նոյնս բռնաձգելոց, այլ 'ի զալլոց յափշտակեալ, արք. որք խօսին թիւրս 'ի ձգել զինի իւրեանց զաշակերտեալսն. նաև այլ խօսք, որ ոչ ընդ սոսա մերանին՝ իբրև զալղամոց լսարեաց կեղ-

ծառայութեան գտան առ մեզ հաստատեալ՝ փակի: Եւ զի այս այսպէս, ով պատուականք, մեք գիր խոստովանութեան ձեռամբ, թէ ուր ձգէ զձեզ եւ որպէս մեկուսացուցանէ ՚ի Հոգւոյն Սրբոյ վարդապետութենէն: Արդ բան առ բան բազմաւորական եւ հաստ պատասխանեօք զոյն առ խաւար ծանեարուք՝ խորագոյնս քննելով: Եւ դու՝ բարեաց ցանկացողդ, վերացո ընդ իս սրագոյնս զհայեցուածս ՚ի սահմանն Սրբոյ Երրորդութեանն, զոր Պօղոս վարդապետէ առ Հռովմայեցիսն. «Աղաչեմ զձեզ՝ ասէ, ՚ի ձեռն Տեառն Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած. եւ թէ Աստուած է Տէր Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Հոգին»: Այսպէս ուսուցեալ զանուն Սուրբ Երրորդութեանն՝ գրէ իսկ, թէ ամենայն առաքելական կականքն լի են այսու բարբառով. յոր անուն մեք հրաման առաք մկրտել եւ փառս վայելել միով երկրպագութեամբ: Արդ ընդէ՞ր տամք տեղի պատառելոյ զեկեղեցին Աստուծոյ, զոր Որդին Աստուծոյ ժողովեաց ՚ի մի գաւիթ: Մի՛ ՚ի մէջ երեւեսցի Նաբաթ եւ Աբիութ՝ օտար հուր մատուցանելով անհաւատապէս, զի մի՛ հրաստչոր լիցուք. զմեզ վերստին զերկնոյն զՔրիստոս մի՛ անարգեսցուք՝ այլաձեւելով զհաւատս, զի մի՛ զՆոյեանն առ Քանան անէծս յորոշողէն զօղխ յայծեաց մեք առցուք: Քանզի ընդ մեզ է ձայնս եւ ընդ քեզ՝ Մխիթար, որ կացեալդ ես գլուխ Ամարասայ եկեղեցւոյդ. եւ համբաւես, եթէ զԳրիգորի եղեալ հիմն եւ զնոյն հաւատս ունիս եւ զղաւակին բարեխօս առ Քրիստոս Աստուած վասն մեզ ժառանգակից նմա լինելոյ. մի՛ գուցէ լինիցի լռել, եթէ դուք զաւակ Քանանու էք ծառայելոյն մերոց եւ ոչ Յուդայի խոստովանողի, եւ հրամայեսցի կորել ընդ մէջ եւ ընդ կեղծաւորացն զնել մասն: Եթէ ուղիղ այնց հայրց եմք, ովք ոչ անզանազան յԱռաքելոցն են, հաւատ զնոցին ուսուցեալ՝ պինդ կալցուք. եւ մի՛ ջուր ընդ բուսն խառնելով՝ զմիմանութիւն

անխարդախ կաթինն արտացուք։ Զի որոյ անուամբն մեք պարծիմք՝ նա իսկ չարախօս լինի առ երկնաւոր Հայրն։ Եւ և ոչ յոլովութեամբ ոսկոյ հրապուրեսցուք, այլ ըստ առակօղին խրատու՝ մի՛ միանալ ընդ բազումս 'ի չարիս, ընդ ութոգիսն տապանակիցք ջանասցուք լինել՝ 'ի բազմաց ամբոխին չոգողաց և 'ի ջրահեղձոյց պատուհասէն ընդ Ղովտայ զերծանել 'ի հրակէզ անձրևաց, ընդ երկուսն 'ի պարգևականն մտանել յերկիր 'ի վեց հազարաց տապալելոց։ Քանզի և ցանկ բարի հովիւն զեբրին հնչեցուցանելով՝ ասէ. «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն». և զկամաւոր յայսցանէ յորդորեսցուք 'ի նոյն։ Բայց մեք՝ որպէս ընկալաք երկրպագութեամբ պատուել զՍուրբ Երրորդութիւնն, առանց թերահաւատութեան ունիմք և կալցուք մինչև յաւիտեան, խորշելով յամենայն եղբօրէ, որ յայսմ սահման իցէ»։

## ԳԼՈՒԽ Ծ

Վասն Ցուցակաց անապատականին Բնակելոյ յԱրցախ, և Երբեմն յԵրուսաղէմ, ընդ նմին և բերելոյ նշխարաց սրբոց։

'Ի թագաւորութեան Հերակլի և 'ի ջախջախել թագաւորութեանն Պարսից Յազկերտի, 'ի կաթողիկոսութեան Հայոց Եզրի, 'ի սպարապետութեանն Մուշեղի, 'ի Սիւնեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսութեանն Մաթուսաղայի և յիշխանութեանն Եղուանից Վարազ Գրիգորի Գարդմանայ Տեառն գնացի ես՝ Յովսէփ անապատական, 'ի գաւառէն Գեղամայ յանապատէն Բարձ Եղեաց վանն չարնեղութեան ժամանակին, յոր անիրաւք պղերցեալք առ սոն կոխեցին զեկեղեցիս, և զտառապեալս հարկապահանջք ան-

ռակ գնացին առաքելին. մանաւանդ անհնարու ազգն Տաճկաց սկսան զօրանալ և գնել զամենայն աշխարհն իբրև զհող 'ի կոխումն. յայսմիկ նեղութեանց խոյս տուեալ եկի 'ի գաւառս Երզնկայ 'ի գեօղն Յղերկս առ ծերունի եպիսկոպոսն Միհր. և նորա ընկալեալ զիս զանարժանս՝ խնդրեաց 'ի գեղջեացն զայս տեղի և շինեաց եկեղեցի. և կացեալ իմ 'ի սմա ամս երկոտասան՝ զնա Աստուած յաւել առ հարս իւր. և յաջորդեաց զաթոռ նորին Անդրէաս՝ նմա յանձն արարեալ զիս տեսուչ իմոյ. որ բարեաւք մտօք ամենայնիւ զանդես հաստատեաց, բայց ոչ կային նշխարք սրբոց 'ի վանքս: Իսկ Մխիթար ոմն անապատական 'ի Տանձեաց՝ ցանկացեալ սրբոյ քաղաքին Երուսաղեմի, երկու ընկերօք գնացեալ երկրպագէ ամենայն սրբութեանցն. և մի ամ կացեալ անդ՝ շնորհէ նմա Գրիգոր 'ի նշխարաց սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն Գէորգայ՝ 'ի ձեռն հաւատարիմ միոյ Քահանայ շինացւոյ, որ սակս իւր մերձաւորաց էր պահեալ զայնս. և 'ի սպառիլ նոցա՝ ետ զսուրբսն ցՄխիթար և ասէ. «Տարցես զնոսա յաշխարհն մեր և յարժանաւոր բնակեցուսցես տեղւոջ»: Եւ նորա մեծաւ փութով առեալ զգանձն՝ չոգաւ ընդ Քահանայ կոյս յերկիւղէ թշնամեաց և հասանէր 'ի լեառն Տորոս 'ի վկայարանս սրբոյն Անդրէի, որ բազում ընկերօք վկայեաց 'ի Մելիտինէ թագաւորէ: Ընդ մեծահայց եղեալ նորա խնդրէ 'ի նշխարաց Անդրէի 'ի սպասաւորէն Թումայ. և նորա հաւանեալ աղաչանացն՝ տայ նմա զխնդիրն: Յայնժամ ընկալեալ զպատուական գանձն՝ գայ հասանէ 'ի կողմանս Երզնկայ. զորս զհամբաւն լուեալ իմ Յովսեփայ՝ եկի ընդ առաջ նորա ըստ արժանի սրբոցն և հանգուցի զայն օր. և 'ի վաղիւն հարցի զՄխիթար, թէ ո՞ր կամիս զսուրբսն տանել», նա ասէ. «ուր Աստուած կամի և նոքա բնակին»: Իսկ իմ յորդորեալ 'ի սէր սրբոցն ասեմ ցնա. «Գիտեմ զի անարժան եմ 'ի սպասաւորել դոցա, այլ քեւ հանդերձ՝ Մխիթար, վստահ լի-

նիմ 'ի սպասաւորել զամենայն աւուրս կենաց իմոց»։ Յայն-ժամ հաւանեալ նորա՝ հանգուցանէ զսուրբն 'ի վկայարա-նին, զոր շինեաց փոքրիկ հիւսն և որդին իւր Յովհան՝ նպաստաւորեալ և Բախդանէր գարբին. և զամս երեք ըստ կանոնաց զնոցայն կատարեցաք զյիշատակս։ Յետ այսորիկ անկեցաւ 'ի սիրտ իմ ցանկութիւն առնել 'ի նշխարաց սրբոյն Յովհաննու, որ մեծ 'ի ծնունդս կանանց 'ի փրկչէն վկայեալ։ Եւ հանդերձեալ իմ աշակերտօքս Քրիստոսատուր-րիւ և Գրիգորիւ և սարկաւագաւս գնացի 'ի խնդիր Կարապե-տին հրամանաւ և թոշակաւ Ներսէսի երիցու և հաւանու-թեամբ բնակչացն իմոց՝ Յովհաննու և Մխիթարայ կրօ-նաւորաց։ Չոգայ հասի 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և զերկրպագութիւնս անդ կատարեալ՝ մեծաւ տրտմութեամբ դարձայ, վասն զի ամենեքեան էին հաւանեալ ժողովոյն Քաղ-կեդոնի. որոց ողջոյն անգամ ոչ տուեալ՝ եկի 'ի գաւառն իմ Գեղարքունի 'ի Պուհայ վանս, յորում տեղեակ 'ի մանու-կութենէ էի լուեալ անդ մասին նշխարաց Յովհաննու. և յաղ-աչանօք հայցեցի 'ի Գրիգորիկոյ սպասաւորէ սրբոյն. և ո-ղորմութեամբն Աստուծոյ հաւանեալ նորա եբաց զտապանակն և գտաք անդ զսուրբ Մկրտչին և զԹովմաս առաքելոյ և զնա-խավկայն Ստեփաննոս, զորս առաջնոց հարանց բերեալ էր յուղղափառացն սրբոյն Երուսաղեմի։ Ընկալեալ իմ Յով-սեփայ բերի 'ի նոյն վկայարանն. և մեր մեծապէս լցեալ խըն-դութեամբ ընդ առաջ մեր եկին. և այնպէս հանգուցեալ 'ի տեղին կարգեցաք զյիշատակ սոցա ըստ հրամանի Աւուրդե Երուսաղեմացւոց, որ զընթերցուածն եցոյց 'ի փառս Քրիս-տոսի Աստուծոյ մերոյ։ Յետ այսր եղելոյ հաճեցան սուրբքն ամենայն, որք 'ի գաւառին Գեղամայ բերդին իւրաքանչիւր ոք անուամբ և զրով և եղան 'ի նմին եկեղեցւոջն։ Որոց բա-րեխօսութեամբն Տէր Աստուած աշխարհիս ողորմեսցի»։

## ԳԼՈՒԽ ԾԵ

Վասն որ ՚ի սուրբն Երուսաղէմ եկեղեցեաց շինուածոց, Խաչին և [illegible]

Ընծայաւոր կենարարին Քրիստոսի լուսաւորութիւնն տապանակորած վիմին գիրկ և կէս հեռի է ՚ի միջի գմբեթէն սրբոյ կենարար գերեզմանին. և ՚ի վերայ սեանցն գմբեթաձև եկեղեցւոյն, որ շինեալ է հարիւր կանգուն բարձրութեամբ և հարիւր լայնութեամբ. և յայնմ երկոտասան սիւնք ՚ի ներքոյ և երկոտասան ՚ի վերոյ վերնատանն. և յայնմ վերնատան է գեղարդն և սպունգն և սկաւառակն Քրիստոսի պատեալ ոսկւով: Իսկ եկեղեցին կաթուղիկէ, որ Մատուռն անուանի, որ է գլուխ խաչին՝ քսան կանգուն հեռագոյն ՚ի Յարութենէն, փակեալ և հինգ սիւն ՚ի վերոյ և ՚ի ներքոյ երկայնութեանն: Իսկ սուրբ Գողգոթայի եկեղեցին տասն քայլ հեռի է ՚ի Յարութենէն, որ Եդեմայ գերեզման կոչի, ներքոյ և ՚ի վերոյ ոսկեայ խորհրդոյն, յորում խաչեցաւ Քրիստոս ՚ի վիմին վերայ: Իսկ Սուրբ Սիոն եկեղեցին միով ասպարիզաւ բացագոյն է ՚ի Յարութենէն. հարիւր կանգուն յերկայնն և եօթանասուն ՚ի լայնն, ութսուն սեամբք կամարակապք և չէ վերնատամբ, այլ թարբ կապեալ է փայտեայ. և սպասք փշոյն կայ ՚ի կախ գլթարքէն, զոր եդին ՚ի Կենարարին գլուխն: Եւ յաջմէ եկեղեցւոյն է վերնատունն խորհրդոյ և փայտեայ գմբէթ, յորում նկարեալ է ընթրեացն խորհուրդ Փրկչին. յորում սեղան խորհրդոյ և պատարագ մատչի ՚ի վերնայարկն Սիոնի, և վերնատուն մի շինի: Եւ սուրբն Սիոն ընդ աջմէ խորանին Պիղատոսի, որ Կապպաթա անուանի. և վէմն, յորոյ վերայ կայր Փրկիչն առաջի Պիղատոսի, յորում ոտից անօյն երևի ցարդ ևս. և աւազան ՚ի ներքոյ նորին, ուր

ղաշակերտաց լուաց զոտսն: Եւ յաջմէ Սիոնի բանան, ուր զՔրիստոս արգելին, ուր սեղան է և պատարագ մատչի: Եւ յայնմ տեղւոջ, ուր զՍուրբ Կոյսն գագաղն կալան Հրէայն արտաքոյ քաղաքին և չտայր թոյլ թաղել՝ զմզկէթ կառուցեալ է 'ի չորից սեանց. և սեանցն պղնձի խաչ զգեցուցեալ, որք են մարմարիոնք: Եւ անտի 'ի վայր երկու հարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ գերեզմանն Կուսին, որ 'ի ձորն Գեթսեմանի. և անտի մինչև 'ի լեառն Ձիթենեաց, ուստի վերացաւ Քրիստոս՝ ութ հարիւր աստիճանք են: Իսկ 'ի տեղւոջ համբարձմանն՝ ըստ Յարութեան եկեղեցւոյն ձեւոյ գեղեցկահիւս՝ զմբեթաձև շինուած է, հարիւր կանգուն յերկայնն և հարիւր 'ի լայնն. անտի երեւի Յորդանան գետ և Ծովն լեառն և բազում գաւառք: Իսկ Բեթղեհեմ հեռագոյն է 'ի Յարութենէն երկու հարիւրեւքան հրասախս յարեւմտից կողմանէ. չափ մեծութեան եկեղեցւոյն երկու հարիւր կանգուն երկայնութիւնն և հարիւր 'ի լայնն, ծննդեան սեանքն մարմարիոնեայք քարեայ կամարակապօք. և 'ի նմա է կրկին այրն, զոր Աբրահամ գնեաց 'ի կալուածս շիրմաց. և 'ի ներքոյ բեմին է սուրբ այրն և մսուրն, ուր սեղան է և պատարագ մատչի. և յաջմէ եկեղեցւոյն է մատուռն, յորում մանկանցն սպանելոցն 'ի Հերովդէէ նշխարքն պահին. և անտի յարեւելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիզօք հեռի 'ի Բեթղեհեմէ է հովուաց, ուր երկու եկեղեցիք են և պատարագ մատչի: Եւ Յորդանան գետ հինգ հրասախ հեռի է Երուսաղեմէ յարեւելից կուսէ, ուր Փրկիչն մկրտեցաւ. յորում եկեղեցի սպաշէն խաչանման յարմարեալ, ութսուն կանգուն երկայն և ութսուն լայն. երեք սեղանք խորհրդոց և պատարագք մատչին: Եւ լեառն Ձիթենեաց՝ Երուսաղեմի յարեւելից կուսէ լինի:

## ԳԼՈՒԽ ԾԲ

Անուանք վանորէից, որք յիշատակին են շինեալ յԱղուանից տանն, որք 'ի Բեղթոյ երանելւոյն Անտոնայ առ Վահան Մամիկոնեան՝ ասեալ ասացեալ:

Գանդզայ վանքն, որ յարեւելից կողմանէ Չիթեննաց լերինն կայ՝ Գանոն անուն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող, և այժմ Պետրոս Աղուան քահանայ ունի: — Մրուայ վանք Սուրբ Քառասունքն 'ի նոյն կողմն և մերձ 'ի նա, զոր այժմ Տաճիկն ունի: Գարտաւոյ վանք Սուրբ Աստուածածնին, որ առ Աշտարակին Գաւթի, զոր այժմ ունի կին մի՝ Մաւրիամ անուն Հաքորեցի, և զկէսն Տաճիկն ունի: Կաղանկատուաց վանք 'ի նոյն կողմն, այժմ Թէոդորոսն ունի քրիստոնեայ և տաճիկն Աբրահամեան գեղն Աբուղկամեայ՝ յԱղուանայ և 'ի Զարիշատայ: Արցախայ վանք Սուրբ Աստուածածնին և սրբոյն Ստեփաննոսի՝ այժմ տաճիկն ունի զամենայն: Ամարասայ վանք Սուրբ Գրիգոր, այժմ ունի կին մի Գրիգորիկ անուն և զկէսն ունի Տաճիկն: Այլ երեք վանք Աղուանից, զորս Տաճիկք ունին բռնութեամբ, որոց անուանքն չեն յայտ: Մխաս եւս այլ վանք Աղուանից ընդ Աղաւանից վանօքն, որ 'ի շուկամիջին է, զոր այժմ Տաճիկք ունին. այսինքն՝ առ Նախանձու հայրապետքն Երուսաղեմի խանգարեցին զՀայոց և զԱղուանից անդ ձեռնտուութիւն վանորէից, զի հարիւր աւելի վանք կան անդ, զորոց փոյթ կալեալ իշխանացն Հայոց՝ եօթն կենդինար տուեալ Թագաւորին Յուստինիանոսի, (որ է եօթանասուն հազար դահեկան) թափեցին 'ի բռնութենէ հայրապետացն զամենայն վանորայսն. ապա յետոյ յանհոգանալոյ մերայնոցս ամենայն այլայլեցաւ:

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ

# ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ը

Սուտ խոստմունքն ազգին յայտնութեան 'ի հարստայ յանձն չարաց տեսլերաց, որոց ականջն 'ի Մահմետէ կարծեցեալ մարգարէն եղև։

Զոր ընկալաք 'ի հոգեւորայրն վարդապետաց մանկութեան տարածանաց՝ արտաքին ուսմունք, յիշելով զնահապետական բանն առ Իսմայէլ մարգարէացեալ. «Եթէ ձեռք դորա յամենեսին, և եղիցի ազգ մեծ»։

Ընդ նուաղելն թագաւորութեանն Պարսից Սասանեան ազգին 'ի վեր երևեցաւ այր մի Մահմէտ անուն, փայլուն ազգեղնաւոր, որ յանապատս կայր։ Նա 'ի միում աւուր դիպանա Արիոսի կեղծուն միայնակեցի ումեմն՝ անուն Փախիրա, առ որ լինելն ազգին 'ի Մահմետէ գեղապարէր։ Իսկ նորա տեսանել ձայնեալ ասէ. «Մի՛ մեղանչեր՝ որդեակ, զի իբրև դժեղ մարդ ես». ասէ առ նա Մահմետն. — «Զի մարդ ես, վասն էր կաս 'ի քարանձաւդ»։ Յայնժամ կոչեցեալ առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել 'ի Հին և 'ի Նոր Կտակարանաց ըստ Արիոսի, որ արարած զՈրդին Աստուծոյ ասաց։ Իսկ նա, զոր ինչ 'ի նմանէ լսէր ուսեալ՝ հրամայէր խուժադուժ Տաճկացն պատմել. և բողոքէր առ նա զի մի՛ ոք զխոստացեալ զնորա անցցէ։ Իսկ անխմաստ ազգն այն՝ 'ի զարմանս եղեալ սակս հրաշարանութեանն, ասեն ցՄահմետ. «Ուստի՞ է քեզ զայդ գիտել»։ և Մահմետն հայթայթեալ զանձանօթն իւր ազգ՝ ասէ. — «Զրեշտակ խօսի ընդ իս՝ որպէս ընդ մի ոք յառաջածախօս առաջին մարգարէիցն»։ — Իսկ նոցա զարմանի լսեալ

կացուցեալ առ 'ի գլուխ, թէ ով պատմէ նմա զայն, կամ ուստի գիտէ նա զայն ամենայն. խնդրեալ Մահմէտի զգաւազանն, ծածկարար զվարդապետն իւր սպանեալ ընդաւազեաց. և 'ի նմին տեղւոջ նստեալ ինքն ասէ ցլսողս. «Յայսմ տեղւոջ հրեշտակ ինձ երևեալ՝ մեծամեծ սքանչելիս պատմէ»: Եւ նոցա տեսեալ զնա միայն՝ եկին պատմեցին վերակացուն ազգին Տաճկաց. և նոցա մեծախումբ արարեալ ժողով՝ դիմեցին յանջրդի յանապատն և մեծագոյն պատուով զՄահմէտն ածին յիւրեանց մէջն, որ սկսաւ առնել մարգարէութիւն և ասէ. «Եթէ դուք անսայք ինձ մարգարէութեանս և քարոզութեանս և առնէք զայնս՝ մեծ իշխանութիւն ստցիք մերոյ հասանէ, որպէս Հռոմոց գիրն ասէ, թէ մեզ իշխանութիւն վասն հաւատոյ մերոյ տուաւ յԱստուծոյ: Եւ զոր իւրեանն ատրուշանաց և զոհից էին տեղեք՝ Գումբէթ Աբրահամու անուանեաց և տեղի աստուածակոխ. և անդ հրամայեաց կատարած առնել, և զօրն զայն Աբրահամու անուանեաց: Հրաման ետ չորեքկուսի 'ի զոհանոցն աղօթել, քար արձան կանգնել և համբուրել յանուն Աբրահամու: Եւ առ նա երանելի մարգարէն առնէր զմարգարէութիւն, «Եթէ թողցէ այր զկին իւր, և լինիցի առն այլում, եթէ դարձուցէ առ այր իւր, ոչ ապաքէն պղծելով պղծեսցի կինն այն»: Զայս իսկ կատարեաց Մահմէտն, զի Տայր ումն Տաճիկ ունէր կին գեղեցիկ. վասն որոյ յղեաց պատգամ առ նա, եթէ Աստուած հրամայեաց թողուլ զկին քո: Իսկ Տայրն այն ածեալ զկինն իւր 'ի մէջ հրապարակին՝ երդմամբ կացուցեալ վկայս, եհան արձակեաց յիւրմէ. և Մահմէտ առ ինքն առեալ զկինն՝ ելից զողջախոհ ախտին իւրոյ զտոփանս: Եւ յետ այնորիկ դարձեալ ասէ ցՏայրն. «Աստուած հրամայեաց առնուլ ըզկին քո առ քեզ»: Եւ այս օրէնք աւանդեալ յազգ նոցա եմուտ. որ զկին թողեալ 'ի կնութենէ, ապա առ այլում եդեալ 'ի քուն, առ ինքն առնու: Եւ այնպէս է անօրէն նո-

ցա օրէնսդրութիւն, որ մինչ յահեղ անուանն Աստուծոյ երդ-նուն՝ սուտն, և մինչ յառակախս կանանց երդնուն, անստա պահեն: Եւ այլ ինչ բազում աւանդեաց ազգին այնմիկ, ո-րոց անմտութիւնն յայտնի լեալ յաւուր մեծի դատաստանին:

'Ի լնուլ վաթսուն և հինգ թուին Հայոց՝ երևեցաւ Մահմէտ 'ի Մաքին շահաստանի: Եւ իբրև եղև եօթանա-սուն թուին՝ եկն 'ի Գումբէթն Աբրահամու, և անտի եկ յայն շահաստան, որ այժմ կոչի յիւր անուն՝ Մահմետայ, յամ-սեանն սաֆար: Եղև անդ ամ մի, և զողջոյն ամն 'ի շահաս-տանէն ասպատակ արար. և յամսեանն շահր ռաբիլ աւալ սկսեալ թափեաց զԳումբէթն Աբրահամու 'ի Սամադան ամեայ ժթ. այն ութերորդ ամ էր նորա իշխանութեանն: Հա-ւալ ամեայ ժե կռուեցաւ ընդ Նաֆի Պարսկի. յաղթեալ ան-այն 'ի հատարակել տանջեան և գիշերոյ եկն 'ի Մաքայ և անտի դարձեալ յիւր շահաստանն, մինչդեռ կեց օր կայր 'ի փաղկեթայ ամեայ 'ի նախն ամի. եթող ամիրայ 'ի Մաքայ զԱեգ՝ Աբուսփեայ որդին: Եւ դարձան նորա ընկերքն 'ի Մա-քա. Աբուբէքր՝ Աբուհաֆայ որդին, աւագ էր յընկերացն. և այն ինն ամի էր Մահմետայ իշխանութեանն: 'Ի տասն-երորդ ամին մեռաւ յաւուր երկուշաբաթի յամսեանն շահ-ռաբի՝ աղաւալի յերկուցն, կալեալ զիշխանութիւնն ամս տասն: Եւ երկրառասն ամ զքարոզութիւն իւր հաստա-տեաց: Վաթսուն ամ ունէր, մինչ երևեցաւ և 'ի վաթսուն և յերրորդ ամին մեռաւ:

## ԳԼՈՒԽ Բ.

Եթէ ովք էին, որք յետ Մահմետայ եղեն Ամիրապետք.

Երկրորդ յիշխանութեանն Տաճկաց զկնի Մահմետայ նստաւ Աբուբէքր Աբի Կուհաֆեան, և կալաւ ամս ինն: Օմար

Խատտաբեան եօթն ամ, զնա սպանին։ Օսման իբն Օփան ամս տասն և մի. ապա արգելին զիշխանութիւնն Ութմանայ, և Ութման եա իշխանութիւն Աբդլահի պատիւ՝ քրքմել զհեր և զմօրուս։ Մաւիէ ամս ինն։ Եզիտ իբն Մաւիէ ամս ութ։ Աբդլմալէք իբն Մրուան ամս տասն և մի. 'ի սորա աւուրս էր Հաջէջ իբն Յուսուփ։ Վլիթ՝ Աբդլմալէքայ որդին, ամս ինն։ Սուլէյման իբն Աբդլմէլիք ամս տասն և չորս։ Օմար, Աբդլազիզայ որդի՝ ամս տասն։ Եզիտ իբն Աբդլմէլիք ամս վեց։ Հէշմ իբն Աբդլմէլիք ամս քսան։ Վլիթ իբն Եզիտ ամ մի. զնա սպանին և շփոթումն եղև Տաճկաց։ Մրուան, Մահմատայ որդի՝ ամս չորս. սա սպան զԱպուբիշէկս գլխաւորս Տաճկաց արս վաթսուն՝ զսպանողս Վլիթայ ամիրային՝ առաջի իւր անկարկեալ սպանողացն։ Եւ եկն Աբլ Աբաս 'ի Մարաց օգնականութեամբ և զօրօք Աբու Մսլիմայ Խորասանայ իշխանին և սպան զՄրուան և կալաւ զիշխանութիւնն ամս եօթն. և Աբլ Աբաս էր Աբդալլահ Մահմատայ որդի՝ Ալայի որդի, Աբդլահի որդի, Աբբասայ որդի, Աբդլ Մուտալէբայ որդի, որք այժմ ազգաւ կոչին Հեշմիկք. և սպան նա զաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս յիշխանութիւնն. և յետ նորա սպանմանն և ինքն վախճանեցաւ։ Աբու Ջաֆր, որ կոչեցաւ Աբդալլահ, նորին եղբայր, ամս քսան և երկու.—սա մեռաւ 'ի Գումբէթն Աբրահամու։ Մահդի, որ կոչի Մահմատ, որդի Աբդալլահի ամս ինն։ Մուսէ ամ մի։ Հարուն՝ Մահդիայ որդին, զոր Մահդիունն կոչեն, ամս քսան և հինգ.—սա նեղութիւն անչափ հասոյց աշխարհի և վասն այնր բազում գաւառք Հայոց փախեան 'ի Հոռոմս։ Մահմատ՝ որդի Հարունայ, ամս երեք. Հարուն՝ մինչ կենդանի էր, բաժանեաց զիշխանութիւնն երկուց որդւոց իւրոց՝ Մահմատայ և Մամունայ. 'ի անդրանկութեանն ունէր Մահմատ զիշխանութիւնն 'ի Բաղդատ և 'ի Խորասան. և Մամուն ընդ հակառակս նմա եղեալ պատերազմաւ՝ մեռանի Մահմատ. և Աբ-

գաղտահ, որ և Մայմունն կոչէր, իշխեաց ամենայնի ամս . . . ։ Իբրայիմ, ամս տասն։ Հարուն՝ քսան և երրորդ նստաւ 'ի Մահմատայ Էմիր Մումին. և հայ թուականն էր երկուհարիւր վաթսուն ամ։

## ԳԼՈՒԽ Գ.

Վասն Բակուրայ երիցաբնակի, որում Ներսէս անուն, եղեալ կաթողիկոսի.

'Ի վախճանելն Եղիազարու Աղուանից կաթուղիկոսի՝ ոմն յերկարմնակ կրօնէն, Բակուր անուն, երբեմն եղեալ եպիսկոպոս Գարդմանայ և Ներսէս յորջորջեալ՝ ուխտադրեալ ընդ Սպրամայ Աղուանից տիկնոջ Վարազ Տրդատայ, որ էր 'ի նոյն կրօն հետևեալ, կնքէր դաշինս վասն փառամոլ տիրողութեանն, ասելով. «Եթէ կամ է քո կոչել զիս 'ի հայրապետութիւն Աղուանից՝ ես արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի»։ Եւ ունկնդիր եղեալ նմա կնոջն՝ խորհուրդ բերեալ ընդ եպիսկոպոսս և ընդ մեծամեծս աշխարհին Աղուանից, ոչ ոք իմացաւ զդաւաճանութիւնն, և յանձին առին առ հասարակ կատարել զխնդիրն։ Իսկ ամենակալ Հոգին սուրբ ազդեալ եպիսկոպոսին Մեծկրանից՝ Յովելայ, առաջի մեծախումբ ժողովոյն խնդրեաց 'ի Ներսէսէ ձեռնարկ նզովելոյ զժողովն Քաղկեդոնի և զտոմարն Լևոնի՝ նորին մատամբն. և ընկալեալ զնամակ 'ի ժողովոյն արեւելից ըստ կանոնական սահմանի՝ ընկալեալ եղև. և նոյն ինքն Յովէլ եպիսկոպոս հանդերձ այլ եպիսկոպոսօք վերակոչեն զնա 'ի հայրապետական շնորհս աթոռոյն Աղուանից. և նոյնժամայն Յովէլ եպիսկոպոս առ ինքն առեալ զնզովեցն գիր դնէր 'ի պահեստի. և յետ այնր կեցեալ ամս ժդ. փոխադրէր առ Քրիստոս։

Յայնժամ անդի դարձեալ Ներսէսի 'ի կատարել զկամս իւր՝ փութայ 'ի գաւառն Մեծկրանից և գործակից իւր զը-

սեալ դՕշաքարիս փառաց հայր՝ առ ՚նմա խորհուրդ առնել զնա եպիսկոպոս և շնորհել ՚նմա զանէրունի հանն, միայն թէ տացէ զնորին ձեռնարկն՝ զի այրեսցէ. և նորա առեալ զգիր ախտին առ նա՝ անդէն ՚ի սեղանոջն հրկիզեաց. և դՕշաքարիս ձեռնադրեաց եպիսկոպոս Մեծփրանց. և ՚ի կարեւոր բարեկամութեան զնա ընկալեալ՝ դարձաւ ՚ի հին փոխանն, զոր ՚ի ժամանակաց ապաւէր: Իսկ սիննոջն Սպարամայ զնա առիպեալ՝ նորին օգնութեամբ և այլոց նախարարաց, որոց զորմն էր ընկալեալ, քակեալ աւերեաց զբազում սեղանս եկեղեցւոյ՝ որոց յաղթող եղև և զարժանաժառանգ մանկունս եկեղեցւոյ զուգադիպառս՝ հալածական արար առաքինակս. նախ զերանելին Խորայէլ նշանագործ եպիսկոպոսն Մեծկողմանց հալածեաց, որ զբազում աշխարհս Խաղրաց և Հոնաց դարձոյց ՚ի քրիստոնէութիւն, ընդ նմին և զԽաղեազար Գարդմանայ եպիսկոպոս: Իսկ սմանք յեպիսկոպոսաց նշխահեցին ՚ի նմանէ՝ Յովհաննէս Կապաղակայ եպիսկոպոս, Սահակ Ամարասայ եպիսկոպոս, Սիմէոն Հաշուայ եպիսկոպոս և Շերոյ մեծ իշխանն Աղուանից հանդերձ իւր ազատօքն, որք բարեպաշտութեամբ ուխտից եկեղեցւոյ գումարեալ հանդէս ժողովոյ՝ նզովեցին ըզՆերսէս ընդ ամենայն հերձուածովս:

## ԳԼՈՒԽ Դ

### Թուղթ ժողովոյն Աղուանից առ Տէր Հայոց կաթողիկոս.

«Տեառն Եղիայի Հայոց կաթուղիկոսի ՚ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն:

«Վասն զի զմի հաւատս ուղիղ հարքն մեր ընդ հարս ձեր ունէին և զմիաբանից հոգւոյն պահուոյ փրկութիւն, ՚ի ներքոյ Տեառն Աստուծոյ զօրացեալ կրօնն Քրիստոնէի՝ նոյն զորեղերս, և մեր կարմունքս մինչև ցայսօր ժամանակի անխառն

յայտնանէ էր Յեսայեայ։ Իսկ այժմ զոր կարծէաք զոլ հովիւ բարի մեզ զՆերսէս, նա գայլ եղեալ՝ օձաւ լսեալ զբանաւոր հօտս Քրիստոսի. վասն որոյ կամեցաք յուշ առնել սրբութեան ձերում յայց եղանել մեզ որպէս ձերոյ անդամոց և բժշկել զվէրս մեր։ Ողջ լերուք ի Տէր»։

## ԳԼՈՒԽ Ն

Թուղթ Եղիշայի Հայոց Կաթողիկոսի առ Աբդլմսեհ Եպս Մոկին ի նոյն խորհուրդ։

«Տիեզերական Երգապաշտի Եամիր Մովսիսոյ յԵղիշայէ Հայոց եպիսկոպոսապետէ։

«Յամենակալէն Աստուծոյ ունիմք զծառայական աշխարհըս հնազանդ ձերոյ տէրութեանդ. և մեք և Աղուանք զմի հաւատ պաշտել ունիմք զՔրիստոսի աստուածութեանն։ Իսկ այժմ որ Աղուանից է կաթողիկոս նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսերն Յունաց՝ զնա քարոզէ յաղօթս և զաշխարհն ստիպէ, զի ի հաւատ և ի միաբանութիւն նոցա եկեսցեն։ Արդ զխաղաղութիւն ձեզ լիցի, և մի անփոյթ արասցես վասն այդորիկ. զի կին մի մեծատուն խորհրդակից է նոցա, զորս պատուհասեալ հրամայեսջիք առնել մեծ իշխանութեամբ ձերով՝ ըստ արժանի իւրեանց գործոց, զոր առ Աստուած կամեցան մեղանչել»։

## ԳԼՈՒԽ Ձ

Պատասխանի թղթոյն Եղիշայի Հայոց Կաթողիկոսի՝ յԱբդլմսեհէ Եպս Մոկաց։

«Զառնդ Աստուծոյ զԵղիշայի Արմենեան ազգի Ջաթկեց *) կարդացի զգիր մանկութեան, և ի շնորհս քոյ ատա-

*) Միւս օր. ունի Ջանեկէ։

քեցի զծառայս իմ հաւատարիմ բազում զօրօք: Եւ վասն ապստամբացն Աղուանից 'ի մերմէ տէրութենէս հրամայեալ եմք ըստ քո կրօնիցդ առնել առ նոսա ուղղութիւնս, և սպատաւհատդ քո առաջի 'ի Պարտաւ արասցէ ծառայդ մեր. զՆերսէս և զկինն 'ի հիւմայիդ հիմին շղթայս երկաթահարեալ՝ անարգանօք ածցէ 'ի դուռն արքունի, զի 'ի տեսիլ ամենայն ապստամբաց նշաւակս զնոսա արարից»:

## ԳԼՈՒԽ Է

Գալն Եղիայի Հայոց կաթողիկոսի 'ի Պարտաւ և պատժել զՆերսէս, և 'ի տեղի նորա յաջորդել զՍիմէոն արքեպիսկոպոսութեան կամօք ժողովոյն Աղուանից.

Եկեալ հասանէ մեծ հայրապետն Հայոց Եղիա 'ի մեծ քաղաքն Աղուանից՝ Պարտաւ. և նստեալ 'ի մեծ եկեղեցւոջն՝ հրամայէ ածել զՆերսէս առաջի իւր. և նա 'ի թաքստի լեալ ոչ գտանիւր: Յայնժամ մեծահաւատն Շերոյ՝ Աղուանից իշխան, ըմբռնեալ զմտերիմս նորա՝ հրամայէր ածել զՆերսէս. և կացուցեալ զնա 'ի մէջ բազմամբոխ ատենին առաջի Եղիայի՝ անպատասխանի գոլով եղկելին՝ ըստ արքունի հրամանի արժանելի վճռոյ հանդիպէր: Զի ուր ընդ ուր բազմեալ կապեցաւ ընդ կնոջն և հանդերձեալ էր վարել 'ի տար աշխարհ, որ սակս այնորիկ անսուաղ եղեալ զաւուրս ութ՝ վախճանեցաւ. և եա թաղել զնէքն նովին երկաթեօք և նզովեաց զՇերոյ, զի նա եղև առաջնորդ չարի նորա և Սպարամայ, վասն հակառակութեանն որ ընդ նա և ընդ Սպարամ 'ի վերայ իշխանութեանն: Եւ Ներսէս կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս տասն և չորս, և զչարափառութեամբ ամս երեք և կէս:

Այսոցիկ այսպէս եղելոց՝ ընտրեցին 'ի նմին ժողովոյ զՍիմէոն այր պարկեշտ և ձեռնադրեցին զնա 'ի հայրապետու-

թիւն Աղուանից, որ զաղանդաւորն Ներսիսի երած յաշխարհէս, և բազում կարգս ուղղութեան առանդեաց եկեղեցւոյ վերակերց. և զեղծեալն Ներսիսի գրեանն, զորս լցեալ էր յարկեղս լի հերձուածովք, առեալ զամենայն եա 'ի գետն Տրդտու յիւր հովից անդուղն, որ Բերդակուրն կոչի. կացեալ յաթոռն ամ մի և կէս:

## ԳԼՈՒԽ Բ

ԶԵՌՆԱՐԿ. ԶՈՐ ԽՆԴՐԵԱՑ ԵՂԻԱ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ի ԺՈՂՈՎԷՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ե ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԻ ՀԱՅՈՑ Ե ԱՂՈՒԱՆԻՑ.

Բանդի բազում և ազգի ազգի չարութեամբ սովոր է յամենայն ժամ բարեաւաց թշնամին մեր և հաստատակաց փրկութեան հակառակորդն՝ սատանայ, որպէս զպարզամիտս 'ի մարդկանէ և ընդդէմ միցիլ մանկանց եկեղեցւոյ ըստ իւրում բնածին բարուցն, հնարել և յմտարելոյն կամեցեալ, ըստ բանին՝ եթէ ոտքն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ թէ զո կլանիցէ. զի և 'ի նախատեղծ լինելութեան նախահօրն մերոյ նոյն չարութիւն աղատամբ զօրականին արտաքսմանց զմեզ 'ի կենաց փայտէն և 'ի հեշտալի փափկութենէ դրախտին: Նոյն սատանայ 'ի սկզբանէ մինչև՝ մնացեալ 'ի թոյլ և յողդողդ խորհուրդս դիւրաճեղք անձինս մարդոց, որոց կուրացեալ են միտք ըստ ժամանակաց չարութեամբ գնացելոց, զի մի ծագեսցէ առ նոսա լոյս փառացն Քրիստոսի: Զի որովք զրկեցաւ բանաւորականն՝ սկզբնաւորիլ չարութեամբն 'ի մոլար խաբէութենէ կոչն երկրպագութեան, շահել կամեցաւ այժմ զնորին 'ի ձեռն անխնամ մարդոց պառակտողաց զեկեղեցի Աստուծոյ նորաձայնութեամբ և ձեռամբ անօրինաց՝ զշահս և զղբուխ: Նախ որոց և 'ի միջի մերում երեւեալ այժմ արմատ դառնութեան աղանդոյն Նեստորի և Մաքսիմոսի 'ի

ձեռն Ներսիսի ամբարշտեցելոյ, որ նկրտութեամբն Հոգւոյն Սրբոյ կարգեցաւ յառաջնորդութիւն ամս Եգուանից, և խորամանկութեամբն եղև հաւատակարգս և մոլորեցուցին հօտոց մերոց: Վասն զի զփրկական աւանդութիւնս առաքելաքարոզ հայրն մերոց, որք անարատ ձեռօք հաստատեալ էին յեկեղեցիս՝ անարժան ձեռօք 'ի բաց կործանեաց. և զսր-բնախառնեալ եպիսկոպոսունս ուղղափառութեան հաւատոյն և դաւանդապահս քաղաքաց. զմանս բամբասանօք հալածեաց յօտար երկիր, զմանս տրտմութեամբ լցեալ վտանգեաց. զպատուական աթոռն քակեաց. և զմանս ծրգնաւորական կրօնաւորաց այլայլեալ շփոթեաց. յորմէ ցրուեալ եղեն Քրիստոսի սուրբ մարմնոյ պատուական անդամք. որդիք Սիոնի բովանդակ մոլորեցան խաբէութեամբ. առանց սրբութեան մերոյ եղև յապականութիւն՝ ըստ ողբերգութեան Երեմիայի. «Բարձան փառք սրբութեան մերոյ, և 'ի չարեքեցերեան ափեղերս պարծանք պարծանաց մերոց չեջեալ կործանեցան»: Այլ սակայն յայսմ փայլի օրհնութիւն և գոհութիւն եղեցի Փրկչին մերոյ Աստուծոյ, որ ոչ ետ թողլ թշնամւոյն մարդկան յառաջել 'ի սպառ. այլ գթացեալ 'ի տկարութիւնս մեր և ողորմեալ ժողովրդեան իւրում առաքեաց առ մեզ զպատուական հայրդ Տեղիս շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթուղիկոս, այր սուրբ և ճշմարիտ՝ զագաթոռ սրբոյն Գրիգորի, ձերովք եպիսկոպոսօք և վարդապետօք՝ Սիմէոն Խորխոռունեաց եպիսկոպոս, Սարգիս Ամատունեաց եպիսկոպոս, Սարգիս Ռշտունեաց եպիսկոպոս, Յովհաննէս վարդապետ և այլ բազում աշակերտօքն ձեր եկիք հասիք 'ի մայրաքաղաքս մեր՝ Պարտաւ, և ձերով քաղցրասոյց վարդապետութեամբ բարձիք զչարն 'ի միջոյ մերմէ. և մերձեալ զառաջնոց հարցն մեր աւանդութիւնս՝ վերանորոգեցիք զաթոռ հայրապետութեանս մերոյ 'ի ձեռն սրբանեալ սոն, որոյ մեք եմք վկայ ճշմարտութեանն: Վասն որոյ մեք

ամենեքեան՝ Սիմէոն Երեւանից կաթողիկոս, Յովհաննէս Կապաղակից եպիսկոպոս, Սիմէոն Ջուղայ եպիսկոպոս, Սահակ Ամարասայ եպիսկոպոս, սրբասէր Բշէն Ներսերհի վանաց տանուտէր բոլոր ուխտիւն իւրով, որք անխառն յազգան-գոյն պահեցան, Գոշայ վանաց տանուտէր, Կեչառոյ վանաց տանուտէր, Յովանիսոյ վանաց տանուտէր, Դաւիթ Կաղան-կատուց վանական, Պետրոս Տիրակերտոյ վանական, Պօղոս Եղածորայ վանական, քրիստոսասէրն Շահրոյ Երեւանից իշխան, Յուանքոյ Երեւանից սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր Գագիկ, Իսաք ի Ջրահանեան (ազգէ), Վախտանկ ի Վարազմաննեան, պատրիկ ի Բագրեան ազգէ թագաւորաց, Վահան ի Վարազջոհաննեան, Թէոդորոս ի Յանաստեան, Աշոտ ի Վարազ Եքսեան, Օհանմերհ ի Վարազ քուրդաքեան ազգէ թագաւորաց, Մահմոտ ի Շահրեան և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցաք և ընկալաք միաբանութեամբ հոգևորաց և մարմնաւորաց զառաքելական հաւատն մեր, որ նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ և որ ցայժմ ոչ էր տարբերեալ։ Եւ ի հասանել փորձանացս՝ հասոյց Աստուած զօգնութիւն իւր ի ձեռն փոխանորդին սրբոյն Գրիգորի, որոյ ուղղափառութեանդ էաք աշակերտք և եղեցուք տեառնդ Եղիայի Հայոց կաթողիկոսի, որ եղեւ վրէժխնդիր թշնամւոյն արդարութեան։ Եւ արդ մեք ամենեքեան նզովեմք զամենայն հերձուածողս զառաջինս, զմիջինս և զվերջինս, զՆոմինոս և զնորին վարդապետն Արիոս, ըզՎաղենտինոս, զԱպողինար, զԴիոդորոս, զՄանի, զՄարկիոն, զԵւտիքէս, զՆեստոր, զԹէոդորիտոս.... զամենայն Լեւոնի, զՄաքսիմոս և զաշակերտս նորա, ընդ որս և զեղկելէն մեր Ներսէս նզովեցաք, որ հաւանեալ եղև երկաբնակ կրօնին և որք հաւանին։ Եւ զայն կանոնս առաջի Աստուծոյ և ձեր սրբութեանդ պայմանեցաք, զի յայտնեալ մի որ

իշխեսցէ 'ի մէնջ արտաքս ելանել յաւանդութենէ հարցն մերոց. և եթէ յանդուգն ոք գտցի, որ վերստին տարաձայնութիւն բերցէ 'ի մէջ՝ այնպիսին նզովեալ եղիցի 'ի Սրբոյ Երրորդութենէն և 'ի մերմէ միաբանութենէս, 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն անմասն եղիցի և խոստացեալ արքայութեանն մի հասցէ. եթէ յեպիսկոպոսաց իցէ՝ լուծեալ լիցի 'ի պատուոյն և 'ի բարձրութենէ աթոռոյն անկցի, եթէ 'ի քահանայից իցէ՝ զնոյն կրեսցէ, եթէ 'ի կրօնաւորաց ոք իցէ՝ նզովեալ հալածեսցի և եթէ յազատաց ոք իցէ՝ արգելեալ յեկեղեցւոյ, յընկերս մի խառնեսցի մինչև 'ի կարգ ուղղութեան եկեսցէ: Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթուղիկոսացս Աղուանից այսպէս կանոնեցաք. զի 'ի սուղ ինչ ժամանակ կաթուղիկոսքն մեր զկարգն յեպիսկոպոսաց մերոց առին, իսկ այժմ զի անխռով և անընդդիմող գործել եղև և հրճուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, զի ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից 'ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս՝ որպէս և էրն 'ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն. և ճշմարտութեամբ գիտեմք, զի զոր դուք ընարէք՝ հաճոյ Աստուծոյ է և մեզ: Եւ յայսմ պայմանէ մի լիցի իշխանութիւն ումեք արտաքոյ ելանել և նորաձևութեամբ ինչ առնել. ապա եթէ ոչ՝ անխաւեր և ունայն լիցի և մի համարեսցի ձեռնադրութիւն այն ընդունելի: Արդ ովք երկիւղիւն Աստուծոյ մերոյ սահմանադրութեանս կատարիչ լինին՝ 'ի Սուրբ Երրորդութենէ օրհնեալ լիցին և յամենայն ծառայից Աստուծոյ ուղղափառաց. իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիւրեսցի 'ի ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի՝ ով և իցէ:

«Գրեցաւ գիրս այս միաբանութեամբ և Աստուծոյ միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ անշարժ լինելոյ 'ի մէջ երկոցունցս: Յոթուան և 'ի հինգերորդ ամի Տան-

կաց և 'ի Հայ Թուականին Հարիւր քառասուն և ութն յամ-
սեանն Հրոտից: Եւ կնքեցաւ կնքով մերովք և մատանեօք, ո-
րոց անուանք 'ի վերոյ գրեալ են»:

## ԳԼՈՒԽ Թ.

Գիր պայմանի տեառն Եղիշեայ՝ Հայոց կաթողիկոսի առ Աղուանս:

«Զշարժումն պղտորին Ներսէսի, որ յԱղուանս էր,
սակս հաւատոյ, և զներկումն կրօնին Քաղկեդոնի 'ի բազմաց
սերմանեալ յոգիս, և զխորամանկ չարութեամբ խաբել վան-
դերն զեպիսկոպոսունս, զքահանայս և զկրօնաւորս, զգացեալ
իմ Եղիշէի Հայոց կաթողիկոսի՝ եկի հանդերձ խմբիւք ե-
պիսկոպոսաց յԱղուանս 'ի գերահռչակ քաղաքդ Պարտաւ:
Եւ ժողովեցան առ իս հոգևորք և մարմնաւորք և ցուցին ինձ
զայն գիր, որ յառաջ նզովեալ և 'ի բաց ընկեցեալ էր զՆեր-
սէս 'ի յԱղուանից կաթողիկոսութենէն. և թէպէտ նա բռ-
նակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկո-
պոսունք, և բոլորական ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին
գրով և կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ և մեօք հան-
դերձ, և պայմանեցին, եթէ կամք 'ի նոյն հաստատութեանն և
ոչ խառնիմք 'ի կրօնն Քաղկեդոնի և ընդ վարդապետութեանն
Նեստորի: Արդ եթէ կան 'ի նոյն պայմանի և յաւանդու-
թեան սուրբ հարցն՝ ընկալարուք զնոսա և սիրեցէք որպէս
զհոգևոր տեսուչս ձեր. ապա եթէ ոք թիւրեսցի յայդմ պայ-
մանէս, կաթողիկոս կամ եպիսկոպոս՝ չունի իշխանութիւն
'ի ձեր վերայ. այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր և հանապազ ան-
դադար աղօթս մատուցանել առ Աստուած. և 'ի ձեր վերայ
իշխան Աստուած լիցի և ուղղափառ վարդապետք: Եւ եսու
զայս անհոգութիւն ձեզ արարից, Փշկայ Ներսեհի վա-
նաց առաջնորդ և Գրիգորի Յովսէփայ վանից առա-

տեառն՝ ես Յոհան Հայոց կաթողիկոս հանդերձ իմ եպիսկոպոսօքս առի զմխիթարութեան գիրդ 'ի ժողովոյդ Աղուանից, և եսու զայս պայմանի գիր ձեզ. զի մի ոք յանդգնեսցի թիւրել ինչ զեղեալ ուխտադրութիւնդ: Նաև զերկոսեան նամակդ կնքեալ իմով մատանեաւ եսու 'ի պահեստ Սրբամերձի ուխտին 'ի ձեռն սրբասիրի Բշխոյ հօր՝ պայման անհօղութեան»:

## ԳԼՈՒԽ Ժ

Գիր անուանց Նախարարաց Աղուանից ըստ Նախագահութեանն որ Ներքին Աշխարհին էին Մանագաց գաւառ և եւ 'ի դիւանն պահեալ.

Զայս Սուրբ Հոգւոյն խոստովանութիւն, զոր խնդրեցաք 'ի ժողովոյն Պարտաւայ գրով ծանուցանել մեզ զճշմարտութիւնն, զերկեղուա հերետիկոսութեանց գաւող բանս, և զհօգեզուարճ վարդապետացն զընդդիմակսն խնայաք սոցա՝ ես Շերոյ Աղուանից իշխան, Զուանքոյ Աղուանից սպարապետ, Վարդան պատրիկ և Ներսէս եղբայր Գագիկ, Վախտանգ՝ Վարազմաննեան (և նախնի է սոցա քաջն Վարդան 'ի Միհրական տոհմէն, որ յաւուրս Վաչականայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարքայէն նախագահ եղեալ՝ բնաւորեցաւ 'ի Գարդման), Պատրիկ 'ի Բարդեան՝ յարքայից զարմից, որ 'ի նորին հրամանէ Վաչականայ արքայի բնակեցան յաղեբրդ գաւառի (և սորա նախնիք քաջն Վաչական և Վաչէ և որք բա կարգի կան 'ի գրիդ), Պապ 'ի Հրահատեան, որք յԱրտապատականի իշխանացն են՝ բնաւորեալք 'ի Կապաղակ և 'ի Կողթ. Վահան 'ի Վարազ Յովհաննեան 'ի Մաղխազացն զարմից՝ յակոբիկ հաւատով, որք եկեալ 'ի Կամբիճան բնակեցան. Սոստոմ 'ի Վարազ Աբրոյեան, որք 'ի Սահր գաւառէ Պարսից և բնակեցան յՈւտի գաւառի յաւանին Կաղանկատուոց. Զարմիհր 'ի Վա-

բազ Պարտաւեան, և Մաշտոց 'ի Ճահրոյեան՝ Գողմանց անալոյն որդիք (որք բնակեալ էին 'ի Գողմանհողմն արքայատուր Աղուանից աշխարհիս)։ Այսք ամենեքեան գրեցան 'ի գիւանին Աբդլմէլքի Ամիր Մումինոյ տակս այսորիկ, զի եթէ ոք 'ի սոցանէ գտանիցի երկաբնակ եղեալ՝ սրով և գերութեամբ սատակեսցի։ — Այսպէս եղև խաղաղութիւն ամենայն եկեղեցեաց Աղուանից։

## ԳԼՈՒԽ ԺԸ

Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից հայրապետի յետ հրաժարման Ներսէսի.

Այս կանոնադրութիւն եղև 'ի Սիմէոնէ Աղուանից կաթողիկոսէ, յորժամ նստաւ յաթոռն 'ի ժողովումն, որ վասն Ներսէսի եղև, որ զկարգս եկեղեցւոյ այլայլեաց. վասն այսորիկ հարկ եղև վերստին առնել ուղղութիւն։ Զի մինչ կամեցաւ գթալ 'ի մեզ քաղցրութեամբ իւրով բարերար և մարդասէր ամենակալն Աստուած ըստ մեծի ողորմութեանն իւրում և վասն բազում սիրոյն կարգեաց զմեզ հովիւ, տեսուչ և առաջնորդ բանաւոր հօտի իւրոյ, որ է սուրբ և առաքելական եկեղեցի, շնորհեալ մեզ Քրիստոսի՝ զայս աստուածային և զմեծ պատիւս, ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան և արժանաւոր լինելոյ, այլ ըստ բազում ողորմութեան իւրում կամեցաւ ինքն և պարգևեաց մեզ շնորհին իւրով։ Որպէս և երանելի առաքեալն ասէ, որով Քրիստոս խօսէր. «Զոգին Սուրբ եդ զձեզ հովիւս, տեսուչս հօտի իւրոյ հովուել արդարութեամբ. որոց պատուիրեմ ձեզ զգոյշ կացէք անձանց և հօտիդ»։ Այլ և յորժամ Մովսէսի պատուիրէր Տէր վասն քահանայիցն՝ այսպէս ասէր. «Յարուցից զքեզ գլուխ և առաջնորդ ժողովրդեան իմոյ՝ զզուշացուցանել նոցա պահել զպատուիրանս իմ, ժրացիր և քաջ լեր և մի հեղգասջիր»։ Ըստ նմին օրինակի և 'ի ձեռն այլոց մարգարէից զմեզ զգու-

շացուցանէ Տէրն Որդի մարդոյ. «Դէտ կացուցի զքեզ 'ի վերայ ժողովրդեան իմոյ, զգուշացուցէք նոցա պատգամս որպէս լինէին, 'ի դառնալ մեղաւորին և անօրէնին 'ի չար ճանապարհէ իւրմէ և կեալ, և եթէ ոչ զգուշացուցանիցէք՝ զարիւն նոցա 'ի ձեռաց ձերոց խնդրեսցի»: Զայս ահագին և սոսկալի սպառնալի ունիմք 'ի Տեառնէ, այլ և զայն՝ եթէ «Ետու ձեզ իշխանութիւն թողուլ զմեղս և արձակել 'ի կապանաց մեղաց զմարդիկ»: Եւ արդ ոչ եթէ մերով անձամբ կամ զօրութեամբ առաք զայս իշխանութիւն և զպատիւ և զաթոռ առաքելական, այլ արարիչն և հաստիչն ամենայնի Աստուած կարգեաց զմեզ յայս տեղիս հովուել զժողովուրդըս ըստ նորայն հաճոյից: Վասն որոյ, սիրելիք և եղբարք իմ պատուականք, ընտիր աշակերտք Քրիստոսի և ճշմարիտ ծառայք պատուիրանաց նորա, պարտ և արժան է մեզ պաղատել Աստուծոյ զպտուղն բարի և քաղցր 'ի հաճոյս նորա և շինել 'ի վերայ հիմանն առաքելական, որ է Յիսուս Քրիստոս՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, այսինքն՝ զզանազան առաքինութիւնս և զամենայն գործ բարի. զի յերեւիլ Փրկչին մերոյ Աստուծոյ՝ ընդունիցիմք զանթառամ փառացն պսակ: Արդ շնորհիւ Սուրբ Հոգւոյն և պատուիրանօք նորա, որպէս հրամայեաց մեզ Տէր 'ի ձեռն մարգարէից և առաքելոց և վարդապետաց, պարտիմք նախ սիրել զԱստուած 'ի բոլոր սրտէ և պահել զպատուիրանս նորա. զընկալեալսն 'ի ճշմարիտ և յաստուածարեալ հարցն մերոց՝ անշարժ և հաստատուն ունել. նոյնպէս զեկեղեցւոյ սրբոյ կարգս անխախտ պահել, 'ի ձեռն անարատ քահանայից և սպասաւորաց պաշտօնացուցանել, զմիմեանս որպէս զանձըն սիրել, միաբանութեամբ կցեալ ընդ կանոնական հրամանի, մի՛ թողացուցանել և ոչ տալ թոյլ անարժանից և զինուորական մարդկան զեկեղեցւոյ ունել իշխանութիւն. մի՛ պոռնկորդաց, մի՛ շնացելոց, մի՛ սպանողաց, մի՛ գողոց,

մի՛ ստոյ և սուտերդմանց, մի՛ զրկողաց և չարախն ագահից, մի՛ փոշաքաղաց և մի՛ ամենեւին զինուոր մարդկան հեծելոց և մարտապետաց մի՛ ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն՝ մի՛ զհացն և մի՛ զհամն տալ այնպիսեաց. զի աստուածային օրէնքն, զոր մատուցանէին ժողովուրդքն 'ի տան Աստուծոյ վասն մեղաց՝ զայն քահանայքն, անարատ մատուցանողք և սպասաւորք սեղանոյն՝ վայելէին. զի նոցա է համն և խնդրել յԱստուծոյ զտիւ և զգիշեր զհաշտութիւն վասն աշխարհի, զթողութիւն մեղաց և զառողջութիւն հոգւոց և մարմնոց. և ոչ անարժանից կամ զինուորաց հրամայեալ էր ունել զիշխանութիւն եկեղեցւոյ և շարժել զբարկութիւն 'ի վերայ աշխարհի և անձանց իւրեանց: Զի Տէրն փառաց յորժամ պատուիրէր Մովսիսի յաղագս խորանին՝ ասէր. «զքահանայս ուխտս անարատս ընտրեա յազգէն Ղևտայ, և մի՛ յայլ ազգացն Իսրայելի զինուոր կամ անարժան յանցաւոր ոք կամ արատաւոր. որպէս Օրէնքն իսկ ասեն, — «թէ մի՛ իշխեսցեն անարժանքն կալ առաջի սեղանոյ իմոյ և մի՛ 'ի համիցն իշխեսցեն ուտել»: Այլ և քահանայութիւնքն, որ անարժան փարուք իցեն՝ մերժեալ հեռասցին 'ի ժառանգութենէն. և թէ սովորական ժողովուրդն ամենեւին մի՛ մերձեսցի՝ մի՛ 'ի պաշտօն, մի՛ 'ի կարգ և մի՛ 'ի տեղի քահանայիցն. և որ ոք յանդգնեսցի, պատուհասեալ սատակեսցի՝ որպէս Կորխն, Դաթան և Աբիրոն, որք խորտակեալ եղեն, կամ նոյն ինքն Ոզիա և այլք բազումք, որք քան զկարգ իւրեանց յանդգնեցան պաշտել զԱստուած: Զի էր օրինակ խորանն և քահանայքն՝ նորոյ ուխտիս եկեղեցւոյ սրբոյ, յոր չիշխէին կալ անարժանքն կամ զինուորքն. և զնոյն հրամանն առաւել տիրացուցին առաքեալքն հրամանաւ Փրկչին ասելով, եթէ «Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ՝ այսպէս կարգել. մի՛ իշխել զինուորաց և անարժանից ընդ իշխանութեամբ արկանել զեկեղեցի. և որ ոք յանդգնեսցի՝ նզովեալ եղիցի»: Ըստ որում

և երջանիկ հայքն մեր հաստատեալ են, «Թէ մի՛ ումեք լիցի իշխանութիւն զեկեղեցի Աստուծոյ տալ ընդ ձեռամբ անարժանից և զինուորաց, կամ վաճառել որպէս զստացուած, կամ իշխանաց տալ, կամ նոցին դայեկաց 'ի պարգև: Նոյնպէս և քահանայք մի՛ իշխեսցեն զհասն կամ զհացն տալ եղբարց և որդւոց անարժանից, և մի՛ վաճառել իշխեսցեն զժառանգութիւն եկեղեցւոյն. այլ՝ թէ քահանայ և եղբարք և որդիք նոցա յանարժանութեան գոյցեն՝ մերժեալ լիցին 'ի ժառանգութենէն. և որք յանդգնիցին՝ նզովեալ լիցին»: Զայդ հրաման ունիմք մեք յԱստուծոյ և 'ի նորին պատուիրանացն, և ոչ է պարտ Աստուծոյ հակառակ զնիլ: Նու գդոյն օրէնք վասն եկեղեցեաց ամենայն աշխարհականք ունին և այսօր, զի յորժամ վաճառեն զգեղս իւրեանց սեպհականս, այսպէս գրեն զկտակն, թէ ուրոյն յեկեղեցւոյն և յեկեղեցւոյ հողոյն. զի եկեղեցիք Աստուծոյ ազատ են և չեն ընդ ուրուք իշխանութեամբ բաց յեպիսկոպոսաց և որոց նոքա տան՝ անարատից և ճշմարիտ սուրբ քահանայից, և ոչ եթէ անարժան զինուորաց, զոր յայտնէ և յառաջ մի՛ որ իշխեսցէ առնել զայդ այդպէս: Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ 'ի ձեռն անարժանից մտանել: Վասն որոյ լսեմ 'ի բազմաց տանջելոց, թէ 'ի յոլով տեղիս զեկեղեցիս Աստուծոյ վանականութեամբ զինուոր մարդիկ ունին, որք սակս չար գործոց իւրեանց չեն արժանի մտանել յեկեղեցի, թող թէ զեկեղեցական ունել զհասն կամ զհաց: Վասն որոյ և սրբասնեալ Գչեկոյ հայր Ներսմիհրի վանից տանուտեան գրեալ է, թէ Վարդ Տրդատայ Եղւանից իշխանի տուեալ է գեղեկ փոքրիկ Արբոյ Խաչիս 'ի սպասաւորութիւն սակս հոգւոյ մաւրն. իսկ այժմ փուան Վեհ անուն՝ հեծելակ աշխարհական, կեցեալ անառակութեամբ, գրածս բերէ յառաջ, թէ ինձ տուեալ է զեկեղեցիդ Եղւանից իշխանի վանականութեամբ վասն գայե-

կութեան իմոյ. վասն այդորիկ՝ սիրելիք, այս իրաւունք կաց-
ցեն յայսմհետէ և առ յապա, և մի լիցի ունել Փաւստոս
Վ. եհին զայն եկեղեցի ըստ Սուրբ Հոգւոյն հրամանի. այլ
ամբիծ և անարատ քահանայքն իշխեսցեն յեկեղեցւոյ վերայ,
զի իշխանութիւն ոչ ունի նա յԱստուծոյ և ոչ 'ի մէնջ:

«Արդ ես Սիմէոն շնորհիւն Աստուծոյ Աղուանից կաթու-
ղիկոս ըստ աստուածային պատուիրանացն և կանոնացն այս-
պէս հրամայեցի, զի զիրաւունս եկեղեցւոյ Աստուծոյ քահա-
նայք կալցեն. և մի լիցի զինուորաց և աշխարհականաց յե-
կեղեցւոյ վերայ ունել իշխանութիւն, և մի 'ի շնորհէն առ-
նուլ բռնութեամբ. և եթէ յանդգնի ոք՝ յԱստուծոյ և 'ի
մէնջ ընդ պատուհասիւ եղիցի: Իսկ եթէ գիր ոք բերէ յա-
ռաջ վասն եկեղեցւոյ ըստ մարմնաւոր աշխարհական իրաւանց
և ոչ ըստ աստուածային պատուիրանաց և կանոնաց, անվա-
ւեր և անհաստատ է, և մի ոք ընկալցի ընդ իրաւունս. վասն
զի զեկեղեցի սուրբ յԱստուծոյ եպիսկոպոսաց և քահանայից
հրամայեալ է հոգալ, և ոչ զինուորաց և հեծելոց անարժան
մարդկան: Այժմ և դուք՝ սիրելիք և եղբարք, միաբանից ա-
թոռակից եպիսկոպոսունք սուրբ աթոռոց վիճակեալք՝ զնոյն
աստուածային կանոնական իրաւունս պահեցէք յիւրաքան-
չիւր վիճակի. մի տայք համարձակութիւն նեղել զեկեղեցի
Աստուծոյ և զքահանայս ընդ ծառայութեամբ արկանել. զի
հաշտեսցի ընդ մեզ Աստուած և ողորմեալ փրկեսցէ զմեզ յա-
մենայն նեղութեանց: Զի Տէրն ասաց. «Մի արկանէք ըզ-
մարգարիտս ձեր առաջի խոզից, և մի տայք զսրբութիւն
շանց». որպէս կամ եղև Աստուծոյ կոչել սրբութիւն սրբու-
թեանց զնոյն ինքն անարատ քահանայից, և ոչ անարժանից և
աշխարհականաց զինուորաց: Արդ պատուիրեմ ամենեցուն՝
զգոյշ կացէք պատուիրանացն Աստուծոյ և գոհութիւն անըն-
դատ մատուցէք ողորմածին Աստուծոյ, որ խնդրեաց զվերժ
երկարնակութեան "Ներսիսի և զորամն նորա եբարձ 'ի մէնջ՝

տնկելով զխաղաղութեան արմատս 'ի մէջ եկեղեցւոյ իւրոյ: Վասն որոյ զգաստութեամբ տեսչաւորեցէք զպէտս եկեղեցւոյ, զի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ահեղ ատենին Քրիստոսի և համարս տալ վասն ժողովրդեան և անձանց: Դարձեալ աղաչեմ և ասեմ, զգոյշ կացէք: Եւ Հոգին Սուրբ եղիցի ընդ ձեզ. ամէն»:

## ԳԼՈՒԽ ԺԲ

ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋՔՆ ՎԱՐԱԶ ՏՐԴԱՏԱՅ ԱՐՇԱԿՈՒՆՒՈՅ(?) ԻՇԽԱՆԻ, ԵՒ ԵՐԹՆ 'Ի ՅՈՅՆՍ, ԵՒ ԴԱՒԱԴՐԱՆՔ(?) ՈՐԴՒՈՑ ԻՒՐ ԵՒ ՓԱԽՍՏԵԱՆՆ(?) ԻՒՐ, ԵՒ ՄԵՀՐԱՅՆԻ(?) ՁԵՌՆԱԴՐՈՒ(?)ԹԵՒ(?)ԹԻՒՆ(?) ԱՐՇԱԿՈՒՆԵՑ ԸՆԴ ՍԵՓԵՆԻ(?):

Ընդ նուաղել 'ի սպառ թագաւորութեանն Պարսից և զօրանալ ազգին հարաւային Տաճկաց՝ ասպատակային(?) ամբք(?) հարկահանաց աշխարհի, առաւել կողմանցս արեւելից. զի իշխանն Վարազ Տրդատ ընդ երիս հարկէր՝ Խազրաց, Տաճկաց և Հոռոմոց: Իսկ խառնագոյն նեղութիւն 'ի Հոռոմայեցւոց համեալ նմա հանդիպէր. զի հանդերձ որդւովք իւրովք յարքայաբնակ քաղաքի անդ արգելեալ լինէր 'ի կայսերէն. և առեալ 'ի պատանդ զորդին՝ ինքն եւս խոթացեալ անդ մնայր: Զի այսպէս ասեն զօրաց երկրին, եթէ ժամանակք են՝ ատրաճնա(?) ազգաց մնալ յաւուրս զարմանալոյ(?) անժամոյն հիանդանայն(?), և հերքն և մարուն ձողին յայս պատճառս: Եւ 'ի յերկարելն Վարազ Տրդատայ՝ 'ի միումատուր եղև թագաւորին Հոռոմայեցւոց ընտրել զականս պատուականս, և կոչեալ զիշխանն Աղուանից՝ ցուցանէր նմա. և նորա խորամանկեալ ասէ. «Ի տան խնամ պատուականագոյնք զաննին քան զայսոսիկ, ասաց զայնս ձերոյդ աստուածապատկեալ անձին, զի վայել է իսկ ձեզ»: — Եւ այն առ հինգ էր իշխանին կալեալ 'ի Հոռոմս: Եւ վասն այսր իրի զերծեալ Աստուծոյ օգնականութեամբն՝ եկն եհաս յաշխարհն իւր, և յայնմհետէ

եա զաշխարհս արեւելից 'ի Տաճիկս, և նոքա միայն հարկէր:

Եւ եղև 'ի նորին աւուրս Վարազ Տրդատայ սով անտանելի յԱղուանից սահմանս. վասն որոյ առաքելարանիւր յոմանց եթէ. «Ես կորեալ 'ի Հակաշէն գաւառի ծածկեալ կայի 'ի վայրին Կակուայ, և զանց առնէին զենեն բազմութիւնք գնողաց և ոչ գնէին զիս. եկն ժամ բարի, որ եղբայրն իմ Սոլտիրանայր. և ահա գտայ ես երևելի 'ի սեղանս Վարազ Տրդատայ իշխանի և Եղեազարու կաթողիկոսի: Եւ որք կերան զիս՝ արիւնարբուք եղեն, անմեղադիր լերուք»:

Իսկ Վարազ Տրդատայ որդիքն՝ Գաղիկ և Վարդան, որք 'ի Յոյնս էին պատանդք, վասն խռովութեան թագաւորին կացին 'ի մթին տան զամս տասն և երկու. և պատճառք հօր նոցա զաշխարհս արևելից 'ի Տաճիկս տալն եղև: Եւ 'ի փախճանին Յուստինիանոսի Հռոմոց թագաւորի, Վարդան Փիլիպիկոս թագաւորեաց, որ էր յազատացն Հայոց. և յիշեաց զորս 'ի խաւարային բերդին էին արգելեալ կենդանւոյն. և հրամայեաց թագաւորն հանել զնոսա յանտանելի տանջանացն, որոց տեսութեան աչացն խաւար էր ծածկեալ: Ապա առ փոքր փոքր ածեալ 'ի լոյս՝ ետ պարգեւս թագաւորն և արձակեաց յաշխարհն իւրեանց. շնորհեալ Գաղկայ մասն 'ի կենդանատու խաչէն՝ զոյն տիեզերաց: Եւ նորա եկեալ ետ զմեծ պարգևն ցՄեքայէլ Աղուանից կաթողիկոս. և կանգնեցին նշան տէրունական, յորում կայ գիր այսպէս. «Քրիստոս Աստուած՝ յիշեա զկամաւոր չարչարանս քո 'ի վերայ արա, զոր վասն մերոյ փրկութեան. և ընկալ զնշանս զայս, զոր ետուր երկիւղածաց քոց. և ներեա յանցանաց իմոց Մեքայէլի Աղուանից կաթողիկոսի. և ողորմեա աշխարհիս՝ փրկելով յամենայն փորձութեանց, զի յաւուր գալստեան քո արժանի լիցուք կալ ընդ աջմէ քումմէ: Եւս աղաչեմ վասն Գաղկայ ծառայի քո և քեռ սորա Մարիամայ, և Վարազդի ոսկերչի մեծի»:

## ԳԼՈՒԽ ԺԳ

ՎԱՍՆ ՈՉ ԱՌՆԵԼՈՅ ԱՌ ՈՉԻՆՉ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ՝ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՂՈՒԱ-
ՆԻՑ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ՈՒՂՂԵԼ ԺՈՂՈՎ:

Փոխանորդէ զաթոռ հայրապետութեանն Աղուանից երջանիկն Միքայէլ գինի Սիմէոնի. և եկաց ամս երեսուն և հինգ: Յաւուրս սորա լինի առնակնութիւն իշխանացն Աղուանից, Վարազ՝ Վախտանգայ որդի, թոռն Վարազմանայ, զթոռնակիցն իւր Վարդանուհի արար կին. և տէր Միքայէլ տարագրեալ զնա, թէ մի յանդգնիր առնել, զի թոռունք էք: Իսկ նորա զկորստեան խորհեալ խորհուրդ, գրէ առ Թաղէէ՝ Վրաց կաթուղիկոս, օրհնել զանօրէն ամուսնութիւնն: Եւ այլափառն այն այր այսպէս հրամայեաց. «Եթէ դուք յիմում իշխանութեան էք՝ օրհնեալ էք. ապա եթէ յԱղուանից առաջնորդութեան էք՝ դուք գիտէք»: Յայնժամ հայրապետն Աղուանից Միքայէլ արար ժողով ուխտի եկեղեցւոյ իւրոյ. և կոչէ առ ինքն զհռչակելի այրն՝ զՍողոմոն, որ Մաքենոցւոյ էր առաջնորդ ուխտին սուրբ, և ըստ ժամանակին Քայսատանեայցն էր պարծանք: Եւ գումարեալ զնոսա 'ի Շաքար 'ի Բերդոյ վանս՝ միաբան ժողովով նզովեցին զառնն Վարազոյ. և 'ի նոյն ժամու հասանեն Տաճիկք և 'ի գոգ մօրն փողոտեն սրով, և զմիւս որդին ձին տարեալ սպան: Եւ գրեցին թուղթ ժողովականքն առ Թաղէէ Վրաց եպիսկոպոս, «Եթէ զի՞ իշխեցեր լուծանել զկանոնեալսն 'ի սուրբ առաքելոցն աշակերտաց, որք յԱնտիոք ժողովեալ տարագրեցին զՊօղոս Սամոսատցին 'ի սուրբ եկեղեցւոյ և սահմանեցին տասն կանոնականս, «Թէ մի՛ ոք իշխեսցէ զազգականն առնուլ 'ի կին. և սուրբն Աթանասի կանոնական հրամանն է, «Եթէ չէ ամուսնութիւն, այլ պոռնկու-

թիւն»․ և երանելւոյն Բարսղի վասն սորին գործոյ ասացեալ։ Արդ մեք ուղղափառութեան ժողովքս և զքեզ՝ նզովեցաք ընդ ամենայն հերձուածողս, և արդարադատին Քրիստոսի մատուցուք բազմապատիկ փառս»։

## ԳԼՈՒԽ ԺԳ

### Նորին Մեթոդեայ Աղուանից հայրապետին խնդիր յաղագս պարապմանն Զատկին և ծննդեան և յայտնութեան փրկչին ընդդէմ Երկաբնակաց։

Մովսէս տօնակարգեաց Իսրայէլացւոցն յեօթներորդում ամսեանն, որ է Թշրին յառաջին օրն՝ զտօն փողոց․ 'ի տասներորդ օրն զտօն քաւութեան․ 'ի տասն և հինգերորդն զտօն տաղաւարահարաց․ 'ի տասն և եօթներորդն պարապմանցն եղև Զաքարիայ մինչ ցքսան և երկուսն նոյն Թշրին ամսոյ։ Ապա գնաց 'ի տուն իւր, և յղացաւ զԵղիսաբէթ կին նորա, որպէս Ղուկաս աւետարանիչն ասէ․ «Եւ թագուցանէր զանձն ամիս հինգ․ և յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ»։

Արդ տեսցուք զվեցերորդ ամիսն, թէ որ իցէ։ Տեսաք զտամարն և գտաք այսպէս․ զի Թշրին ամսոյ քսան և երկուսն լինի ըստ Հռոմին հոկտեմբեր ամսոյ ինն։ Արդ 'ի տասնէն յառաջ սկսանիմք ընդ զվեց ամիսն և լինի յապրիլի եօթանն, ըստ հրեշտակին, թէ այս վեցերորդ ամիս է նորա, և յԵբրայեցւոց նիսանի 'ի տասն և եօթանն՝ աւետիք Կուսին։ Անտի յառաջ մինչ 'ի հինգն յունուարի լինի երկու հարիւր և եօթանասուն օր, որ է ինն ամիս, և ծնունդ նորին Քրիստոսի։ Եւ նոյնպէս ունիմք զվարդապետաց աւանդութեան այս․ իսկ զԾնունդն և զՅայտնութիւնն և զԱւետիսն մի տօն կատարէ եկեղեցի, վասն զի միոյ Աստուծոյ ծնունդ է՝ և հոգևոր փըր-

կութեան մերոյ մի տօն կատարի։ Որպէս ոմն 'ի յառաջադա-
ղան վարդապետացն ասաց. «Երիս ծնունդս մեզ դնէ բանն— մին՝ փչմամբ, երկրորդն մարմնանալով և մկրտութեամբ, որ մի ծնունդ թուի, և երրորդն յարութեամբ»։ Նոյնպէս Մարկոս հայրապետն Երուսաղեմի, որ մի էր 'ի Նիկիական հարցըն, յիւրում խրատական թղթին գրեաց առ. Զայս յաղագս մկրտութեան, եթէ 'ի միում աւուր տօնեմք զԾնունդն և զՄկրտութիւնն. զորօրինակ մահն և թաղումն անկատար է առանց յարութեանն, և որպէս յարութեան աւետարանն նախ զխաչն և զթաղումն յայտնէ, և ապա 'ի վերայ ածէ զյարութեանն, նոյնպէս կատարէ և զմկրտութիւնն. զոր զարձեալ ասէ Աստուածաբանն. «Բայց այժմ Աստուծոյ յայտնութեանն տօն է, քանզի երևեցաւ Աստուած մարդ ծնընդեամբ»։ Երուսաղեմայ եպիսկոպոսքն մինչև ցՄիւբիղ՝ քառասուն և երկու եպիսկոպոսք, և յետ նոցա այլք զտօն Ծննդեան և Յայտնութեանն կատարէին 'ի Յունուարի ամսոյ վեցն մինչև ցՅորդանանս. որ թուին լինել ամք 'ի յարութենէն ցՅորդանանս չորեքհարիւր։ Դարձեալ զոր յընթերցուածին ասէ վասն Պաւղի և Յակոբայ աւուրն, եթէ յայլ քաղաքս առնեն զԾնունդն Քրիստոսի 'ի դեկտեմբերի քսան և հինգ, յայլ քաղաքս այսպէս ասեն, եթէ 'ի հեթանոսաց անտի հաւատացեալք էին, ոչ թէ 'ի թլփատութենէն, և 'ի հեթանոսութեան սովոր էին զծնունդ արեգականն կատարել յայնմ աւուր, վասն այնորիկ ոչ հաւանէին թողուլ զտօնն։ Ապա հարկաւորեցան առաքեալքն հաւանել նոցա և կարգել նոցա զՔրիստոսի Ծնունդն յայնմ յաւուր։ Իսկ որք 'ի թլփատութենէն՝ ամենայն ուրեք 'ի յունուարի վեցն կատարեն, որ և մեր նախնեացն աւանդեցաւ և նոյնպէս ունիմք այժմ, որպէս ասէ. «Օրէնք 'ի Սիոնէ ելցեն, և բանն Աստուծոյ յԵրուսաղեմէ»։

## ԳԼՈՒԽ ԺԵ

Որ ինչ յաղագս որդւոյն Հերակլէ և թոռին նորա գործեցաւ.

Բարեյաղթ Հերակլ Հոռոմայեցւոց թագաւոր զպէսպէս պատերազմունս վանեալ՝ յիշատակ քաջութեան եթող յաշխարհի: Եւ զկնի նորին նստի թագաւոր Հոռոմայեցւոց որդի նորա Կոստանդին՝ ամս երկու: 'Ի սորա աւուրս տիրեցին Արաբացւոց Տաճիկք և առին ընդ հարկաւ զեկեղեցիս սրբոյ քաղաքին Երուսաղեմի. և հայ թուականն ութսուն լինէր: Իսկ Կոստաս որդին որդի՝ ամս քսան և ինն. 'ի սորա հինգ ամին յԱրաբիա կոխումն եղև, և 'ի վերայ Տաճիկք եկին 'ի Հայս և առին զԴուին, և որք գերեցանն՝ երեսուն և հինգ հազար թուեցան: Եւ 'ի նորին յինն և 'ի տասն ամին նստի կաթուղիկոս Հայոց տէր Ներսէս ամս քսան. և հայ թուականն հարիւր և մետասան էր: Սա էր հայրապետ նորին Կոստանդնի և զանձինք նորա շինեաց զզարմանապայծառ փարախն բանաւոր հօտից 'ի Քաղաքադաշտի 'ի սուրբն Գրիգոր և 'ի նաւակատիս կոչեաց զԹագաւորն Հոռոմոց, որ յոյժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի զնոյնաձեւն յարմարեսցէ 'ի պալատանն: Եւ ոչ ժամանեալ գնալ 'ի տուն իւր՝ 'ի ճանապարհին վախճանէր:

## ԳԼՈՒԽ ԺԶ

Յաղագս Ստեփաննոսի Սիւնեցւոյ եպիսկոպոսի երթալոյ 'ի Հռոմ և բերել [illegible], և վախճան նորին և պատիւ, որ հասին յԱստուծոյ.

Յայսմիկ ժամանակս Ստեփաննոս Սիւնեցի տիովք դեռ ևս մանուկ գոլով՝ կիրթ և յարմարող 'ի խոկումն գրոց և-

ցեալ, հանգիստ նմա հակառակել ընդ Սմբատայ ասպետի Հայոց երկարեակի. և թողեալ զնա յանհաւանութեան՝ գնայ 'ի Հռոմ. գտանէ անդ միայնակեաց զոմն ուղղափառ, և առ նմա դադարեալ կայ յուսմանն: Իսկ երկարեակն այն Սմբատ գրէ առ Թագաւորն Հռոմոց, եթէ Ստեփաննոս հերձուածող եկեալ աստի՝ բնակի առ այս անուն միայնակեցի. և յայժ ցասուցեալ Թագաւորն՝ խնդրէ զնա 'ի դուռն, և տայ նմա խրատ միայնակեացն առնել զենքենէ անրնակ ազգամուրացիկ՝ առաջի կայսերն. և լուեալ զայն՝ զեջու ցասումն բարկութեան բռնաւորին: Յայնժամ գտեալ համարձակութիւն Ստեփաննոսի՝ ասէ ցկայսրն. «խնդիր է իմ 'ի քէն, զի բացցեն արկեղք գրոցն». և գտեալ անդ ոսկեայ մատեան մի սակս հաւատոյ՝ մատոյց առաջի նորա: Իսկ ընթերցեալ զայն կայսեր, առաքէ զՍտեփաննոս 'ի Հռոմ քաղաք բերել անտի երկու գիրս համարառարս այնմ գրոց սակս ճշմարիտ հաւատոց, զի զաշխարհս յայնմ 'ի զբնայն 'ի կրօնս դարձուցից: Իսկ նորա զգրեանն 'ի Հռոմէ առեալ և անփոյթ զհրաման ինքնակալին արարեալ՝ գիտէ 'ի Դուին քաղաք, փան զի կամ էր նորա զաշխարհն յայնմանէ ուսուցանել: Իսկ 'ի Բարգինէ և 'ի Վրուրդյէ խնդրոյ լինի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց: Իսկ միւսամ կալեալ զեպիսկոպոսութիւնն՝ սպանեալ լինի 'ի Մողն գաւառի: Ասեն, թէ 'ի պինդ կանանց եղև մահ նորա. զորոյ զմարմինն առեալ բերին 'ի յարկաղեան սնեակն և անտի փոխեցին 'ի Թանատոյ վանս 'ի հանգիստ:

Իսկ 'ի բերել զգրեանն երանելւոյն Ստեփաննոսի 'ի Հռովմայ՝ յերրեակ դասու եպիսկոպոսութեանն Հայոց կարգեցաւ եպիսկոպոսութիւնն Սիւնեաց: Իսկ միայնակեաց ոմն՝ Նոյ անուն, տեսանէր 'ի տեսլեան, թէ Ստեփաննոս զգոյն արեան լի ունէր առաջի Փրկչին և ասէր. «տես Տէր զայս, զի քո են դատաստանք արդար»: Իսկ ազդեալ 'ի դատուն զգալ բարկութեանն՝ բողոքէ կալ յաղօթս. և 'ի վերուստ լսաւր ան-

անտանելի կալաւ զՄողանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանւոյն հոգիք իբրև տասն հազար: Վ՝ասն այնորիկ Վ՝այոց ձոր անուանեցաւ:

## ԳԼՈՒԽ ԺԼ.

Յաղագս գալստեան Երկրորդ Մահմետայ 'ի Հայս, աւեր և հնազանդեցուցանել. և անդի ընդ Աղուանս արշաւել, մտանել ընդ դուռն Չորայ. և անդ լինել պատերազմին Հայոց. առ որս դառնալ անդի. և գալ զՍեւան ծովապատ կղզին առնուլ, և զօրս Հայոց և Հոռոմոց կոտորել. և զոմանս յեկեղեցեաց տանել ընդ ինքեան 'ի Նախիջեւան այրել. և անդի գնալ յԱսորիս, յորում զօրաւոր մահուամբ սատակել և այլ ...

'Ի հարիւր քառասուն և հինգ թուականութեանն Հայոց (ամ Տեառն 696) եկն Մ՝ահմետն երկրորդ 'ի Հայք. և ամբարտաւանեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ 'ի Չորայ: Իսկ ապստամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկս 'ի Գուլին, և զվաթսուն և երկու հազարս 'ի Տաճկաց սպանին՝ ածեալ զօր բազում 'ի Հոռոմոց: (Նա 'ի նմին ամին եղև զրաւ զարմից Սրբոյն Գրիգորի): Նա դարձաւ Մ՝ահմետն 'ի Չորայու, զայ պաշարէ զՍեւան ծովապատն բերդ կղզի ամս երեք. և ապա առեալ զայն 'ի սուր սուսերի արկանէ, զորս գտանէ 'ի նմա. և անտի անցեալ 'ի Հայս՝ հար զհոռոմ սպայն և զհայն. և զորս ոչ կարաց ըմբռնել՝ դարան գործեալ մեծապէս երդմամբ, դաւով և խաբէութեամբ առ ինքն ժողովեաց զամենայն գլխաւորս Հայոց, և տարեալ 'ի Նախիջեւան քաղաք՝ ութ հարիւր այր յեկեղեցին արկեալ կենդանւոյն այրեաց, և չորս հարիւր այր 'ի Խրամ նոյնպէս այրեաց և զինուորս նոցա սրահար սատակեաց: Եւ այսորիկ պատճառ կորստեան՝ եղև 'ի նոսա. զի առ հասարակ շնչեալ 'ի նոսա հոգի մոլո-

րութեան՝ արհամարհանօք այսպէս առնէին զհայրապետս, զքա-
հանայս և զկրօնաւորս, ձանձրացուցանէին և նեղէին զնոսա:
Եւ թէպէտ կրեցին Հայաստանեայք զհարուածս զայն, այլ
'ի հասանել Մահմետի յԱսորիս, զծնգակ ախտ մահու զնա
պաշարեալ և զեօթն ամիս յողնահանս կացեալ՝ հազիւ ուրեմն
թքէր զոգին և սատակէր. երկիցս թաղեալ վերընկէց լինէր և եր-
կիր ոչ ընդունէր զնորա մարմին: Ապա կալեալ շուն մի շամփ-
րեցին ընդ Մահմէտն և այնպէս ծածկեաց երկիր զչարն զայն:

Յետ այսորիկ զՇերոյ Աղուանից իշխանն պատուօքն հան-
դերձ տարան 'ի Տարօն և անտի յԱսորիս. և հայ թիւն լի-
նէր հարիւր յիսուն և երեք (ամ տեառն 704): Եւ 'ի մի-
ում ամի զՇիրակայ տէրն տարան յԱսորիս: Եւ յետ եր-
կուց ամաց եկաց Մրուան Տաճկաց իշխանն 'ի Դվին և ոչ
կարաց մնալ: Եւ ել Խազրաց տէրն ութսուն հազար ա-
րամբք և էառ զԱղուանս. և էր թիւն Հայոց հարիւր յիսուն
և ութ: Եւ զկնի հնգից ամաց եկն Մսլիման, աւարեաց
զԱղուարդանդ և եմուտ 'ի Խազիրս. բայց ոչ ունէր զօրացեալ՝
եղանէր. ապա թողու զբանակն կազմ ամենայն ընչիւք, և
զհարճս անգամ փիրջապահս իւր առնէ: Եւ զԱսանշահիկն
զՎաչական պատրիկեան Աղուանից իշխանն՝ զքաջ կոր-
վին և զաջողակ աւերեւորն հանդերձ զօրօք նորա՝ յետոյ
իւր արարեալ, յորմէ զկնի եկեալ Խազիրքն պարտեցան 'ի
փախուստ դարձեալք: Այսպէս զերծեալ Մսլիման՝ եղանէր
ընդ Վրաց կողմն: Իսկ 'ի հարիւր եօթանասուն և չորս
թուականութեանն Հայոց (ամ տեառն 725), յամսեան մեհ
ականց եղև, և 'ի ձմերան՝ աշխարհագիրն հերթի, որ էարկ
զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ
ծառայութեան: 'Ի սմին ժամանակի զՋևանշիր իշխան
Աղուանից սպանին Աժեթեղուքն: Եւ 'ի նոյն ամի մեռաւ
Սմբատ Հայոց իշխանն, և եղև տարին ամլ խիստ. որ էր
թիւն Հայոց հարիւր եօթանասուն և հինգ: Եւ երից ամաց

այլ անցեալ՝ Ջառահ երկրորդ անգամ մտանէ ընդ Ափխազս 'ի Խազիրս: Եւ 'ի միւսում ամի եկ Խազրաց տեառն որդին և սպան զՋառահ, և ձերբակալ արար զՋազիկ: Եւ 'ի հարիւր ութսուն թուականին Հայոց դարձեալ Մսլիման շինէ զԴարբանդ յանուն Տաճկաց. այլ զկաթողիկոսարանն Աղուանից ոչ աւերէ, որ դեռեւս կայ 'ի նմա:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս գալստեան Աբդլ Ազիզայ իշխանին Տաճկաց 'ի Պարտաւ քաղաք Աղուանից. և զկնի կատարման երկուց եղբարց՝ Մանկանն և Մերդասպատայ.

Եւ 'ի թուականութեանն Հայոց մեկ հարիւր և վաթսուն եկն Աբդլ Ազիզ իշխանն Տաճկաց յԱղուանս և նստաւ 'ի Պարտաւ: Եւ անդ ածին զՄանուկ և զՄերդասպատ եղբարսն երկոսին առաջի նորա, որք էին 'ի տոհմէ ազատաց. և վասն հաւատոյ քրիստոնէութեանն բազում և ազգի ազգի տանջանօք՝ Մանկիկն երանելի՝ զվկայութեանն անուն ժառանգեալ պսակեցաւ 'ի Քրիստոսէ: Եւ կան պատուական նշխարք 'ի մեծ եկեղեցւոջն Պարտաւայ 'ի Սուրբն Գրիգոր: Իսկ եղբայրն Մերդասպատ ոչ ժուժեալ տանջանացն առաջի բազմամբոխ ժողովոյն ուրացաւ զՔրիստոս Աստուած. և ապա 'ի զղջ եկեալ դառն և մեծ արտասուօք հաշտեցոյց, զոր խռովեցոյցն: Եւ զամենայն ժամանակս իւր աւազան քաւութեան զարտօսրն արարեալ լուանայր՝ զորս աղտեղեալ զթեացն: Եւ հեծեծանս 'ի խորոց սրտէն առաքեալ առ գիտակն գաղտնեաց՝ մինչև ցելս անձին իւրոյ 'ի սուգ անմխիթար մնայր: Այլ որ ողորմածն է և գթած՝ զնա ընդ մարտիրոս ընկալեալ, նշանք զարմանալիք լինէին 'ի ժամ մահուան նորա:

Եւ 'ի նոյն ամի անցաւ Աբդլ Ազիզ զԿուր գետով յայն կողմն:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Ի քրոնիկոնն Սոփոնեանոսի Ախմեաց Եպիփանեայ քաղաքի այս պատմութիւն [illegible] Գլիոն *) քաղաքի, և շինուածս հաւատոյ։

՚Ի ժամանակս Եպզանի դատաւորի առ Ողիոն այսպէս. Քաղաքն Աքայեցւոց երկրին էր հուպ յաշխարհն Պողոպանիս յարեւմուտս Մակեդոնացւոց յերկրին Եւրոպիոյ։ Ընդ այն ժամանակս ոչ գոյր թագաւոր Յունաց, այլ միայն իշխանք տիրէին բոլոր աշխարհին։ Եւ Գ_լիոն էր քաղաք մեծ, որ ոչ գոյր համեմատ նմա ՚ի վերայ երկրի։ Յաւուրսն յայնոսիկ ոմն երիտասարդ յիշխանաց քաղաքին գայ ՚ի Թեսաղոնիկէ, որ է յարեւելս Մակեդոնի՝ ՚ի պատճառս ինչ զբօսանաց և ընկալեալ եղեւ ՚ի մեծամեծաց քաղաքին. և տուեալ ՚ի դուստր տան միոյ մեծի՝ պատրեալ ածէ զնա ՚ի Գ_լիոն քաղաք. զոր ծնողացն խնդրեալ իմացան, եթէ յերիտասարդէն եղեւ յափշտակեալ՝ գրեն թուղթ առ Գ_լիոնացիսն և առնուն պատասխանի խիստ։ Եւ նորա ընթերցեալ յականջս ժողովրդեան իւրոյ՝ ՚ի նախանձ բրդէն ամենեքեան. կոչեն յօգնականութիւն զշրջակայսն ամենայն. և ժողովեալ անթիւ զօրս՝ պատերազմին ընդ Գ_լիոնի ամս տասն և հինգ՝ ապականելով զամենայն երկիրն։ Եւ ապա այլ խորհուրդ մտաբերեալ՝ յղեն առ քաղաքացիսն բանս հաւանականս ասելով, եթէ մեծ են աստուածքըն Գ_լիոնի և վասն այնորիկ տկարացաւ զօրութիւնս մեր. խաղաղութիւն արասցուք յայսմհետէ և սէր դիցուք ընդ միմեանս, և զաստուածսդ Գ_լիոնի ընծայիւք պատուեսցուք։ Եւ նոցա այսմ բանի հաւանեալ՝ կազմեն սոքա երիվարս փայտեայս թուով երկու հազար փոր գործած. և մուծանեն ՚ի ներքս արս պատերազմողս թուով իբրեւ քառասուն հազար. և զերիվարսն պատեալ ոսկւով և արծաթով՝ դնէին ՚ի վերայ սայ-

---

*) Իմա՛ Իլիոն։

լից և տանէին 'ի դուռն քաղաքին զկորստական պարգևսն. և քարոզն աղաղակէր, «Այս են ընծայք աստուածոցդ Իլիո-նի»: Եւ զի բազում կանգուն էր չափ բարձրութեան երկա-րացն, զորս ոչ կարէին մուծանել ընդ դուռն քաղաքին՝ քա-կէին մասն ինչ 'ի պարսպէն. և 'ի ժամադրութեանն ելանե-լոյ արտաքս, զոր արարեալ ունէին, ընդ խրամն զոր հատին, մտանէ բազմութիւն զօրացն. և մտանի քաղաքն 'ի բերան սրոյ՝ ծերք և տղայք: Եւ զկանայս նոցա գերեալ՝ մտանէին 'ի նաւս դառնալ յերկիր սախական. բայց հողմ ուժգին յարեւմտից ե-կեալ՝ վարէ զնաւսն՝ մինչև երկու հազար և հինգ հարիւր և ընկենու արտաքս յերկիր օտարական, որ կոչի Խալիա: Անտի կամէին միաբանդամ նաւել յերկիր իւրեանց. իսկ գերեալ կա-նայքն 'ի մէջ գիշերին հրով տոչորէին զնաւսն՝ մինչև ոչ մնալ և ոչ մի, զի մի երթիցեն 'ի ստրկութիւն: Եւ տեսեալ արանց զե-ղեալսն, յոչ կամաց դադարեալ յաշխարհին՝ ամուսնացան ընդ գերեալ կանայսն: Եւ յետ բազում ժամանակաց զմի ոմն 'ի միջոյ ժողովրդեան առաջնորդ ինքեանց կացուցանեն՝ Հռոմելոս ա-նուն, որ հեռագոյն 'ի ծովէն մինչև քսան և հինգ շինէ քաղաք յիւր անուն Հռոմ. սոքա են ազգ Հռոմայեցւոց: Բայց այս յետ չորեք հարիւր քառասուն և մի ամաց եղև, յետ առնլոյն զԻլին: Եւ յորժամ եղև քառասուն և չորս ամ, նստաւ թա-գաւոր 'ի Հռոմ Փիլիպպոս: Եւ երբ հազար ամ էր Հռոմայ շինելոյն՝ անտի փոխեաց զթագաւորութիւնն 'ի Բիւզանդիա Կոստանդիանոս, որ այժմ կոչի Կոստանդնուպոլիս:

## ԳԼՈՒԽ Ի

Որ էր յերկրորդ թագաւորութեան Հայոց քերթէ վասն 'ի սահմանս Ա-ղուանից.

Ընդ ժամանակս ընդ այնուիկ ափունցա տարածեցաւ յա-րուստ երկրի բանութիւն հարաւայնոցն ազգի խիստ և կծա-

նող, որ իբրեւ հուր լափեաց զամենայն գեղեցկութիւնս եւ ըզփառս մարդկան. եւ ըստ սրբոյն Պօղոսի բանին եկն իմանալ ժամանակն այն ապստամբութեան. եւ թէ՝ դատաւորն հասեալ է առ դուրս, մերձ է ժամն ահարկու, եւ օրն չար եւ անաչառ: Այսպէս Իսմայելեան Հագարացիքն յինքեանս զրաւեցին զփափկութիւնս երկրի. եւ ծով եւ ցամաք ունկնդիր եղեն նոցա: Եւ եղեւ առնս Աղուանից զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին 'ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս առա յԱղուանս նստուցին 'ի Պարտաւ կալ ալքունեացն՝ եւ ծծել զպարարտութիւն երկրիս. եւ մի ումն յալքունեաց եկեալ բնակեցաւ 'ի Պարտաւ: Եւ Հայաստանեայք սախ աշխարհին հոգոց զհայրապետն իւրեանց զտէր Իսայի հանդերձ եպիսկոպոսօք առ նա առաքեն. զորս զգալուստն լուեալ տիկնոջն Վարդանուհւոյ՝ կարեւէր եղեալ 'ի դատաստանացն Աստուծոյ, զի մէ ընդ առաջ 'ի լինել կարեկից իւրոց տարաժամելի աղետիցն, որ 'ի ձեռանէ Տեառն էարբ զբաժակ դառնութեան ըստ մարգարէին գրելոյն: Եւ երանելի հայրապետն Հայոց՝ խոնարհեալ յարտասուս կնոջն եւ օթեւանս առ նմա կալեալ, ցայգապաշտամամբ մաղթանս առ Աստուած մատուցանէր առ 'ի լուծանել զանէծս առաջնոց հայրապետացն: Ընդ նմին եւ տէր Սողոմոն Աղուանից կաթողիկոս իւրովք եպիսկոպոսօքն 'ի խորհուրդ եկեալ՝ լուծանէ զկապանս աթոռակալացն իւրոց եւ յիւրաքանչիւրոյն խնդրոյ արմատ մի մնաց կնոջն վշտացելոյ:

Եւ Վարազ Տրդատայ՝ Վարազմանայ որդւոյ, Աստուած շնորհեաց զկեանս. եւ որդի նորին Ստեփաննոս կեսօրեայ վախճանեալ. եւ նորին եղբայրն Վարազման վրիպեալ ընկղմեցաւ 'ի Կուր գետ՝ նա եղեւ գերեզման նորա: Իսկ Ջուանշերիկ նորին եղբայր մնաց ժառանգ. այս մինչեւ ցայս վայր:

Իսկ՝ ՚ի լնուլ երկերիւր եօթանասուն թուոց Հայոց (ամ՛ տեառն 821) ելին գաղտաբար ՚ի Պարսաւայ ալք բնակք ՚ի Տաճկաց և յաւարի առին զԿամարսա գաւառ՝ գերի առեալ իբրև ողիս հազարս, և ՚ի Մեծիրանց սահմանի ամրացեալք՝ ՚ի տեղւոջն որ կոչի Շիկաքար: Յայնժամ արի և շքեղատեսակն Սահակ Սմբատեան Իշխանշահիկն տէր՝ քաջացոյց եղբարքք խրոխք և զօրք ՚ի լուսանալ առաւօտուն ՚ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաթաւալ զնոսա ցիր և ցան կացուցանէին, և որպէս յաւուրծոյ ժանեաց զգերեալսն ՚ի բաց կորզէին: ՚Ի նոյն ամի ապստամբեալ Սևադայ՝ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աստուածաշուն անուն ճանաչէր, ՚ի սահմանս Հայոց. և յաւարի առեալ զաշխարհն ամենայն գաւառաց ՚ի Սիւնիս, և ամրանայ ՚ի Բերդատեղի ասանին Շաղատ, որ է ՚ի գաւառին Ծղկաց: Իսկ Վասակ Սիւնեաց տէր առեալ զԲաբան ՚ի Պարսից՝ եհար զնոսա և արար փախստական. և Սիւնեաց տէրն, ՚ի նմին ամի վախճանեցաւ. և էառ Բաբան ըզդուստրն Վասակայ Սիւնեաց տեառն ՚ի կնութիւն: Իսկ ՚ի նոյն ամի տէր Ներսէհ ՚ի փղեպեան՝ սպան զՎարազ Տրդատ ՚ի Սամփանտանան, և զորդի նորին ՚ի մօրն գոգ զենին և զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: Եւ սա Վարազ Տրդատ ՚ի Միհրական տոհմէ էր, ալք զԱղուանս ժառանգեցին որդի ՚ի հօրէ առնլով: Սա ութերորդ էր ՚ի Վարազ Գրիգորէ՝ առաջին իշխանէ Աղուանից: Յետ այսորիկ անհրաժանակատար եղև գաւառն Բաղաց՝ յանօրէն Բաբանայ. և եկ նա ՚ի Պարսից և էառ աւերեաց զերկիրն և ՚ի սուր սուսերի էարկ զկանայս և զմանկունս Բաղաց: Իսկ անտի ՚ի միւս տարին եանց Բաբան ՚ի գաւառն Գեղարքունի և էարկ ՚ի սուր զբնակիչսն ողիս իբրև տասն և հինգ հազարս. և զմեծ Սոդքենացւոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն Ջրաղացն և այլ ոչ ինչ. և էր թիւն Հայոց երկուհարիւր եօթանասուն և վեց: Իսկ յետ երկուց ամաց եհար Բաբան զՏասուսին և հալածա-

կան արար անձինս իբրու հարիւր և յիսուն հազար։ Նոյն 'ի միւսում ամին եհար Բաբան զԱբրահիմ զօրգլխն Պեթայ։ 'Ի նմին ամի դաւաճանողքն 'ի սէր և 'ի խաղաղութիւն, որոց անուանք Գուռն և Շապուհ ճանաչէր, սպանին զՍտեփաննոս զկոչեցեալն Աբլասադ, որ էած զԲաբան և եհար զԲաղակացիսն, որ 'ի սուր նիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառ և զաւանն Զուռնաց՝ զԿառնակաշ, զՀակարի և զՏախառ։ Նոյն դարձեալ ապստամբքն 'ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան 'ի բերդն Գորոզու, կալեալ զգաւառն ամս տասն և երկու, որք են այսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Գաղկանք, Մխանք, և Տրի գաւառ։ Յետ այնորիկ զսպանողսն Աբլասադայ կալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին։ Նոյն Յեսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան, քեռորդի Աբլասադայ՝ ըմբռնեալ զգաւառն՝ իշխանացաւ ամենայնի։ Նոյն 'ի նոյն ամին էանց Բաբան զգետովն Երասխ 'ի Պարսից, և յԱմարաս գաւառ բնակեցաւ. բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի 'ի հնազանդութիւն նմա եկեսցեն, և ժամադիր զղջմամբ ոմանք հնազանդեցան և յետոյ դաւեալք անհնազանդ եղեն։ Ապա դարձեալ Բաբանայ յերկիր իւր 'ի Պարսս յԱտրպատական՝ եթող զօրավար ոմն Սոսամ հանդերձ զօրօք, և ետ նմա հրաման ոչ պատերազմել ընդ բերդին, այլ 'ի սէր հաւանել, զի հնազանդեսցին։ Իսկ Սոսամայ անփոյթ արարեալ զպատուէրն Բաբանայ՝ եղ տալ պատերազմ ընդ ամրացելոցն 'ի բերդին։ Յայնժամ ապաւինեալ բերդեցեացն 'ի զօրութիւնն Քրիստոսի՝ զխաչս և զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝ 'ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդն, և զերծեալ յայնմանէ զՔրիստոս փառաւորէին՝ գոհանալով զնմանէ։

## ԳԼՈՒԽ ԻԸ

**Ելք Մումինայ էմիրին Տաճկաց 'ի Հոռոմս և 'ի նորին արտաքսումն, և ընդ նորին պէսպէս շփոթութիւնք կարճառօտ բանիւք։**

Յերկերիւր և ութսուն էր թուականն Հայոց (ամ տեառն 831), յորժամ կամեցաւ Մումին Տաճկի շահատակել 'ի Հոռոմս։ Նա կազմեալ նաւս հարիւր՝ արկանէ 'ի նաւս արս զօրաւորս թուով հարիւր հազար. և վարեալ զնաւս 'ի ծով կամէր պաշարել զմեծ քաղաքն Կոստանդնուպօլիս։ Յայնժամ լինի ազդումն Հռովմայեցւոցն, և իսկոյն աճապարեալ ընդ այլ կողմն ծովուն արտաքս՝ պատեալ պաշարեն զթշնամին խաչին Քրիստոսի, և առաւթուր հարեալ 'ի սպառ սատակեն զնոսա. և զնոյն ինքն զՄումին կենդանւոյն բառնան 'ի միջոյ. և ընդ նոյն յաղթութեան գինեալ ընդ ծով՝ զառ 'ի նաւսն բազմութիւն արոյ և ջրոյ առնէին կերակուր, մինչև չմնալ 'ի նոցանէ և ոչ մի։ Այս եղև մեծ զօրութեամբ կենդանւոյ խաչին Քրիստոսի հարուածք մեծամեծք Տաճկաց։ Իսկ յետ երից ամաց Բուղայի ոմն Ամիրայ եկեալ հրամանաւ իշխանին Տաճկաց, որ Ամիր Մումին կոչէր, և հասեալ 'ի Նախիջևան քաղաք՝ անդ ըմբռնէ մանուկ մի՝ Յովհան անուն, 'ի ձեռս նորա, և սակս հաւատոց որ 'ի Քրիստոս չարաչար տանջեալ նահատակի 'ի սուրբ Քառասուննն մերձ յօր սրբոց Զատկին, որոյ նշխարքն լուսածածանչ կատարեաց զնոսա։ Յետ այսորիկ անցանելոյ երկուց ևս ամաց, եկն Խազր Փաղդոս այր չարաչար և անօրէն, և 'ի նմին ամի սատակեցաւ. իսկ նորուն որդին եկեալ էառ զաշխարհս սրով և գերութեամբ և զեկեղեցիս բազումս հրով այրեալ կիզեաց՝ և գնաց 'ի Բաղդատ։ Նա անտի դարձեալ եկեալ արքունի հրամանաւ և զանձուք շինեաց զԳանձակ քաղաք յԱրշակաշէն գաւառի։ Յետ այնո-

ընկ արշաւանս առնէր յաշխարհն Սիւնեաց և գերի վարեալ զԽաղաց սահմանս, գայ իջանէ յԵղահէջ գաւառ՝ յաւան մի Եղքուղեռ կոչեցեալ, և իսկոյն հրամայէ այրել զեկեղեցին, որ ստորին Գեհորգայ էր անուանեալ: Յայնժամ զօրութիւն աստուածային հասեալ՝ հեծեալ մի 'ի ձի ճերմակ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս ահն յայտնի ամենեցուն և ընթացեալ 'ի բանակն՝ շփոթեաց զայրն անօրէն հանդերձ զօրօքն նորա դարձուցանէ 'ի փախուստ ընդ սարն, որ կոչի Նորջեւր խոյի․ և անդ հողմն գժնդակ մրրկեալ շրջապատեաց զնոսա, և միայն 'ի ձի ապաստանիքն փախուցեալ զերծան․ իսկ պատանաւորքն և աւարառուք 'ի լերանցն վերայ կորեան․ և գերեալքն մնացին խաղաղութեամբ՝ փառս Աստուծոյ տալով:

Նոյն 'ի նոյն երրորդ հարիւր թուոյն հայոց՝ (ամ տեառն 851) լցեալ սահմանեալ մեղացն տուգանք հատուցեալ իշխանացն Հայոց և Աղուանից, որք յայսմ ամի կալեալ պարաւանդեալ ըմբռնեցան 'ի ձեռս Տաճկաց և տարագրեալք 'ի տանց իւրեանց՝ յոչ կամաց գնացին 'ի Բաղդատ: Անդ փորձեցուցեալ առաւելն անօրէնքն թողուլ զհաւատս, յորոց բազումք կորեան զանմահն մահ՝ թողլով զանկողոպտելի զանձն հաւատոյ սրբոյ: Իսկ երանելի այն Շապուհ Արծրունի և միւս այլ այր ընտիր յազատացն Հայոց՝ յանձն առին զմահ մարտիրոսական և ոչ զկեանս մոլորս: Յայնժամ տայր հրաման բռնաւորն Տաճկաց երկաթի կապանօք զնոսա կենդանւոյն ընկենուլ 'ի գետն Տիգրիս․ և զաւուրս բազումս ջահք լուսոյ 'ի վերայ գետոյն երևեալ, ընդ որ մախացեալ Ամիր Մումինոյ՝ տայ հրաման, զի այրք իջեալ 'ի գետն առցեն զոսկերսն և հրով այրեսցեն: Իսկ յիջանելն խորխջացն՝ լոյսն աներևոյթ լինէր, և յելանել նոցա 'ի ջրոյն յաւելլոյ, նոյն լոյսն 'ի լուսութեան ջրոյն գայր: Ապա, կոչէ Ամիր Մումին զԶաքիր Աստրեայց եպիսկոպոսն և հրամայէ յուղել զնշխարս նոցա․ և եկեալ եպիսկոպոսն յեզր Տիգրիս գետոյն՝ իջուցանէ խորէջս․ և գտեալ զոսկերս

երանելեացն՝ տարաւ յիւրն եկեղեցի և կարգեաց յիշատակս գրով։ Յայսմ ամի անչափութիւն անձրևաց եղեալ յանկարծակէզ 'ի Մեծիրանց գաւառի և հասեալ գնացք հեղեղին 'ի Գառնակերտ գեօղն 'ի կէս գետոյն, զութ հարիւր վրանս խաշնարածաց տարաւ, որք եկեալ էին 'ի Կովկասայ յարօր՝ յաւուրս ամարայնւոյ. և տէր Մուշան փախձանեցաւ 'ի Վայոց ձորն 'ի նոյն ամի։ Նա 'ի միւս տարին եկն Բուղեայ 'ի Հայս և սպան զՍահակ Իսմայելեան 'ի Տփղիս քաղաքի, և զամն երեք կալաւ զՀայս՝ մինչև զիշխանս զօր կանամբք խաղացուցանէր 'ի Բաղդատ։ Ապա 'ի չորրորդ ամին եղև գալն Մահմետայ՝ Խաղեթի որդւոյ և մահն տեառն Վասակայ Գնունւոյն։

Նա 'ի յերեք հարիւր յութ և տասն թուականին Հայոց (ամ տեառն 869) եղև անհնարին և հիացուցանող շարժն Դունայ, որ զամ մի ողջոյն դողացեալ խորտակեաց յանդունդս անձինս իբրև երկոտասան բիւր մարդկան։— Ահա նմանութիւն խոտոյ ասի մարդ։

## ԳԼՈՒԽ ԻԲ

Պաշարումն Պարտաւայ յորդւոյն Շէխայ և 'ի զօրացն Հայոց և Աղուանից, և Մահմէդի անյաղթ առնուլ դարձեալ և մեռ 'ի Բաղին.

'Ի ժամանակի խռովութեանն, որ շարժեցաւ 'ի մէջ Յիսայի՝ որդւոյն Շեխայ, և իւրոյ գործակալին Մահմետի որդւոյ Աբլխահզի, որ կոչէր Նշմշիկ, զօրաժողով լինի որդին Շեխայ 'ի կողմանցն Ասորեստանեայց՝ միակամութեամբ Աշոտի իշխանի, զի և սա գումարէ զզօրս Հայոց հանդերձ իշխանօքն Աղուանից և երթեալ հարկանեն զԲեշակեշն 'ի դրանն Պարտաւայ և քաջամուխ կան 'ի մարտի զամն տասն և երեք։ Ընդ այն աւուրս հասանէ փախձան հայրապետին Աղուանից Յովհաննիս, և ոչ լինէր պարապ ժամ իշխանացն Աղուանից

նորոգել զաթոռն հայրապետութեան։ Իսկ Մեծկողմանց եպիսկոպոսն Սամուէլ անձնականակ ընդ Միսայէլի քահանայի, որ իմաստասէրն կոչէր՝ խորհրդակցաց եղեալ՝ առանց գըլխաւորագունին աջոյ տայ զեպիսկոպոսութիւն իւր Խամսելի. և ինքն Սամուէլ զանկատարն առնու ձեռնադրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն։ Լուրս այս եհաս 'ի բանակն, և բազում եղև խառնակութիւն իշխանացն Աղուանից. և յայնմ միաբանութեան զեկուցանեն զայս տեառն Գէորգայ Հայոց կաթուղիկոսի։ Եւ նորա կանոնական սահմանադրութեամբ գրեալ առ իշխանն Հայոց՝ մաղթէ օգնել իրացն և առնել խաղաղութիւն։ Եւ նորա իմաստաբար ածեալ 'ի հաւան զպետս և զիշխանս Աղուանից՝ խաղաղութիւն 'ի մէջ նոցա առնէր. այլ նոքա մնզոմս Հայոց պատճառէին։ Իսկ Աշոտ իշխանն Հայոց խնդրէր զկարգադրութիւն սրբոյն Գրիգորի և զձեռնադրութիւն առնուլ 'ի Հայոց. բայց առժամն հաւանեալ նոցա Սամուէլի և Խամսելի պղտորմանն՝ մեծ իշխանն Հայոց գրէր առ հայրապետն Գէորգ և զՍամուէլ հաճեցուցանէր ամենայն Աղուանից կամակցութեամբն յանկամանական մտաց։ Այս չուեալ երթայ 'ի Դուին և զերկրորդն առնու ձեռնադրութիւն անձնահաճն Սամուէլ 'ի Գէորգայ Հայոց կաթուղիկոսէ յաւուրս Աշոտոյ Հայոց իշխանի և 'ի թուականութեան Հայոց երեք հարիւր քսան և վեց (ամ տեառն 877)։ Եւ նոյն իշխանն Հայոց Աշոտ՝ զվաղնջուց դադարեալ քարոզութիւնն Սիւնեաց՝ որպէս այր իմաստուն, ընդ Սողոմոնի եպիսկոպոսի և ընդ Գէորգայ հայրապետի վերստին նորոգեաց։ 'Ի նոյն ժամանակս եղև Աշոտոյ Բագրատունւոյ նստուցանել զաթոռ թագաւորութեան իւրոյ 'ի մէջ Հայաստանեայց, որ 'ի բազում ժամանակաց էր բարձեալ պատիւն թագաւորական 'ի տանէն Թորգոմայ։ Իսկ գալուստ Տաճկին 'ի Հայս և զրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց 'ի թուականն Հայոց երեք հարիւր քառասուն և երկու լինէր (ամ տեառն 893). յորս

'ի ձեռն ըմբռնեալ հայրապետն Գէորգ և 'ի կապանս երկաթիս պարփակեալ ածաւ 'ի Պարտաւ: Եւս բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւն. այսք 'ի միում ժամանակի գործեցան: Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծապէս յանցանացն, որ վասն մտաւ այսր կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեաց յանձն իւր՝ մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատագուարթ անպատ կատարէր, որ և զմեծ հայրապետն Հայոց Գէորգ յանօրէն Տաճկաց կապարանէն բազմաբաշխ գանձիւք ազատ տայր արձակել, և յոգնամեծար զնա արարեալ՝ առողջ առ Հայաստանեայս առաքէր: Իսկ յետ չորից ամաց, յորում տարեմտին 'ի սրբում հանդիպէր Պասեքին օր, սպանանի Գօշէ Աղուանից իշխանն Հայկազուն յիւրմէ հարազատէ 'ի Սմբատայ. և եղև այն սուգ մեծ իւրայնոցն զարմից: 'Ի նմին ամի զօրաժողով լինի թագաւորն Հայոց Սմբատ՝ որդի Աշոտոյ Բագրատունւոյ՝ և անցանէ ապստամբու յաշխարհն Ասորեստանեայց, անդ 'ի գլուխ հարկանէին նմա զօրքն Տաճկաց, փախստական դարձուցանէն 'ի Հայս և թափուր ունայն զամենայն տանէն. և անդէն մեռանէր Աշոտ իշխանն Հայկազուն և սակաւք 'ի զօրացն: 'Ի նմին ժամու և մեծ իշխանն Վասպուրականի Աբումրուան սպանանի յիւրոց զօրացն: 'Ի նոյն ամի դայր հասանէր Տաճիկն երկրորդ անգամ յերկիրն Հայոց, և 'ի նորին հրամանէ եղանէր նկրքինեին 'ի դրանէն Պարտաւայ գալ 'ի Հայս. և էր այլն այն ժպիրհ և անաստուած. ուր գնացք ոտից նորա լինէր՝ աւերէր քանդէր զեկեղեցիս Աստուծոյ. և զնշան Քրիստոսի ուր և տեսանէր մանրէր իբրև զփոշի: Եւ իբրև եհաս յաշխարհն Հայոց՝ առժամայն փախստական լինէր թագաւորն Սմբատ. և նորա առեալ զամրոցս և զթագուհին հանդերձ տիկնօք և որդովքն նորա, և զբնակարանս և զգաւառս սըր-

բուլթևաց և զխաչս՝ բազում գանձուք խաղացուցանէր 'ի գերութիւն: 'Ի նմին ամի արշաւեալ 'ի Վիրս՝ ընդդէմ եկեալ նմա երկու քաջ զօրավարք Վրաց՝ Գէորգ իշխան և Արևէս եղբայր նորին, երկոքեան իսկ չարաչար մեռանէին 'ի նմանէ: Յայնժամ վերափոխի մեծ հայրապետն Հայոց Գէորգ և իշխանն Սիւնեաց Աշոտ՝ զոր ողբերգական կանայք կականէին ասելով. «Մի՛ եկեսցէ և մի՛ լիցի այսպիսի տարի 'ի վերայ երկրի, որչափ ազգ մարդկան է»: Եւ հայ թուականն էր երեքհարիւր քսան և վեց (ամ տեառն 897): Այլ այն ամենայն ախտքն էր երկանց և տագնապին՝ որ եղև Հայոց. զի փոյթ ինքն զմեծ թագաւորն Սմբատ յետ սակաւ ժամանակի մտանեաց աստուածահաս պատուհասն, որ լինելոց էր աշխարհի. և 'ի բաց կացեալ վերնոյն զօրութիւնն 'ի նմանէ՝ զկորստեանն իւր և զՀայոց գնաց զճանապարհ. զի յերեսս իշխանին Տաճկաց երթալով՝ ըմբռնեալ նորա զկամս եկեալ թագաւորն, 'ի վերայ փայտի պատանէր: Եւ ապա դուժէր ձայն աղետաւոր 'ի տանն Թորգոմայ, և առհասարակ աւերանք աշխարհին հասանէր. (և հայ թուին երեք հարիւր վաթսուն և երեք էր). զորոյ վրէժն միայն Աստուած խնդրեաց զսպանմանն Սմբատայ, զի անապարտն այն Տաճիկ՝ փոխեալ 'ի Հայոց, գնաց անդանէ ընդ Ասորեստան երկիր. մատնի 'ի ձեռս Արաբացւոյն իշխեցողի և կենդանւոյն թաղեալ տապակի: 'Ի վերայ այսոցիկ անցելոց ժամանակաց՝ սպառի ազգն այն Տաճկաց, և երևի ազգ այլ, զոր Գեղէմէնկք կոչեն, յորոց գլխաւոր ոմն եկեալ Սալար անուն, և համատարած տիրեալ զիւր գաւառին՝ տիրէ Աղուանից, Պարսից և Հայոց. և եկեալ 'ի Պարտաւ՝ իւրացուցանէ զայն իսկոյն:

Ընդ նոյն ժամանակս բաշխի 'ի կողմանցն հիւսիսոյ այլագեղ օտարանշան ազգ ինն՝ զոր Ռուզիկ *) կոչեն, որք ոչ ունէին

*) Թերևս՝ Ռուսք.

քան զերիս ժամանակս իբրև զմիրիկ ընդ համատարած աշ-խարհածով եկեցն Կարից յանկարծ հասանէին 'ի մայրաքա-ղաքն Աղուանից 'ի Պարտաւ, որ ոչ ունելով կարողութիւն ընդ-դիմակայել նոցա, 'ի սուր սուսերի մատնեալ լինէր քաղաքն. և կացին յինքեանս վայելչութիւնք ամենայն կազմութեանց բնակչացն. և նոյն ինքն Սալարն պաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարէր վնասել, զի անյաղթելի էին զօրութեամբ: Իսկ կանանց քաղաքին հնարս իմացեալ՝ բաժակ մահու արբուցանէին Սու-զաց, որոց իմացեալ զդաւաճանութիւնն՝ անխնայ կոտորէին զկանայս և զմանկունս նոցա: Եւ կացեալ 'ի նմա ամիս մի՝ թափուր և ունայն զքաղաքն թողուին, և մնացեալքն զանգի-տող ձևով գնացին յաշխարհն իւրեանց բազմազան աւարաւ:

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Արքայութիւն տղէտայ տանուանց հաւաքօրէնք.

Ստուգաբանութեամբ այսպէս ծանեաք.— ընդ Հայկազ-նեայց ազանց խնամաւորել Միհրական տոհմին, և պատուա-տութեամբս այսուիկ զոյգ ունել զպետութիւն արևելից կող-մանցս Աղուանից: Զանուանս արքայիցն վերագոյն գրեցաք 'ի քաջէն Վաչականայ մինչև ցբարեպաշտն Վաչական՝ տասն թագաւորք, յորոց ըստ թուոց աւուրց տարւոյն եկեղեցիս մի-այն բարեպաշտն Վաչական շինեաց յարևելս: Եւ յետ մա-հուն նորա սկսաւ նուաճիլ ազգն այն: Եւ Միհրեանն, որ 'ի Սասանեան տոհմէ էր եկեալ 'ի Պարսից՝ հաստատեցաւ 'ի նա-խարարութեան. և անուանք նոցա որդի 'ի հօրէ առնլով, են այսքիկ՝ Միհր, Արմայել, Վարդ, քաջ Վարդան, որ հա-ւատացեալ 'ի Քրիստոս, և ոչ շինողն Գարդմանի բերդոյ. Սո-րա որդի Վարդ, Վարդ ծնաւ զՎարազ Գրիգոր՝ զառա-ջին իշխանն Աղուանից, որ ծնաւ զչորս որդիս՝ զՎարազ Պերոժ, զՋուանշիր, զՅեզուտ Խոսրով և զՎարազման:

'Ի սոցանէ զերեց որդւոյն շարեալ ըստ կարգի զանուանս բերցուք 'ի յայտ առ Հայկազինս, և այլքն կացցեն. որք են Վարազ Պերոժ, Վարազ Տրդատ, Վարդան, Ներսեհ Դըժընդակ, որ է հանճարի գլուխ....*) արար. և ոսք տառապելոց պարտաւորեալ կարկեցան 'ի շղթայս երկաթեղէնս. վասն որոյ բազումք խորշակահար և հեղձամղձուկ սատակեցան: 'Ի նոյն խորհուրդ գնացեալ Ներսեհի՝ անցանէր զծովին գիւղ մտանել յԱտորիս և լինէր օրն կիւրակէ: Նա մեկնեալ յընկերացն միայն դարձաւ առ հոգևոր հայրն Աբրահամ՝ առ ապաստաւորն սրբոյ խաչին, և ծածկեալ զանուն իւր՝ ընդ այլսրն աղօթէր: Իսկ երանելին Աբրահամ առ նա խրախուսեալ ասէր. «Ո՞վ ես դու, զի Տէր Աստուած յայտնեաց զաշխարհակործան քո ամբարշտութիւնդ. և որդիք քո դքո անլռութեանդ չարութիւն կորստեան տառապելոց անձանց դաւաղան. ո՞չ ապաքէն դու իցես Ներսեհ, որ զխմեալ երթաս յառաջս Քրիստոսի՝ յաւերադրել զնոյն չարութիւն արևելից եկեղեցեաց: Արդ երթաս յերկիրն, այլ բաց աչօք ոչ տեսցես զերկիր հարց քոց»: Իսկ Ներսեհի անկեալ առ ոտս ծերոյն՝ ոչ ինչ լսէր պատասխանի. միայն զճանապարհն գնայր, և անդէն փախճանեալ ըստ բանի հօրն Աբրահամի՝ անշնչացեալ լոկ մարմինն բերաւ 'ի հող իւր: Ներսեհի որդի՝ Գադիկ, Գադկայ որդի Սոսիփաննոս և Ապրսամէն քոյր նորա: Զայս Վարազ Տրդատ և զորդի նորա Սոսիփաննոս, Ներսեհ 'ի Փիլիպեան՝ ազգականցն նորա սպան 'ի միում ժամու 'ի խորանորն՝ որ կոչի Գադոյի վանք: Արա յայն աղետիցն զատն զգեցեալ զարութիւն կնոջն սպանելոյ՝ առեալ զմնացեալ իւր դուստրն Ապրամ զիշերահէն տաժանելի ուղևորմամբ՝ մտանէ 'ի բերդն Խաչենոյ՝ և բարուօք խորհեալ տան իւրում՝ ամուսնացուցանէ զԱպրամ ընդ

*) Ցերկաւին օր. պակասին բառք ինչ:

Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ էր 'ի Տոհակայ և տէր Սիւ-նեաց և բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ. և որդի նորա Ատրներսեհ հանդիպեցաւ կնոջ զգաստի, որք երկիւղածք յԱստուծոյ և բարեպաշտք զիւրեանց ցուցանէին զկեանս և աշխարհի քաղցունք: Սա Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու, և զապարանս իւր դնէ 'ի գիւղն, որ կոչի Վայու-նիք, ուր և բաղանիքն են արքունականք. զնա տարան ընդ այլ իշխանս յերկիրն Պարսից. և կալով նորա անդ ամս բազումս տիկինն Սպրամ յառաւել բարեգործութիւնս յաճախէր. և մեծամեծ տենչմամբ շինէր զնորավանս 'ի գաւառին Սոդէից ամենապայծառ զարդուք: Եւ խոյս տայր Ատրներսեհ զեր-ծեալ 'ի կողմանցն Տաճկաց. և խաղաղութեամբ զառժամայն լուծանէ կեանս: Լինին սորա որդիք Գրիգոր և Ապուսէթ. Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգէ ըզ-ձեռն իւրոյ իշխանութեանն. և Գրիգորի լինին որդիք հինգ, յորոց երեց որդին Ապուլի սպանանի յազգակցէն Սմբատայ. և միւս որդին Սահակ, որ և Սեւադայ կոչեցաւ, այր քաջ և յաղող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ և Փառսայ և Փառնայ գաւառաց, այլ և առաջակայեաց Ձորոյգետոյն բովանդակ եղև իշխան, և խնդրող իսկ դրացիութեան. և զայրապետս 'ի տան իւրում կարգեաց. ընդ որում և բազմա-ջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց տերիւրել զնա 'ի կամս իւր: Սեւադայ ծնանի զերկուս որդիս՝ զԳրիգոր և զԴաւիթ. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որոյ Իշխան անուն կոչիւր, և զԱտրներսեհ և զՓիլիպպէ: Իսկ զերեց որդին Իշխանի (Սեւադայի) զՅովհաննէս, որ և Սենե-քերիմ կոչեցաւ, ընտրեաց այն Բարձրեալն՝ կոչելով զնա 'ի թագաւորութիւն. և զվաղնջուց խափանեալ թագաւորու-թիւն Տէրն ամենակալ 'ի ձեռն սորա նորոգեաց, զոր և թա-գաւորն Պարսից մեծամեծ զարդուք պատուէ և տայ նմա ըզ-թագ հօր իւրոյ և զնորին երիվարն: 'Ի նմին ամի և որ Յո-

նոյն էր Մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական առաքէր 'ի պատիւ եւ 'ի գովեստ աստուածաշնորհ առն այնորիկ, որ եւ 'ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զօծումն թագաւորական 'ի փառս Քրիստոսի:

## ԳԼՈՒԽ ԻԴ

### Անուանք հայրապետացն Աղուանից, ամք եւ գործք նոցին.

Սակս հայրապետական անուանն պատուոյ եւ պատշաճ վարկանելի էր զատոյցն առ յիշատակի դրոշմել 'ի գրիս: Բայց զի 'ի սկզբանցն հոլովեալ նախաշաւիղ առաջնորդացն գործք եւ ժամանակք եւ անուանք հրկէզ եղեալ են յանօրինաց, եւ կտակարանք եւ ապաք եւ տեղիք կալոյ նոցա մեզ անյայտք եւ ոչ բերեալ 'ի լոյս. զայս փոքր 'ի շատէ արտայայտեալ բացատրեցաք առ 'ի գիտութիւն այնոցիկ, որք փոյթ յանձին կալեալ իցեն զայսմ խնդրոյ:

Արդ առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է

Սուրբն Եղիշայ՝ աշակերտ սուրբ առաքելոյն Թադէոսի, որ ձեռնադրեցաւ յԵրուսաղէմ 'ի ձեռաց սրբոյն Յակոբայ: — Սա եղեւ լուսաւորիչ երից աշխարհացս՝ Ճորայ, Լփնաց եւ Աղուանից, եւ 'ի սոյն կատարեցաւ վկայութեամբ:

Սուրբ մանուկն Գրիգորիս՝ թոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց:

Սուրբն Շուփհաղիշու, Աղուանից արքեպիսկոպոս:

Տէր Մատթէոս:

Տէր Սահակ:

Տէր Մովսէս:

Տէր Պանդ:

Տէր Ղազար:

Տէր Գրիգոր։
Տէր Զաքարիա։
Տէր Դաւիթ։
Տէր Յովհան։
Տէր Երեմիա։ — 'Ի սորա աւուրս արար գիր Եղուանից երանելին Մեսրոպ, որ և Հայոց և Վրաց եռ'նշանագիր ջանիւ մեծաւ։

Տէր Երաս, որ 'ի սկզբան Թուականին Հայոց փոխեաց զաթոռ հայրապետութեանն 'ի Չորայ 'ի Պարտաւ՝ կալեալ ամս քառասուն և չորս, յեպիսկոպոսութենէն Մեծիրանց կոչեցեալ։ — Եւ սմա կալան սովորութիւն գրել 'ի պարունակի թղթոյն «Եղուանից, Լփնաց և Չորայ կաթուղիկոսի»։ Նո-ւա սա գրեցին 'ի ժողովոյն Դունայ՝ ասել «Մի բնութիւն աստուածութեան և մարդկութեանն Քրիստոսի», և յաւելուլ 'ի Սուրբ Աստուածն «անմահ և խաչեցար»։

Տէր Վիրոյ, ամս երեսուն և չորս։ — Սա թափեաց զգերեալսն Հայոց, Վրաց և Եղուանից 'ի Շաթայ Խաղբէ. և սա խնդրեաց 'ի Խոսրովայ Պարսից արքայէ գրել 'ի պատիւ Գարդմանայ տեառն իշխանացն Եղուանից 'ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհին», զոր դեռևս գրեն։

Տէր Զաքարիա, այր սուրբ, ամս տասն և հինգ։ — Սա յերաշխի էառ զմեծ քաղաքն Պարտաւ, և աղօթիւք իւրովք զերծոյց 'ի գերութենէ զբազում անձինս. և ձեռնադրեաց եպիսկոպոս Սիւնեաց զՎարթանէս ոմն անուն յանհաւանութենէ Հայոց։

Տէր Յովհան, ամս քսան և եօթն, յեպիսկոպոսութենէ Եմարսայ կոչեցեալ յաթոռն։

Տէր Ուխտանէս, ամս տասն և երկու։ — Սա անէծ զնախարարս Եղուանից վասն ազգաշաղախ խառնակման նոցա։

Տէր Եղիազար, ամս վեց, յեպիսկոպոսութենէն Շաքեւոյ։ — Սա եղիտ զսուրբ խաչն՝ զծածկեալն 'ի Մեսրոպայ 'ի

Գուխս գեօղն, և 'ի նոյն կենարար փայտէն մասն առեալ եդ 'ի հարիւր քսան դաշնկանի ոսկւոյ, և գրեաց 'ի վերայ, «Նթէ Նշխարաւոր է»․ և կարգ եդ յօր խաչին տօնել 'ի Գուխս:

Տէր Ներսէս, յեպիսկոպոսութենէն Գարդմանայ, ամս տասն և եօթն: — Սա վերկացեալ 'ի մնաց՝ կամեցաւ ազդել ըղ-ձայշական տունս Աղուանից՝ խոտորեալ 'ի կրօնն Քաղկեդոնի:

Տէր Սիմէոն, ամ մի և կէս: — Սա սարկաւագապետ էր աթոռոյն Աղուանից, և եդ կանոնս եօթն տուն:

Տէր Միքայէլ, ամս երեսուն և եօթն: — Սա էր սարկա-ւագապետ 'ի Շապուհ, և սորա կոչեցեալ զՄաքենոցացն հայր Սողոմոն, և անէծ զտոհմս Աղուանից, որք գերից ազգաց ծը-նունդս ամուսնացեալ էին, որոց առ ժամայն հասեալ պատու-հաս՝ սպառեցան: Ընդ որս և նզովեցին զԹովմէ Վրաց ա-ռաջնորդն, զի հրամայն տայր անօրէն ամուսնութեան:

Տէր Անաստաս, ամս չորս:

Տէր Յովսէփ, ամս տասն և եօթն: — 'Ի սորա հինգերորդ ամին լցաւ երկուհարիւր ամն թուոյն Հայոց: Սա եկեալ էր յաթոռն յեպիսկոպոսութենէն Ամարասայ:

Տէր Դաւիթ, ամս չորս: — Նա առ յԱմարասայ եպիսկո-պոսութենէն կացեալ յաթոռն՝ թափեաց զհող և զպաս սըր-բութեանց, և դեղ մահու արբեալ 'ի դաւողաց վախճանի:

Տէր Դաւիթ, ամս ինն. յեպիսկոպոսութենէն Մեծկու-ենից: — Սա վանեաց անօրինաց զդատաւորն և զաս-մանախաչն:

Տէր Մաթէ, ամ մի և կէս, յեպիսկոպոսութենէն Կա-պաղակայ և Սաղքաւայ:

Տէր Մովսէս, ամս երկու:

Տէր Ահարոն, ամս երկու:

Տէր Սողոմոն, կէս ամ:

Տէր Թէոդորոս, ամս չորս. յեպիսկոպոսութենէն Գարդ-մանայ:

Տէր Սողոմոն, ամս տասն և մի և կէս։

Տէր Յովհաննէս, ամս քսան և հինգ։ — Սա փոխեաց ըզ-կաթուղիկոսարանն 'ի Բերդակուր խուրեանց հովուաց տեղէն, յորժամ հանաւ 'ի Պարտաւայ։

Տէր Մովսէս, կէս ամ։

Տէր Դաւիթ, ամս քսան և ութ. յեպիսկոպոսութենէն Կապաղակայ։ — Սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Շաքւոյ տեառն, և նոյն իշխանի աշխարհական եղբայրն գի-տացեալ հարցանէ զնա և ասէ. «Ուստի՞ գաս՝ տէր». և նա ասէ. «Ի տանէ եղբօր քո». և ասէ իշխանն ցԴաւիթ. «Լե-զուդ, որ օրհնեաց՝ մի խօսեսցի, և աջդ չորասցի». և առ-ժամայն եղև այնպէս և ոչ բժշկեցաւ մինչև 'ի մահ նորա։

Տէր Յովսէփ, ամս քսան և հինգ, յեպիսկոպոսութենէն Մեծկունեաց։ — Ի սորա յերրորդ ամին լցաւ թիւն Հայոց երեք հարիւր։

Տէր Սամուէլ, ամս տասն և ութն. յեպիսկոպոսութենէն Մեծկունեաց։ — Ընծայմբ առեալ սորա զպատիւն և յետոյ լուծեալ 'ի Գէորգայ կաթուղիկոսէ Հայոց, առնու զերկրորդ ձեռնադրութիւն 'ի նմանէ 'ի Դուին։

Տէր Յովհան, ամս ութ և կէս։ — Սա էր դրան եպիսկո-պոս Հայոց. և մինչդեռ 'ի գերութեան էր Գէորգ՝ սա գայ յԵղուանս, և անդէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գէ-որգայ։ Նա և իբրև գնեցին զտէր Գէորգ իշխանքն Եղուանից, լուծանէ զնա 'ի պատւոյն. բայց աղաչեալ զնա իշխանացն Եղ-ուանից վասն երախտեացն որ առ նա՝ կրկին ձեռնադրէ զնա։

Տէր Սիմէոն, ամս քսան և մէկ։ — Սա էր դրան եպիսկո-պոս սուրբ աթոռոյն, որ առաւել զարդարեաց սպասիւք ըզ-խաչն սուրբ։

Տէր Դաւիթ, ամս վեց։ — Սա էր յառաջնորդութենէ Փա-ռիսոյ վանաց։

Տէր Սահակ, ամս տասն և ինն, յեպիսկոպոսութենէն Մեծ-կունեաց։

Տէր Գագիկ, ամս տասն և չորս, յեպիսկոպոսութեանէն Գարդմանայ։ — 'Ի սորա չորրորդ ամին լցաւ թիւն Հայոց չորք հարիւր։

Տէր Դաւիթ, ամս եօթն, յեպիսկոպոսութեանէն Կապաղակայ։

Տէր Դաւիթ, ամս վեց։ — Սա էառ ձեռնադրութիւն յԱնանիայէ Հայոց կաթուղիկոսէ։

Տէր Պետրոս, ամս տասն և ութ, յեպիսկոպոսութեանէն Գարդմանայ։

Տէր Մովսէս, ամս վեց, յառաջնորդութեանէն Փառիսոսյ վանաց։

ՎԵՐՋ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

# ՑԱՆԿ

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

### ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Երես.


ԳԼՈՒԽ Ա. — Որ ինչ յԱդամայ մինչև ցՆոյ ծնունդք ազգաբանութեանց. 3

ԳԼՈՒԽ Բ. — Գիր ազգաբանութեան Յաբեթի և ծննդոց նորին. . . 4

ԳԼՈՒԽ Գ. — Թէ որ ազգ են, որ գիտեն զգրութիւն. . . . . 5

ԳԼՈՒԽ Դ. — Կարգելն Վաղարշակայ զնախագահութիւն Աղուանից. . 6

ԳԼՈՒԽ Ե. — Ցուցումն բերմանց և պարարտութեանց սահմանացն Աղուանից, զինչ ունի 'ի պէտս մարդկան. . . . . . . . . 7

ԳԼՈՒԽ Զ. — Գիտութիւն երևմանն Աստուծոյ մերոյ մերոցս արևելեայց. 8

ԳԼՈՒԽ Է. — Գիւտ Նշխարաց Արևելեայցս լուսաւորչին՝ որդւոյն Եղիշէի. 9

ԳԼՈՒԽ Ը. — Ըստ կարգի զՐՍՅԺ յԱդամայ մինչև ցՈւռնայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ոչ գտաք, այլ հարևանցի գրեցաւ, որ ինչ 'ի պէտս էր տեղեակ լինել. . . . . . . . . 10

ԳԼՈՒԽ Թ. — Հաւատալն Ուռնայրի և մկրտիլն 'ի ձեռաց Սրբոյն Գրիգորի և Աղուանից միաբան լուսաւորիլն ընդ ձեռամբ Ուռնայրի արքայի. 11

ԳԼՈՒԽ Ժ. — Վասն Վաչէի Աղուանից արքայի, թէ զիարդ ուրացաւ զհեթանոսական գործ մոլորութեանն և հաւատոց յԱստուած կենդանի, և եւս պատերազմ ընդ Պարսս և միանձնացաւ յանապատի սուրբ վարուք. . . . . . . . . . . . . . . 12

ԳԼՈՒԽ ԺԱ. — Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ լի երկնաւոր շնորհօք. . . . . . . . . . . . . . . 14

ԳԼՈՒԽ ԺԲ. — Պատերազմիլն Տրդատայ ընդ Բասլաց արքային յաշխարհին Աղուանից, և թագաւորելն Սանատրկոյ 'ի վերայ Աղուանից, և ընդդիմանալն Հայոց, և Խոսրովայ գալն յունական զօրօք և առնուլ զԱղուանս և զհարկս. . . . . . . . . . 22

ԳԼՈՒԽ ԺԳ. — Շապհոյ թագաւորեցուցանելն զՏիրան և փրկիլն 'ի հիւսիսականաց, և կուրացուցանելն զՏիրան և խաղաղութիւն հիւսիսականացն, և մահն Արշակայ և Պապայ թագաւորելն և կորուստն Մեհրուժանայ և խոց առնուլն Ուռնայրի յայնմ պատերազմի. . 23

Երես.

ԳԼՈՒԽ ԺԴ. — Սակաւիկ յայտարարութիւն վասն սրբոյն Գրիգորիսի Հայոց Լուսաւորչի և երանելի որդւոց նորին. և ընդ նմին ծնընդաբանութիւն Սրբոյն Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանսի՝ թոռին մեծի սրբոյն Գրիգորի 'ի կաթուղիկոսութիւն Աղուանից և Վրաց, և ևս նորա յԱղուանս 'ի լուսաւորութիւն աշխարհին, և նահատակութիւն նորին և ըմբռնումն նշխարացն . . . . . . . . . 24

ԳԼՈՒԽ ԺԵ. — Գիր անուանց նախապահ կացելոց, որ յայտնէ 'ի Յաբեթէ և յԱռամայ մինչև ցերրորդն Վաչական . . . . . . . . 32

ԳԼՈՒԽ ԺԶ. — Կեանք և վարք և կարգաւորութիւնք Աղուանից, որ 'ի Վաչականէ արքայէ եղան, և գիւտ նշխարաց սրբոց . . . . 33

ԳԼՈՒԽ ԺԷ. — Թագաւորելն Վաղարշակայ և 'ի նմանէ առնուլ Վաչականայ զիւր թագաւորութիւն Աղուանից . . . . . . . 35

ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն կարգելոյ զդպրոց արքային Վաչականայ չարածընունդ մանկանցն գիւթոց, և գտանելոյ զպիղծ աղանդն մանահաւատութեան, և փախճանելոյ նոցունց . . . . . . . 39

ԳԼՈՒԽ ԺԹ. — Յայտնութիւն նշխարաց սրբոյն Զաքարիայի հօրն Յովհաննու և երանելւոյն Պանդալէոնի, որ վկայեաց 'ի Նիկոմիդիա քաղաքի, զոր տարեալ էր մանկանն Գրիգորիսի յաշխարհն Հոնաց . 42

ԳԼՈՒԽ Ի. — Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի՝ Աղուանից կաթուղիկոսի, որ վկայեաց 'ի Մազքութս 'ի ձեռաց Սանեսանայ արքայի . 48

ԳԼՈՒԽ ԻԱ. — Թուղթ արքային Վաչականայ առ ամենայն եպիսկոպոսունս և քահանայս առ 'ի շնորհել նմա 'ի ձեռն աղօթից և պաղատանաց նոցա զծածկեալ գանձն . . . . . . . . . . . . 49

ԳԼՈՒԽ ԻԲ. — Երանելւոյն Յովայ ճգնաւորի հաւատացուցանելն զմեծագոյն Արցախագաւառն Պարսկանց . . . . . . . . 54

ԳԼՈՒԽ ԻԳ. — Տեսիլ մի խաճկորիկոյ պոռնկորդւոյն Եուաղենայ՝ արքային Աղուանից, որ էր կարգեալ կողմնապահ, և պատմէ արքային . 56

ԳԼՈՒԽ ԻԴ. — Հարցումն Վաչականայ արքային Աղուանից զՄատթէ երէց գլխաւոր . . . . . . . . . . . . . . 63

ԳԼՈՒԽ ԻԵ. — Երանելւոյն Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչական Աղուանից արքայ թուղթ սակս ննջեցելոց . . . . . 64

ԳԼՈՒԽ ԻԶ. — Սահմանադրութիւն կանոնական 'ի Վաչականայ Աղուանից արքայէ եդեալ 'ի ժողովն, որ յԱղուէնն եղև . . . . . 65

ԳԼՈՒԽ ԻԷ. — Յաղագս սրբոյն Մեսրոպայ և ընկերաց նորա պատմութիւն վիպասանաբար . . . . . . . . . . . . . . 69

Երես.

ԳԼՈՒԽ ԻԸ. — Շարադրած յաղագս աշակերտաց սրբոյն Մաշտոցի ընդ ներգոյս գրուցատրութ. . . . . . . . . . . 71

ԳԼՈՒԽ ԻԹ. — Դիմումն հիւսիսականացն յամենայն սահմանս Աղուանից, Հայոց և Վրաց, և վկայութիւն աշակերտացն սրբոյն Մեսրոպայ. 73

ԳԼՈՒԽ Լ. — Հաւատալն մեծի զօրավարին Թորնկեան 'ի Քրիստոս, թէ նա է Աստուած, և նահատակիլ նորա զօրօքն և որդւովքն քահանայական դասուքն յիւրմէ թագաւորէն յաշխարհէս Աղուանից. 76

# ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Երես.

ԳԼՈՒԽ Ա. — Պատմութիւն 'ի գէպ գրոցս. . . . . . . . . . 81

ԳԼՈՒԽ Բ. — Որինչ յանօրէն Յազկերտէ վտանգէին Աղուանք, և գտանել զփրկութիւն 'ի Վարդանայ Հայոց զօրավարէ . . . . . . 86

ԳԼՈՒԽ Գ. — Գալուստ Մեսրոպայ վարդապետի առ Արսվաղէն Աղուանից արքայ և առնել զգիրս և կարգել վերատեսչ զգլրոցս և զհաւատ հաստատել 'ի տանս Աղուանից և բառնալ զմոլեցեալ աղանդն. 90

ԳԼՈՒԽ Դ. — Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից 'ի Չողայ և նստուցանել 'ի մեծ քաղաքին Պարտաւ. զաթոռակալութիւն սակս խազրաց հինին, որ յեկս իւրեանց աւերեցին. . . . . . 91

ԳԼՈՒԽ Ե. — Ցայտարարութիւն վկայելոցն 'ի Դիզափայտ լերինն, և երևումն նշխարացն յաւուրս հայրապետութեան Աբասայ . . . 92

ԳԼՈՒԽ Զ. — Յեռիլ Վենհկի . . . . . . . . . . . . —

ԳԼՈՒԽ Է. — Թուղթ Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս Աղուանից կաթողիկոս սակս հաւատոյ հաստատութեան երկնաւոր շնորհօք աւելեալ . . . . . . . . . . . 94

ԳԼՈՒԽ Ը. — Հալածումն հերձուածողաց յԱղուանից, զոր տէր Աբաս Աղուանից կաթողիկոս ընդ գալ թղթոյն արտասահմանեաց. . . 98

ԳԼՈՒԽ Թ. — Պատմութիւն յարուցման ազգաց բարբարոսաց և պէսպէսանցից տեսլ'ի բանհեծ սաղնապկին, որ եղև աշխարհաց. . . . . —

ԳԼՈՒԽ Ժ. — Յառաջին ութեատան նահանջէն ակիզբն պատմողութեան. 100

ԳԼՈՒԽ ԺԱ. — Վասն գումարելոյ խորհրդոյ ընդդէմ արքային Յունաց և յաղթահարելոյ զնա զամս բազումս որով և գերութեամբ յաշխարհին Հռովմայեցւոց . . . . . . . . . . 104

Երես.

ԳԼՈՒԽ ԺԲ. — Գալ զօրացն Հիւսիսոյ յօգնել Հերակլի . . . . 110
ԳԼՈՒԽ ԺԳ. — Սպանումն Խոսրովու . . . . . . . . . . 114
ԳԼՈՒԽ ԺԴ. — Ցաղագս Վիրոյի աշխարհակալ կաթուղիկոսութեանն Աղուանից, և մանաւանդ վշտակրութեանն և Աստուծոյ խնամոցն. 117
ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն սատակեցեալ առիւծն, որդոյն և գերութեանն 'ի միասին . . . . . . . . . . . . . . . 129
ԳԼՈՒԽ ԺԶ. — Սակս մեծ պատանջելեացն, որ խնդրեաց զվրէժ 'ի թշնամեաց. 131
ԳԼՈՒԽ ԺԷ. — Վասն Միրհական տոհմին լինել 'ի Սասանեկան խաղաւու ցեղէն, և լինել Նախագահ տանս Աղուանից . . . . . 134
ԳԼՈՒԽ ԺԸ. — Գործք և քաջութիւն մեծի իշխանին Ջևանշրի, երկրորդ որդւոյն Վարազ Գրիգորի, որ 'ի Պարսիկս եցոյց զարութիւն քաջութեան . : . . . . . . . . . . . 136
ԳԼՈՒԽ ԺԹ. — Սպարապետութիւն Ջուանշրի Աղուանից և գրթահարել նորա զՊարսիկս, և մահն Յազկերտի և անձնատուր լինելն կայսեր Յունաց . . . . . . . . . . . . . . 140
ԳԼՈՒԽ Ի. — Թուղթ Ջևանշիրի առ թագաւորն Յունաց Կոստանդին. 143
ԳԼՈՒԽ ԻԱ. — Պատճէն հրովարտակին . . . . . . . . . 144
ԳԼՈՒԽ ԻԲ. — Կայսեր Յունաց գալ 'ի Պարսս և կոչել զՋևանշիր . . 145
ԳԼՈՒԽ ԻԳ. — Վասն երկցն խաղրաց և յաղթահարելն 'ի Ջևանշիրէ յայնկոյս գետոյն . . . . . . . . . . . . . . . 147
ԳԼՈՒԽ ԻԴ. — Կատարումն տաճարին Ցեառն 'ի բերդին Գարդմանայ և նուակատիքն 'ի Ջևանշիրէ, և օրհնաբանումն նորին, և կանգնելն 'ի նմա խաչին Քրիստոսի . . . . . . . . . . . 148
ԳԼՈՒԽ ԻԵ. — Աղօթք Ջևանշիրի . . . . . . . . . . . 149
ԳԼՈՒԽ ԻԶ. — Խնամութիւն Ջևանշիրի ընդ Հոնս, և առնել սէր թշնամեացն . . . . . . . . . . . . . . . . . . 151
ԳԼՈՒԽ ԻԷ. — Որ ինչ 'ի թագաւորէն Հարաւոյ մեծարանք արժանեաց իշխանին եղև՝ աստանօր գացեալ . . . . . . . . . . . 153
ԳԼՈՒԽ ԻԸ. — Երկնակի երթն Ջևանշիրի առ բռնակալն Հարաւոյ, և օգնելն նորա Յունաց իմաստարար օժանդակութեամբ, և կատարումն զհարկս առնել . . . . . . . . . . . . . 156
ԳԼՈՒԽ ԻԹ. — Ցեսիլ մանձնացելոյ առն Աստուծոյ Խարայելի 'ի վերայ Մաշտոցի որդւոյ և նահատակութեան աշակերտացն, և գիւտ որդւոյ խաչին, որ 'ի Գիւն էր . . . . . . . . . . . . 160
ԳԼՈՒԽ Լ. — Պատճէն թղթոյն, որ գրեցաւ յեպիսկոպոսացն 'ի Դու-

Երես.

թէ և 'ի Ցովկէլայ և 'ի մեծ ժողովարանէն, թէ որպէս եցոյց Աստուած զմեծ սքանչելիսն . . . . . . . . . . . . 166

ԳԼՈՒԽ ԼԱ. — Առ այս պատասխանիք եպիսկոպոսացն՝ 'ի հայրապետէն և յիշխանէն . . . . . . . . . . . . . . 168

ԳԼՈՒԽ ԼԲ. — Խնամաւորելն նախարարացն Աղուանից ազգախաղախ, և անիծանիլ. . . . . . . . . . . . . . . . . . 169

ԳԼՈՒԽ ԼԳ. — Յաղագս սրբական առն Իսրայէլի քահանայանալոյն, և գիւտ սրբոյ խաչին վիպասանութեամբ զրուցատրաբար . . . . 170

ԳԼՈՒԽ ԼԴ. — Մահ օրհնեալ Ջուանշիրի մեծի իշխանին . . . 176

ԳԼՈՒԽ ԼԵ. — Ողբք 'ի մահն Ջուանշիրի՝ մեծի իշխանին . . . . 180

ԳԼՈՒԽ ԼԶ. — Վասն Վարազ Տրդատայ լինել իշխան յաթոռ Ջուանշիրի, և Հոնաց վրէժխնդրութիւն նորին մահուան, և տարա առ նոսա առնել խաղաղութիւն . . . . . . . . . . 183

ԳԼՈՒԽ ԼԷ. — Վասն յառաջադիմութեան Վարազ Տրդատայ, և ընդունել գահ և պատիւ 'ի կողմանց, և վախճանի Գաւթի Մեծկողմանց եպիսկոպոսի և Իսրայէլի փոխանորդել զաթոռ նորին, որ եղև առաջնորդ բարի յիւրում կողմանն. . . . . . 185

ԳԼՈՒԽ ԼԸ. — Յուղարկումն Իսրայէլի եպիսկոպոսի յԱյրարատեան գաւառն 'ի մեծ իշխանէն Վարազ Տրդատայ առ մեծ հայրապետն Հայոց Սահակ՝ և առ բարեպաշտ իշխանն վասն սիրոյ . . . 187

ԳԼՈՒԽ ԼԹ. — Վասն խորհրդականութեան իշխանին Վարազ Տրդատայ ընդ իւր նախարարս արձակել զեպիսկոպոսն Իսրայէլ յերկիրն Հոնաց սակս հաշտութեան. . . . . . . . . . 188

ԳԼՈՒԽ Խ. — Հաստատելն 'ի հաւատս զՀոնաստանեան եպիսկոպոսին Իսրայէլի վարդապետական շնորհիւ, և նոցա քաղցրութեամբ 'ի ձեռն սքանչելեացն լսել. . . . . . . . . . . 191

ԳԼՈՒԽ ԽԱ. — Հաւատալն Հոնաց 'ի Քրիստոս 'ի ձեռն եպիսկոպոսին Իսրայէլի և կործանումն զոհարանաց և կանգնել խաչին Քրիստոսի. 196

ԳԼՈՒԽ ԽԲ. — Խորհուրդ մեծ իշխանին Հոնաց Իլիթուերայ ընդ նախարարս իւր, զի եպիսկոպոսն Իսրայէլ առ նոսա մնասցէ 'ի հաստատել անդ զաթոռ հայրապետութեան. . . . . . . . . 205

ԳԼՈՒԽ ԽԳ. — Գալուստ Իսրայէլի Մեծկողմանց եպիսկոպոսի 'ի Հոնաց. և երկու գլխաւորաց զկնի եկեալ 'ի խնդրել զնա յառաջնորդութիւն իւրեանց. . . . . . . . . . . . . . . 208

ԳԼՈՒԽ ԽԴ. — Թուղթ իշխանին Հոնաց 'ի նոյն խորհուրդ յաշխարհն Հայոց. . . . . . . . . . . . . . . . . . —

Երես.

ԳԼՈՒԽ ԽԵ. — Պատասխանի թղթոյն Հոնաց. . . . . . . . . 209
ԳԼՈՒԽ ԽԶ. — Դաւթի Մեծկողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց և նկարագրութեանց հայցուած 'ի Յովհաննէ Մայրագոմեցւոյ. . 211
ԳԼՈՒԽ ԽԷ. — Խորհրդազգածութիւն թէ որով ժամանակաւ անիծաւ ժողովն Քաղկեդոնի և Աղուանից անխառն մնալ 'ի նմանէ. կամ բաժանումն Վրաց 'ի Հայոց. և զինչ Աբրահամու կաթուղիկոսի վասն Աղուանից . . . . . . . . . . . 214
ԳԼՈՒԽ ԽԸ. — Յաղագս Յունաց առ Հայս վասն ոչ ունելոյ զինն դասս եկեղեցական կարգաւորութեան, և Հայոց զանք՝ Աղուանից լինել ընդ նոցաս արքեպիսկոպոս, որում ոչ հաւանեալ Աղուանից. և գտանալն Սիւնեաց 'ի Հայոց յԱղուանս և ստանալն զձեռնադրութիւն և զձէթ. . . . . . . . . . . 215
ԳԼՈՒԽ ԽԹ. — Պատասխանի թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի 'ի Հայոց. . . . . . . . . . . . 219
ԳԼՈՒԽ Ծ. — Վասն Յովսեփայ անապատականի բնակել յԱրցախ, և երթն յԵրուսաղէմ, ընդ նմին և բերումն նշխարաց սրբոց. . 222
ԳԼՈՒԽ ԾԱ. — Վասն որ 'ի սուրբն Երուսաղէմ եկեղեցեաց շինուածք, թուով և չափով հիմնադրելոց՝ զնայքն գտցես աստանօր, որում ականատես լեալ. . . . . . . . . . . . 225
ԳԼՈՒԽ ԾԲ. — Անուանք վանորէից, որք յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զորս 'ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան՝ առեալ ունաք. . . . . . . . . . 227

## ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Երես.

ԳԼՈՒԽ Ա. — Սակս Իսմայելեան ազգին յարձակմանն 'ի հարաւոյ յունիլ զծագս աշխարհաց, որոց սկիզբն 'ի Մահմետէ կարծեցեալ մարգարեէն եղև. . . . . . . . . . . . 231
ԳԼՈՒԽ Բ. — Եթէ ովք էին, որք յետ Մահմետայ եղեն Ամիրմումնիք. 233
ԳԼՈՒԽ Գ. — Վասն Բակուրայ երկարնակի, որում Ներսէս անուն, և զեալ կաթուղիկոս. . . . . . . . . . . . 235
ԳԼՈՒԽ Դ. — Թուղթ ժողովոյն Աղուանից առ Եղիա Հայոց կաթուղիկոս. 236

Երես.

ԳԼՈՒԽ Ե. — Թուղթ Եղիայի Հայոց կաթուղիկոսի առ Աբդըլմէլիք Եմիր Մումին 'ի նոյն խորհուրդ . . . . . . . . . . . 237

ԳԼՈՒԽ Զ. — Պատասխանի թղթոյն Եղիայի Հայոց կաթուղիկոսի՝ յԱբդըլմէլիքէ Եմիր Մումինայ. . . . . . . . . . . —

ԳԼՈՒԽ Է. — Գալն Եղիայի Հայոց կաթուղիկոսի 'ի Պարտաւ և պատժել զՆերսէս, և 'ի տեղի նորա յաջորդել զՍիմէոն սարկաւագապետ կամօք ժողովոյն Աղուանից . . . . . . . . 238

ԳԼՈՒԽ Ը. — Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա Հայոց կաթուղիկոս 'ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան և հաստատութեան ուխտի Հայոց և Աղուանից . . . . . . . . . . . 239

ԳԼՈՒԽ Թ. — Գիր պայմանի տեառն Եղիայի՝ Հայոց կաթուղիկոսի առ Աղուանս . . . . . . . . . . . . . 243

ԳԼՈՒԽ Ժ. — Գիր անուանց նախարարաց Աղուանից ըստ նախադասութեանն զոր ներքինին Աբդըլմէլիքի Եմիր Մումինայ տարաւ և եդ 'ի դիւանն արքունի . . . . . . . . . . . 244

ԳԼՈՒԽ ԺԱ. — Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթուղիկոսի յետ կործանման Ներսէսի. . . . . . . . . . . . 245

ԳԼՈՒԽ ԺԲ. — Հարկապահանջքն Վարազ Տրդատայ Աղուանից իշխանի, և երթն 'ի Ցոյնս, և տալ պատանդ զորդիս իւր և գալ յաշխարհն իւր, և Միքայէլի փոխադրել զաթոռ Աղուանից զկնի Սիմէոնի. 250

ԳԼՈՒԽ ԺԳ. — Վասն ոչ առնելոյ առ ազգայինս խնամութիւն՝ Միքայէլի Աղուանից կաթուղիկոսի արարեալ ժողով. . . . 252

ԳԼՈՒԽ ԺԴ. — Նորին Միքայէլի Աղուանից հայրապետին խնդիր յաղագս պատրանձմանն Ջարարիոյ և Ծննդեան և յայտնութեան Փրկչին ընդդէմ երկաբնակաց. . . . . . . . . . . 253

ԳԼՈՒԽ ԺԵ. — Որ ինչ յաւուրս որդւոյն Հերակլի և թոռին նորա գործք. 255

ԳԼՈՒԽ ԺԶ. — Յաղագս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի երթալն 'ի Հռոմ և բերել զգրեանս, որ յարեւելս ոչ գտին, և վախճան նորին և պատիժք, որ հասին յԱստուծոյ. . . . . . . —

ԳԼՈՒԽ ԺԷ. — Յաղագս գալստեան երկրորդ Մահմետայ 'ի Հայս, զորս և հնազանդեցուցանել. և անտի ընդ Աղուանս անցանել, մտանել ընդ դուռն Ջողայ. և անդ լսել զապստամբելն Հայոց. առ որս դառնալ անտի. և գալ զՍեւան ծովակաւ կղզին առնուլ, և զզօրս Հայոց և Հոռոմոց կոտորել. և զոմանս 'ի յիշխանաց տանել ընդ ինքեան 'ի Նախիջեւան այրել, և անտի գնալ յԱսորիս, յորում չարաչար մահուամբ սատակիլ և այլ գրոյցք պիտանիք. 257

Երես.

ԳԼՈՒԽ ԺԸ. — Յաղագս գալստեան Աբդլ Ազիզայ իշխանին Տաճկաց 'ի Պարտաւ քաղաք Աղուանից. և վասն կատարման երկուց եղբարց՝ Մանկանն և Մերդաւատայ. . . . . . . . . . . . 259

ԳԼՈՒԽ ԺԹ. — 'Ի գրենոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի զասս այս պատմութիւն սակս աւերման Դւին քաղաքի, և շինելն Հռովմայ. 260

ԳԼՈՒԽ Ի. — Որ ինչ յերկերիւր թուականութեանն Հայոց գործք լեալ 'ի սահմանս Աղուանից. . . . . . . . . . . . . . . 261

ԳԼՈՒԽ ԻԱ. — Երթն Մուհմդոյ իշխանին Տաճկաց 'ի Հոռոմս և 'ի նմին սատակումն, և ընդ նմին պէսպէս զրուցատրութիւնք կարճառօտ բանիւք. . . . . . . . . . . . . . . . 265

ԳԼՈՒԽ ԻԲ. — Պաշարումն Պարտաւայ յորդւոյն Շեխայ և 'ի զօրացն Հայոց և Աղուանից և Սամուէլի անձամբ առնուլ պատուի և գալ 'ի Դուին. . . . . . . . . . . . . . . . 267

ԳԼՈՒԽ ԻԳ. — Կրկնաբանութիւն ազգաշար անուանց հանապատարաց. 272

ԳԼՈՒԽ ԻԴ. — Անուանք հայրապետացն Աղուանից, ամք և գործք նոցին. 274

## ԳՈՐԾՔ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

1. Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկվա, 1846։— 1 ռուբլի 50 կոպ. արծաթի.
2. Ընտիր հատուածք՝ քաղեալք՚ի գրոց նախնի և արդի մատենագրաց Հայոց, հանդերձ բառագրովք՚ի հայկականէ՚ի Ռուսաց բարբառ, Մոսկվա, 1849։—3 ռուբլի արծաթի.
3. Վէպք հնոյն Հայաստանի, քննութիւն, Մոսկվա, 1850։—1 ռուբլի արծաթի.
4. Յովհաննու կաթուղիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1853։—3 ռուբլի արծաթի.
5. Ղազարայ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան՝ տէրն Մամիկոնէից, Մոսկվա, 1853։—1 ռուբլի արծաթի.
6. Исторія Арменіи Моисея Хоренскаго въ русскомъ переводѣ, *въ Москвѣ и въ Санктпетербургѣ 3 руб. сереб.*, съ пересылкою въ прочіе города *3 руб. 50 коп.*
7. Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, Մոսկվա, 1860։—2 ռուբլի արծաթի.

---

Ծանօթութիւն. Ընթացս յառաջիկայ ամի ելանելոց են՚ի լոյս երկասիրութիւնք հնագոյ մատենագրացս՝

Ա. ՄԽԻԹԱՐԱՅ Վ. ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՅ Պատմութիւն Հայոց։

Բ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿ. Պատմութիւն Տանն Սիսական։

Գ. ՎԱՐԴԱՆԱՅ ԲԱՐՁՐԲԵՐԴԵՑԻՈՅ Պատմութիւն Հայոց։